

ՀԵԿՏՈՐ ՄԱԼՈ

ՌՈՍԵՆ ԿԱԼԲԻ

Նկարները Ն. Յեյտլինի

«Հայաստան» հրատարակչություն

Երևան • 1974

Ռուսերենից թարգմանեց՝ Լ. ՆԱԶԱՐՅԱՆԸ

XIX դարի ֆրանսիացի գրող Հեկտոր Մալոյի անունը լավ հայտնի է մեր պատանի ընթերցողներին. նրա «Առանց ընտանիքի» վիպակը մի քանի տարի առաջ հրատարակվեց հայերեն:

«Ռոմեն Կալբրի» վիպակը (1869) Մալոյի առավել հաջող ստեղծագործություններից է: Այստեղ հեղինակն անդրադառնում է իր սիրած թեմային՝ մենակ ու լքված երեխայի ծանր կյանքին բուրժուական աշխարհում, ուր հարստություն ու փող ունեցող մարդիկ կարող են անպատիժ ճնշել, անգթորեն ծաղրել չքավորներին: Այդ դաժան աշխարհում տխուր ու ծանր է անպաշտպան երեխաների կյանքը:

Վիպակի հերոսի՝ փոքրիկ Ռոմեն Կալբրիի, կյանքը սկզբում շատ վատ է դասավորվում: Սակայն նրա եռանդի ու հաստատակամության, ինչպես նաև ազնիվ մարդկանց աջակցության շնորհիվ տղային ի վերջո հաջողվում է հաղթահարել բազմաթիվ ձախորդություններ ու դժվարություններ:

Թեև վիպակը գրված է ավելի քան մեկ հարյուրամյակ առաջ, մեր օրերում էլ ջերմ արձագանք է գտնում պատանի ընթերցողների սրտում:

© Թարգմանված է հայերեն, «Հայաստան» հրատարակչություն, 1974

I

Ծանոթ լինելով իմ ներկա վիճակին, չի կարելի մտածել, թե բախտն ինձ երես է տվել վաղ մանկությունից: Իմ նախահայրերը, թեև այդ բառերը կարող են փոքր-ինչ փքուն թվալ, եղել են ձկնորսներ: Հայրս ընտանիքի տասնմեկերորդ երեխան է եղել, և պապս մեծ դժվարությամբ է բոլորին ոտքի կանգնեցրել, որովհետև ձկնորսի արհեստը ամենաձանր արահեստներից է, իսկ եկամուտը՝ մեծ չէ: Ուժից վեր աշխատանքն ու վտանգները ձկնորսի մշտական բաժինն են, իսկ վաստակը կախված է լոկ պատահականությունից:

Տասնութ տարեկան հասակում հորս տարել են ծովային ծառայության, որը Ֆրանսիայում համարվում է յուրատեսակ զինապարտություն. այդ կերպ պետությունն ստիպում է բոլոր ծովայինների ծառայել երեսուներկու տարի՝ տասնութից մինչև հիսուն տարեկանը: Տնից հեռանալիս, հայրս ոչ կարդալ գիտեր, ոչ գրել: Բայց վերադարձավ որպես ավագ ենթասպա, այսինքն՝ ծառայությամբ հասել էր ամենաբարձր աստիճանին, որ կարող է ստանալ պետական ծովագնացության դպրոց չավարտած ծովայինը:

Պոր-Դյոն, այն վայրը, ուր ես ծնվել եմ, մոտիկ է անգլիական կղզիներին, այդ պատճառով էլ Ֆրանսիան այստեղ միշտ պահում է ռազմական կատեր: Վերջինս պետք է հետևի, որպեսզի Ջերսեյ կղզու բնակիչները՝ չորսան մեր ձուկը, իսկ ֆրանսիացի ծովայինները պահպանում էին ձկնորսության համար սահմանված կանոնները: Ծառայությունը շարունակելու համար հորս նշանակեցին հենց այդ կատերի վրա: Դա մեծ հաջողություն էր, որովհետև ծովայինը թեև իր տունն է համարում այն նավը, որով նավարկում է, այնուամենայնիվ երջանիկ է, երբ վերադառնում է հայրենի երկիր:

Հորս վերադառնալուց տասնհինգ ամիս հետո ես լույս աշխարհ եկա: Ծնվել եմ մարտ ամսին, ուրբաթ օրը, այն էլ լիալուսնի ժամանակ. այդ պատճառով բոլորը միահամուռ գուշակում էին, որ ինձ սպասում են շատ արկածներ, ծովային ճանապարհորդություններ և որ շատ դժբախտ կլինեմ, եթե միայն լուսնի ազդեցությունը՝ ուրբաթի ազդեցությունից ավելի զորեղ չլինի: Արկածներ շատ եմ ունեցել և հենց դրանց մասին էլ ուզում եմ ձեզ պատմել: Ծովային ճանապարհորդություններ էլ եմ կատարել, իսկ ինչ վերաբերում է երկու ազդեցությունների պայքարին, ապա դա եղել է շատ կատաղի, և իմ պատմության վերջում ինքներդ կորոշեք, թե դրանցից որը հաղթեց:

Արկածների ու ճանապարհորդությունների գուշակումը նշանակում էր, որ ինձ համարում էին իսկական Կալբրի, որովհետև բոլոր Կալբրիները՝ սերնդից սերունդ եղել են ծովայիններ և, եթե հավատալու լինենք՝ ավանդությանը, այդպես եղել է դեռևս Տրոյական պատերազմի ժամանակներից: Այդպիսի հին ծագում մեզ վերագրում ենք, իհարկե, ոչ թե մենք, այլ գիտնականները, որոնք հաստատում են, թե Պոր-Դյոնում մինչև հիմա էլ գոյություն ունեն մոտավորապես հարյուր ընտանիք՝ հատկապես ծովայինների ընտանիքներ, որոնք փյունիկյան գաղութի բնակիչների սերունդներն են: Այսպես թե այնպես, անվիճելի է մի բան, որ մենք ամենևին նման չենք ոչ նորմանդացիներին, ոչ բրետոնցիներին. մեր աչքերը սև են, քթերը՝ նուրբ, մաշկը՝ թուխ, իսկ ձկնորսական նավակները՝ Ողիսևսի նավակի ճիշտ պատճենն են, ինչպես նկարագրել է Հոմերոսը: Այդ նավակներն ունեն մի կայմ և մի քառանկյունի առագաստ: Այդպիսի հանդերձանքը սովորական է հոնական արշիպելագի համար, սակայն Լա Մանշում ուրիշ ոչ մի տեղ չի հանդիպում:

Մեր ընտանիքի հիշողությունները վերաբերում էին ավելի մոտ անցյալին և իրենց միօրինակության շնորհիվ աչքի չէին ընկնում առանձին ճշտությամբ: Երբ խոսում էին ազգականներից մեկի մասին, միշտ պատմում էին մոտավորապես միևնույն բանը. վաղ հասակից գնացել է ծով, նրա կյանքն

անցել է ծովում կամ անդրծովյան երկրներում, այնպիսի ցեղերի մեջ, որոնց անունները դժվար է հիշել և գոհվել է ծովում, նավաբեկության ժամանակ, ճակատամարտում կամ անգլիական լողացող բանտում: Մեր գերեզմանատանը շատ խաչեր կան աղջիկների և այրի կանանց անուններով, բայց տղամարդկանց անուններով խաչեր գրեթե չեն հանդիպում: Մեր տղամարդիկ հայրենիքում չէին մահանում:

Ինչպես բոլոր ընտանիքները, մենք էլ ունեինք մեր հերոսները: Առաջինը պապս էր մորս կողմից, որ նավարկել է անձամբ Սյուրկուֆի¹ հետ, իսկ երկրորդը՝ պապիս եղբայրն էր՝ մորեղբայր Ժանը: Այն ժամանակվանից, ինչ սկսել էմ հասկանալ շրջապատի մարդկանց ասածները, նրա անունը լսել եմ օրվա մեջ տասն անգամ: Նա ծառայում էր սեփական փղեր ունեցող ինչ-որ հնդկական ռաջայի բանակում: Նա անգլիացիների դեմ կռվող զորամասերի հրամանատար էր, նրա մի ձեռքը արծաթյա էր: Չկարծեք, թե փղերն ու արծաթյա ձեռքը մտացածին բաներ են:

Արկածների հանդեպ բնածին կիրքը, որ հատուկ էր բոլոր Կալբրիներին, հորս ստիպեց ամուսնությունից երկու-երեք տարի հետո գնալ նոր նավարկության: Նա կարող էր նավապետի օգնական դառնալ այն նավերից մեկում, որ ամեն գարուն մեկնում են Իսլանդիայի ափերը՝ ձկնորսության, բայց ընտելացել էր պետական ծառայությանը և սիրում էր այդ գործը:

Նրա մեկնելը չեմ հիշում: Այդ ժամանակվա մասին միակ հիշողությունները, որ պահպանվել են, այն օրերն են, երբ մոլեգնում էր փոթորիկը, այն գիշերները, երբ որոտում էր ամպրոպը և այն ժամանակը, որ անց էմ կացրել փոստի գրասենյակի մոտ:

Քանի՜ անգամ է մայրս ստիպել ինձ գիշերներն աղոթել վառվող մումի առջև: Մեզ թվում էր, որ Պոր-Դյոյում՝ մոլեգնող փոթորիկը մոլեգնում է ամենուրեք, և մեր տունը ցնցող քամին ցնցում է նաև այն նավը, որով նավարկում էր հայրս: Երբեմն քամին փչում էր այնպիսի ուժով, որ ստիպված էինք վեր կենալ և կապել փեղկերը, որովհետև մեր տունը չքավորի խրճիթ էր:

Թեև մի կողմից պահպանում էին ժայռի բեկորները, իսկ մյուս կողմից՝ հին խցիկը, որ մի ժամանակ եղել է խորտակված եռակայմ նավի ընդհանուր նավասենյակը, տնակը դժվարությամբ էր դիմանում աշնանային փոթորիկներին:

Մի անգամ, հոկտեմբերյան մի գիշեր մայրս արթնացրեց ինձ: Փոթորիկը մոլեգնում էր, քամին ռռնում էր, մեր տնակը խուլ աղմկում էր ու ճռռում, քամու հոսանքը ներս էր խուժում, օրորում մումի թույլ բոցը և երբեմն էլ՝ հանգցնում: Երբ փոթորիկը մի քիչ մեղմանում էր, լսվում էին առափնյա քարերին զարնվող ալիքների դղրդյունը և ժայռերին հարվածող ծովի որոտը, որ նման էր թնդանոթաձգության:

Չնայած խլացուցիչ աղմուկին, ես ծնկաչոք քնեցի: Բայց հանկարծ ծխնիներից պոկված լուսամուտի փեղկն ընկավ սենյակ, ապակին ջարդուփշուր եղավ և ինձ թվաց, թե մրրիկը քշում է ինձ:

— Աստված իմ, — բացականչեց մայրս: — Հայրդ գոհվեց:

Նա միշտ էլ հավատացել է նախանշաններին ու նախագագումներին, իսկ այդ փոթորկալի գիշերից մի քանի ամիս հետո հորիցս ստացած նամակը ավելի ամրապնդեց նրա մեջ այդ հավատը: Տարօրինակ զուգադիպությամբ, հենց հոկտեմբերին, հայրս ընկել էր ուժեղ փոթորկի մեջ և քիչ էր մնացել գոհվի: Ծովայինների կանայք միշտ էլ անհանգիստ են քնում: Նրանք երագում տեսնում են

¹ Սյուրկուֆը ֆրանսիացի առասպելական ծովահեն է:

նավաբեկություններ, սպասում են նամակների, որոնք շարունակ ուշանում են, և նրանց կյանքն անցնում է մշտական տագնապի մեջ:

Այն տարիներին, որոնց մասին պատմում եմ, փոստն այնպես չէր աշխատում, ինչպես մեր օրերում: Նամակներն ուղղակի բաժանում էին փոստի գրասենյակում, իսկ եթե նամակի ետևից երկար ժամանակ չէին գալիս, ուղարկում էին մի որևէ դպրոցականի ձեռքով: Գարնանից մինչև աշուն բոլոր ծովայինները ծովում ձողաձուկ էին որսում, այդ պատճառով Նյուֆաունդլենդից փոստի գալու օրը փոստի գրասենյակը միշտ պաշարում էին կանայք, որոնք անհամբերությամբ ուզում էին նորություններ իմանալ: Երեխաներին գրկած, նրանք սպասում էին, թե երբ կկանչեն իրենց անունները: Նամակները կարդալիս ումանք ծիծաղում էին, մյուսները լաց էին լինում: Նամակ չստացողները հարցուփորձ էին անում նրանց, ովքեր ստացել էին, որովհետև ծովում նավարկող ծովայինների մասին երբեք չի կարելի ասել «Վատ լուրը շուտ կհիմացվի» առածը:

Մեզ մոտ մի ծեր կին կար, որին բոլորն անվանում էին մորաքույր Ժուան: Վեց տարի շարունակ նա ամեն օր գալիս էր փոստ և վեց տարվա մեջ ոչ մի նամակ չէր ստացել: Պատմում էին, որ ձկնորսական նավակը նրա ամուսնու և չորս տղաների հետ անհետ կորել է փոթորկի ժամանակ: Ոչ մարդկանց, ոչ էլ նավակը այդպես էլ չեն գտել: Այդ ժամանակվանից մորաքույր Ժուանը՝ ամեն առավոտ գալիս էր փոստ: «Առայժմ դուք նամակ չունեք, — ասում էր նրան փոստի կառավարիչը: — Հավանորեն, վաղը կլինի»: Ծեր կինը տխուր պատասխանում էր. «Այո, հավանորեն վաղը կլինի...» — և գնում էր, որպեսզի հաջորդ օրը կրկին վերադառնա: Նրան համարում էին փոքր-ինչ ցնորված: Բայց եթե նա իրոք խենթացել էր, ապա ես երբեք կյանքում չեմ տեսել ավելի հեզ ու հանգիստ խելագարություն:

Երբ էլ որ գալիս էի փոստ, գրեթե միշտ հանդիպում էի մորաքույր Ժուանին: Մեր փոստի կառավարիչը նաև նպարավաճառ էր: Պարզ է, որ նա առաջ սպասարկում էր նրանց, ովքեր գալիս էին աղ կամ սուրճ գնելու, այդպիսով հնարավորություն տալով մյուսներին մի կուշտ խոսել: Խնամքով ու ճշգրտորեն կատարելով իր թե մեկ, թե մյուս պարտականությունը, բազմաթիվ նախապատրաստություններով նա ավելի էր ձգձգում սպասումը: Նպարեղեն վաճառելիս հագնում էր կապույտ գոգնոց ու գլխարկ, իսկ փոստը բաժանելիս հագնում էր մահուդե բաճկոն և թավշե գդակ: Ոչ մի դեպքում փոստային ծառայողի համազգեստով մանանելի չէր վաճառի և նամակ չէր հանձնի առանց կապույտ գոգնոցը հանելու, նույնիսկ եթե իմանար, որ այդ նամակից կախված է տասնյակ մարդկանց կյանքը:

Ամեն առավոտ մորաքույր Ժուանը պատմում էր ինձ միևնույն բանը. «Նրանք ձուկ էին որսում, երբ հանկարծ վրա տվեց այնպիսի ուժեղ փոթորիկ, որ ստիպված եղան փախչել համընթաց քամու ուղղությամբ և չկարողացան վերադառնալ Բյեն—Էմե: Նրանք անցել են Պրյուդանսի կողքով, բայց այնտեղ էլ չի հաջողվել մոտենալ ափին: Դու հասկանում ես, չէ՞, եթե իմ Ժուանի պես նավաստու հետ լինես, ոչ մի բան սարսափելի չէ: Հավանաբար, բաց ծովում նրանց հանդիպել է մի նավ, որը և վերցրել է նրանց: Դա հաճախ է պատահում: Այ, այդպես՝ տուն վերադարձավ նաև մորաքույր Մելանիի որդին: Իսկ գուցե նրանց իջեցրել են Ամերիկայում: Երբ նրանք վերադառնան՝ Ժերոմն արդեն շատ մեծ կլինի: Այն ժամանակ նա տասնչորս տարեկան էր... Տասնչորս և վեց, որքա՞ն կլինի... Քսան տարեկան: Իսկական չափահաս տղամարդ է»:

Նրա մտքով անգամ չէր անցնում, որ նրանք կարող էին զոհվել, և մահացավ նրանց ողջ համարելով: Մահից ոչ շատ առաջ նա քահանային տվել էր երեք լուիդոր Ժերոմի համար, երբ վերջինս վերադառնա տուն: Նա ծայրահեղ կարիքի մեջ էր և այնուամենայնիվ այդ դրամը պահել էր կրտսեր որդու՝ իր սիրելիի համար:

II

Հայրս նավարկության մեկնեց երեք տարով, սակայն ծովում մնաց ամբողջ վեց տարի: Սպաներն աստիճանաբար փոխվում էին, իսկ նավաստիները՝ մնացին Խաղաղ օվկիանոսում՝ այնքան ժամանակ, մինչև ֆրեգատին սկսեց սպառնալ սուզվելու վտանգը:

Ես արդեն տասը տարեկան էի, երբ հայրս վերադարձավ հայրենիք:

Դա տեղի ունեցավ կիրակի օրը պատարագից հետո: Ես կանգնել էի ծովափին ու նայում էի, թե ինչպես է նավահանգիստ մտնում մաքսային պահականավը: Տախտակամածին, լոցմանի կողքին տեսա ինչ-որ մի գինվորական ծովայինի: Նա անմիջապես աչքի ընկավ, որովհետև լրիվ տոնական համազգեստով էր, մինչդեռ բոլոր նավաստիները՝ սովորական աշխատանքային կուրտկաներ էին հագել: Ինչպես միշտ, այդ ժամերին ծովապատնեջի մոտ հավաքվել էին ծեր ծովայիններ, որոնք բոլոր եղանակներին՝ թե փոթորկի, թե պայծառ արևի ժամանակ գալիս էին այստեղ մակընթացությունից երկու ժամ առաջ և տուն վերադառնում երկու ժամ հետո:

— Ռոմեն,— հեռադիտակն իջեցնելով, ասաց նավապետ Ուելը,— ահա քո հայրը: Շուտ վազիր նավամատույց, եթե ուզում ես նրան դիմավորել:

Ես շատ էի ուզում նետվել հորս գիրկը, բայց չէի կարողանում, որովհետև ոտքերս ծավվում էին: Երբ հասա նավամատույց, մաքսանավն արդեն կառանել էր, և հայրս իջավ ափ: Բոլորը շրջապատեցին նրան, սկսեցին ձեռքերը սեղմել, քարշ տալ պանդոկ, առաջարկելով հյուրասիրել մի գավաթ խնձորագինի:

— Երեկոյան,— պատասխանեց նա:— Շտապում գրկել կնոջս ու որդուս:

— Որդո՞ւդ, ահա նա այստեղ է:

Երեկոյան եղանակը խիստ վատացավ, սակայն այդ գիշեր մեր տանը ոչ ոք չարթնացավ և մոռ չվառեց:

Նավարկության վեց տարիների ընթացքում հայրս շատ բան էր տեսել, և ես առանց հոգնելու լսում էի նրա պատմությունները: Նա մտայլ ու կոպիտ մարդու տպավորություն էր թողնում, բայց իրականում շատ բարեհոգի էր և համբերատար պատմում էր ինձ ոչ թե այն մասին, ինչ իրեն էր հետաքրքիր, այլ այն, ինչ հմայում էր իմ մանկական երևակայությունը:

Նրա պատմածների մեջ կար մեկը, որ ես կարող էի լսել անվերջ և շարունակ խնդրում էի նորից պատմել. դա մորեղբայր Ժանի մասին էր: Կալկաթայում եղած ժամանակ հայրս լսում է ոմն գեներալ Ֆլոյի մասին, որին հանձնարարականով ուղարկել էին անգլիական նահանգապետի մոտ: Այն, ինչ պատմում էին նրա մասին, նման էր հեքիաթի: Ծագումով ֆրանսիացի էր և կամավոր ծառայում էր Բերարիո ռաջայի մոտ: Անգլիացիների դեմ մղած ճակատամարտերից մեկում նա համարձակ գրոհով կործանումից փրկում է հնդկական բանակը, որի համար նրան դարձնում են գեներալ: Մեկ ուրիշ ճակատամարտում արկը պոկում է նրա ձեռքը, որի փոխարեն նա դնում է արծաթյա ձեռք, իսկ երբ այդ արծաթյա ձեռքով ձիու սանձափոկը բռնած վերադառնում է մայրաքաղաք, ի նշան երկրպագության, քուրմերը երեսնիվայր ընկնում են գետին: Նրանց ասելով, սուրբ գրքերում գրված է, որ Բերարյան իշխանությունը կհասնի իր հզորության գագաթնակետին, երբ նրա բանակները ղեկավարի արևմուտքից եկած օտարերկրացին, որին բոլորը կճանաչեն

արծաթյա ձեռքից: Հայրս գնացել է գեներալ Ֆլոյի մոտ, և վերջինս գրկաբաց ընդունել է նրան: Մի ամբողջ շաբաթ հայրս հյուրընկալվել է մորեղբորս մոտ, որը իշխանական հարգանքներ է մատուցել նրան և ցանկացել է տանել իր մոտ՝ մայրաքաղաք, բայց ծովային ծառայությունում կարգապահությունը շատ խիստ է, և հայրս ստիպված է լինում մնալ Կալկաթայում:

Այդ պատմությունը մեծ տպավորություն գործեց ինձ վրա: Ես անդադար մտածում էի քեռի Ժանի և շարունակ երագում փղերի ու մարդակիր գահավորակների մասին: Իմ աչքի առջև շարունակ կանգնած էին երկու զինվոր՝ մորեղբորս թիկնապահները, որոնք տանում էին նրա արծաթյա ձեռքը: Մինչ այդ ես հիանում էի մեր եկեղեցու պահակով, բայց լսելով զինվորների մասին, որոնք նաև մորեղբորս ստրուկներն էին, ես արհամարհանքով լցվեցի դեպի երկաթե սակրատեզն ու տրեգավոր գլխարկը, որոնցով պճնվում էր պահակը:

Հայրս ուրախանում էր, տեսնելով, թե ինչպիսի հիացմունքով եմ լսում իրեն, իսկ մայրս տանջվում էր. մայրական նրբազգացությամբ նա կռահում էր, թե ինչպիսի տպավորություն են թողնում ինձ վրա հորս պատմությունները:

— Այդ ամենը նրա մոտ մեծ սեր կարթնացնի դեպի ծովն ու ճանապարհորդությունները, — ասում էր մայրս:

— Ի՞նչ կա որ: Այդ դեպքում նա կդառնա ծովագնաց, ինչպիսին ես եմ, գուցե և այնպիսին, ինչպիսին նրա մորեղբայրն է:

Դառնալ այնպիսին, ինչպիսին մորեղբայր Ժանն է: Խեղճ հայրս չէր էլ ենթադրում, թե ինչ կրակ էր բորբոքում իմ կրծքում: Մայրս վերջ ի վերջո ստիպված էր ընտելանալ այն մտքին, որ ժամանակին ես կդառնամ ծովագնաց, բայց նա քնքշորեն սիրում էր ինձ և ուզում էր գոնե որևէ բանով թեթևացնել իմ առաջին քայլերն այդ դժվար ասպարեզում: Նա համոզում էր հորս թողնել զինվորական ծառայությունը, ջանալ աշխատանքի նշանակվել Բալանդիայի ափերի մոտ նավարկող նավում, և ինձ տանել իր հետ, որպեսզի սկսեմ սովորել նրա ղեկավարությամբ:

Այդպիսով նա հույս ուներ մեզ տանը պահել ձմռանը, երբ ձկնորսական նավերը կանգնում են նավահանգստում: Բայց, ավա՛ղ, մեր հաշիվներն ու ենթադրությունները միշտ չէ, որ կատարվում են:

III

Հայրս տուն վերադարձավ օգոստոսին: Ավելի քան երեք ամիս պահպանվող հրաշալի եղանակը սեպտեմբերին անսպասելիորեն վատացավ: Սկսվեց փոթորիկների շրջանը: Բոլորը խոսում էին մեր ափերի մոտ տեղի ունեցող նավաբեկությունների մասին միայն: Մի շոգենավ մարդկանցով ու բեռով խորտակվել էր Բլանշարի արագ հոսանքում: Մի քանի նավակ Գրանվիլից անհետ կորել էին, և պատմում էին, որ Ջերսեյ կղզու շուրջը ծովն ամբողջովին ծածկված է բեկորներով: Ցամաքի վրա բոլոր ճանապարհները պատված էին ջարդված ճյուղերով, իսկ գետինը այնպես էր ծածկվել խնձորներով, կարծես դիտավորյալ թափ էին տվել ձողաններով: Շատ խնձորենիներ արմատահան էին եղել, մյուսները կանգնած էին այլանդակված բներով, իսկ ճյուղերից կախված տերևները դեղնել էին, ասես խանձվել էին կրակից:

Ավանի բնակիչներին պատել էր տագնապը. բոլորն սպասում էին Նյուֆաունդլենդից ծովայինների վերադարձին:

Փոթորկալի եղանակը շարունակվեց շուրջ երեք շաբաթ, իսկ մի անգամ երեկոյան լրիվ հանդարտություն տիրեց թե՛ ցամաքում, թե՛ ծովում: Ես վճռեցի, որ փոթորիկները դադարեցին, բայց երբ ընթրիքի ժամանակ հարցրեցի հորս, արդյոք վաղը չե՞նք գնա ուղևանները հանելու, որ դրել էինք դեռ վատ եղանակները սկսվելուց առաջ, նա քմիծաղեց:

— Վաղը, — պատասխանեց նա, — արևմուտքից վրա կտա սոսկալի փոթորիկ, որովհետև արևը մայր մտավ բոսորագույն մշուշում, երկնքում չափազանց շատ աստղեր կան, ծովը հեծծում է, իսկ գետինը խիստ տաքացել է: Շուտով այնպիսի փոթորիկ կտեսնես, ինչպիսին դեռ չես տեսել քո կյանքում:

Այդ պատճառով հաջորդ օրը մենք չգնացինք ծով, սկսեցինք քարերով ամրացնել մեր «խցիկի» տանիքը: Լուսադեմին արևմտյան քամի բարձրացավ: Արևը չէր երևում, պղտոր գորշագույն երկնքում տեղ-տեղ հայտնվում էին երկար կանաչագույն շերտեր և, թեպետ մակընթացությունը դեռ չէր սկսվել, հեռվից լսվում էր ծովի խուլ աղմուկը, որ նման էր մոնյունի:

«Խցիկի» տանիքին կանգնած հայրս թողեց իր աշխատանքը. ես մագլցելով բարձրացա նրա մոտ: Հեռվում, մշուշապատ հորիզոնում երևաց մի փոքրիկ սպիտակ կետ՝ ինչ-որ նավ էր լողում:

— Եթե նրանք դեռ ողջ են, ապա, ինչպես երևում է, ուզում են ջարդվել, — նկատեց հայրս:

Իրոք, եթե արևմտյան քամիներ են փչում, հնարավոր չէ մոտենալ Պոր-Դյոյի ափերին:

Մենք այդ նավը տեսանք միայն երկնքում հայտնված պատահական լուսաշողի շնորհիվ, և մի ակնթարթ հետո նավն անհետացավ մեր տեսողությունից: Ամպերը շարունակ թանձրանում էին, սլանում էին ավելի արագ ու չարագույժ և քուլա-քուլա բարձրանում, ինչպես հրդեհի ծուխը: Թվում էր, թե այդ հրդեհի օջախը գտնվում է հորիզոնից այն կողմ:

Մենք գնացինք գյուղ: Մարդիկ վազում էին դեպի ծովապատնեշը, որովհետև բոլորին արդեն հայտնի էր դարձել, որ նավ է երևացել և որ այն վտանգի մեջ է:

Ե՛վ հեռվում, և՛ մեր ոտքերի մոտ, և՛ աջից, և՛ ձախից, ամենուրեք ծովը վեր էր ածվել համատարած ալեկոծվող ձյունանման փրփուրի, ջուրն ավելանում էր սովորականից ավելի արագ, և նրա ամեհի աղմուկը միաձուլվելով փոթորիկի ռոնոցին, խլացնում էր մեզ: Չնայած սոսկալի քամուն, ամպերն այնքան ցածր էին կախվել և այնպես ծանր էին, որ թվում էր, թե իրենց ծանրությամբ ճնշում են փրփրադեզ սպիտակ զանգվածը: Նավը մոտենում էր: Դա բրիգ էր, որ շարժվում էր գրեթե առանց առագաստների:

— Նրանք բարձրացնում են բրեյդ-վիմպելը, — ասաց հեռադիտակով նայող նավապետ Ուելը: — Դա Լեզյո եղբայրների բրիգն է:

Լեզյո եղբայրները մեր կողմերի ամենահարուստ նավատերերն էին:

— Նրանք խնդրում են լոցման ուղարկել:

— Լոցման: Բայց միթե՞ հնարավոր է հիմա ծով դուրս գալ:

Այդ բառերն արտասանեց ինքը լոցմանը՝ քեռի Ուզարը: Եվ քանի որ չորս կողմը կանգնած էին ծովային գործի գիտակ մարդիկ, ոչ ոք չառարկեց նրան: Բոլորը գիտեին, որ նա իրավացի է և չի կարելի ծով դուրս գալ:

Այդ ժամանակ գյուղի կողմից երևաց Լեզոյ եղբայրներից ավագը: Նա, հավանաբար, չէր ենթադրում, թե ինչպիսի կատաղի ուժով է փչում քամին, և հազիվ էր թեքվել վերջին տան անկյունից, երբ հողմը պտտեցրեց նրան ու հնոտու պես նետեց փողոց: Մայթաքելով, հազիվ ոտքի վրա մնալով, քամու դեմ պայքարելով, ինչպես լողորդն է մաքառում ալիքների դեմ, նա մեծ դժվարությամբ վերջապես հասավ առափնյա դոխին, որի հետևում թաքնվել էինք բոլորս: Ճանապարհին նա կորցրեց իր գլխարկը, բայց նույնիսկ չփորձեց բռնել, և այդ ժամանակ բոլորը հասկացան, որ նա խիստ հուզված է, որովհետև պարոն Լեզոյն հայտնի էր նրանով, որ երբեք ոչինչ չէր կորցնում:

Մի րոպե հետո հայտնի դարձավ, որ բրիգը պատկանում է նրան, որ կառուցվել է Բայոնում, որ անձնակազմը բաղկացած է բասկերից, որ նավն առաջին անգամ է դուրս գալիս ծով և ապահովագրված չէ:

— Ամեն մի տակառի համար կվճարեմ քսան սու, եթե նավը հասցնեք նավահանգիստ,— քեռի Ուզարի հագուստի փեշից ձգելով, գոռում էր պարոն Լեզոյն:

— Բրիգը բերելու համար նախ հարկավոր է ծով դուրս գալ...— պատասխանեց քեռի Ուզարը:

Ալիքները գլորվելով, անցնում էին ծովապատնեշից: Քամին իր ճանապարհին քշում էր ամեն ինչ՝ և ալիքների փրփուրը, և՛ դոխի ավագը, և՛ ծովային ջրիմուռները, և՛ պահատնակի տանիքի կղմինդրները: Պատառոտված ամպերը շատ ցածր սլանում էին ծովի վրայով և ձյունանման փրփուրի ֆոնի վրա ավելի սև էին թվում:

Երբ բրիգի վրա հասկացան, որ լոցման չեն ուղարկի, նավը կիսով չափ շրջեցին, փորձելով առայժմ լողալ քամուն համընթաց:

Բայց այդպես սպասելով, նրանք կարող էին կործանվել: Իսկ առանց լոցմանի նավահանգիստ մտնելը անխուսափելի մահ էր նշանակում:

Վազելով հավաքվեցին գյուղի բոլոր մարդիկ: Ուրիշ ժամանակ շատ զվարճալի կլիներ տեսնել, թե քամին ինչպես է նրանց գետին գլորում, հրում և դետուղեն նետում: Մի քանի կին նույնիսկ պառկեցին գետնին ու փորձում էին ծնկաչոք սողալով առաջ շարժվել:

Պարոն Լեզոյն շարունակում էր գոռալ. «Ամեն տակառի համար քսան սու: Քառասուն սու»: Նա ետ ու առաջ էր վազում, դետուղեն ընկնում և խնդրանքից վայրկենապես անցնում հայիոյանքների:

— Բոլորդ էլ մի պտուղ եք: Ծովն եք խցկվում, երբ ձեզ չեն խնդրում, իսկ վտանգի ժամանակ թաքնվում եք ձեր որջերում:

Նրան ոչ ոք չպատասխանեց: Մարդիկ թափահարում էին գլուխները կամ շրջում երեսները: Այդ ժամանակ նա բոլորովին կորցրեց համբերությունը.

— Ոչ մեկդ էլ բանի պետք չեք: Այստեղ երեք հարյուր հազար է կորչում, իսկ դուք անտարբեր նայում եք, վախկոտնե՛ր:

Հանկարծ հայրս առաջ եկավ.

— Նավակ տվեք, ես կմեկնեմ:

— Կալբրի՛, դու քաջ մարդ ես:

— Եթե Կալբրին մեկնում է, ապա ես էլ կգնամ նրա հետ,— ասաց քեռի Ուզարը:

— Ամեն տակառի համար քսան սու, ես չեմ հրաժարվում իմ խոսքից,— գոռաց պարոն Լեզյոն:

— Մեզ ոչինչ հարկավոր չէ,— պատասխանեց քեռի Ուզարը:— Մենք դա ձեզ համար չենք անում: Բայց եթե ես չվերադառնամ և իմ ծեր կինը տոն օրերին ձեզանից երկու սու խնդրի, չմերժեք նրան:

— Կալբրի՛,— բացականչեց Լեզյոն,— ես կորդեգրեմ քո տղային:

— Հիմա բանը դրանում չէ... Մեզ պետք է Գոսսումի նավակը:

Ամբողջ ծովափում հայտնի էր, որ Գոսսումի նավակը կարող է առագաստը բաց նավել ցանկացած եղանակին:

— Համաձայն եմ,— ասաց Գոսսումը՝ ի պատասխան չորս կողմից իրեն ուղղված հայացքների,— բայց կտամ միայն Կալբրիին, նա պետք է վերադարձնի ինձ նավակը:

Հայրս բռնեց ձեռքիցս, և մենք վազեցինք դեպի ծածկը, ուր գտնվում էր Գոսսումի նավակը: Մի րոպե հետո և՛ առագաստները, և՛ դեկը դրված էին:

Սակայն բացի հայրիկից ու լոցմանից, հարկավոր էր երրորդ ծովայինը: Ցանկություն հայտնեց մեր ազգականներից մեկը: Նրան փորձում էին ետ կանգնեցնել:

— Բայց չէ՞ որ Կալբրին գնում է,— պատասխանում էր նա:

Հայրս գրկեց ինձ և այնպիսի ձայնով խոսեց, որ լսում եմ մինչև հիմա.

— Ամեն ինչ կարող է պատահել...— ինձ իր կրծքին սեղմելով, ասաց նա:— Մայրիկին հայտնի, որ համբուրում եմ նրան:

Ամենադժվարը նավահանգստից քամու դեմ դուրս գալն էր:

Նավակին կապած ճոպանը քաշող ձկնորսները չէին կարողանում տեղից շարժվել: Ալիքները նրանց գետին էին գցում, նրանք ձեռքից բաց էին թողնում ճոպանը և գլորվում տարբեր կողմեր: Ալիքները ծածկում էին ծովապատնեշի եզրը, սակայն անհրաժեշտ էր նավակը դուրս բերել ծովապատնեշից, որպեսզի կարողանար լողալ բաց առագաստներով: Փարոսի հսկիչը ճոպանը մի քանի տակ փաթաթեց իր գոտկատեղին, մինչ նավակը քաշող ձկնորսները դժվարությամբ այն պահում էին ֆարվատերում, նա կռանալով և երկու ձեռքով բռնելով ճաղաշարի երկաթե բազրիքից, սկսեց դանդաղ առաջ շարժվել: Նա, իհարկե, հույս չունեի մենակ ծով դուրս բերել նավակը, որ հիմա դժվարությամբ քարշ էին տալիս քսանհինգ հոգի: Նա միայն ուզում էր, և դա չափազանց դժվար էր, ճոպանը նետել ծովապատնեշի եզրին դրված բրոնզե ճախարակի վրա, որպեսզի, հենման կետ ունենալով, նավակը կարողանա առաջ շարժվել, երբ ձկնորսները սկսեն ճոպանը քաշել հակառակ ուղղությամբ: Ալիքը երեք անգամ ծածկեց հսկիչին, բայց նրա համար այդպիսի ցնցուղը արտասովոր բան չէր: Նա կարողացավ ոտքի վրա մնալ, և վերջապես նրան հաջողվեց ճոպանը գցել: Նավակը դանդաղ առաջ շարժվեց: Երբեմն այնքան խորն էր ընկղմվում, որ թվում էր, թե ուր որ է ջրի տակ կանցնի... Բայց հանկարծ ճոպանը թուլացավ. ձկնորսներն այն բաց թողին, և նավակը դուրս պրծավ ծով:

Ես բարձրացա գառիվայրը, որտեղ դրված էր ազդանշանային կայմասյունը, և, ձեռքերով ու ոտքերով ամուր գրկելով այն, մագլցեցի վեր: Կայմասյունը թեքվում էր ու ճռճում, ասես դեռ դալար ծառ էր, ու քամու ճնշման տակ ճռճվում էր իր հայրենի անտառում:

Ես տեսա, որ հայրս կանգնել էր դեկի մոտ, իսկ նրա կողքին՝ մյուս երկուսը, մեջքով քամու կողմը դարձած՝ հենվել էին նավեզրին: Նավակը շարժվում էր ուստյուններով՝ մերթ ետ ցատկելով փրփրացող ալիքներից, բորբորովին կանգ էր առնում, մերթ թռչում էր թնդանոթի արկի նման, մերթ բոլորովին անհետանում ջրի շիթերում, որ ծովագնացներն անվանում են ծովային փոշի:

Հենց որ բրիգի վրա նկատեցին նավակը, ծովագնացները փոխեցին ընթացքը և նավն ուղղեցին դեպի փարոսը: Բաց ծով դուրս գալով, նավակը նույնպես փոխեց ընթացքը և բրիգին ընդառաջ շարժվեց: Մի քանի րոպե հետո դրանք մոտեցան իրար: Նավակն անցավ մեծ նավի քթակայմի տակով և անմիջապես էլ կտրուկ ետ դարձավ. բրիգի վրա հասցրեցին ամրացնել բուքսիրի ճոպանը:

— Բուքսիրի ճոպանը կկտրվի,— ասաց ինչ-որ մեկը:

— Եթե նույնիսկ դիմանա էլ,— նկատեց մյուսը,— միևնույն է, նրանց չի հաջողվի բարձրանալ բրիգի վրա:

Իրոք, նավակը չէր կարող ընդհուպ մոտենալ բրիգին, որ քեռի Ուզարը բարձրանար նավ: Կամ նավակը բրիգին դիպչելով պետք է ջարդվեր, կամ քեռի Ուզարն ընկներ ծովը:

Այժմ քամին ու ալիքները նավը դեպի նավահանգիստ էին քշում: Երբ քթակայմն ընկղմվում էր ջուրը, տախտակամածը խիստ թեքվում էր, և մենք տեսնում էինք, թե մարդիկ ինչպես են ձեռները գցում ինչին պատահի, միայն թե կարողանան ոտքի վրա մնալ:

— Բարձրացի՛ր, դե բարձրացի՛ր,— գոռում էր պարոն Լեգյոն:

Քեռի Ուզարը երեք-չորս անգամ փորձեց ցատկելով թռչել նավի վրա, սակայն նույն պահին էլ նավակը մի կողմ էր նետվում և նորից թռչկոտում բուքսիրի ճոպանի ծայրին, բրիգից քսան-երեսուն մետրի վրա՝ ալիքների կամքով մերթ առաջ, մերթ ետ նետվելով:

Վերջապես, կտրուկ դարձում կատարելով, բրիգը մոտեցավ նավակին և երբ ալիքների հետ միասին իջավ ցած, լոցմանին հաջողվեց բռնել կայմապարաններից և, մագլցելով, բարձրանալ նավ:

Թվում էր, թե քամին հաղթահարել է բոլոր արգելքները և, դիմադրության չհանդիպելով, կործանել է ամեն ինչ, ամեն ինչ քշել իր ճանապարհից: Քամին փչում էր անսանձելի ուժով, չթուլանալով ոչ մի վայրկյան, թափանցելով մարդկանց մարմնի մեջ և թույլ չտալով, որ շունչ քաշեն: Հիմա դա մի չընդհատվող հզոր հոսանք էր: Բացի խլացուցիչ սուլոցից, ուրիշ ոչինչ չէր լսվում: Փոթորկի ճնշման տակ հսկայական, տձև ալիքները վեր էին բարձրանում, փլվում միմյանց վրա և պտտվում կատաղի հորձանուտում:

Բրիգը, որի վրա թողել էին միայն ղեկավարման համար անհրաժեշտ առագաստները, սլանում էր քամու արագությամբ: Թեև հեռվում ծովի մակերեսը հարթ էր թվում, բայց բրիգը ենթարկվում էր թե նավակողային, թե ողնուցային ճոճման, մի կողքից մյուսն էր թեքվում և, թվում էր, թե ուր որ է կշրջվի... Շուտով առագաստները ծվեն-ծվեն եղան, իսկ հետո պոկվեց նաև կայմահարթակի առագաստը: Բրիգը կորցրեց ղեկավարումը և նավեզրով ափի կողմը դարձած՝ սրընթաց սլացավ դեպի ափ: Մինչև նավահանգիստ մնացել էր ընդամենը մի երկու-երեք հարյուր մետր:

Հանկարծ բոլորը բարձրաձայն աղաղակեցին:

Նավակում մնացած հայրս և մեր ազգականի տղան ոչ մեծ հեռավորության վրա հետևում էին բրիգին: Ծանր նավին չբախվելու համար, նավակն սկսեց մի կողմ հեռանալ: Սակայն այդ պահին

նավի վրա բարձրացրին եռանկյունի առագաստը և, նավահանգիստ մտնելիս, բրիգը իր սև կորպուսով ամբողջովին ծածկելով նավակը փակեց նրա ճանապարհը: Երկու վայրկյան հետո բրիգն արդեն լողում էր ֆարվատերում:

Ես, իհարկե, ավելի շատ հետևում էի նավակին, քան բրիգին: Երբ բրիգը մտավ նավահանգիստ, մի պահ իմ տեսադաշտից կորցրեցի նավակը, բայց համարյա այդ նույն վայրկյանին կրկին տեսա արդեն ծովապատնեշից այն կողմ: Մեծ նավը խանգարեց նավակին մտնել նեղ անցումը, և վերջինս հիմա պահում էր դեպի պատնեշի աջ կողմում ընկած փոքրիկ ծովախորշը, որտեղ սովորաբար փոթորկի ժամանակ էլ ծովը համեմատաբար խաղաղ է լինում:

Մակայն այդ չարաբաստիկ օրը ամենուրեք ծովը միատեսակ փոթորկոտ էր և ափին մոտենալու համար միանգամայն անհնարին էր ետ դառնալ քամուն հանդիման: Խարիսխ զցեցին, առագաստները հավաքեցին և նավակի քիթն ուղղեցին ալիքների կողմը: Նավակի և ափի միջև անցում էր մի ժայռաշղթա, որին պետք է ծածկեր մակընթացությունը, բայց կես ժամից ոչ շուտ: Արդյո՞ք խարիսխը կդիմանա այդքան ժամանակ, ճուպանը չի՞ կտրվի: Նավակը կմնա՞ ալիքների վրա, ջրասույզ չի՞ լինի:

Թեև ես դեռ երեխա էի, այնուամենայնիվ որոշ փորձ ունեի ծովային գործում և հասկանում էի, թե որքան վտանգավոր է նման սպասումը:

Իմ կողքին կանգնած մարդիկ նույնն էին ասում: Հիմա բոլորը վազելով եկան ծովափ և կանգնեցին խմբերով, որպեսզի ավելի լավ դիմադրեն քամուն:

— Եթե դիմանան, դեռ կարող են փրկվել, բայց եթե խարիսխը պոկվեց, նավակը ջարդ ու փշուր կլինի:

— Կալբրին հիանալի լողորդ է:

— Մի՞ թե հիմա կարելի է լողալ:

Տախտակն անգամ անվնաս չէր մնա ջրի, ջրիմուռների, քարերի ու փրփուրի այդ հորձանքում, որ ափ ընկնելով, խոր փոսեր էր գոյացնում:

Ժայռերին զարնվելով, ալիքները հետ էին գլորվում, ընդառաջ գնալով ծովից եկող նոր ալիքներին, հարձակվում էին մեկը մյուսի վրա և ցած հոսում ջրվեժի նման:

Նվաղած սրտով հետևում էի նավակին, երբ զգացի, որ ինչ-որ մեկը գրկում է ինձ: Շրջվեցի և տեսա մորս: Շփոթված, վախեցած նա վազելով եկել էր ինձ մոտ. բարձր ժայռոտ ափին կանգնած, նա ամեն ինչ տեսել էր:

Մի քանի հոգի, դրանց հետ նաև նավապետ Ուելը, մոտեցան մեզ: Նրանք ինչ-որ բան էին ասում, աշխատում էին մեզ հանգստացնել ու սրտապնդել, բայց խեղճ մայրիկը ոչինչ չէր պատասխանում և հայացքը չէր կտրում ծովից:

Հանկարծ լավեց մի հուսահատ ճիչ, որը խլացրեց նույնիսկ փոթորկի ոռնոցը. «Խարի՛սխը կտրվեց»:

Մայրս ինձ էլ իր հետ քարշ տալով, ծնկաչոք ընկավ գետին:

Երբ աչքերս բարձրացրի, նավակը տեսա հսկայական ալիքի կատարին, որը նրան խլեց, բարձրացրեց ու նետեց ժայռերի վրայով: Բայց երբ ալիքը զարնվեց ափին, նավակը կանգնած դիրք

ընդունեց, տեղում պտտվեց և անհետացավ ջրի տակ: Հիմա ես ոչինչ չէի տեսնում, բացի համատարած փրփուրից...

Միայն երկու օր հետո գտան հորս այլանդակված դիակը, իսկ մեր ազգականի տղայի մարմինն այդպես էլ չգտան:

IV

Վեց տարի, քանի դեռ հայրս նավարկում էր, ճաշասեղանի մոտ նրա տեղը թափուր էր: Բայց այն ժամանակ դա այնպիսի մռայլ հուսահատության մեջ չէր գցում մեզ, ինչպես հիմա, երբ նա գոհվել էր:

Հորս մահից հետո մենք չքավոր չէինք, ունեինք տուն և մի փոքրիկ հողամաս: Սակայն մայրս ստիպված էր աշխատել, որպեսզի կերակրեր ինձ ու իրեն:

Նախքան ամուսնանալը մայրս համարվում էր ավանի լավագույն հարթուկողուհին, իսկ քանի որ Պոր-Դյոյում կարված գլխարկները ողջ շրջանի բնակչուհիների սիրած գլխարկներն էին, ապա նա մշտական աշխատանք գտավ:

Պարոնայք Լեգյոնները նույնպես իրենց պարտքը համարեցին որևէ բանով օգնել մեզ:

— Ամիսը երկու անգամ դուք կաշխատեք եղբորս մոտ և երկու անգամ էլ՝ ինձ մոտ,— մայրիկիս ասաց ավագ Լեգյոն:— Այսպիսով շաբաթվա մեկ օրը ապահովված կլինեք, իսկ դա ամեննին էլ վատ չի:

Ընդամենը այդքան: Նրանց վրա թանկ չնստեց գոհված մարդկային կյանքը:

Այն ժամանակներում, որոնց մասին պատմում եմ, աշխատանքային օրը որոշում էին արեգակով: Այդ պատճառով առավոտյան դպրոցում պարապմունքներն սկսվելուց առաջ և երեկոյան դասերն ավարտելուց հետո, երբ մայրիկը դեռ տանը չէր լինում, ես կարող էի անել այն ամենը, ինչ սիրոսու ուզեի:

Դե, ինձ էլ դուր էր գալիս թափառել ծովապատնեշում կամ ծովափին, նայած ծովում մակընթացություն էր, թե տեղատվություն: Խեղճ մայրիկն իզուր աշխատում էր ինձ տանը պահել: Ես միշտ էլ հարմար առիթ էի գտնում և՛ ծլկելու, և՛ որևէ կերպ արդարանալու համար:

Դեռ լավ էր, եթե չէի կարողանում դպրոցից բացակայելու առիթ գտնել այն օրերին, երբ չէի սպասվում ոչ Նյուֆաունդլենդից նավերի ժամանում, ոչ ուժեղ մակընթացություն, ոչ էլ փոթորիկ ծովում:

Մի օր, երբ մակընթացությունն առանձնապես բարձր էր, ես փախա դասերից և դա առիթ ծառայեց մի այնպիսի հանդիպման, որը հսկայական ազդեցություն ունեցավ ոչ միայն իմ բնավորության, այլև ամբողջ ապագա կյանքիս վրա:

Սեպտեմբերի վերջն էր: Սպասում էին, որ ուրբաթ օրը, տեղատվության ժամանակ կբացվեն այն ժայռերը, որ վաղուց արդեն դուրս չէին եկել ջրից: Այդ պատճառով ուրբաթ օրը առավոտյան չգնացի դպրոց, այլ բարձրացա ժայռոտ ափը և, սպասելով տեղատվությանը, նստեցի այնտեղ նախաձաշելու: Պետք է սպասեի երկու ժամից ավելի:

Մակընթացությունը նման էր ջրհեղեղի, և եթե աչքս կտրում էի մի պահ որևէ ժայռից, ապա հաջորդ վայրկյանին այլևս չէի կարող գտնել՝ անհետանում էր ջրածածկույթի տակ: Ջուրն այնպիսի արագությամբ էր բարձրանում, որ թվում էր, թե ժայռերն իրենք են ընկղմվում: Ոչ մի ալիք չկար, միայն փրփուրի շերտն էր կապույտ ծովն անջատում դեղին ավազից: Հորիզոնի կորնթարդ գծից այն կողմ հայացքդ կորչում էր անծայրածիր գորշ տարածությունում՝ երևում էր շատ ավելի հեռուն, քան սովորական ժամանակ: Ափին կանգնած, ես հեռվում տարբերում էի Վոշել հրվանդանը և Ավալ լեռան սուր գագաթը: Դա լինում էր միայն եղանակի խիստ փոփոխումից առաջ:

Երկար ժամանակ, ինձ թվաց նույնիսկ չափից ավելի երկար, ծովը անշարժ էր, այնուհետև սկսեց ետ քաշվել նույն արագությամբ, ինչպես եկել էր: Ես հետևեցի հեռացող ծովին: Ժայռի ճեղքվածքում պահելով իմ գամբյուղն ու փայտե կոշիկները, ես քայլում էի ոտաբոբիկ, ավազի վրա թողնելով հետքեր, որոնք արագ լցվում էին ջրով:

Մեզ մոտ ափը համարյա ամենուրեք ավազոտ է, սակայն տեղ-տեղ հանդիպում են ժայռերի բեկորներ, որոնք դեռ չէր ողողել ծովը. տեղատվության ժամանակ դրանք նմանվում են կղզյակների: Երբ բարձրացա այդպիսի կղզյակներից մեկի վրա, որպեսզի ծովային ջրիմուռներում ծովախեցգետիններ փնտրեմ, լսեցի, ինչպես մեկը ձայն տվեց ինձ:

Նա, ում խիղճը մաքուր չէ, սովորաբար աչքի չի ընկնում քաջությամբ, այդ պատճառով էլ վախեցա: Բայց ետ նայելով հասկացա, որ վախենալու կարիք չկա և որ ձայն տվող մարդն ինձ դպրոց չի ուղարկի: Դա մի ճերմակամորուք ծեր պարոն էր, որին մեր ավանում անվանում էին «Կիրակի», որովհետև նա իր ծառայի անունը դրել էր «Շաբաթ»: Իրականում նրա անունը պարոն Բիորել էր, և նա ապրում էր մի փոքրիկ կղզում, ուր կարելի էր Պոր-Դյոյից ոտքով հասնել տասնհինգ բուլետով: Առաջ այդ փոքրիկ կղզին նեղ պարանոցով միացած էր մայրցամաքին, բայց պարոն Բիորելը կապը վերացրեց և դարձրեց իսկական կղզի: Մակընթացության ժամանակ ծովը չորս կողմից ողողում էր այդ կղզին: Պարոն Բիորելը ամբողջ շրջակայքում խիստ տարօրինակ մարդու համբավ ուներ: Նրա մասին այդպիսի կարծիք են կազմել այն պատճառով, որ բոլոր եղանակներին շրջում էր հսկայական հովանոցը գլխին պահած, ապրում էր լիակատար մենակության մեջ, իսկ ամենից շատ այն պատճառով, որ մարդկանց դիմում էր տարօրինակ ձևով. նրա խոսքերում միաժամանակ հնչում էր և խստություն, և բարություն:

— Է՛յ, փոքրիկ,— բղավեց նա:— Ի՞նչ ես անում այստեղ:

— Միթե՞ չեք տեսնում, ծովախեցգետին եմ բռնում:

— Այդ դեպքում թող քո ծովախեցգետիններին և արի իմ հետևից: Դու կտանես իմ ցանցը և, ճիշտ եմ ասում, չես ափսոսա:

Ես լռում էի, բայց իմ թթված դեմքից նա հասկացավ պատասխանս:

— Ահա թե ինչ, չե՞ս ուզում...

— Գիտեք...

— Կարող ես չբացատրել, ես գիտեմ, թե ինչու չես ուզում: Բայց նախ ասա, թե ինչպես է անունդ:

— Ռոմեն Կալբրի:

— Դու այն Կալբրիի որդի՞ն ես, որ անցյալ տարի գոհվեց բրիգդ փրկելիս: Քո հայրը իսկական մարդ էր:

Ես շատ էի հպարտանում իմ հայրիկով և այդ խոսքերից հետո պակաս անվստահությամբ նայեցի պարոն Բիորելին:

— Դու ինը տարեկան ես,— ձեռքը գլխիս դնելով և ուղիղ աչքերիս նայելով, շարունակեց նա,— այսօր ուրբաթ է, հիմա կեսօր է, և դու փախել ես դպրոցից:

Ես շիկնեցի և գլուխս կախեցի:

— Որ դպրոցից փախել ես, դժվար չի կռահել,— շարունակեց նա,— իսկ հիմա կասեմ քեզ, թե ինչու: Մի վախեցիր, հիմարիկ, ես բոլորովին էլ կախարդ չեմ: Ապա նայիր աչքերիս: Ուզում էիր տեղատվությունից օգտվելով որևէ բան բռնել:

— Այո, պարոն, և տեսնել «Շան գլուխը»:

«Շան գլուխ» էր կոչվում այն ժայռը, որը շատ հազվադեպ էր դուրս գալիս ջրից:

— Հիանալի՜ է: Ես էլ եմ գնում դեպի «Շան գլուխը»: Վերցրու իմ ցանցը և գնանք միասին:

Ես լուռ հետևեցի նրան, ապշած մնալով, որ այդպես հեշտությամբ կռահեց ամեն ինչ: Թեև վաղուց էի ճանաչում նրան, բայց առաջին անգամ էի հետը խոսում, այդ պատճառով էլ չէի ենթադրում, թե նա ամենից շատ հետաքրքրվում է մարդկանց վարքագծի գաղտնի պատճառներով: Սուր խորաթափանցությունն ու մեծ կենսափորձը հաճախ օգնում էին նրան հասկանալ ճշմարտությունը, իսկ քանի որ նա ոչ ոքից չէր վախենում, ապա ուղղակի ասում էր իր կարծիքը, հաշվի չառնելով, հաճելի է դա շրջապատի համար, թե՞ վիրավորական:

Ես բոլորովին չէի ցանկանում խոսել նրա հետ, ավելի ճիշտ՝ պատասխանել նրա բազմաթիվ հարցերին: Սակայն մեր հանդիպումից քառորդ ժամ էլ չէր անցել, իսկ նա արդեն ամեն ինչ գիտեր իմ մասին, իմ հայրիկի, մայրիկի և մեր ազգականների մասին: Այն, ինչ ես պատմեցի Հնդկաստանում ապրող քեռուս մասին, ըստ երևույթին, հետաքրքրեց նրան:

— Հետաքրքիր է,— ասաց նա:— Արկածների ծարավ, նորմանդական ու փյունիկյան արյունների խառնուրդ, ահա թե որտեղից կարող էին հայտնվել Գալբրինները կամ Կալբրինները:

Սակայն այդ հարցուփորձը չէր խանգարում նրան ուշադրությամբ գննել ոտքերի տակի ավազը և ժամանակ առ ժամանակ գտնել խեցիներ ու խոտեր, որոնք հրամայում էր ինձ դարսել ցանցի մեջ:

— Ինչպե՞ս է կոչվում սա,— ամեն անգամ նոր բան գտնելիս, հարցնում էր նա:

Ավելի հաճախ ես լռում էի: Թեև ինձ հայտնի էին բոլոր խոտերն ու խխունջները, բայց ես գաղափար չունեի, թե դրանք ինչպես են կոչվում:

— Դու քո երկրի իսկական զավակն ես,— վրդովմունքով ասաց նա:— Դուք միայն գիտեք թալանել ու ամայացնել ծովը, այն ձեր վաղեմի թշնամին է, որի հետ միշտ պետք է զգույշ լինել: Ինչպե՞ս չեք հասկանում, որ ծովը ձեզ համար նույնպիսի կերակրող մայր է, ինչպես հողը, և ծովային հարթավայրերն ու լեռները ծածկող ստորջրյա անտառներում ավելի շատ բազմատեսակ կենդանիներ են ապրում, քան ցամաքի անտառներում: Միթե՞ անծայրածիր հորիզոնը, ամպերն ու ալիքները ձեզ ասում են միայն փոթորիկների ու նավաբեկությունների մասին:

Պարոն Բիորելն այնպես եռանդագին էր խոսում, որ ես խիստ շփոթվեցի: Բայց ավելի շուտ հաղորդում եմ նրա խոսքերից ստացած տպավորությունը, քան արտասանած բառերը, որոնք ինձ

համար դժվար էր հիշել, որովհետև դրանց իմաստը չէի հասկանում: Սակայն տպավորությունը շատ մեծ էր և հիմա էլ տեսնում եմ պարոն Բիորելին իր հովանոցով՝ ձեռքը դեպի ծովը պարզած և ինձ, որ լարված ուշադրությամբ հետևում էի նրա հայացքին:

— Այստեղ արի,— մատնացույց անելով ժայռի մեջ եղած խորությունը, որտեղ դեռ ջուր էր մնացել, շարունակեց նա:— Ուզում եմ որոշ տեղեկություններ տալ քեզ ծովի բնակիչների մասին: Քո կարծիքով, սա ի՞նչ է:

Նա մատով ցույց տվեց քարին կպած մուգ դարչնագույն, փոքրիկ ցողունը: Այդ ցողունի վրա օրորվում էր դեղին ծաղկաբաժակով մի փոքրիկ ծաղիկ, որի կտրտված եզրերը ձյան պես ճերմակ էին:

— Սա բույս է, թե՛ կենդանի: Իհարկե, չգիտես: Դե, ես քեզ կասեմ, որ սա կենդանի է: Եթե ժամանակ ունենայինք ավելի երկար մնալու այստեղ դու, հավանաբար, կտեսնեիր, թե ինչպես է տեղից շարժվում, իսկ քեզ, անշուշտ, հայտնի է, որ ծաղիկները չեն զբոսնում: Ավելի մոտիկից հետևիր և կտեսնես, թե այդ ծաղիկն ինչպես է ձգվում, կծկվում, օրորվում: Գիտնականները դրան անվանում են ծովային հողմածաղիկ: Բայց որպեսզի դու համոզվես, թե դա իրոք կենդանի է, մի հաստ ծովախեցգետին բռնիր: Դու, իհարկե, գիտես, որ ծաղիկները չեն ուտում, ճի՞շտ է:

Այդ ասելով, նա վերցրեց ծովախեցգետինը և գցեց հողմածաղիկի բաժակի մեջ: Ծաղկաբաժակը փակվեց և կուլ տվեց ծովախեցգետնին...

Ջրով լցված փոսերից մեկում ես գտա մի փոքրիկ կատվածուկ: Աշխատելով թաքնվել, կատվածուկն իր լողակները թաղել էր ավազի մեջ, բայց ես նրան նկատեցի մարմնի դարչնագույն ու սպիտակ բծերից և բերեցի պարոն Բիորելին:

— Դու կատվածուկը գտար նրա վրա եղած բծերով, գիշատիչ ձկներն էլ են դրանցով գտնում: Ծովի հատակում մշտական պատերազմ է գնում. ուժեղները սպանում են թույլերին, ինչպես որ հաճախ պատահում է նաև ցամաքում, միայն ցամաքում դա արվում է փառքի կամ հարստության համար: Խեղճ կատվածուկները վատ են լողում, նրանք բոլորովին կանհետանային երկրի երեսից, եթե բնությունը չհոգար նրանց մասին: Տես, դրանց պոչը ծածկված է փշերով ու սեպերով, դրա համար էլ երբ կատվածուկը փախչելով ազատվում է հետապնդումից, չի կարելի նրան հետևից բռնել, և թշնամիները, որոնց ուշադրությունը գրավել էին կատվածկան բծերը, նահանջում են նրա զրահի առջև: Դրանում է կայանում հավասարակշռության ընդհանուր օրենքը, որին դու առայժմ կարող ես միայն հետևել, բայց կհասկանաս ավելի ուշ, երբ մեծանաս:

Ես հիացած էի: Կարող եք պատկերացնել, թե այդ դիտողական դասը ինչպիսի տպավորություն թողեց ինձ նման հարցասեր ու հետաքրքրվող տղայի վրա, որը շարունակ հարցեր էր տալիս, իսկ այդ հարցերին երբեք ոչ ոք չէր պատասխանում: Պարոն Բիորելի հանդեպ տաճած երկյուղը, որն առաջ ստիպում էր ինձ լռել, արագ անհետացավ:

Նահանջող ծովի ետևից քայլելով, մենք հասանք մինչև «Շան գլուխը»: Քանի ժամ մնացինք այնտեղ չգիտեմ: Ես բոլորովին մոռացել էի ժամանակի մասին: Ժայռից ժայռ էի վազում և պարոն Բիորելի համար բերում խեցիներ ու բույսեր, որպիսիք առաջին անգամ էի տեսնում: Գրպաններս լցրել էի բազմապիսի նորություններով, որոնք առաջին հայացքից շատ հետաքրքիր էին թվում, բայց շուտով դեն էի գցում և փոխարինում ուրիշներով, որոնք հրապուրում էին ինձ իրենց նորությամբ:

Հանկարծ շուրջս նայելով, ես տեսա ափը, որն անհետացել էր մշուշում: Ամբողջ երկինքը միատեսակ բաց մոխրագույն էր, իսկ ծովն այնքան խաղաղ էր, որ հազիվ էինք լսում նրա ճողվիյունը:

Եթե մենակ լինեի, անմիջապես կվերադառնայի, որովհետև լավ գիտեի, թե մառախուղի ժամանակ որքան դժվար է ավազի վրա ճանապարհ գտնելը, բայց պարոն Բիորելը ոչինչ չէր ասում, և ես չհամարձակվեցի այդ մասին ասել նրան:

Մինչդեռ մառախուղը, որ պատել էր ամբողջ ափը, արդեն մոտենում էր մեզ և ծխի քուլաների նման գետնից ձգվում մինչև երկինք:

— Ա՛յ, ա՛յ, ա՛յ, ահա և մառախուղը,— ասաց պարոն Բիորելը:— Եթե չենք ուզում աչքակապուկ խաղալ, որ բավական վտանգավոր կլիներ այստեղ, պետք է իսկույն վերադառնանք տուն: Վերցրու ցանցը:

Հենց այդ պահին մառախուղը վրա հասավ ու պատեց մեզ, մենք այլևս չէինք կարողանում զանազանել ոչ ափը, ոչ էլ մեր ետևում հիսուն քայլ հեռավորության վրա գտնվող ծովը. ասես սուզվել էինք գորշ մշուշի մեջ:

— Ծովն այնտեղ է,— հանգիստ ասաց պարոն Բիորելը:— Մենք պետք է ուղիղ դեպի առաջ գնանք:

Սակայն ավազի վրայով ինչպե՞ս գնալ, «ուղիղ դեպի առաջ», երբ ոչ մի տեղ չկա ո՛չ կաճան, ո՛չ շավիղ, ո՛չ որևէ հետք, ո՛չ էլ նույնիսկ մի գառիվայր կամ գառիվեր, որ ցույց տար, թե իջնում կամ բարձրանում ես:

Մեր վիճակը բարդանում էր նաև այն պատճառով, որ մինչև ափը մնացել էր կես լոյից² ոչ պակաս:

Տասը բռպե էլ չէր անցել, երբ ստիպված եղանք կանգ առնել. մենք հանդիպել էինք քարակույտերի:

— «Կանաչ քարերն» են,— ասացի ես:

— Ոչ, սա «Պուլոյուն» է,— առարկեց պարոն Բիորելը:

— Ճիշտ եմ ասում, պարոն, «Կանաչ քարերն են»:

Նա կամաց խփեց այտիս.

— Այդպես, այդպես: Կարծես թե մենք մի քիչ համառ ենք:

Եթե դրանք «Կանաչ քարերն» էին, ապա մենք պետք է թեքվեինք աջ և շարժվելով ժայռերի երկարությամբ, գնայինք Պոր-Դյոյի ուղղությամբ: Իսկ եթե դրանք «Պուլոյուն» քարերն էին, հարկավոր էր թեքվել ձախ, այլապես կգնայինք ավանի հակառակ կողմը:

Ցերեկն այդ ժայռերը հեշտությամբ կարելի է տարբերել միմյանցից: Նույնիսկ գիշերը լուսնի լույսով անմիջապես կճանաչեի դրանք: Բայց հիմա, մառախուղի մեջ մենք միայն տեսնում էինք ջրիմուռներով ծածկված քարեր, և ուրիշ ոչինչ:

— Եկ ականջ դնենք,— ասաց պարոն Բիորելը:— Ափից եկող ձայները կօգնեն մեզ կողմնորոշվել:

² Լյո — հին ֆրանսիական երկարության չափ, հավասար է մոտավորապես 4 կմ:

Բայց մենք ոչինչ չլսեցինք. ո՛չ ավից եկող ձայները, ո՛չ ծովի աղմուկը, ո՛չ էլ քամու շունչը: Ասես ընկղմվել էինք ճերմակ բամբակի մեջ, որը փակել էր մեր աչքերն ու ականջները:

— Մա «Պուլդյուն» է,— հայտարարեց պարոն Բիորելը:

Այլևս չհամարձակվեցի նրան հակաձառել և հետևելով նրան, թեքվեցի դեպի ձախ:

— Մոտեցիր ինձ, տղաս,— քնքշությամբ ասաց նա:— Ձեռք ձեռքի տանք, որպեսզի չկորցնենք միմյանց: Մե՛կ, երկո՛ւս, գնանք համաքայլ:

Տասը բույե ևս քայլեցինք: Հանկարծ նա սեղմեց ձեռքս. կամաց ճողփյուն լսվեց: Նշանակում է սխալվել էինք. մեր հանդիպած քարակույտերը «Կանաչ քարերն» էին, և ոչ թե «Պուլդյուն», և մենք ուղիղ գնում էինք դեպի ծովը, որից հիմա մի քանի քայլ էինք հեռու:

— Դու իրավացի էիր,— ասաց նա:— Հարկավոր էր աջ գնալ: Վերադառնանք:

Վերադառնալ, բայց ո՞ւր: Ո՞ր կողմն ուղղվել: Հիմա գիտեինք, թե որտեղ է ծովը, որովհետև լսում էինք ինչպես են ալիքները մեղմ ճղփում, բայց երբ հեռանանք, այլևս ոչինչ չենք լսի և չենք իմանա՝ գնում ենք դեպի ավիը, թե՞ հակառակ կողմը:

Խավարն ավելի ու ավելի էր թանձրանում, հիմա մառախուղին միացել էր նաև վրա հասնող գիշերվա մթությունը: Մի քանի բույե հետո արդեն չէինք նշմարում մեր սեփական ոտքերը, և պարոն Բիորելը մեծ դժվարությամբ կարողացավ ժամացույցի վրա տեսնել, թե ժամը քանիսն է: Պարզվեց, որ արդեն ժամը վեցն է: Մի քանի բույեից պետք է սկսվեր մակընթացությունը:

— Հարկավոր է շտապել,— ասաց պարոն Բիորելը: — Եթե ծովը հասնի մեր ետևից, ապա մեզանից ավելի արագ կգնա. չէ որ հսկայի նման մի քայլով յոթ վերստ կտրող կոշիկներ ունի:

Ձեռքս դողաց, և նա հասկացավ, որ վախեցա:

— Մի վախեցիր, փոքրիկս, շուտով ցամաքից բարձրացող քամին կցրի մառախուղը: Բացի այդ, մենք կտեսնենք փարոսը, որ ուր որ է կվառեն...

Սակայն դա ինձ ամենևին չհանգստացրեց: Ես հիանալի հասկանում էի, որ այդպիսի մառախուղի ժամանակ մենք չենք տեսնի փարոսը: Եվ ես ականա հիշեցի այն երեք կանանց, որոնք անցյալ տարի մնացել էին մառախուղի մեջ ու խեղդվել: Նրանց մարմինները գտան միայն ութ օր հետո: Ես տեսա, թե նրանց ինչպես բերեցին Պոր-Դյո, և հիմա նրանք կանգնել էին իմ աչքի առաջ իրենց զարհուրելի տեսքով, կանաչ գույն ստացած խղճուկ ցնցոտիներով:

Որքան էլ զսպում էի ինձ, այնուամենայնիվ չդիմացա և լաց եղա: Պարոն Բիորելն ամենևին չբարկացավ, այլ սկսեց սիրալիորեն հանգստացնել ինձ.

— Արի գոռանք: Եթե բարձր ավիին մաքսային հսկիչ լինի, ապա կլսի ու կպատասխանի մեզ: Այդ անբանները որևէ օգուտ պետք է տան, թե՞ ոչ:

Մենք սկսեցինք գոռալ: Նա բարձրաձայն, իսկ ես լացից ընդհատվող ձայնով: Ոչ ոք չպատասխանեց մեզ, նույնիսկ արձագանքը: Մեռելային լռությունից հոգիս լցվեց ավելի մեծ սարսափով. ինձ թվաց, թե արդեն մեռել եմ և պառկած եմ ծովի հատակում:

— Գնանք,— ասաց պարոն Բիորելը:— Կարո՞ղ էս քայլել:

Նա բռնեց ձեռքս, և մենք հաջողության հույսով շարժվեցինք առաջ: Քանի որ նա ժամանակ առ ժամանակ խոսում էր՝ աշխատելով ինձ հանգստացնել, ես զգում էի, որ ինքն էլ խիստ անհանգստացած է և չի հավատում սեփական խոսքերին:

Մենք արդեն քայլում էինք կես ժամից ավելի, և հանկարծ այնպիսի հուսահատություն պատեց ինձ, որ ձեռքս դուրս քաշեցի ու ընկա ավազին:

— Թույլ տվեք ինձ մեռնել այստեղ, պարոն,— հեծկլտալով, ասացի ես:

— Դե ահա, սկսվեց երկրորդ մակընթացությունը,— բացականչեց նա:— Ավելի լավ է արցունքներդ սրբես: Միթե՞ կարող է մեռնել նա, ով մայր ունի: Շուտ վեր կաց, գնանք:

Սակայն մայրիկի մասին հիշատակելն էլ չազդեց ինձ վրա, ես նույնիսկ չէի կարողանում տեղից շարժվել:

Հանկարծ բացականչեցի.

— Պարո՛ն:

— Ի՞նչ եղավ, տղաս:

— Այստեղ, այստե՛ղ: Շուտ կռացեք:

— Ուզում ես, որ քեզ գրկա՞ծ տանեմ:

— Ոչ, պարոն, հապա շոշափեք:

Եվ նրա ձեռքը բռնելով, դրեցի իմ ձեռքի կողքին:

— Հը, ի՞նչ է:

— Միթե՞ չեք զգում: Այստեղ ջուր կա:

Մեր ծովափն ամբողջովին ծածկված էր նուրբ, խոր ու ծակոտկեն ավազով: Սպունգի նման խոնավություն ներծծած ավազը տեղատվության ժամանակ սկսում է կաթիլ առ կաթիլ բաց թողնել ջուրը: Կաթիլները միասին հավաքվելով, կազմում են փոքրիկ, համարյա աննկատելի շիթեր, որոնք թեթև գառիվայր գետնի վրայով հոսում են դեպի ծովը: Իմ ձեռքը շոշափել էր այդ փոքրիկ շիթերից մեկը:

— Ափն այնտեղ է,— ես ձեռքս պարզեցի այն ուղղությամբ, որտեղից հոսում էր ջուրը:

Այդ նույն պահին էլ վեր թռա տեղից: Հույսը թևավորեց ինձ, այլևս պարոն Բիորելը ստիպված չէր ինձ քարշ տալ: Ես արագ առաջ էի շարժվում և ամեն վայրկյան ձեռքս հպում ավազին, որպեսզի ջրի հոսանքով որոշեմ ճիշտ ուղղությունը:

— Կեցցե՛ս,— ասաց պարոն Բիորելը:— Առանց քեզ մենք կարող էինք կործանվել:

Բայց նրա ասելուց հինգ րոպե հետո ինձ թվաց, որ ջուրն անհետացավ: Մի քանի քայլ ևս արեցինք, և ձեռքս մեկնելով շոշափեցի չոր ավազը:

— Այլևս ջուր չկա:

Նա կռացավ և երկու ձեռքով շոշափեց ավազը: Իրոք, բացի մեր մատներին կաչող թեթևակի խոնավ ավազից, ուրիշ ոչինչ չկար:

Այդ նույն պահին ես լսեցի թեթև ճողփյուն: Պարոն Բիորելը նույնպես լսեց:

— Կարծում եմ, որ սխալվել էս,— ասաց նա:— Մենք հավանաբար գնում ենք դեպի ծովը:

— Ոչ, պարոն, ոչ, հավատացնում եմ ձեզ: Եթե ծովին մոտենայինք, ապա ավազը բոլորովին թաց կլիներ:

Պարոն Բիորելը լուռ ոտքի կանգնեց: Մենք կանգնել էինք լիակատար անվճռականության մեջ, կրկին շփոթվելով, չիմանալով ինչ անել: Նա հանեց ժամացույցը: Այնքան մուր էր, որ հնարավոր չէր սլաքները տեսնել, և նա ստիպեց, որ ժամացույցը զարկի: Վերջինս զարկեց վեց և երեք քառորդ:

— Արդեն մոտավորապես մեկ ժամ է, ինչ մակընթացությունն սկսվել է:

— Այդ դեպքում, պարոն, ինքներդ էլ տեսնում եք, որ մոտենում ենք ափին:

Եվ կարծես ի հաստատումն իմ ասածի, մեր թիկունքում լավեց մի խուլ թնդյուն: Հնարավոր չէր սխալվել, մակընթացությունը գալիս էր մեր ետևից:

— Նշանակում է, մեր առջև գետակ է,— ասաց նա:

— Ես էլ եմ այդպես կարծում, պարոն:

Երերուն ավազով ծածկված ծովափի մակերեսը չի կարող միանգամայն հարթ լինել: Տեղ-տեղ գոյանում են մեծ թմբեր, որոնք միմյանցից անջատված են փոքրիկ ձորակներով: Թեև ծովի հատակի մակերևութի այդ փոփոխություններն այնքան էլ մեծ չեն և աչքի համար համարյա աննկատելի են, բայց մակընթացության ժամանակ ջուրը նախ ողողում է ձորակները և չոր թողնում բարձրադիր վայրերը, ստեղծելով կղզյակներ, որոնք մի կողմից ողողվում են վրա հասնող մակընթացությամբ, իսկ մնացած կողմերից այն ջրով, որ ձորակներով հոսում է, ինչպես գետի հունով: Մենք այժմ կանգնած էինք այդպիսի գետակներից մեկի առջև: Ամբողջ հարցն այն էր, թե գետակն ինչ խորություն ունի:

— Պետք է անցնենք գետակը,— ասաց պարոն Բիորելը:— Ամուր բռնիր ինձնից:

Տեսնելով, որ տատանվում եմ, նա հարցրեց.

— Ինչ է, մրսելո՞ւց ես վախենում: Ընտրիր որն է լավ՝ ոտքերը թրջել, թե սպասել, մինչև ջուրը լրիվ ծածկի քեզ: Ես գերադասում եմ ոտքերս թրջել:

— Պարոն, այդպես չենք կարող գետակն անցնել. ջրի մեջ կկորցնենք միմյանց:

— Նշանակում է, ուզում ես մնալ այստեղ և հայտնվել ծովո՞ւմ:

— Ոչ, այդ չեմ ասում: Առաջ դուք գնացեք, իսկ ես կմնամ այստեղ ու կգոռամ: Դուք կգնաք իմ ձայնի ուղղությամբ, իսկ երբ գետակն անցնեք, կսկսեք ձայն տալ ինձ, և այն ժամանակ ես կգամ դեպի ձեր ձայնը:

— Առաջ դու գնա :

— Ոչ, չեմ գնա: Ես ձեզանից լավ եմ լողում:

— Դու քաջ տղա ես, արի համբուրեմ քեզ:

Եվ նա ինձ համբուրեց, ինչպես հարազատ որդուն: Նրա փաղաքշանքը խորապես հուզեց ինձ: Սակայն չէր կարելի ժամանակ կորցնել՝ ծովն արագորեն բարձրանում էր: Բուպե առ բուպե ավելի ու ավելի էր լսվում է նրա շունչը... Պարոն Բիորելը մտավ ջուրը, իսկ ես սկսեցի գոռալ:

— Մի գոռա,— լսվեց նրա ձայնը (ինքն արդեն չէր երևում),— ավելի լավ է որևէ բան երգես:

— Լավ, պարոն,— պատասխանեցի ես և սկսեցի երգել.

Դեռ բարուրում էր շատ գեղեցիկ,

Կայտառ Ռաժոն մեր փոքրիկ:

Եվ նախանձում էին մարդիկ

Նրա գեղեցկությանը բացառիկ:

Տրա-յա-յա՛, տրա-յա-յա՛:

Ես դադարեցի երգել ու հարցրի.

— Ինչպե՞ս է, պարոն, հատակը շոշափեցի՞ք:

— Այո, տղաս: Կարծես գնալով խորությունը պակասում է: Շարունակիր երգել:

Նրա ալ կարմիր շուրթերը

Շողում էին գազարի պես:

Ականջներին հասնող բերանը

Քիչ է մնում կապկպես:

Տրա-յա-յա՛, տրա-յա-յա՛:

Արդեն պատրաստվում էի սկսել երրորդ տունը, երբ լսեցի պարոն Բիորելի ձայնը.

— Հիմա դու արի: Ես արդեն համարյա դուրս եմ եկել, ջուրը միայն մինչև ծնկներս է հասնում: Դե, շո՛ւտ արի:

Եվ նա սկսեց առանց խոսքերի մի տխուր երգ երգել, որ նման էր թաղման քայլերգի :

Ես մտա ջուրը և գրեթե անմիջապես կորցրի հատակը, որովհետև հասակով շատ ավելի ցածր էի նրանից, բայց լողում էի ձկան նման և ամենևին չվախեցա: Սակայն ուժեղ հոսանքը քշում էր ինձ և թույլ չէր տալիս ուղիղ լողալ: Այդ պատճառով մոտավորապես քառորդ ժամ տևեց, մինչև կարողացա հասնել պարոն Բիորելին:

Երբ լողալով մոտեցա նրան, մենք անմիջապես դուրս եկանք ջրից և հայտնվեցինք ավազի վրա:

Նա այնպես թեթևացած շունչ քաշեց, որ ես հասկացա, թե որքան է անհանգստացել ինձ համար:

— Մի քիչ քթախոտ քաշենք,— ասաց նա:— Մենք արժանի ենք դրան:

Բայց հազիվ էր ձեռքը ծխախոտատուփին մոտեցրել, երբ մատները թափահարելով բարձրաձայն գոչեց.

— Ծխախոտը դարձել է սուրճի մրուր, իսկ ժամացույցը, հավանաբար, պտտվում է, ինչպես ջուրն ընկած աղացանիվը: Ի՞նչ կասի դրա համար իմ Շաբաթը:

Չգիտեմ ինչու, բայց ես բռնորովին չեի վախենում: Ինձ թվում էր, որ բոլոր վտանգներն անցել են:

Սակայն սխալվում էի. մինչև ավելի շատ տարածություն էր մնացել, քան անցել էինք: Վտանգն ամեննին էլ չէր պակասել. մեր առջև կանգնած էին այն նույն դժվարությունները, ինչ առաջ:

Մառախուղն ավելի թանձրացավ, գիշերը վրա հասավ և, թեպետ մոտենում էինք ավիին, չէինք լսում ցամաքի մոտիկությունը ցույց տվող և ոչ մի ձայն. ո՛չ կովերի բառաչ, ո՛չ մտրակի զարկ, ո՛չ սայլի ճռռոց, ոչ մի բան: Առջևում չարագույժ լռություն էր, ետևում՝ ծովային մակընթացության խուլ աղմուկը:

Այժմ ծովը մեր միակ կողմնացույցն էր, բայց անհուսալի ու նենգ կողմնացույց: Եթե արագ գնանք, կարող ենք շեղվել ճանապարհից, իսկ եթե հապաղենք, ծովը կհասնի մեր ետևից և կկլանի մեզ ավելի շուտ, քան կկարողանանք հասնել առափնյա քարերին, որտեղ ավին ավելի զառիթափ է և մակընթացությունը դանդաղում է:

Եվ այսպես, ձեռք-ձեռքի տված, մենք կրկին շարժեցինք առաջ: Ես հաճախ կռանում էի, որպեսզի շոշափեմ ավազը, բայց ոչ մի տեղ չեի գտնում դեպի ծովը հոսող ջուր: Ինչպես երևում է, մենք անհարթ մակերես ունեցող ծովապատնեշում էինք: Այստեղ ջուրը մնում էր միայն փոսերում կամ էլ ոչ մեծ շիթերով տարածվում էր ավիին զուգահեռ:

Հույսը, որ թևավորել էր ինձ, երբ բարեհաջող անցանք գետակը, սկսեց աստիճանաբար անհետանալ... Բայց հանկարծ երկուսս էլ կանգ առանք: Մեզ շրջապատող մեռելային լռության մեջ լավեց զանգի դողանջ: Երկու կամ երեք վայրկյան հետո լավեց երկրորդ զարկը, այնուհետև՝ երրորդը:

Պոր-Պյոյում զարկում էին երեկոյան ժամերգության զանգերը: Հիմա կարող էինք համարձակ գնալ այդ դողանջի ուղղությամբ. մենք փրկվա՛ծ էինք: Առանց մի բառ արտասանելու, ասես լուռ համաձայնությամբ սկսեցինք վազել:

— Հարկավոր է շտապել,— ասաց պարոն Բիրոելը:— Ջանգերը երկար չեն շարունակվի:

Մենք վազում էինք շնչասպառ լինելով և հուզմունքով հաշվում զանգի դողանջները: Եվ թեպետ ոչ մի բառ չէինք փոխանակում, ես հիանալի հասկանում էի, որ եթե զանգը ավելի շուտ դադարի հնչել, քան մենք կհասնենք առափնյա քարերին, ապա կրկին վտանգի մեջ կլինենք:

Ջանգերի դողանջը դադարեց, իսկ մենք դեռ շարունակում էինք վազել ավազի վրայով: Շատ հավանական էր, որ քարերը մեզանից մի քանի քայլ էին հեռու... Գուցե բավական էր ոտքը պարզել, որպեսզի դիպչեինք դրանց, սակայն ո՞ր կողմն անել այդ քայլը: Չէ՞ որ դա կարող էր կամ փրկել մեզ, կամ նորից ենթարկել ահավոր վտանգի, որից քիչ առաջ խույս տվեցինք:

— Կանգ առնենք,— ասաց պարոն Բիրոելը:— Եվ արի այլևս կուրորեն ոչ մի քայլ չանենք: Հապա շոշափիր ավազը:

Ես ձեռքերս խրեցի ավազի մեջ և սպասեցի. երկու ձեռքս էլ մնացին չոր:

— Դու չհաշվեցի՞ր, թե քանի գետակ ենք անցել:

— Ոչ, պարոն:

— Նշանակում է, չգիտենք, մեր ճանապարհին էլի՞ կհանդիպեն դրանք: Եթե չկան, ապա կարող ենք կանգնել ու սպասել, իսկ երբ ծովը հասնի մեր ետևից, հանգիստ գնալ մակընթացության առջևից:

— Իսկ եթե չենք անցել բոլոր գետակները...

Նա ոչինչ չպատասխանեց: Այն, ինչ կարող էր ինձ ասել, ես իրենից վատ չգիտեի. եթե մեր և ավի միջև էլի գետակ կար, ապա մինչ մենք այստեղ կանգնած սպասում ենք, ծովն աննկատելի կողողի այն: Ստիպված կլինենք նորից լողալով անցնել և այն ժամանակ հոսանքը կարող է մեզ քշել ու գցել այնպիսի ժայռերի վրա, որտեղից երբեք չենք կարող դուրս գալ:

Տագնապով ու սարսափով համակված, մենք կանգնել էինք, չիմանալով, ինչ նախաձեռնել. չհամարձակվելով գնալ ո՛չ առաջ, ո՛չ հետ, ո՛չ աջ, ո՛չ ձախ: Կանգնած մնալով այնտեղ, ուր վերջին անգամ լսեցինք զանգի դողանջը, մենք գիտեինք, որ ավիը մեր առջև է, գիտեինք դա նույնքան լավ, ինչպես եթե տեսնեինք սեփական աչքերով, բայց թե թեկուզ մի քայլ էլ անեինք, նորից կհայտնվեինք լիակատար անորոշության մեջ: Հիմա միայն կարելի էր հույս դնել այն բանի վրա, որ քամու հոսանքը կցրի մառախուղը, և մենք կտեսնենք փարոսի լույսը: Հուսալ, թե կարող ենք ավից որևէ ձայն լսել, չէր կարելի: Ըստ երևույթին, մենք ավանին մոտեցել էինք հարավային կողմից, նշանակում է, հայտնվել էինք ամայի ժայռոտ ավերի մոտ, որտեղ այս ժամերին ոչ ոք չի լինում: Բայց օդը կարծես անշարժացել էր, իսկ մառախուղն այնպես էր թանձրացել, որ քամու վրա կարելի էր հույս դնել միայն այնպիսի վիճակում, ինչպիսին մերն էր, երբ հույս ես դնում անհնարին բանի վրա կամ սպասում հրաշքի:

Եվ այդպիսի հրաշք կատարվեց. գանգը նորից սկսեց դողանջել:

Դատելով իրար հաջորդող զանգերից, հասկացանք, որ կնունք են կատարում: Այս անգամ կարող էինք համոզված լինել, որ կհասնենք ավին, որովհետև մկրտության զանգերը տևում են ուղիղ կես ժամ, իսկ երբեմն էլ ավելի, նայած թե կնքահայրը որքան առատորեն է վարձատրել ժամկոչին:

Տասը բոպեից էլ պակաս տևեց, մինչև վազելով հասանք քարքարոտ ավիը և, վեր բարձրանալով, քարափի շղթայի երկարությամբ գնացինք մինչև այն ամբարտակը, որ պարոն Բիորելի կղզյակը միացնում էր մեր ավանին: Մենք փրկվա՞ծ էինք:

Պարոն Բիորելն ուզում էր ինձ տանել իր մոտ, բայց չնայած նրա խնդրանքներին, ես հրաժարվեցի: Շտապում էի տուն, որովհետև վախենում էի, թե մայրիկն արդեն վերադարձել է և ինձ է սպասում:

— Լավ, մայրիկին ասա, որ վաղը երեկոյան կանցնեմ ձեզ մոտ:

Ես բոլորովին չէի ուզում, որ նա գար մեզ մոտ և մայրիկին պատմեր, թե որտեղ եմ եղել այսօր, բայց ինչպե՞ս արգելել:

Մայրիկը տանը չէր: Մինչև նրա վերադառնալը հասցրեցի հագուստներս փոխել և կրակը վառել:

Ես նրան հայտնեցի պարոն Բիորելի խնդրանքը:

Պարոն Բիորելը եկավ հաջորդ օրը՝ երեկոյան, ինչպես խոստացել էր: Ես սպասում էի նրան, բայց երբ լսեցի նրա ոտնաձայնը, քիչ մնաց փախչելի:

Աթոռին նստելով, պարոն Բիորելը հարցրեց մայրիկին.

— Ձեր տղան պատմե՞ց, թե ինչ է արել երեկ:

— Ոչ, պարոն:

— Այդ դեպքում ես կասեմ, որ նա երեկ ամբողջ օրը թրև է եկել:

Խեղճ մայրիկն անհանգստացած նայեց ինձ, սպասելով, որ մի ամբողջ մեղադրական ճառ է լսելու:

— Ա՛խ, Ռոմեն...— հանդիմանանքով ասաց նա:

— Բայց շատ մի նախատեք նրան,— ընդհատեց պարոն Բիորելը:— Չե՞ որ նրա շնորհիվ ես ողջ մնացի... Դե, բավական է, մի՛ հուզվիր, տղաս, մոտեցիր ինձ... Նա շատ քաջ է, տիկին Կալբրի, կարող էք հպարտանալ նրանով:

Եվ նա մայրիկին պատմեց, թե ինչպես հանդիպեց ինձ և ինչպես մենք ընկանք մառախուղի մեջ:

— Ինքներդ էլ տեսնում եք, եթե նա չլիներ, ես կորած էի: Երեկ առավոտյան բարկացա, որ նա չգիտեր ակտինիաներից մեկի անունը, բայց երբ վտանգի մեջ ընկա, իմ գիտությունը ամեննին չօգնեց, և եթե չլիներ ձեր տղայի խելամտությունը, ես հիմա կլինեի այդ բոլոր ակտինիաների, օմարների ու ծովախեցգետինների գոհր: Ես պարտական եմ ձեր որդուն, տիկին Կալբրի, և ուզում եմ փոխհատուցել:

Մայրիկը բացասաբար շարժեց գլուխը:

— Հանգիստ եղեք,— թույլ չտալով, որ իրեն ընդհատեն, շարունակեց նա,— ես չեմ պատրաստվում այնպիսի բան առաջարկել ձեզ, որ վիրավորի ձեր հպարտությունը և հավասարաթեք չլինի այն ծառայությանը, որ մատուցեց ինձ ձեր որդին: Ես շատ եմ գրուցել Ռոմենի հետ: Նա հարցասեր երեխա է, ամեն ինչով հետաքրքրվում է և փափագում է գիտելիքներ ձեռք բերել: Նրան տվեք ինձ, ես կգրադվեմ երեխայի դաստիարակությամբ: Ինքս երեխաներ շատ եմ սիրում, բայց չունեմ: Նրա համար լավ կլինի ինձ մոտ...

Մայրս քաղաքավարությամբ շնորհակալություն հայտնեց նրա առաջարկության համար, բայց մերժեց:

— Թույլ տվեք,— ձեռքը մայրիկին մեկնելով, ասաց պարոն Բիորելը:— Հիմա կասեմ, թե ինչու եք մերժում ինձ: Դուք ջերմորեն սիրում եք տղային, նրա մեջ տեսնում եք ոչ միայն ձեր որդուն, այլև նրա զոհված հորը: Նա ձեզ համար ամեն ինչ է, և դուք չեք ուզում բաժանվել նրանից: Ճիշտ է, չե՞: Իսկ հիմա կասեմ, ինչու այնուամենայնիվ պետք է նրան ինձ տաք: Երեխան լավ ընդունակություններ ունի, և հարկավոր է դրանք զարգացնել: Պոր-Դյոյում հնարավոր չէ այդ անել, և նույնիսկ առանց հանգամանքներին ծանոթանալու ես ենթադրում եմ, որ չեք կարող նրան ուղարկել քաղաք սովորելու: Բացի դրանից, տղան անկախ ու համարձակ բնավորություն ունի, նրան հետևել է պետք: Մտածեք այս բոլորի մասին և առայժմ վերջնական պատասխան մի տվեք: Մի ենթարկվեք մայրական սրտի առաջին հուզմունքին: Ամեն ինչ սառնասրտորեն քննեք, երբ կհանդարտվեք: Իսկ ես ձեզ մոտ կգամ վաղը երեկոյան:

Նրա գնալուց հետո մենք սկսեցինք ընթրել, բայց խեղճ մայրիկը ոչինչ չէր ուտում: Նա աչքը չէր հեռացնում ինձնից, իսկ երբ մեր հայացքները հանդիպում էին, երեսը շրջում էր ու նայում կրակին:

Երբ քնելուց առաջ մոտեցա նրան բարի գիշեր մաղթելու, այտերիս վրա զգացի նրա արցունքները: Ինչո՞ւ էր լալիս: Արդյոք հպարտանում էր նրանով, ինչ պատմեց իմ մասին պարոն Բիորելը, թե՞ վշտացած էր մոտալուտ բաժանման համար: Հիմա ես էլ մտածում էի միայն անջատման մասին, և այդ միտքը խիստ անհանգստացնում էր ինձ:

— Լաց մի լինի, մայրիկ, — համբուրելով նրան, ասացի ես: — Ես երբեք չեմ բաժանվի քեզանից:

— Ոչ, թանկագինս, պարոն Բիորելը իրավացի է. մենք պետք է ընդունենք նրա առաջարկությունը և բաժանվենք քո իսկ բարօրության համար:

Պարոն Բիորելն այնպես արտասովոր դիմավորեց ինձ, որ ես հասկացա, թե ինչու են բոլորը նրան տարօրինակ մարդ համարում:

Երբ մոտեցա տանը, նա արդեն կանգնած էր շենքին: Դեռ հեռվից նկատել էր ինձ ու դուրս եկել դիմավորելու:

— Այստեղ արի, — չթողնելով, որ ուշքի գամ, գոռաց նա: — Երբևէ նամակներ գրե՞լ ես... Ո՞չ: Դժբախտություն չէ: Հիմա նամակ կգրես մայրիկիդ, կհաղորդես նրան, որ բարեհաջող հասել ես և որ Շաբաթը վաղը կգնա քո սպիտակեղենը բերելու: Քո նամակից կտեսնեմ, թե ինչ գիտես: Ներս մտի՞ր ու նստի՞ր այստեղ:

Նա ինձ տարավ գրքերով լի մի ընդարձակ սենյակ, մատնացույց արեց սեղանը, որտեղ դրված էին թանաք, թղթեր ու փետուրե գրիչներ, և ինձ թողեց մենակ:

Ես ավելի շատ ուզում էի լաց լինել, քան նամակ գրել: Նրա խիստ վարվեցողությունից սիրտս սկսեց մղկտալ, բացի այդ, սաստիկ հուզված էի մայրիկից բաժանվելու պատճառով, բայց աշխատեցի կատարել նրա պահանջը: Մի ամբողջ թերթ կեղտոտեցի, որի վրա ավելի շատ արցունքներ կային, քան թանաք: Թեև դա իմ առաջին նամակն էր, ես զգում էի, որ միայն «Բարեհաջող հասել եմ, և վաղը Շաբաթը կգա իմ սպիտակեղենի հետևից» բառերը բավական չեն: Սակայն որքան էլ ճիգ թափեցի, այդպես էլ չկարողացա ուրիշ բան ավելացնել:

Քառորդ ժամ տքնեցի այդ չարաբաստիկ նախադասության վրա, ջանալով որևէ բան ավելացնել, երբ իմ ուշադրությունը գրավեց հարևան սենյակում տեղի ունեցող խոսակցությունը: Պարոն Բիորելը խոսում էր իր ծառայի հետ:

— Եվ այսպես, տղան այնուամենայնիվ եկավ, — ասաց Շաբաթը:

— Միթե՞ դու կարծում էիր, որ չի գալու:

— Կարծում եմ, որ այժմ ամեն ինչ կփոխվի:

— Այսի՞նքն:

— Դուք, պարոն, նախաճաշում եք կեսօրին, իսկ ես իմ գավաթը կոնծում եմ առավոտյան: Տղան պետք է նախաճաշի ձե՞զ հետ, թե՞ պետք է առավոտյան իր գավաթը կոնծի ինձ հետ:

— Ի՞նչ գավաթ: Դու, հավանաբար, խելքդ թոցրել ես:

— Գրողը տանի, որտեղի՞ց իմանամ, թե ինչպես պետք է կերակրել երեխաներին:

— Միթե՞ դու երբեք երեխա չես եղել: Լավ հիշիր այդ ժամանակը և տղային վերաբերիր այնպես, ինչպես վերաբերվել ենք քեզ հետ:

— Ոչ, այդ մեկը չի լինի, ես ձեր տանը թույլ չեմ տա նման բան: Ինձ հետ շատ վատ են վարվել: Եթե ցանկանում եք տղային դաստիարակել այդ ձևով, ապա ավելի լավ կլինի անմիջապես տուն ուղարկեք նրան: Մի մոռացեք, որ որոշ չափով պարտական եք այդ պատիկին:

— Այդ մասին դու մի մոռանա և նրան վերաբերիր ինչպես հարկն է:

— Ի՛նչ արած, այդ դեպքում պետք է նրա գավաթի մեջ մի քիչ շաքար ավելացնել:

— Դու նրան կտաս այն ամենը, ինչ ինքդ սիրել ես երեխա ժամանակ, իսկ ավելի լավ կլինի հարցնես, թե ինչ է ցանկանում:

— Դե, եթե սկսեք երես տալ, ապա դա էլ լավ հետևանք չի ունենա...

— Իսկ դու գիտե՞ս, Շաբաթ, թե ինչի համար են երեխաները:

— Որպեսզի ջարդեն ձեռքն ընկած ամեն բան և թունավորեն մարդկանց կյանքը:

— Բայց նաև նրա համար, որ նորից սկսեն մեր կյանքը, եթե այն անհաջող է եղել և հասնեն այն բանին, ինչ ինքներս չենք կարողացել հասնել:

Այդ ասելով, պարոն Բիորելը եկավ ինձ մոտ:

— Դու բոլորովին ոչինչ չգիտես,— նամակս կարդալով, հայտարարեց նա:— Ավելի լավ. ստիպված չեմ լինի տնկելուց առաջ ջրել: Իսկ հիմա գնա զբոսնիր:

Պյեր-Գանտ կղզին հիրավի տարօրինակ բնակատեղ էր, և ես երբեք կյանքումս չէի տեսել սրա նման մեկ ուրիշ վայր:

Կղզու ձևը հիշեցնում էր երկարավուն եռանկյունի, որի ամենասուր ու ցածր կետը մայրցամաքից բաժանված էր չորս հարյուր մետրից ոչ պակաս լայնություն ունեցող նեղուցով և ավից բարձրանում էր ինչպես ամֆիթատրոն: Մայրցամաքին ուղղված կողմը ծածկված էր կանաչով, խոտով ու թփուտներով, և միայն տեղ-տեղ երևում էին գորշագույն գրանիտե ժայռերի սրածայր գագաթները: Դեպի ծովը դարձած կողմը բուսագուրկ էր, չորացել ու խանձվել էր քամիներից ու ծովային աղից:

Տունը, որ կառուցված էր կղզու ամենաբարձրադիր մասում, կանգնած էր մի փոքրիկ հրապարակում, այնտեղ, որտեղ ճյուղավորվում էին ժայռերը: Այդ տեղադրությունը լայն հորիզոն էր բացում տան առջև և հնարավորություն տալիս ամեն ինչ տեսնել շրջապատում՝ ինչպես ծովում, այնպես էլ ցամաքում: Բայց դրա փոխարեն տունը բաց էր բոլոր կողմերից փչող քամիների առաջ: Սակայն քամիները ոչնչով չէին կարող վնասել այս տանը, որ կառուցվել էր 18... թվականին՝ անգլիացիների փի դուրս գալու դեմ պայքարելու և մերձափնյա պահակետերի հետ կապ հաստատելու համար, քանի որ նրա գրանիտե պատերի հաստությունը մի քանի ֆուտ էր, իսկ տանիքը կարող էր դիմանալ նույնիսկ ռմբակոծության: Գնելով այդ հին բույնը, պարոն Բիորելը արտաքին կողմից նրան կից կառուցել էր պատշգամբ, որը մասամբ գեղեցկացնում և մեծացնում էր տունը, իսկ ներսում դրել էր միջնորմներ և դռներ: Ճիշտ է, դրանից հետո էլ տունը չդառավ հարմարավետ ու ավելի ուրախ, բայց պահպանեց իր գլխավոր հատկանիշը՝ մնաց նույնքան ամուր և անխորտակելի, ինչպես այն ժայռը, որի մի մասն էր:

Մարսափելի քամիները, որոնց հետ մշտապես պայքարի մեջ էին ինչպես թշնամիների հետ, բավական օգուտ էին բերում կղզուն: Դրանց շնորհիվ կղզում ձմռանը ջերմաստիճանն ավելի բարձր էր, քան մայրցամաքում. ուստի ժայռերով և բլուրներով պաշտպանված ցածրադիր մասերում աճում էին այնպիսի ծառեր ու թփեր, որոնք նույնիսկ ավելի տաք կլիմայական պայմաններում աճում են միայն ջերմոցներում՝ դափնեկարդեր, ֆուքսիաներ և թզենիներ:

Կղզում եղած անհարթությունների մեծ մասը բնական էին, սակայն որոշ տեղերում դրանք արհեստական ձևով ստեղծել էր պարոն Բիորելը, որն իր ծառայի օգնությամբ կղզին դարձրել էր մի մեծ, վայրի պարտեզ: Միայն կղզու արևելյան մասն էր մնացել չմշակված: Քամիներից հարթված և ալիքներով ողողված անմշակ մասը արոտավայր էր ծառայում բրետոնական երկու փոքրիկ կովերի ու մի քանի սև ոչխարների համար:

Բայց ամենանշանակալին այն էր, որ հողի մշակման ու պարտեզի աճեցման հսկայական աշխատանքները կատարել էին երկու մարդ, առանց որևէ կողմնակի օգնության:

Ավանում շատ էին խոսում, թե պարոն Բիորելը ժլատությունից չի վարձում բատրակներ, բայց երբ ավելի մոտիկից ճանաչեցի նրան, հասկացա, որ հարցը բոլորովին էլ դրամի մեջ չէր, այլ նրա համոզմունքների: «Մարդն իր համար պետք է ամեն ինչ ինքն անի, և ես կենդանի օրինակ եմ, որ դա հնարավոր է»:

Նա այդ սկզբունքները կիրառում էր ամենուրեք և նույնիսկ սովորական առօրյա գործերում երբեք չէր դիմում ուրիշի օգնությանը: Մենք սնվում էինք մեր կովերի կաթով, մեր պարտեզի ու բանջարանոցի պտուղներով ու բանջարեղենով, Շաբաթի բռնած ձկներով, մեր թխած հացով այն ալյուրից, որ աղում էինք սեփական փոքրիկ հողմադացում, որը պարոն Բիորելի ձեռքով պատրաստած մի իսկական արվեստի գործ էր: Եթե կղզին բավականաչափ մեծ լիներ, պարոն Բիորելն այնքան ցորեն կցաներ, որ կբավականացներ մի տարի և այնքան խնձոր կաճեցներ, որ հնարավոր կլիներ խնձորագինու պաշարներ պատրաստել:

Արդարացի լինելու համար պետք է ասել, որ այդ ամենում Շաբաթը բավական մեծ աշխատանք էր ներդրել: Նա կյանքի լավ դպրոց էր անցել. եղել էր կրտսեր նավաստի, նավաստի, սպայի սպայակ, կետորսանավի խոհարար և գիտեր բազմաթիվ արհեստներ:

Տիրոջ և ծառայի փոխհարաբերությունը միանգամայն ընկերական էր: Նրանք ճաշում էին միասին, և նրանց դերերի տարբերությունն արտահայտվում էր լոկ նրանում, որ պարոն Բիորելը նստում էր սեղանի գլխին: Նման ապրելակերպն աչքի էր ընկնում իր պարգույթամբ ու ազնվությամբ, որը սակայն ես չէի նկատում, երբ ապրում էի նրանց հետ, իսկ այժմ, անցյալը մտաբերելիս, դա խիստ հուզիչ ու սրբաշարժ է:

— Ռոմեն,— իմ գալու առաջին իսկ օրն ասաց պարոն Բիորելը,— ես չեմ պատրաստվում քեզ դարձնել ոչ փափկատուն, ոչ էլ նոտար կամ բժիշկ, ոչ, ես ուզում եմ, որ դու դառնաս ծովային և իսկական մարդ: Սովորելու բազմաթիվ եղանակներ կան: Օրինակ, կարելի է սովորել խաղալով ու զբոսնելով: Քեզ դո՞ւր է գալիս այդպիսի ուսուցումը:

Նրա խոսքերը բավականին տարօրինակ թվացին ինձ, և ես միայն հետագայում ինչպես պետքն է հասկացա, թե որն է դրանց իմաստը: Ինձ շատ զարմացրեց, որ կարելի է սովորել նույնիսկ խաղալով. մեր գյուղական դպրոցում այդպես չէին սովորում: Սակայն էլ ավելի զարմացա, երբ սկսվեց իմ ուսուցումը, իսկ դա սկսվեց հենց նույն օրը կեսօրից հետո:

Ես պարոն Բիորելի հետ գնացի ծովափ զբոսնելու: Ճանապարհին նա աշխատում էր ինձ խոսեցնել: Մենք մտանք մի փոքրիկ կաղնուտ:

— Սա ի՞նչ է,— մատնացույց անելով ճանապարհը կտրող-անցնող մրջյուններին,— հարցրեց նա:

— Մրջյուններ են:

— Ճիշտ է: Իսկ ի՞նչ են անում նրանք:

— Քարշ են տալիս ուրիշ մրջյունների:

— Լավ: Դրանց հետևից գնա մինչև մրջնանոց և ուշադրությամբ նայիր, իսկ հետո ինձ կպատմես, թե ինչ տեսար այնտեղ: Եթե ոչ մի հետաքրքիր բան չնկատես, մի անգամ էլ կգնաս վաղը և մյուս օրը, մի խոսքով այնքան ժամանակ, մինչև որևէ ուշագրավ բան տեսնես:

Երկու օր շարունակ ես հետևում էի մրջնանոցին և նկատեցի, որ մրջյունների մի մասը բոլորովին ոչինչ չի անում այն պահին, երբ մյուսներն աշխատում էին առանց հանգստանալու և, բացի դրանից, կերակրում էին այդ դատարկապորտներին:

— Հիանալի է,— հայտարարեց պարոն Բիորելը, երբ նրան հայտնեցի իմ հետազոտությունների մասին:— Դու տեսել ես ամենակարևորը: Դա բավական է: Այն մրջյունները, որ ոչինչ չեն անում, ամենևին էլ հիվանդ ու ծեր չեն, ինչպես ենթադրում ես. դրանք այն մյուսների տերերն են, որոնք աշխատում են, իսկ վերջիններս էլ նրանց ճորտերն են: Առանց ճորտերի օգնության նրանք չէին կարող իրենց համար սնունդ հայթայթել: Դա զարմացնում է քեզ, մինչդեռ մարդկանց մոտ շատ հաճախ է տեղի ունենում նույն բանը: Դեռ գոյություն ունեն այնպիսի երկրներ, որտեղ մարդիկ անգործ թրև են գալիս և սնվում են ուրիշի աշխատանքով: Եթե տերերի դատարկապորտությունը բացատրվեր նրանց հիվանդությամբ, ապա ամեն ինչ հասկանալի կլիներ. հիվանդները հանգստանում են, իսկ առողջները աշխատում են՝ մարդիկ պետք է օգնեն միմյանց: Մակայն իրականում բոլորովին էլ այդպես չէ: Մրջյունների մոտ տերերն ամենաուժեղներն ու ամենաքաջերն են և առավել ընտելացած են պատերազմներին: Մենք քեզ հետ միասին էլի կգնանք մրջյունների մոտ և, անշուշտ, կտեսնենք, թե ինչպես են նրանք ճակատամարտ մղում: Այդ կռիվների մասնակցում են միայն տերերը, և նրանց նպատակը նոր ճորտեր ձեռք բերելն է: Իսկ քանի դեռ սեփական աչքերով չես տեսել, ես քեզ կտամ կարդալու հայտնի գիտնական պարոն Յուրբերի գիրքը, ուր նկարագրված է մրջյունների ճակատամարտերից մեկը, որ տեղի է ունենում հենց այն ժամանակ, երբ այդտեղից հիսուն մղոն հեռու գնում էր մեկ ուրիշ, շատ ավելի սոսկալի ճակատամարտ մարդկանց միջև: Չգիտեմ, միմյանց կոտորելու համար մարդիկ արդյոք ավելի ծանրակշիռ պատճառներ ունեին, թե ոչ, բայց ջարդը սարսափելի էր: Ինքս էլ ողջ մնացի միայն շնորհիվ երջանիկ պատահականության: Մենք գնում էինք Էլբա կոչվող գետի երկարությամբ, իսկ մյուս ափին, ռուսների մոտ դրված էին ծանր հրետանու մարտկոցներ: Լսվում էին համազարկեր, բայց մենք չէինք տեսնում ավերածությունները, որովհետև պաշտպանված էինք գետի կեռմանով և ոչ մեծ բարձունքով: Ես քայլում էի ու մտածում, որ այսօր կնոջս ծննդյան օրն է և կարող է իմ կյանքի վերջին օրը լինել, որովհետև ընկել եմ հրետանային ուժեղ կրակի տակ: Որքան երջանիկ կլինեի, եթե կարողանայի այսօր շնորհավորել կնոջս: Հանկարծ ուղիղ իմ առջև, խոնավ առվի մեջ տեսա մի փունջ բացված սքանչելի անմոռուկներ: Չպետք է ենթադրել, որ ճակատամարտերը տեղի են ունենում այնպես, ինչպես պատկերված են նկարներում, և որ զինվորները քայլում են միայն ուղիղ գորաշարքերով: Մենք գնում էինք բաց շարքով և կարող էինք ազատ շարժվել: Չնայած ինձ սպառնացող վտանգին, փոքրիկ երկնագույն ծաղիկները զրավեցին ուշադրությունս: Ես կռացա, որպեսզի պոկեմ մի քանի անմոռուկ և հենց այդ պահին մի սոսկալի պտուտահողմ անցավ իմ

զլխավերևում, լավեց խլացուցիչ պայթյուն և մեջքիս թափվեցին ուռննու ջարդված ճյուղեր: Մենք ուղիղ մարտկոցի դիմաց էինք, և թնդանոթների համազարկը հնձեց բոլոր ընկերներին: Եթե անմոռուկների պատճառով չկռանայի, ես նույնպես կսպանվեի: Ժամանակին հիշեցի կնոջս մասին, այնպես չէ՛: Երբ դուրս եկա ճյուղերի կույտի տակից, մարշալ Նեյն արդեն լռեցրել էր ռուսական թնդանոթները:

Ֆրիդլանդյան ճակատամարտի պատմության տպավորության տակ այդ նույն երեկո ես սկսեցի կարդալ մրջյունների պատերազմների մասին Յուրբերի գիրքը: Յուրբերը կույր է եղել, բայց նա ունեցել է մի հավատարիմ ու խելոք ծառա, որի աչքերը փոխարինել են տիրոջ աչքերին: Այդ ծառայի պատմածների հիման վրա Յուրբերը թելադրել է մրջյունների ու մեղուների մասին իր հրաշալի գիրքը: Եթե պարոն Բիորելը չնախապատրաստեր ինձ այդ գրքի ընթերցմանը, եթե ընթերցանությունը ինձ համար լիներ պարտականություն, այլ ոչ թե պարզև, հայտնի չէ, թե իմ տարիքի տղան, այն էլ լրիվ տգետ, ինչպես կվերաբերեր այդ գրքին: Բայց պարոն Բիորելը կարողացավ այնպիսի հետաքրքրություն առաջացնել իմ մեջ, որ այդ գիրքն ամբողջ կյանքումս մնաց հիշողությանս մեջ և նույնիսկ հիմա, շատ տարիներ անց, ես ավելի լավ եմ հիշում դա, քան բոլորովին վերջերս կարդացած գրքերը:

Պարոն Բիորելն այնքան էլ չէր սիրում կարդալ: Մակայն մի գիրք կար, որը նա անմիջապես տվեց ինձ կարդալու և որից երբեք չէր բաժանվում: Դա Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոն» էր: Այդ գրքի ազդեցության տակ նա բնակություն էր հաստատել Պյեր-Գանտ կղզում, որտեղ շնորհիվ իր հնարամտության ու աշխատասիրության այնպիսի հրաշքներ էր գործում, ինչպիսին կատարում էր Ռոբինզոնը իր անմարդաբնակ կղզում: Այդ պատճառով էլ նա երբեք չէր բաժանվում իր մեծ հովանոցից և ծառային անվանում էր Շաբաթ: Միայն Ռոբինզոնի հանդեպ տաժած հարգանքի պատճառով նրա անունը չէր դրել Ուրբաթ:

— Այս գրքից դու կիմանաս,— գիրքն հանձնելով, ասաց պարոն Բիորելը,— թե որքան մեծ է մարդու բարոյական ուժը:

Չզիտեմ, աշխարհում արդյոք կան այնպիսի երեխաներ, որոնք կարող են առանց հուզմունքի կարդալ «Ռոբինզոն Կրուզոն»: Ես հիացած էի այդ գրքով: Մակայն պետք է խոստովանեմ, որ ինձ հուզել էր ոչ թե գրքի բարոյական կողմը, որ մատնանշեց պարոն Բիորելը, այլ ամենից առաջ ռոմանտիկան:

Ծովային ճանապարհորդություններ, արկածներ, նավաբեկություններ, անմարդաբնակ կղզի, վայրենիներ, վտանգներ, անհայտություն... Իմ «հնդկացի» քեռու համար լուրջ մրցակից էր հայտնվել: Այդ գիրքը կարծես նեցուկ եղավ բոլոր ձգտումների ու ցանկությունների համար: Ընթերցողներից ո՞վ իրեն չի դրել Դեֆոյի հերոսի տեղը ու չի հարցրել. «Ինչո՞ւ այդպիսի արկածներ չեն կարող պատահել և ինձ հետ: Ինչո՞ւ ես էլ չեմ կարող անել նույն բանը»:

Այդքան շատ բան իմացող Շաբաթը կարդալ չզիտեր: Տեսնելով, որ չեմ պոկվում գրքից, նա ցանկացավ լսել Ռոբինզոնի արկածների մասին և խնդրեց, որ բարձրաձայն ընթերցեմ իր համար:

— Ավելի լավ կլինի, որ պատմի դրանց մասին,— նկատեց պարոն Բիորելը,— ավելի հեշտ կհասկանաս:

Տասը տարի նավարկելով, Շաբաթը կյանքի մեծ փորձ էր ձեռք բերել, այդ պատճառով էլ որոշ բաներ կասկած էին առաջացնում նրա մոտ: Բայց նրա բոլոր առարկություններին ես պատասխանում էի. «Գրքում այդպես է գրված»:

— Դու համոզված ես դրանում, Ռոմեն:

Ես վերցնում էի գիրքը ու բարձրաձայն կարդում այն, ինչ նրան անհավանական էր թվում: Քիթը քորելով, Շաբաթն ուշադիր լսում էր և միշտ հնազանդորեն համաձայնվում:

— Եթե գրքում այդպես է գրված, ուրեմն՝ ճիշտ է: Բայց տարօրինակ է. ես եղել եմ Աֆրիկայում, սակայն երբեք չեմ տեսել, որ առյուծները լողալով մոտենան և հարձակվեն նավի վրա: Բայց ինչե՞ր ասես, որ չեն պատահում:

Շաբաթը հիմնականում նավարկել էր հյուսիսային ծովերում. նա լավ էր հիշում իր ճանապարհորդությունները և, ի երախտագիտություն իմ պատմածների, ինքն էլ էր շատ բան պատմում:

Մի անգամ նրանց նավը սեղմվում է սառույցների մեջ, և նրանք ստիպված են լինում ձմեռել հյուսիսում: Վեց ամիս շարունակ ապրում են ձյունների մեջ: Անձնակազմի կեսից ավելին հավիտյան մնում են պատկած ձյան տակ: Նույնիսկ շներն են սատկում, սակայն ոչ թե ցրտից կամ սննդի պակասությունից, այլ լույսի բացակայությունից: Եթե ճրագաթասերում կրակը միշտ վառ պահելու համար ճարպը բավարարեր, նրանք ողջ կմնային: Շաբաթի պատմությունները գրեթե նույնքան հետաքրքիր էին, որքան Ռոբինզոնի արկածները, բայց երբեմն ինձ էլ էին անհավանական թվում:

— Որն է տեղ գրված է այդ մասին:

Շաբաթը խոստովանում էր, որ ոչ մի տեղ չի կարդացել, բայց տեսել է սեփական աչքերով:

— Դա ի՞նչ կարևոր է, որ գրված չէ,— ասում էր նա: Հասկանալի է, որ այս բոլոր գրույցներն իմ մեջ չէին արթնացնում հանգիստ ու նստակյաց կյանքով ապրելու ցանկություն: Մայրիկս տեսնելով, թե ինչպես են խրախուսվում «իրեն անհանգստացնող իմ բնածին հակումները, որոշեց խոսել պարոն Բիորելի հետ:

— Թանկագինս,— պատասխանեց նրան պարոն Բիորելը,— ես կվերադարձնեմ տղային, եթե կարծում եք, որ սխալ ճանապարհի եմ մղում նրան: Սակայն դուք չեք կարող փոխել նրա բնավորությունը. նա պատկանում է այն մարդկանց թվին, ովքեր ձգտում են դեպի անհնարինը: Միանգամայն համաձայն եմ ձեզ հետ, որ այդպիսի մարդիկ հազվադեպ են երջանիկ լինում, բայց դրա փոխարեն ընդունակ են մեծ գործեր կատարելու:

Երեխաները սովորաբար անշնորհակալ են. այն ժամանակ ես առանց ավստասանքի կթողնեի Պյեր-Գանտ կղզին և ահա թե ինչ պատճառով: Պարոն Բիորելն ուսումնասիրում էր թռչունների ճիչերը, նրան թվում էր, թե թռչուններն ունեն իրենց առանձնահատուկ լեզուն: Չգիտեմ, իրավացի՞ էր նա, թե սխալվում էր, բայց նույնիսկ բառարան էր կազմել: Նա ուզում էր, որ սովորեմ թռչունների լեզուն, բայց ես ամեննին գլուխ չէի հանում դրանից: Ահա թե ինչու մեզ մոտ հաճախակի թյուրիմացություններ էին ծագում. նա բարկանում էր, իսկ ես լաց էի լինում: Մինչդեռ այդ բառարանը շատ հետաքրքիր էր և հիմա ավստոսում եմ, որ միայն մի քանի բառ եմ հիշում: Պարոն Բիորելը հավատացնում էր, իբր սովորել է ազատ թարգմանել այն ամենը, ինչ կարող է ասել թռչունը: Օրինակ՝ «Ես ուզում եմ ուտել», «Այնտեղ թռչուն կա», «Արագ թաքնվեք», «Բույն շինենք», «Փոթորիկ է սկսվում»: Բայց այն ժամանակ ես չափազանց փոքր ու հիմար էի և չէի կարողանում հավատալ, որ թռչունները կարող են խոսել: Մենք հասկանում ենք երաժշտությունը, թեև բառեր չկան, ինչո՞ւ թռչուններն էլ չեն կարող հասկանալ:

Մի՞թե երաժշտությունը նրանց երգերից չի ծնվել: Շները, ձիերը և մյուս ընտանի կենդանիները հասկանում են մեզ, իսկ ինչո՞ւ պարոն Բիորելը չէր կարող հասկանալ թռչուններին:

Պարոն Բիորելի պատասխանից շփոթված, մայրիկը չհամարձակվեց պնդել, և ես շարունակեցի ուսումնասիրել թռչունների լեզուն:

— Շետագայում դու կհամոզվես, թե որքան օգտակար է իմանալ այն, ինչ հիմա ծիծաղելի է թվում քեզ,— ասում էր նա:— Մայրդ վախենում է, որ ծովային կդառնաս, ես էլ ամեննին չեմ ցանկանում: Տասնհինգ տարեկան հասակում ուրախությամբ են գնում ծովային ծառայության, բայց քառասուն տարեկանում շատ հաճախ զգվանքով են ավարտում: Սակայն դու չափազանց մեծ սեր ունես դեպի ճանապարհորդությունները, որ յուրատեսակ ընտանեկան կոչում է, և դու պետք է կյանքդ դասավորես այդ կոչմանն ու մայրիկիդ ցանկությանը համապատասխան: Ես կուզենայի քեզ նախապատրաստել սակավ հայտնի երկրներ ճանապարհորդելու համար, որպեսզի կարողանայիր քո հայրենիքը հարստացնել բույսերի ու կենդանիների նոր տեսակների հայտնագործությամբ և եռանդագին ծառայելի գիտությանը: Դա շատ ավելի լավ է, քան նավաստի դառնալը և թափառաշրջիկ առևտրականի նման ամբողջ կյանքում Ռիո-դե-Շանեյրոյից սուրճ փոխադրել Հավր և Հավրից փարիզյան ապրանքներ տանել Ռիո-դե-Շանեյրո: Եթե իմ ցանկությունն իրականանա, ինքդ կտեսնես, թե որքան պետք կգա այն ամենը, ինչ հիմա ուզում եմ սովորեցնել քեզ:

Սակայն այդ գեղեցիկ երազանքը, դժբախտաբար, այդպես էլ մնաց միայն երազանք: Չգիտեմ, արդյոք պարոն Բիորելն իր խելամիտ ու ազնիվ դաստիարակությամբ կարո՞ղ էր այնպիսի մարդ դարձնել ինձ, ինչպիսին ցանկանում էր, բայց մեր պարապմունքներն անսպասելի ընդհատվեցին հենց այն ժամանակ, երբ դրանք առանձնապես կարևոր էին ինձ համար, որովհետև արդեն սկսել էի որոշ բան հասկանալ և օգուտ քաղել այդ հիանալի մարդու դասերից: Ահա թե ինչպես տեղի ունեցավ դա:

Սովորաբար ես ամենուրեք ուղեկցում էի պարոն Բիորելին, բայց պատահում էր, որ նա մենակ նավակով մեկնում էր Պոր-Ղյոյից երեք մղոն հեռու, բաց ծովում գտնվող Գրյուն կղզին, որպեսզի ազատության մեջ լսի թռչունների ճիչերը:

Մի անգամ նա գնաց, երբ ես դեռ քնած էի, և մենք խիստ զարմացանք, որ ճաշին չվերադարձավ:

— Նա բաց է թողել առավոտվա մակընթացությունը,— ասաց Շաբաթը,— և կվերադառնա երեկոյան:

Լավ եղանակ էր, ծովն էլ խաղաղ էր: Թվում էր, թե ոչ մի վտանգ չի նախատեսվում: Սակայն չգիտես ինչու Շաբաթը փոքր-ինչ անհանգստանում էր:

Պարոն Բիորելը երեկոյան էլ չվերադարձավ, և Շաբաթը չզնաց քնելու, այլ ուղևորվեց դեպի կղզու գագաթը և մի հսկայական խարույկ վառեց գետին թափված ճյուղերից: Ես շատ էի ուզում մնալ նրա մոտ, բայց նա խստորեն կարգադրեց մտնել անկողին:

Առավոտյան դեռ լույսը չէր բացվել, երբ վեր թռա անկողնուց և վազեցի նրա մոտ: Շաբաթը ետ ու առաջ էր քայլում բոցի հսկայական լեզուները դեպի վեր բարձրացնող խարույկի առջև: Երբեմն նա կանգ էր առնում, ակննց դնում, սակայն ծովի մեղմ ճղփյունից բացի ուրիշ ոչինչ չէր լսվում: Մեկ-մեկ հանկարծ լսվում էր խուլ աղմուկ, թևերի խշշոց և խարույկի լույսից անհանգստացած թռչունը դուրս էր թռչում քարայրից ու վախից նետվում ուղիղ կրակի մեջ:

Վերջապես արևելքում սկսեց կամաց-կամաց լույսը բացվել:

— Անպայման նրա հետ որևէ բան է պատահել,— ասաց Շաբաթը:— Հարկավոր է վերցնել քեռի Գոսսումի նավակը և գնալ Գրյուն կղզին:

Գրյուն կղզին կազմված էր գրանիտե ժայռակույտերից, որտեղ ծովային թռչուններից բացի ոչ ոք չէր ապրում: Մենք արագորեն չորս կողմից հետագոտեցինք կղզին, բայց ոչ մի տեղ չգտանք ո՛չ պարոն Բիորելի, ո՛չ էլ նրա նավակի հետքերը: Պոր-Դյոյում բոլորն անհանգստացած էին, որովհետև չնայած ծեր պարոն Կիրակիի տարօրինակություններին, նրան շատ էին սիրում: Այդպիսի անհետացումը միանգամայն անբացատրելի էր

— Ըստ երևույթին նավակը շրջվել է,— ասում էին ոմանք:

— Այդ դեպքում նավակը կգտնվեր:

— Կարող է հոսանքը քշել է բաց ծով...

Շաբաթը ոչինչ չէր ասում, բայց ամբողջ օրը չէր հեռանում ծովափից: Տեղատվության ժամանակ բավական հեռանում էր ափից և ճանապարհին գնում բոլոր ժայռերը: Երբեմն երեկոները մենք նրա հետ միասին հայտնվում էինք Պոր-Դյոյից հինգ-վեց մղոն հեռու: Նա առաջվա պես լռում էր և երբեք չէր հիշատակում պարոն Բիորելի անունը, բայց, հանդիպելով ձկնորսի, տագնապով հարցնում էր.

— Ոչ մի նորություն չկա՞:

Եվ ձկնորսը, հիանալի հասկանալով, թե ինչ է նշանակում այդ հակիրճ հարցը, պատասխանում էր.

— Ոչ մի նորություն:

Տեսնելով, որ աչքերս լցվում են արտասուքով, Շաբաթը փաղաքշանքով խփում էր գլխիս ու ասում.

— Բարի տղա ես, Ռոմեն: Այո, հիանալի տղա ես:

Պարոն Բիորելի անհասկանալի անհետացումից երկու շաբաթ հետո Հարավային Նորմանդիայից ժամանեց ոմն պարոն Բերրյե, որը պարոն Բիորելի եղբոր թոռն էր: Նրանից բացի ծերունին ուրիշ հարազատ չուներ:

Մանրամասն հարցուփորձ անելով մեզ տեղի ունեցածի մասին, նա Պոր-Դյոյում վարձեց տասներկու մարդ և կարգադրեց մանրագինի հետագոտել ծովափը: Որոնումները շարունակվեցին երեք օր: Երրորդ օրը պարոն Բերրյեն կարգադրեց դադարեցնել որոնումները, հայտարարելով, թե դրանք անօգուտ են, քանի որ պարոն Բիորելը, անկասկած, խեղդվել է, իսկ նրա մարմինն ու նավակը տեղատվության ժամանակ հոսանքը քշել-տարել է ծով:

— Որտեղի՞ց գիտեք,— բացականչեց Շաբաթը:— Ինչի՞ց ենթադրեցիք, որ նա զոհվել է: Հոսանքը կարող է նավակը քշել-տանել ծով նույնիսկ եթե այն չի շրջվել: Իմ տերը, հավանաբար, ափ է դուրս եկել Անգլիայում և գուցե հենց վաղը կվերադառնա տուն:

Շաբաթն իր կարծիքը հայտնեց որոնումներ կատարող մարդկանց ներկայությամբ: Հարգելով նրա վիշտը, ոչ ոք չառարկեց նրան, բայց ձկնորսները չէին հավատում, որ պարոն Բիորելը ողջ է:

Հաջորդ օրը պարոն Բերրյեն ինձ ու Շաբաթին կանչեց իր մոտ և հայտարարեց, որ մենք այլևս պետք չենք իրեն: Տունը կմեխեն, իսկ կենդանիների մասին նոտարը կհոգա այնքան ժամանակ, մինչև

դրանց վաճառեն: Բարկությունից Շաբաթն ուղղակի շնչահեղձ էր լինում, բայց չէր կարողանում որևէ համոզիչ պատասխան գտնել: Հետո դառնալով ինձ, ասաց.

— Հավաքիր ունեցած-չունեցածդ, Ռոմեն, մենք անմիջապես կհեռանանք այստեղից:

Կոզուց հեռանալիս, ճանապարհին հանդիպեցինք պարոն Բերրյեին, և Շաբաթը մոտեցավ նրան.

— Պարոն, թեև համաձայն թղթերի դուք համարվում եք իմ տիրոջ եղբոր թոռը, բայց ես ձեզ չեմ ճանաչում որպես ազգական: Նավաստու ազնիվ խոսք եմ տալիս, որ ամեննին նման չեք նրան:

Որոշվեց, որ մինչև ավանում որևէ բնակարան գտնելը, Շաբաթը կապրի մայրիկի մոտ: Սակայն նա շատ քիչ ապրեց մեզ հետ:

Ամեն առավոտ նա գնում էր ծովափ և շարունակում որոնումները: Այդպես տևեց մոտավորապես երեք շաբաթ, իսկ հետո մի անգամ երեկոյան նա հայտարարեց, որ վաղը հրաժեշտ է տալու մեզ և մեկնելու է Անգլիայի ամերի մոտ գտնվող կղզիները, իսկ գուցե նաև Անգլիա:

— Գիտեք ինչ,— ասաց նա,— ինձ հայտնի է մի բան. ծովը երբեք ոչինչ չի պահում իր մոտ, իսկ եթե չի վերադարձրել, նշանակում է, ոչինչ էլ չի վերցրել:

Մայրիկը փորձեց ստիպել նրան ավելի մանրամասն պատմել իր ծրագրերի մասին, բայց Շաբաթը ոչ մի բան չավելացրեց: Ես ուղեկցեցի նրան մինչև կատեր, որով մեկնելու էր և հրաժեշտի պահին համբուրեցի:

— Բարի տղա ես, Ռոմեն,— ասաց նա:— Չմոռանաս մեկ-մեկ գնալ Պյեր-Գանտ կղզին և մի բուռ աղ տալ սև կովին, որը շատ էր սիրում քեզ:

VI

Ես հարազատ հորեղբայր ունեի, սակայն ոչ ոք չէր հավատա, որ նրա երակներում Կալբրիների արյուն էր հոսում: Նա տանել չէր կարողանում ծովը և գերադասում էր ամուր հողը: Նա բնակվում էր Դոլում, դատական կատարածու էր և հարուստ մարդու համբավ ուներ:

Տուն վերադառնալուց հետո մայրիկը շատ էր անհանգստանում իմ ապագայի համար: Նա որոշեց նամակ գրել հորեղբորս և խորհուրդ հարցնել նրանից: Մի ամիս հետո հորեղբայրս անսպասելիորեն հայտնվեց Պոր-Դոլում:

— Ես չպատասխանեցի ձեր նամակին,— հայտարարեց նա,— որովհետև որոշեցի ինքս գալ, նշանակում է, չարժեր փող ծախսել նամականիշի վրա: Չէ՞ որ դրամ վաստակելը դժվար գործ է: Ավելի շուտ չէի կարող գալ, որովհետև շարունակ սպասում էի հարմար առիթի: Վերջապես գտա կենդանի ձուկ վաճառողի, որն ինձ այստեղ բերեց և տասնհինգ մղոնի համար վերցրեց ընդամենը տասներկու սու: Իսկ այն, ինչ չես ծախսում, կուտակում ես:

Այս խոսքերից մեզ համար պարզ դարձավ, որ հորեղբայր Միմոնը ժլատ մարդ է: Եվ հենց այդպես էլ դուրս եկավ:

Երբ նրան իրազեկ դարձրինք մեր գործերին, նա ասաց մայրիկին.

— Տեսնում եմ, որ չեք ուզում ծով ուղարկել ձեր կտրիճին: Դուք իրավացի եք, դա շատ վատ արհեստ է, դրանով ոչինչ չես վաստակի: Դուք կցանկանայիք, որ տղան ավարտեր պարոն Կիրակիի մոտ սկսած ուսումը: Վստահ եմ, որ այդ գործում ինձ վրա հույս չե՞ք դրել:

— Ոչ, ես չեմ պատրաստվում ձեզանից փող խնդրել,— հեզությամբ, բայց և արժանապատվությամբ պատասխանեց մայրիկը:

— Իսկ ես չունեմ էլ: Մարդիկ ասում են, որ հարուստ եմ, բայց դա սուտ է: Ես թաղված եմ պարտքի մեջ, որովհետև ստիպված էի գնել մի կավածք, որը սնանկացնում է ինձ:

— Քահանան ինձ ասաց,— շարունակեց մայրիկը,— որ հոր անբասիր ծառայության և հերոսական մահվան համար Ռոմենին կարող են անվճար ընդունել կողեջ:

— Իսկ այդ մասին ո՞վ պետք է հոգա: Ես չեմ զբաղվի, որովհետև ժամանակ չունեմ և չեմ սիրում անտեղի անհանգստացնել ազդեցիկ մարդկանց: Նրանք կարող են պետք գալ ավելի կարևոր բանի համար: Ոչ, ավելի լավ է այլ կերպ վարվել: Լեզյո եղբայրները խոստացել են հոգալ երեխայի մասին, հենց նրանց էլ պետք է ստիպել, որ վճարեն տղայի ուսման համար:

— Նրանք մոռացել են իրենց խոստումը:

— Այդ դեպքում պետք է հիշեցնել: Ես ինքս կխոսեմ նրանց հետ...

Մայրիկն ուզում էր ինչ-որ բան առարկել, բայց հորեղբայրս շարունակեց.

— Անհարմար զգալու ոչինչ չկա: Բոլորովին էլ անհարմար չէ պահանջել այն, ինչի համար իրավունք ունես: Ամոթ է ոչ թե նրան, ով խնդրում է, այլ նրան, ով ստիպում է, որ իրեն խնդրեն: Լավ հիշեք դա:

Մայրիկն ստիպված էր համաձայնել, թեև նրա հպարտությունն ըմբոստանում էր այդ որոշման դեմ: Հորեղբայրս այն մարդկանցից էր, ովքեր չեն հանդուրժում առարկություններ:

— Նկատի ունեցեք,— վերջում ասաց նա,— եթե ձեր պատճառով թողել եմ բոլոր գործերս, ապա պարտավոր եք, գոնե, կատարել իմ խորհուրդները:

Հորեղբայրը չէր սիրում ապարդյուն ժամանակ վատնել:

— Ռոմեն,— դիմեց նա ինձ,— անմիջապես գնա Լեզյո եղբայրների գրասենյակը և տես նրանք այնտե՞ղ են, թե ոչ: Ես կսպասեմ քեզ փողոցում: Եթե երկուսն էլ տեղում են, մենք ներս կմտնենք: Ես գիտեմ չէ դրանց բոլոր խորամանկությունները: Եթե ամեն մեկի հետ առանձին խոսես, ապա մեկը ամեն ինչ կխոստանա և թույլտվություն կխնդրի խորհրդակցելու մյուսի հետ, իսկ երկրորդը կտրականապես կհրաժարվի կատարել առաջինի խոստումը: Ես փորձված մարդ եմ, ինձ չես խաբի:

Երկու եղբայրն էլ գրասենյակում էին, և մենք ներս մտանք: Եվ այստեղ ես ներկա գտնվեցի մի տարօրինակ տեսարանի, որի ամենափոքր մանրամասնություններն իսկ ընդմիջտ մնացին հիշողությանս մեջ: Հավանաբար խիստ վրդովված էի, որովհետև այնտեղից դուրս եկա խեցգետնի պես կարմիր: Ես զգում էի, որ հորս անձնագոհության դիմաց այդ անհոգի մարդկանցից օգնություն խնդրել, նշանակում է անարգել նրա հիշատակը, և անտանելի ամաչում էի:

Լսելով հորեղբորս համառոտ ու պարզ շարադրված պահանջը, երկու եղբայրներն էլ այնպիսի զարմանք արտահայտեցին և աթոռների վրա այնպես սկսեցին շարժվել, կարծես ասեղների վրա էին նստել:

— Ուղարկել նրան կոլե՞ջ,— զարմացավ կրտսեր եղբայրը:

— Ուղարկել նրան կոլե՞ջ,— բղավեց ավագը:

— Մենք պարտավոր ենք նրան ուղարկել կոլե՞ջ,— միաձայն ճչացին երկու Լեզո եղբայրները:

— Միթե՞ չեք խոստացել որդեգրել տղային,— շարունակում էր հորեղբայրս:

— Ես խոստացել եմ նրան որդեգրե՞լ,— բացականչեց ավագը:

— Դու խոստացել ես որդեգրե՞լ,— ապշեց կրտսերը:

— Մենք պատրաստվել ենք նրան որդեգրե՞լ,— աղաղակեցին նրանք միասին:

Այդ ժամանակ մի անհասկանալի ու խլացուցիչ վեճ բռնվեց: Ինչ որ ասում էր կրտսեր եղբայրը, ավագը նույնությամբ կրկնում էր նրա խոսքերը, միայն տասն անգամ ավելի բարձր: Երբ մեկը բղավում էր, մյուսն աղեկտուր ձայնով աղաղակում էր: Սակայն այդ գոռոռոցները ամենևին չէին շփոթեցնում հորեղբորս, և այն բանից հետո, երբ Լեզո եղբայրները միաձայն հայտարարեցին, թե «Մենք անում ենք ավելին, քան խոստացել ենք. աշխատանք ենք տալիս նրա մորը», հորեղբայրս այնպես խայթոդ ծիծաղեց, որ նրանք մի փոքր սսկվեցին:

Երբ, վերջապես, եղբայրներն սկսեցին հինգերորդ, թե վեցերորդ անգամ բղավել, որ օգնում են մեզ, հորեղբայրս կորցրեց համբերությունը և ասաց.

— Կարելի է ենթադրել, թե դա սննկացնում է ձեզ: Ազնիվ խոսք, առաջին անգամ եմ տեսնում այդքան ժլատ մարդկանց: Տալիս ենք, հա տալի՛ս ենք... Լսողին էլ կթվա, թե մի ամբողջ կարողություն եք տվել այդ կնոջը: Իսկ ի՞նչ եք տվել... Աշխատա՛նք: Իսկ միթե՞ ձեր տված տասը սուի ու կերակրման դիմաց նա ամբողջ օրը չի աշխատում ձեզ համար: Մի՞ թե ավելի թանկ եք վճարում նրան, քան կվճարեիք ուրիշ աշխատողի:

— Մենք վճարում ենք կանխիկ դրամով,— ինքնագոհ տեսքով պատասխանեց կրտսեր Լեզոն,— և մտադիր ենք... նույնիսկ հաստատ մտադրվել ենք չսահմանափակվել միայն այդ օգնությամբ: Սակայն երբ ասում եք, թե Կալբրին գոհվեց, փրկելով մեր գույքը, դա արդեն ճիշտ չէ: Նա մահացավ՝ փրկելով իր նման նավաստիների: Իսկ դա, ինչպես գիտեք, ամենևին էլ մեր գործը չէ, այլ պետության գործն է: Պետությունը հատուկ ֆոնդեր ունի այն անձանց համար, ովքեր զբաղվում են հերոսությամբ: Այնուամենայնիվ, երբ նրա տղան մեծանա և կարողանա աշխատել, թող գա մեզ մոտ, և մենք նրան աշխատանք կտանք... Ճի՞շտ է, Ժերոմ:

— Իհարկե, կտանք,— հաստատեց ավագը:— Թող աշխատի որքան ուզում է:

Դրանից ավելի հորեղբայրս չկարողացավ ուրիշ որևէ բանի հասնել:

— Ա՛յ թե մարդիկ են,— բացականչեց նա, երբ դուրս եկանք գրասենյակից:

Ես կարծում էի, որ նա երկար ժամանակ զսպել է իր գայրույթը և հիմա նրա բարկությունը կպայթի, բայց սխալվեցի:

— Հիանալի՜ մարդիկ են,— զարմացած այն բանից, որ հանդիպել է իրենից ավելի անհոգի մարդկանց, շարունակեց նա:— Օրինակ վերցրու նրանցից: Նրանք կարողանում են «ոչ» ասել: Լավ հիշիր «ոչ» բառը, Ռոմեն: Միայն հաստատ «ոչի» օգնությամբ կարելի է դրամ կուտակել:

Լեզոյ եղբայրների հաշվին ինձ կուլեջ տեղավորելու անհաջող փորձից հետո հորեղբայրս մայրիկին առաջարկեց ինձ տանել իր մոտ: Նրան օգնական է պետք: Իհարկե, հիմա դեռ չափազանց փոքր եմ, որ կարողանամ գլուխ հանել այդ աշխատանքից և առաջիկայում դժվար թե արդարացնեմ իմ ապրուստի ծախսերը, բայց եթե պարտավորվեմ հինգ տարի առանց ռճիկի ծառայել նրա մոտ, ապա վերջ ի վերջո կկարողանամ հատուցել այն, ինչ ծախսելու է ինձ վրա: Բացի այդ, ես նրա եղբորորդին եմ, և նա ուզում է որևէ բանով օգնել իր ընտանիքին:

Ավա՛ղ: Դա, իհարկե, կուլեջ չէր, ինչի մասին երագում էր խեղճ մայրիկը, բայց այնուամենայնիվ հորեղբոր առաջարկությունը կխանգարեր ինձ ծովային դառնալ: Եվ այսպես, ես ստիպված եղա մեկնել նրա հետ: Մեկնումը շատ տխուր էր: Ես դառնորեն լալիս էի, մայրիկն ինձանից ավելի շատ էր վշտանում, իսկ հորեղբայրս, նայելով մեր արցունքներին, երկուսիս էլ նախատում էր, չինայելով ոչ մեկիս... Դուր, անկասկած, շատ գեղեցիկ փոքրիկ քաղաք էր, եթե նայես ճանապարհորդողի աչքերով, սակայն ինձ վրա թողեց ամենամռայլ տպավորությունը: Մենք այնտեղ հասանք գիշերը և ընկանք սառն ու մինչև ոսկորները թափանցող անձրևի տակ: Առավոտյան Պոր-Դյոյից դուրս գալով ձկնավաճառի սայլով, որն ուղևորվում էր Կանկալ, մենք իջանք քաղաքից հինգ-վեց լոտ հեռու, իսկ հետո ոտքով գնացինք ջրով լի առուններով կտրատված, ցեխոտ, ճահճոտ դաշտավայրով:

Հորեղբայրը գնում էր առջևից, իսկ ես դժվարությամբ էի հասնում նրան: Ես քայլում էի սրտնեղած: Բացի այդ, տսկալի քաղցած էի և թուլությունից ոտքերս ծավում էին: Մեր երկար ճանապարհորդության ամբողջ ընթացքում հորեղբայրը ոչ մի բառ չասաց, որ ժամանակն է դադար առնել ու նախաճաշել, իսկ ես չէի համարձակվում հիշեցնել: Վերջապես, սկսեցին փայլել քաղաքի լույսերը: Մենք անցանք երկու-երեք ամալի փողոց, և հորեղբայրս կանգ առավ ծածկված մուտքով մի բարձր տան առջև: Նա հանեց բանալին ու բացեց փականքը: Ես ուզում էի ներս մտնել, բայց նա կանգնեցրեց ինձ. պարզվեց, որ դուռը դեռ բացված չի: Նա գրպանից հանեց երկրորդ բանալին, այնուհետև հսկայական մեծության երրորդը: Վերջապես դուռը բացվեց այնպիսի տսկալի ճռռոցով ու զրնգոցով, ինչպիսին հետագայում առիթ եմ ունեցել լսելու թատրոնում, երբ բեմում բանտ էին ներկայացնում: Այդ երեք փականքները զարմացրին ու վախեցրին ինձ: Մեր տան դուռը փակվում էր թոկով կապած մի հասարակ մղլակով, իսկ պարոն Բիորելի մոտ՝ սողնակով: Ինչո՞ւ է հորեղբայրն այդպես խնամքով կողպում իր տունը:

Նա երեք փականքով կրկին կողպեց դուռը, այնուհետև հրամայեց, որ իր ձեռքը բռնեմ և մթության մեջ ինձ տարավ ինչ-որ սենյակների միջով, որոնք հսկայական թվացին ինձ: Մենք քայլում էինք սալաքարերի վրայով և մեր ոտնաձայները դղրդոցով հնչում էին, ինչպես դատարկ եկեղեցում: Այստեղ մի տարօրինակ անձանոթ հոտ էր կանգնած՝ հին մագաղաթի ու բորբոսնած թղթի հոտ, որ սովորաբար լինում է գրասենյակներում ու գործարար մարդկանց աշխատասենյակներում: Հորեղբայրս մոմը վառեց, և ես տեսա, որ, հավանաբար, խոհանոցում ենք: Սակայն այդ խոհանոցն այնպես էր լցված ինչ-որ պահարաններով, սնդուկներով ու կաղնե հին աթոռներով, որ չկարողացա պարզել ոչ ձևը, ոչ մեծությունը:

Չնայած խոհանոցի անհրապույր տեսքին, ես այնուամենայնիվ ուրախացա. վերջապես կարելի էր տաքանալ և ուտել:

— Հորեղբայր, ուզո՞ւմ եք կրակ վառեմ,— առաջարկեցի ես:

— Կրա՞կ: Դա ինչի՞ համար է:

Այդպիսի կոպիտ պատասխանից հետո չհամարձակվեցի ասել, որ մինչև ոսկորներս թրջվել եմ և ցրտից դողում եմ:

— Հիմա կընթրենք ու կմտնենք անկողին,— ավելացրեց նա:

Պահարաններից մեկին մոտենալով, նա այնտեղից հանեց մի բոքոն հաց, կտրեց երկու կտոր և յուրաքանչյուրի վրա դրեց մի փոքրիկ կտոր պանիր: Մեկը տվեց ինձ, իսկ մյուսը թողեց սեղանին իր համար, հետո բոքոնը թաքցրեց պահարանում և բանալիով կողպեց:

Չգիտեմ, թե ինչ է զգում բանտարկյալը, երբ նրան փակում են բանտախցում, բայց ինձ թվում է, թե զգացի գրեթե նույնը, ինչ նա, երբ լսեցի ինչպես չրխկաց այդ պահարանի փականքը: Ինձ համար պարզ դարձավ, որ չի կարելի խնդրել երկրորդ կտոր հացը, մինչդեռ հեշտությամբ կհաղթահարեի այդպիսի հինգ կամ վեց կտոր:

Այդ նույն պահին վազելով խոհանոց մտան երեք նիհար կատուներ և սկսեցին քսմամբ հորեղբոր ոտքերին: Ես ուրախացա. կատուներն ուտել են ուզում, հորեղբայրը ստիպված կլինի բացել պահարանը, և ես կխնդրեմ երկրորդ կտոր հացը:

Բայց հորեղբայրը չբացեց պահարանը:

— Անպիտանները ջուր են ուզում,— ասաց նա:— Հարկավոր է խմացնել, թե չէ կարող են կատաղել:

Եվ թասի մեջ ջուր լցրեց նրանց համար:

— Հիմա, երբ դու ապրելու ես իմ տանը,— շարունակեց նա,— չմոռանաս ջուր տալ դրանց: Դա քո պարտականությունն է:

— Իսկ ինչո՞վ պետք է կերակրեմ,— հարցրեցի ես:

— Տանը շատ մկներ ու առնետներ կան, կատուները կարող են սնվել դրանցով: Եթե կուշտ կերակրես, կծուլանան և մկներին չեն բռնի:

Մենք արագ ավարտեցինք ընթրիքը, և հորեղբայրը հայտարարեց, որ հիմա ինձ կուղեկցի այն սենյակը, որն այսուհետև իմը կլինի:

Սանդուղքի վրա, որով բարձրանում էինք, ինչպես և խոհանոցում, կիտված էր ամեն տեսակ հնոտիք: Թեև սանդուղքը շատ լայն էր, բայց մենք մեծ դժվարությամբ էինք վեր բարձրանում: Աստիճաններից դրված էին բուխարիների երկաթե ժանգոտված վանդակներ, պատի հին ժամացույցներ, փայտե ու քարե արձաններ, շամփուրներ, հախճապակե սկահակներ, տարօրինակ ձև ունեցող կավե զանազան ամանեղեն և էլի ինչ-որ առարկաներ, որոնց անունը չգիտեի և նշանակության մասին գաղափար չունեի: Պատերից կախված էին շրջանակներ, նկարներ, սուսեր, սաղավարտներ, և այդ ամենը միանգամայն անկանոն վիճակում էին: Մոմի ադոտ լուսի տակ դրանց գծագրություններն ինձ թվում էին ֆանտաստիկ: Հորեղբոր ինչին՞ է պետք իրերի այդ կույտը:

Այդ հարցը տվեցի ինքս ինձ, բայց պատասխան չգտա: Միայն շատ ժամանակ անց իմացա, որ դատարանի կատարածուի պաշտոնի հետ հորեղբայրը համատեղում էր մեկ ուրիշ, առավել եկամտաբեր մի մասնագիտություն:

Դեռ փոքր հասակում մեկնելով Պոր-Դոյից, հորեղբայրն ամբողջ քսան տարի ապրել է Փարիզում, աճուրդներում գնահատող աշխատող մի անձնավորության մոտ, որից հետո տեղափոխվել է Դոլ ու

բացել իր գրասենյակը: Սակայն այդ գրասենյակը միայն ուշադրություն շեղելու համար էր, իսկ հորեղբոր հիմնական զբաղմունքը հին կահույքի և զանազան անտիկ իրերի առևտուրն էր: Որպես դատարանի կատարածու նա ներկա էր լինում բոլոր աճուրդներին, մուտք ուներ բոլոր տները, գիտեր բոլոր ձեռնտու վաճառքների մասին և բոլորից լավ կարող էր օգուտ քաղել դրանից: Դրածո մարդկանց միջոցով նա հավաքագնում էր հազվադեպ հանդիպող կահույք, արվեստի հին գործեր և հսկայական օգուտով ուղարկում Փարիզի հայտնի հնահավաքներին, որոնց հետ մշտական կապ էր պահպանում: Այդ պատճառով նրա տունը՝ նկուղից մինչև ձեռնահարկ, իրենից ներկայացնում էր հնությունների մի իսկական խանութ:

Ինչպես այդ տան բոլոր սենյակները, որ կարծես կառուցված էին հսկաների համար, այն սենյակը, ուր տարավ ինձ հորեղբայրս, նույնպես շատ մեծ էր, բայց այնպես էր լցված իրերով, որ նա ստիպված եղավ ցույց տալ ինձ, թե որտեղ է մահճակալը, այլապես չէի գտնի: Պատերից կախված էին հին գորգեր, որոնց վրա գործված էին բնական մեծության մարդիկ, իսկ առաստաղից կախված էին կենդանիների՝ ծովագռավի ու կարմիր երախը բացած կոկորդիլոսի խրտվիլակները: Անկյունում դրված էր ասպետական լրիվ հանդերձանք. ոտքերը, ծնկներից ցած, թաքնված էին սնդուկի ետևը, իսկ գլխին իջեցրած սաղավարտը ասես ծածկում էր կենդանի ռազմիկի դեմքը:

— Ի՞նչ է, վախենո՞ւմ ես,— նկատելով, որ դողում եմ, հարցրեց ինձ հորեղբայրս:

Ես չհամարձանվեցի խոստովանել իմ երկյուղը և պատասխանեցի, որ սաստիկ մրսում եմ:

— Այդ դեպքում արագ հանվիր: Ես հիմա կտանեմ մուրը, մեզ մոտ քնում են առանց լույսի:

Ես մտա անկողին, բայց հազիվ էր հորեղբայրս դուռը փակել իր հետևից, երբ ձայն տվեցի նրան: Ինձ թվաց, թե ասպետի զենք ու զրահը ճռճվեցին ու զնգզնգացին: Հորեղբայրս վերադարձավ:

— Հորեղբայր, այնտեղ կենդանի ասպետ կա:

Նա մոտեցավ մահճակալիս և ակնապիշ նայեց ինձ:

— Այլևս այդպիսի հիմարություններ չլսեմ, թե չէ ինչպես պետքն է կպատժեմ:

Գլուխս խոնավ սավանների տակ թաքցրած, վախից, ցրտից, ու քաղցից դողալով, ես մի ժամից ավելի պառկել էի անքուն: Վերջապես, սրտապնդվելով, ստիպեցի ինձ գլուխս բարձրացնել ու աչքերս բացել: Լուսնի լույսը ներս էր ընկնում երկու բարձր լուսամուտներից և սենյակը բաժանում էր եք մասի՝ երկու լուսավոր ու մեկ մութ: Դրսում քամի էր, պատուհանի փեղկերի ապակիները զնգզնգում էին, երկնքում սլանում էին փոքրիկ ամպեր և երբեմն ծածկում լուսինը:

Ես աչքս չէի հեռացնում լուսնից և պատրաստ էի ամբողջ գիշեր նայել նրան: Ինձ թվում էր, որ հիմա լուսինն ինձ համար նույնն է, ինչ փարոսը ծովայինների համար և քանի դեռ լույս է տալիս, ես չեմ կործանվի: Բայց լուսինը շարունակ վեր էր բարձրանում, և թեպետ լույսը դեռ թափանցում էր սենյակ, ինքն այլևս չէր երևում լուսամուտից: Աչքերս փակեցի: Սակայն ինձ թվում էր, թե յուրաքանչյուր անկյունում, ամեն մի առարկայի հետևում անհայտ վտանգ կա, որը մագնիսի նման ձգում էր հայացքս և ակամայից ստիպում աչքերս բանալ: Հանկարծ քամու ուժգին հոսանքը ցնցեց ամբողջ տունը, չորացած պատերն սկսեցին ճռճալ, գորգն օրորվեց և այնտեղից անջատվեց թուրը ճռճող կարմրագույն մարդը: Պարանից կախված երախը բաց կոկորդիլոսն սկսեց պարել, առաստաղի վրա շարժվեցին հրեշավոր սովերներ, իսկ ասպետը, որին, հավանաբար, արթնացրել էր այդ ամբողջ աղմուկը, շարժվեց իր զրահների մեջ: Ես ուզում էի բղավել, ձեռքերս պարզել դեպի

ասպետը, աղերսելով նրան, որ փրկի ինձ կարմրագույն մարդուց, բայց չէի կարողանում տեղից շարժվել, չէի կարողանում ձայն հանել, ինձ թվում էր, թե մեռնում եմ:

Երբ սթափվեցի, արդեն բոլորովին լուսացել էր, և հորեղբայրս ցնցում էր ուսս: Ամենից առաջ նայեցի կարմրագույն մարդուն: Նա կրկին անշարժացել էր գորգի վրա:

— Այսուհետև աշխատիր միշտ ինքդ արթնանալ, և որքան կարելի է շուտ,— ասաց հորեղբայրը:— Իսկ հիմա շտապիր: Գնալուց առաջ ուզում եմ ցույց տալ, թե ինչով պետք է զբաղվես:

Հորեղբայրը չափազանց գործունյա էր ու աշխատասեր. բնավորության այդ գիծը հատուկ է կարճահասակ մարդկանց: Բոլոր Կալբրիներին ներհատուկ եռանդը, որ պարփակված էր այդ թուլակազմ մարմնի մեջ, նրա մոտ հասնում էր մի տեսակ մոլեգնության: Ամեն օր նա արթնանում էր առավոտյան ժամը չորսին և շտապում իր գրասենյակը, որտեղ առանց հանգստանալու աշխատում էր մինչև հաճախորդների գալը, այսինքն մինչև ժամը ութը-ինը: Այդ չորս կամ հինգ ժամվա ընթացքում նրա կատարած ամբողջ աշխատանքը ես պետք է հետո արտագրեի, որովհետև դատական կատարածուի բոլոր գործերը պետք է պատճեն ունենային:

Հազիվ էր հորեղբայրը դուրս եկել տանից, երբ մի կողմ դրեցի ինձ հանձնարարված արտագրությունը: Այն պահից, ինչ արթնացել էի, մտածում էի միայն մի բանի՝ կարմրագույն մարդու մասին: Ես զգում էի, որ եթե նա գիշերը նորից իջնի պատից, ես չեմ դիմանա ու կմեռնեմ վախից: Երբ հիշեցի նրա սպառնացող դեմքն ու բարձրացրած թուրը, ճակատս պատվեց սառը քրտինքով:

Ես սկսեցի պրպտել տան բոլոր անկյունները, որպեսզի մուրճ ու մեխեր գտնեմ: Դրանք դժվար չէր գտնել, որովհետև հորեղբայրս սովորություն ուներ անձամբ վերանորոգել կոտրված իրերը: Այնուհետև բարձրացա իմ սենյակը և գնացի ուղիղ դեպի կարմրագույն մարդը: Նա շատ անմեղ տեսքով կանգնել էր գորգի վրա: Սակայն ես չհավատացի այդ նենգամիտ հանգստությանը, վերցրեցի մեխն ու մուրճի երկու հարվածով նրա ձեռքը ամրացրի պատին: Ասպետը փորձեց շարժվել իր գրահի տակ, բայց արևը պայծառ փայլում էր, ուրվականների ժամն անցել էր, և ես մուրճով ուժգին հարվածեցի նրա սաղավարտին: Իսկ կոկորդիլոսին սպառնացի բռունցքով, հասկացնելով, որ նրան էլ կպատժեմ, եթե լավ չպահի իրեն:

Դրանից հետո բոլորովին հանգստացա: Խիղճս մաքուր էր, որովհետև կարմրագույն մարդու միայն ձեռքն էի մեխել, այլ ոչ թե գլուխը, ինչպես պատրաստվում էի սկզբում: Այնուհետև իջա գրասենյակ և մինչև հորեղբորս վերադարձը հասցրի ավարտել աշխատանքս:

Նա կարծես գոհ մնաց ինձնից ու ասաց, որ աշխատանքից հետո կարող եմ զվարճության համար զբաղվել տան մաքրությամբ. սրբել իրերի փոշիները, խոզանակով մաքրել ու բրդյա փալատով փայլեցնել հին կաղնե կահույքը:

Իմ նոր կյանքը բոլորովին նման չէր պարոն Բիորելի մոտ անցկացրած երջանիկ ու անհոգ կյանքին:

Հետզհետե վարժվեցի, որ ստիպված էի օրական աշխատել տասնչորս ժամ, սակայն ոչ մի կերպ չէի ընտելանում քաղցին, որին մատնել էր ինձ հորեղբայրս: Հացը միշտ փակված էր պահարանում, իսկ ճաշին և ընթրիքին տալիս էր միայն մի կտոր:

Չորրորդ թե հինգերորդ օրը այլևս չդիմացա. քաղցն այնպես էր ինձ տանջում, որ երբ հորեղբայրը պահարանը կողպեց, ես ակամա պարզեցի ձեռքս: Ձեռքիս շարժումն այնքան պերճախոս էր, որ հորեղբայրն անմիջապես հասկացավ, թե բանն ինչումն է:

— Մի կտոր էլ ես ուզո՞ւմ,— պահարանը կողպելով ասաց նա:— Շատ լավ է, որ ասացիր այդ մասին: Այսօրվանից ես միանգամից քեզ կտամ մի ամբողջական հաց: Դա կլինի քոնը, և այն օրը, երբ շատ քաղցած կլինես, կարող ես ուտել որքան ցանկանաս:

Ես պատրաստ էի համբուրել նրան, բայց նա շարունակեց.

— Սակայն հաջորդ օրը ստիպված կլինես ավելի քիչ ուտել, որովհետև մի ամբողջական հացը պետք է բավարարի մի շաբաթ: Ինչպես ամեն բանում, այնպես էլ ուտելու մեջ անհրաժեշտ է կարգ ու կանոն: Ոչ մի բան այնքան խաբուսիկ չէ, որքան ախորժակը, իսկ քեզ նման երեխաների աչքն անկուշտ է. նրանք շարունակ ուզում են սահմանվածից ավելի շատ ուտել: Անկելանոցներում օրական տալիս են երեք հարյուր ութսուն գրամ կամ երեսունութ դեկագրամ հաց: Այդպիսին կլինի նաև քո բաժինը: Եթե դա բավականացնում է չափահաս մարդուն, ապա քեզ առավել ևս կբավականացնի: Թե չէ կդառնաս շատակեր, որը ես չեմ կարող թույլ տալ:

Հենց որ մենակ մնացի, բառարանում փնտրեցի «դեկագրամ» բառը և պարզեցի, որ դա հավասար է տասը գրամի կամ երկու դրախմի գումարած քառասունչորս հատիկ: Սակայն այդ թվերից բոլորովին ոչինչ չհասկացա և վճռեցի պարզել այդ հարցը:

Մեկնելուց առաջ մայրիկն ինձ նվիրեց քառասուն սու արժողությամբ մի մետաղադրամ: Ես գնացի մեր դիմացն ապրող հացավաճառի մոտ և խնդրեցի տալ երեսունութ դեկագրամ հաց: Երկար բացատրություններից հետո հացավաճառը կշռեց երեք քառորդ ֆունտ հաց: Նշանակում է, երեք քառորդ ֆո՛ւնտ, ահա թե ինչի է հավասար երեսունութ դեկագրամը, որ այնպես մեծահոգաբար բաժին հանեց ինձ հորեղբայրս: Ես անմիջապես կերա այդ հացը, թեև մի ժամ էլ չէր անցել նախաճաշից: Դրա փոխարեն ընթրիքի ժամանակ այնքան էլ քաղց չէի զգում:

— Այդպես էլ գիտեի,— գլխի չընկնելով, թե ինչու եմ այդքան փոքրիկ կտոր կտրում իմ բոքոնից, ասաց հորեղբայրը:— Այդպես էլ գիտեի, որ հիմա դու ավելի գուսպ կլինես: Հավատա ինձ, որ միշտ էլ այդպես է: Մարդը խնայում է իր ունեցվածքը, իսկ ուրիշինը քամուն է տալիս: Այ կտեսնես, հենց որ քո սեփական փողն ունենաս, կուզենաս պահել:

Ինձ մոտ մնացել էր երեսուհինգ սու, բայց ես երկար չպահեցի. ամեն օր երկու հարյուր հիսուն գրամ հաց գնելով, երկու շաբաթում ծախսեցի: Հենց որ հորեղբայրը դուրս էր գալիս տանից, հացի լրացուցիչ բաժին գնելու համար վազում էի խանութ և շուտով ծանոթացա հացի փռան տիրուհու հետ:

— Ես ու ամուսինս գրել չգիտենք,— մի անգամ ասաց նա (հենց այդ օրը վերջացել էր իմ փողը),— իսկ մենք պետք է ամեն շաբաթ հաշիվ ներկայացնենք մեր գնորդներից մեկին: Եթե այդ հաշիվները գրես, ապա ամեն երկուշաբթի քո իսկ ընտրությամբ կարող ես ստանալ երկու քարթու կարկանդակ:

Իհարկե, ես ուրախությամբ համաձայնվեցի այդ առաջարկությանը, թեև երկու կարկանդակի փոխարեն կգերադասեի ստանալ մի ֆունտ հաց: Սակայն չհամարձակվեցի այդ մասին ասել նրան: Այդ հացի խանութից հորեղբայրս հաց չէր գնում, նրան հաց էին բերում գյուղից, որովհետև մի ֆունտ հացը մի սու էժան էր նստում, դրա համար էլ հացավաճառուհին լավ գիտեր նրա ժլատության մասին: Իսկ ես անհարմար էի զգում նրան խոստովանել, որ քաղցած եմ մնում, երբ նա առանց այդ էլ բավականաչափ հիմք ուներ արհամարհել հորեղբորս ժլատության համար:

Ինչո՞ւ ինձ չէր բավականացնում հացի այն բաժինը, որ լիովին բավարարում էր չափահաս մարդուն: Այն պատճառով, որ անկելանոցներում ու բանտերում, բացի հացից, տալիս էին նաև

ապուր, միս ու բանջարեղեն: Իսկ մեզ մոտ հացը հիմնական կերակուրն էր և, ի լրումն դրա, որպես սնունդ ծառայում էին ինչ-որ արտակարգ ուտելիքներ, որոնցից ամենասննդարարը ամեն առավոտ մատուցվող ապխտած ծովատառեխն էր: Եթե հորեղբայրը տանն էր, մենք ձուկը երկու կես էինք անում: Մակայն «երկու կես» նշանակում է, որ հորեղբայրը, իհարկե, վերցնում էր մեծ կտորը: Իսկ երբ նա մեկնում էր, ես պարտավոր էի կեսը թողնել հաջորդ օրվան:

Ի դեպ, թե ինչպես էի այն ժամանակ քաղցից տառապում, կարելի է դատել հետևյալ դեպքից:

Մեր տան հետևում կար մի փոքրիկ բակ, որ ցանկապատով բաժանված էր հարևան կալվածքից: Այդ կալվածքը պատկանում էր ոմն պարոն Բուգուրի, որը չունեի ոչ կին, ոչ երեխաներ և սաստիկ սիրում էր կենդանիներին: Տանտիրոջ սիրելին ճերմակ բրդով ու վարդագույն քթով մի հրաշալի սենեֆերնար էր, որի անունը Պատո էր: Քանի որ վնասակար էր փակ շենքում ապրելը, նրա համար մի գեղեցիկ տնակ էին կառուցել մեր ցանկապատի մոտ: Տանտիրոջ ճաշերուն ներկա լինելը և այնպիսի համեղ կերակուրներ ուտելը, ինչպիսին են տավարի միսն ու քաղցրեղենը, նույնպես վնասակար էր համարվում Պատոյի համար: Դա շների մոտ առաջացնում է մաշկային հիվանդություններ: Դրա համար էլ օրական երկու անգամ նրա բույնն էին բերում գեղեցիկ ճենապակե ամանով լի կաթնապուր:

Ինչպես բոլոր երես տված շները, Պատոն էլ վատ էր ուտում: Երբեմն նա միայն նախաճաշում էր, բայց չէր ճաշում, երբեմն էլ միայն ճաշում էր, բայց չէր ցանկանում նախաճաշել, և կաթնապուրով լի ամանը հաճախ մնում էր ձեռք չտված:

Բակում զբոսնելիս, ցանկապատի արանքից ես հաճախ տեսնում էի կաթով լի ամանը, որի մեջ լողում էին սպիտակ հացի կտորներ, իսկ կողքին՝ քաղցր քուն մտած Պատոյին: Ցանկապատի մեջ անցք կար: Պատոն հաճախ էր օգտվում դրանից և վագում մեր բակը: Հորեղբայրը չէր գանգատվում դրա համար: Պատոյին համարում էին շատ չար շուն և հիանալի պահակ, նա բոլոր փականքներից ավելի հուսալի էր, իսկ ամենակարևորը՝ ձրի պահակ էր: Չնայած նրա կատաղի բնավորությանը, մենք շուտ մտերմացանք, և երբ ես դուրս էի գալիս բակ, Պատոն անմիջապես վագում էր ինձ հետ խաղալու: Մի անգամ նա գլխարկս քարշ տվեց իր բույնը և ոչ մի կերպ չէր ուզում ետ բերել: Այդ ժամանակ որոշեցի ինքս գնալ գլխարկի ետևից և սողալով անցա անցքի միջով: Հրաշալի թանձր կաթով լի ամանն իր սովորական տեղում էր: Դա շաբաթ օրը երեկոյան էր: Շաբաթվա ընթացքում ես համարյա կերել էի իմ ամբողջ հացը և ճաշին մնացել էր միայն հացի մի փոքրիկ, կոշտ կտոր: Քաղցը դաժանորեն տանջում էր ինձ, և ես ծնկաչոք սկսեցի ուղղակի ամանից ազահորեն խմել կաթը, իսկ Պատոն նայում էր ինձ ու մտերմորեն շարժում պոչը: Բարի՛ Պատո: Այդ ծանր օրերին նա էր իմ միակ բարեկամն ու ընկերը: Իր վարդագույն լեզվով նա քնքշորեն լիզում էր ինձ, երբ երեկոները գաղտագողի գնում էի նրա մոտ, որ բաժանեմ նրա ընթրիքը, ամեն բոպե թաթը մեկնում էր ինձ ու նայում իր խոշոր խոնավ աչքերով: Մի տարօրինակ բարեկամություն էր սկսվել, նա կարծես հասկանում էր, որ փրկում է ինձ և, հավանաբար, գոհ էր դրանից...

Շատ հաճախ մեր կյանքը կախված է լինում ամենաաննշան պատահականություններից: Եթե ինձ չբաժանեին Պատոյից, ապա ինձ հետ, հավանաբար, չէին պատահի այն արկածները, որոնց մասին պատրաստվում եմ պատմել ձեզ: Բայց եկավ ամառը, Պատոյի տերը նրան իր հետ տարավ ամառանոց, իսկ ես մնացի ինձ համար քիչ հաճելի հորեղբորս ընկերակցությամբ և իմ սովաբաժնի հետ:

Դրանք տխուր օրեր էին: Երբեմն պատահում էր, որ գործ չէի ունենում և մռայլ գրասենյակում մենակ նստած, մտածում էի հայրենի տան մասին: Ես շատ էի ուզում նամակ գրել մայրիկին, սակայն փող չունեի, իսկ փոստային նամականիշն արժեր վեց սու: Գիտենալով, որ մայրիկն

օրական վաստակում էր ընդամենը տասը սու, չէի ուզում նրան ծանրաբեռնել այդպիսի ծախսերով և նամակները երբեք առանց նամականիշի չէի ուղարկում: Մենք սահմանափակվում էինք միայն նրանով, որ միմյանց ողջուն չէինք հաղորդում շուկայի օրերին Դու էկող ձկնավաճառի միջոցով: Մենքի հավելումը, որ վերջերս ստանում էի Պատոյի մոտ, հնարավորություն էր տալիս ավելի հանգիստ վերաբերվել իմ աղքատիկ օրաբաժնին: Սակայն երբ այդ հավելումն այլևս չկար, սկսեցի նկատել, որ սովորական օրաբաժինս կարծես ավելի է պակասել: Հորեղբայրն իր բոքոնը միշտ փակում էր պահարանում, իսկ իմը փակի տակ չէր: Սակայն մեզ մոտ երբեք ոչ ոք չէր գալիս, և ես հացը պահելու կարիք չունեի: Բայց մի քանի օր հետևելով, հասկացա, որ իրավացի չեմ: Մի անգամ թաքնվեցի դռան ետևը, իսկ երբ անսպասելիորեն դուռը բացեցի, տեսա, որ հորեղբայրս պատրաստվում բոքոնից մի կտոր կտրել:

Վրդովմունքը քաջություն ներշնչեց, որին առաջ ընդունակ չէի համարում ինձ:

— Հորեղբայր, դուք վերցրել եք իմ հացը,— գոռացի ես:

— Իսկ միթե՞ ինձ համար եմ վերցնում,— հանգիստ պատասխանեց նա:— Մա մեր սպիտակ փխսիկի համար է: Նա հիմա ձագեր ունի, և դու, իհարկե, չես ուզի, որ նա քաղցից սատկի: Միշտ պետք է խղճալ կենդանիներին, հիշիր այդ մասին, Ռոմեն:

Առաջ էլ բոլորովին չէի համակրում հորեղբորս, իսկ հիմա սկսեցի ատել ու արհամարհել նրան: Երկերեսանի, գող, ստոր ու չար մարդ էր նա... Ամոթից կարմրում էի, երբ մտածում էի, որ նրա եղբորորդին եմ:

Նրա բնավորության հիմնական գիծը ժլատությունն էր: Շահամոլությամբ տարված, նա աշխատում էր առանց իրեն խնայելու, անտարբեր էր զրկանքների նկատմամբ և կյանքում սիրում էր միայն փողը: Նա նախօրոք տառապում էր այն մտքից, թե որքան ստիպված կլինի ծախսել վաղը և չէր կարողանում մխիթարվել, երբ մտածում էր նախորդ օրը ծախսած փողի մասին:

Հիմա, երբ մտաբերում եմ նրա ժլատությունը, ծիծաղս է գալիս, իսկ այն ժամանակ զայրույթից բորբոքվում էի, որովհետև պատանի ժամանակ հաճախ ողբերգական նշանակություն էս տալիս այն բանին, ինչը հետագայում ավելի շուտ զավեշտական է թվում: Այդ մարդը, ինչպես արդեն պատկերացնում եք, ամենևին չէր հոգում իր արտաքինի մասին: Այդ պատճառով էլ չափազանց զարմացա, երբ մի անգամ առավոտյան նրան տեսա նախասենյակում կախված հայելու առաջ կանգնած: Նա գլխարկը դրել էր գլխին ու չորս կողմից գնում էր: Այնուհետև հանեց, խոզանակով մաքրեց, նորից հագավ ու սկսեց նայել հայելու մեջ: Բայց ամենատարօրինակն այն էր, որ գլխարկի վերնի մասը մաքրել էր խավի ուղղությամբ, ինչպես պետք է, իսկ ներքնի մասը՝ խավի հակառակ ուղղությամբ, և այդպիսով գլխարկի մի կետը հարթ էր, իսկ մյուսը՝ գոգաված: Ես որոշեցի, որ հորեղբայրը խելքը թոցրել է. սովորաբար նա շատ խնամքով էր վերաբերվում իր գլխարկին: Օրինակ, շոգ օրերին աստառը քրտինքից պահպանելու համար, նախքան գլխարկ դնելը, նա գլուխը փաթաթում էր հին թղթով: Հաճախ թուղթը թրջվում էր ու կպչում նրա ճակատին: Իսկ երբ որևէ մեկին բարևելու համար հանում էր գլխարկը, նրա գլխին փայլում էր մի ծիծաղելի թագ, որն անզուսպ քրքիջ էր առաջացնում նույնիսկ նրանց մոտ, ովքեր լավ էին ճանաչում նրան, հետևաբար նաև հիմք ունեին վախենալու...

— Այստեղ արի,— ասաց հորեղբայրը, տեսնելով, որ հետևում եմ իրեն:— Մի լավ նայիր ինձ: Ի՞նչ կասես գլխարկիս մասին: Ինչպիսի՞ տեսք ունի:

Ես շատ բան կարող էի ասել գլխարկի մասին, բայց մտածեցի, որ չարժե և միայն պատասխանեցի:

— Կարծում եմ, որ լավ է պահպանվել:

— Ես բոլորովին էլ դրա մասին չեմ հարցնում: Արդյոք սգո տեսք ունի, թե՞ ոչ: Գզգզված խավը նմա՞ն է կրեյի: Վախճանվել է Կանկալում բնակվող Ժերոմ եղբայրս, և ես պետք է գնամ թաղման: Ճանապարհն առանց այդ էլ էժան չի նստի, դրա համար էլ հիմարություն կլինի փող ծախսել սգո ժապավենի վրա, որ հագնելու ես ընդամենը մեկ անգամ: Ես բոլորովին չեմ պատրաստվում սուգ պահել այն անխելքի համար, որն իրենից հետո պարտքերից բացի ոչինչ չի թողել:

Ծիծաղը վայրկենապես մարեց շուրթերիս վրա: Ես չէի ճանաչում մահացած Ժերոմ հորեղբորս և միայն լսել էի, որ նա մի տարով մեծ էր հորեղբայր Միմոնից, որ միշտ դժբախտ է եղել, որ փոքր հասակից եղբայրները մեծացել են միասին և մտերիմ եղել այնքան ժամանակ, մինչև կյանքը բաժանել է նրանց: Խիստ հուզված՝ ես շարունակեցի աշխատել: Նրա ասածները ոչ մի կերպ չէին կապվում ընտանիքի մասին իմ ունեցած պատկերացման հետ: Ի՞նչ բան է եղբայրական սերը: Որտե՞ղ է մահացածի նկատմամբ եղած հարգանքը:

Ասենք, հորեղբորս հետ ամենօրյա շփումը իմ մեջ տարակուսանք էր առաջացրել ոչ միայն այդ հասկացողությունների հանդեպ: Եվ ոչ թե նրա համար, որ նա փորձում էր որևէ բան ներշնչել ինձ՝ հորեղբայրը չէր էլ մտածում ինձ որևէ բան սովորեցնել, ոչ վատը, ոչ լավը, այլ այն պատճառով, որ ես շարունակ հետևում էի նրան և տեսնում էի այն ամենը, ինչ կատարվում էր մեր տանը:

Գավառական դատական կատարածուն մարդկային բոլոր կարիքների ու տառապանքների հավատարմատարն էր ու վկան: Այդ պրոֆեսիայի հետ հորեղբայրը համատեղում էր բանկիրի կամ, ավելի ճիշտ, վաշխառուի արհեստը, ուստի նրա գրասենյակն այցելող զանազան դժբախտների ու խարդախների հավաքածուն խիստ ուսանելի էր: Մենք հորեղբոր հետ աշխատում էինք միևնույն սեղանի մոտ, իրար դիմաց նստած, և ես ակամա ներկա էի լինում հաճախորդների հետ վարած նրա բոլոր բանակցություններին: Նա ինձ սենյակից հեռացնում էր միայն այն ժամանակ, երբ վճռվում էին բացառիկ կարևոր գործեր: Երբեք չեմ լսել, որ նա ընդառաջի որևէ մեկի խնդրանքին, հետաձգի կամ չեղյալ հայտարարի դատական հայցը: Նա խուլ էր աղաչանքների, արցունքների, ամենահամոզիչ ու սրտառուչ փաստարկների հանդեպ: Երբ որևէ մեկը ձանձրացնում էր նրան, հորեղբայրը հանում էր ժամացույցն ու դնում իր առջև, գրասեղանին:

— Ես չեմ կարող այլևս ժամանակ կորցնել,— ասում էր նա:— Եթե ցանկանում եք էլի որևէ բան հաղորդել, ապա ես ձեր տրամադրության տակ եմ: Բայց միայն նախագգուշացնում եմ, որ իմ յուրաքանչյուր ժամն արժե չորս ֆրանկ: Հիմա տասներկուսն անց է քառորդ, կարող եք շարունակել:

Կարելի է շատ երկար պատմել այն բոլոր դժբախտ կանանց մասին, ովքեր արցունքն աչքերին աղերսում էին զիջողամիտ լինել, տղամարդկանց մասին, ովքեր ծնկաչոք խնդրում էին վճարումը հետաձգել մի ամսով, մի շաբաթով կամ մի քանի ժամով, և այդ մարդկանց մասին ես հիշատակում եմ լոկ նրա համար, որպեսզի բացատրեմ, թե ինչու հետզհետե խորապես ատեցի հորեղբորս: Չնայած ես տեսել էի, թե որքան անողորմ ու անգուր լ է նա և ջերմագին կարեկցում էի նրա զոհերին, բայց, բարեբախտաբար, երիտասարդ տարիքիս չէի կարող հասկանալ այն բոլոր հնարանքները, խորամանկություններն ու ստոր խաբեությունները, որոնց դիմում էր իր գործերը վարելիս: Հենց առաջին անգամ, երբ նկատեցի այդպիսի բացահայտ խաբեություն, որ շատ էր աչքի ընկնում, չհամբերեցի և, ինչպես կոեսնեք, շատ թանկ վճարեցի միջամտության համար:

Հորեղբայրս գնել էր մի հին ազնվականական կալվածք, որն ուզում էր ամբողջությամբ վերակառուցել, որպեսզի ավելի շատ եկամուտ տա, և շաբաթ օրերը մեզ մոտ միշտ փող ստանալու էին գալիս այդ կալվածքում աշխատող բանվորներն ու կապալառուները:

Մի անգամ շաբաթ օրը գրասենյակ եկավ մի որմնադիր վարպետ և շատ զարմացավ, երբ մենակ գտավ ինձ: Ինչպես ինքն էր ասում, հորեղբայրս նրա հետ պայմանավորվել էր վճարել կատարված աշխատանքի վարձը: Նա նստեց ու սկսեց սպասել:

Անցավ մեկ, երկու ժամ... անցավ չորս ժամ, բայց հորեղբայրը չկար ու չկար, իսկ վարպետը չէր գնում: Վերջապես երեկոյան ժամը ութին հորեղբայրը վերադարձավ տուն:

— Ա՛, այդ դո՞ւք եք, Ռաֆարեն: Շատ ցավում եմ, բայց գործերը շատ են, ինքներդ էլ հասկանում եք:

Հորեղբայրս իրեն պահելու առանձնահատուկ ձև ուներ, որ հետագայում բազմիցս նկատել եմ, այսպես կոչված, գործարար մարդկանց մոտ: Նրանք աշխատում են ծանրակշիռ երևալ, բայց պարզապես ծիծաղելի են դառնում: Ռաֆարենի հետ խոսելու փոխարեն, նա սկսեց ինձ հարցուփորձ անել, թե իր բացակայության ժամանակ ինչ է տեղի ունեցել գրասենյակում և կարդաց ստացված նամակները: Այնուհետև աչքի անցկացրեց որոշ փաստաթղթեր, ստուգեց իմ աշխատանքը և այդ ամենի վրա ավելի քան կես ժամ կորցնելով, վերջապես դիմեց իրեն սպասող վարպետին.

— Ի՞նչ եք ուզում ինձնից, սիրելիս:

— Դուք խոստացել եք այսօր վճարել հաշվի համաձայն:

— Ճշմարիտ է, բայց ես, դժբախտաբար, փող չունեմ:

— Վաղը բանվորների վարձատրման օրն է, բացի դրանից, ես դեռ պետք է մուրհակի համաձայն վճարեմ ձեր գործընկերներից մեկին, որը չափազանց ձանձրացրել է ինձ: Ահա արդեն վեց ամիս է, որ քթիցս բռնած ման եք ածում, իսկ այսօր խոստացել եք վճարել, և ես հավատացի ձեր խոսքին...

— Խոսքին, ի՞նչ խոսք,— ընդհատեց նրան հորեղբայրը:— Մի՞թե ասել եմ՝ ազնիվ խոսք եմ տալիս վճարել շաբաթ օրը: Չեմ ասել, չէ՞: Նշանակում է, ի միջի այլոց ասել եմ. «Շաբաթ օրն անցեք, կվճարեմ»: Իսկ այդպիսի խոսքերը ոչինչ չեն պարտավորեցնում: Գիտեք ինչ, Ռաֆարեն, խոսք էլ կա, խոսք էլ՝ երբեք չմոռանաք այդ:

— Ահա թե ինչ: Իսկ ես չգիտեի... Ինչ արած, ներեցեք, ես հասարակ մարդ եմ... Երբ ասում եմ, թե շաբաթ օրը կվճարեմ, հենց շաբաթ օրն էլ վճարում եմ:

— Իսկ եթե չեք կարող վճարել:

— Եթե խոստանում եմ, նշանակում է, կարող եմ: Հենց դրա համար էլ անհանգստացնում եմ ձեզ: Ես խոստացել եմ պարտքս վճարել և եթե այդ չանեմ, իմ պարտատերը բռնագանձման կներկայացնի:

Ռաֆարենն սկսեց մանրամասն բացատրել իր վիճակը: Նա փոխարինաբար դրամ է վերցրել, հույս ունենալով, որ հորեղբայրը կվարձատրի իր կատարած աշխատանքի դիմաց և, եթե վաղը մուրհակի համաձայն փողը չմոծի, ապա երկուշաբթի օրը՝ դատարանի կատարածուն կվերգրի նրա գույքը: Իսկ կինը մահամերձ է, և դա ուղղակի կսպանի նրան: Չնայած վարպետի բոլոր փաստարկներին, հորեղբայրը նույնն էր պնդում.

— Փող չունեմ, սիրելիս, ոչ մի կոպեկ չունեմ: Հո չեմ կարող գողանալ, որ ձեզ հետ հաշիվներս փակեմ: Եթե ինձ դատի տաք, ապա դրամը կստանաք միայն մի տարի հետո...

Հինգ օր առաջ ես ներկա էի, երբ հորեղբայրս խոսում էր մեկ այլ դատարանի կատարածուի հետ և լսեցի, թե ինչպես էր նա խորհուրդ տալիս իր բարեկամին գործը հասցնել «ծայրահեղության»: Թեև դեռ չէի ըմբռնում այն ամբողջ ճշմարտությունը, որ հասկացա ավելի ուշ, այսինքն, որ Ռաֆարենի պարտատերը հենց ինքը հորեղբայրն էր, բայց նրա տարօրինակ վարմունքը կասկածելի թվաց ինձ: Ես զգացի, որ նույնիսկ հորեղբոր դժգոհությունը հարուցելու վտանգը աչքի առաջ ունենալով, պետք է օգնեմ դժբախտ կապալառուին և որոշեցի միջամտել այդ գործին: Երբ հորեղբայրը տասներորդ անգամ կրկնեց. «Եթե փող ունենայի, իհարկե, կվճարեի», ես բարձրաձայն ասացի.

— Փող կա, ես ստացել եմ այսօր:

Հազիվ էի արտասանել այդ բառերը, սեղանի տակ հորեղբայրը ոտքով այնպես հարվածեց ինձ, որ ես օրորվեցի և, հազիվ մնալով աթոռի վրա, դեմքս խփեցի սեղանին:

— Ի՞նչ եղավ քեզ, տղաս,— վեր կենալով, հարցրեց հորեղբայրս:

Հետո մոտեցավ ինձ և ամբողջ ուժով կամթեց թևս:

— Որքան անշնորհքն է այս հիմարիկը,— դիմելով Ռաֆարենին, շարունակեց նա:

Ռաֆարենը չտեսավ, թե հորեղբայրն ինչպես հարվածեց ինձ ոտքով և ինչպես կամթեց թևս, դրա համար էլ խիստ զարմացած նայում էր ինձ: Նա որոշեց, որ հորեղբայրն ուղղակի առիթ է փնտրում, որպեսզի փոխի խոսակցությունը և կրկին դիմեց իրեն հուզող հարցին:

— Եթե փող ունեք, ապա...— սկսեց նա:

Ես վրդովված էի մինչև հոգուս խորքը:

— Ահա փողը,— բղավեցի ես և բանկոտոները հանեցի այն դարակից, որտեղ դրված էին դրանք:

Երկուսն էլ միանգամից ձեռքները մեկնեցին, բայց հորեղբայրը Ռաֆարենից ավելի ճարպիկ էր և ձեռքիցս խլեց դրամի կապոցը:

— Լսեք, Ռաֆարեն,— փոքր-ինչ լռելով, ասաց նա:— Ես ուզում եմ ձեզ համար անել այն ամենը, ինչ հնարավոր է և ապացուցել, որ ավելի ազնիվ ու մեծահոգի եմ, քան խոսում են իմ մասին: Այստեղ երեք հազար ֆրանկ կա, ես պետք է դա ստանայի վաղը և պատվո պարտք վճարեի: Եթե չվճարեմ, իսկ հիմա չեմ կարող այդ անել, որովհետև մինչև վաղը այդպիսի գումար, իհարկե, ձեռք չեմ բերի, պատվագուրկ կլինեմ: Այնուամենայնիվ դրամը ձեզ եմ տալիս: Ստացական գրեք առ այն, որ բոլորը լրիվ ստացել եք, ու փողը ձերը կլինի:

Ես կարծում էի, թե ուրախությունից իրեն կորցրած Ռաֆարենը կնետվի հորեղբորս վզին, որն այնքան էլ վատը չէր, ինչպես կարելի էր մտածել, սակայն այդպիսի բան տեղի չունեցավ:

— Լրի՞վ,— բացականչեց նա:— Բայց չե՞ որ հաշվի համաձայն դուք ինձ պարտք եք ավելի քան չորս հազար ֆրանկ:

— Հետո ի՞նչ:

— Իսկ հիմա իջեցրիք բոլոր վարձաչափերը և հաշիվը պակասեցրիք մինչև երեք հազարի: Էհ՛, պարոն Կալբրի:

— Նշանակում է, չե՞ք ցանկանում ստանալ այս երեք հազարը: Չափազանց շնորհակալ եմ ձեզնից, սիրելիս, դրանք ինձ շատ պետք կգան: Չե՞ որ ես հենց հիմա ուզում էի ազատել ձեզ նեղ դրությունից:

Ռաֆարենը նորից սկսեց բացատրել ու խնդրել հորեղբորը, բայց տեսնելով, որ վերջինս անդրդվելի է, հաշիվը վերցրեց ու ստորագրեց:

— Տվեք փողը,— խուլ ձայնով ասաց նա:

— Ստացեք,— պատասխանեց հորեղբայրը:

Վարպետը վեր կացավ և, գլխարկը դնելով, ասաց.

— Պարոն Կալբրի, ավելի լավ է ինձ նման չքավոր լինել, քան հարստանալ այն ճանապարհով, ինչպես դուք:

Հորեղբոր դեմքը կանաչ գույն ստացավ, շրթունքներն սկսեցին դողալ, բայց նա արագ տիրապետեց իրեն և ծաղրանքով պատասխանեց.

— Ում ինչպես դուք է գալիս:

Հետո ժպտալով, կարծես Ռաֆարենն իր ամենալավ բարեկամն էր, վարպետին ուղեկցեց մինչև դուռը:

Բայց հենց որ նրա հետևից դուռը փակվեց, հորեղբորս դեմքի արտահայտությունն անմիջապես փոխվեց, և ես դեռ չէի հասցրել գլխի ընկնել, թե բանն ինչու՞մ է, երբ այնպիսի ապտակ ստացա, որ աթոռից ընկա հատակին:

— Հիմա քո հախից կգամ,— գոռաց նա: — Ես համոզված եմ, որ դիտավորյալ խոսեցիր փողի մասին, անպիտան: Դու հիանալի գիտեիր, թե ինչ ես անում:

Ես սոսկալի ցավ էի զգում, բայց գիտակցությունս չկորցրեցի և սաստիկ ցանկություն ունեի վրեժ լուծել ինձ տանջողից:

— Այո, դիտավորյալ ասացի,— պատասխանեցի ես:

Հորեղբայրն ուզում էր հարձակվել ինձ վրա, բայց ես հասկացա նրա մտադրությունը և մտա սեղանի տակ ու դուրս եկա մյուս կողմից, այնպես, որ սեղանը մնաց մեր միջև:

Տեսնելով, որ դուրս պրծա իր ձեռքից, հորեղբայրը կատաղությամբ սեղանից վերցրեց օրենքների ժողովածուի հսկայական հատորն ու նետեց վրաս: Ես թավալգլոր ընկա հատակին, գլուխս խփեցի ինչ-որ սուր բանի, գիտակցությունս գրեթե կորցրեցի և չկարողացա անմիջապես ոտքի կանգնել:

Արյան մեջ ողողված, պատը բռնած ես դժվարությամբ տեղից վեր կացա, իսկ հորեղբայրս հանգիստ նայում էր ինձ և ոչ մի շարժում չարեց, որ օգնի:

— Գնա լվացվիր, քոտոտ,— ասաց նա,— և լա՛վ հիշիր, թե ինչ է նշանակում խառնվել իմ գործերին: Եթե մեկ անգամ էլ փորձես քիթդ խոթել, կսպանեմ:

— Ես ուզում եմ մեկնել:

— Ո՞ւր:

— Մայրիկի մոտ:

— Ահա թե ի՛նչ: Հանգիստ մնա՝ ոչ մի տեղ էլ չես մեկնի: Մի մոռացիր, որ պարտավոր ես հինգ տարի ծառայել ինձ մոտ, իսկ ես ամեննին էլ չեմ ցանկանում հրաժարվել իմ իրավունքներից: «Ուզում եմ գնալ մայրիկի մոտ, ուզում եմ գնալ մայրիկի մո՛տ»: Ի՛նչ հիմարն ես:

VII

Վաղուց արդեն գլխումս մի միտք էր ծագում, որն ամեն անգամ վերադառնում էր, երբ քաղցած էի լինում կամ հորեղբայրս առանձնապես վատ էր վարվում հետս, իսկ դա տեղի էր ունենում ամեն օր: Ես երազում էի փախչել Դոլից, հասնել Հավր և մեկնել նավարկության: Հորեղբոր հաճախակի բացակայությունների ժամանակ իմ զբաղմունքը կայանում էր նրանում, որ սանդուղքի վերևը կախված Նորմանդիայի մեծ քարտեզի վրա նշագծում էի իմ երթուղին: Իսկական կարկին չունենալով, ես փայտից սարքել էի մի ինքնաշեն կարկին և դրանով չափում էի տարածությունները, ինչպես ինձ սովորեցրել էր պարոն Բիորեյլը: Դոլից Պոնտրսոնով ես կհասնեմ Ավրանշ և այնտեղ կգիշերեմ: Ավրանշից կգնամ Վիլյե-Բոկասժ, այնուհետև Կասեն-Դոգյուլե և Պոն-Լևեկով կհասնեմ Գոնֆլեր: Դա կտևի մի շաբաթից ոչ ավելի: Այն ժամանակ մի ֆունտ հացն արժեր երեք սու, հետևապես, եթե կարողանայի հավաքել քսանչորս սու, ապա ճանապարհին սովամահ չէի լինի: Բայց որտեղի՞ց վերցնեի այդքան շատ դրամ՝ ամբողջ քսանչորս սու: Ինձ շփոթեցնում էր այդ անհաղթահարելի խոչընդոտը:

Սակայն ստացած հարվածը ստիպեց ինձ վճռել: Ծորակի տակ լվացվելով և արյունը դժվարությամբ կանգնեցնելով, ես գնացի սենյակս և մոռացա մտահղացած փախուստի բոլոր դժվարությունները. «Անտառեզրի առուններում մոշն արդեն հասնում է,— խորհում էի ես,— թռչունների բներում, հավանաբար, ձվեր կլինեն: Երբեմն ճանապարհի փոշու մեջ ընկած են լինում մետաղադրամներ: Ես կարող եմ հանդիպել սայլապանի, նա ինձ կհասցնի որևէ տեղ և մի կտոր հաց կտա այն բանի համար, որ կվարեմ ձիերը, երբ նա ցանկանա մի քիչ քնել: Այստեղ ոչ մի անհնարին բան չկա»: Հետագայի մասին չէի անհանգստանում: Հավրում ամեն մի նավապետ էլ ինձ անպայման կվերցնի իր նավը որպես կրտսեր նավաստի: Միայն թե ընկնեմ ծով, իսկ այնտեղ ես իսկական նավաստի եմ և հրաշալի ճանապարհորդություն եմ կատարում: Նավագնացությունից վերադառնալով, ես գնում եմ Պոր-Դյո, մայրիկն ամուր համբուրում է ինձ, և ես նրան եմ հանձնում իմ վաստակած դրամը: «Իսկ եթե նավաբեկության ենթարկվե՞նք... ի՛նչ արած: Այն ժամանակ ավելի հետաքրքիր կլինի: Անմարդաբնակ կղզի, վայրենիներ, թութակներ... Ես ինքս եմ դառնում Ռոբինզոն»:

Գլխիս վերքն այլևս չէր ցավում, և ես մոռացա, որ այսօր չեմ ճաշել:

Ամեն կիրակի հորեղբայրն առավոտ վաղ մեկնում էր իր նոր կալվածքը և վերադառնում միայն ուշ երեկոյան: Այդ պատճառով ես հաստատապես գիտեի, որ շաբաթ օրվա երեկոյից մինչև երկուշաբթի առավոտյան մենք չենք հանդիպի: Այսօր հենց շաբաթ է, և եթե անմիջապես փախչեի, ապա մինչև նրա վերադարձը իմ տրամադրության տակ կունենայի ամբողջ երեսունվեց ժամ: Սակայն առանց կողպեքները բանալու և դռները բացելու ինչպե՞ս դուրս գամ տանից: Ես որոշեցի երկրորդ հարկի լուսամտից ցատկել բակ, ցանկապատի անցքով մտնել պարոն Բուգուրի այգին, իսկ այնտեղից դուրս գալ դաշտ:

Անկողնում պառկած, ես խորհում էի փախուստի ծրագրի մասին և սպասում, թե հորեղբայրը երբ կքնի, որպեսզի ի կատար ածեի ծրագիրս:

Շուտով լսեցի, ինչպես հորեղբայրը մտավ իր սենյակը, հետո անմիջապես էլ դուրս եկավ այնտեղից, և ինձ թվաց, թե աշխատելով աղմուկ չանել, նա ոտքերի մատների վրա սանդուղքով բարձրանում է երկրորդ հարկ: Գուցե կռահե՞լ է իմ մտադրության մասին և որոշել է հետևել ինձ: Հորեղբայրն զգուշությամբ բացեց դուռը: Ես պառկել էի երեսս պատի կողմը դարձրած և չտեսա, թե ինչպես ներս մտավ, բայց պատի վրա նկատեցի վառվող մումի բոցը ծածկող նրա ձեռքի դողողացող ստվերը: Նա կամացուկ մոտեցավ մահճակալիս:

Ես ձևացրեցի, թե խոր քնած եմ: Հորեղբայրը թեքվեց ինձ վրա, մոմը մոտեցրեց գլխիս, և ես զգացի, ինչպես զգուշությամբ հետ տարավ վերքը ծածկող մազերը:

— Դատարկ բան է,— կիսաձայն ասաց նա,— սարսափելի ոչինչ չկա:

Եվ նույնքան էլ կամացուկ դուրս եկավ սենյակից:

Առաջ հորեղբոր այդ վարմունքը և կարծեցյալ կարեկցանքը, հավանաբար, կստիպեին ինձ փոխել ծրագրերս: Բայց հիմա ուշ էր: Ես արդեն մտովի շնչում էի ծովի ու կուպրի բուրմունքը, արդեն կիսով չափ բացել էի անհայտ ապագան տանող խորհրդավոր դուռը...

Հորեղբոր հեռանալուց հետո անցավ մեկ ժամ: Որոշելով, որ նա արդեն քնած է, ես վեր կացա ու սկսեցի իրերս հավաքել, այսինքն թաշկինակի մեջ կապեցի երկու վերնաշապիկ ու մի գույգ գուլպա: Մի պահ տատանվեցի՝ չհագնե՞մ արդյոք տոնական զգեստս, դրանով կարծես ավելի մեծալուրջ տեսք եմ ունենում, սակայն, բարեբախտաբար, առողջ դատողությունը հաղթեց, և ես կանգ առա նավաստիական հաստ մահուղից կարված կուրտկայի ու տաբատի վրա: Այնուհետև, որպեսզի չթխկթխկացնեի, կոշիկներս վերցրի ու դուրս եկա սենյակից:

Չէի հասցրել իմ հետևից դուռը ծածկել, երբ գլխումս մի չարաճճի միտք ծագեց, և ես վերադարձա: Թեև լուսինը դեռ դուրս չէր եկել, բայց բավական լուսավոր գիշեր էր և մթությանը վարժված աչքերս պարզորոշ տարբերում էին բոլոր առարկաները: Աթոռը զգուշությամբ կանգնեցնելով մահճակալիս, բարձրացա վրան, հասա առաստաղից կախված կոկորդիլոսին, դանակով կտրեցի պարանը, որից կախված էր և երկու ձեռքով ամուր գրկեցի: Այնուհետև պառկեցրի իմ անկողնում և վերմակը գլխին քաշեցի: Այդ ժամանակ պատկերացրի, թե երկուշաբթի առավոտյան հորեղբայրս որքան կզարմանա, երբ իմ փոխարեն անկողնում կգտնի կոկորդիլոսին և սկսեցի խենթի պես ծիծաղել, իսկ երբ մտածեցի, թե նա, գուցե, կվճռի, որ կոկորդիլոսն ինձ կերել է, ավելի շատ ծիծաղեցի:

Սակայն այդ կատակով էլ սահմանափակվեց իմ վրեժը հորեղբորիցս:

Ջարմանալի է, թե չորս պատերն ու գլխավերևում եղած տանիքը որքան վստահություն են հաղորդում մարդուն: Երբ բարեհաջող դուրս սողացի լուսամուտից, պատը բռնած սահեցի ներքև և հայտնվեցի պարոն Բուգուրի այգում, ծիծաղելու ամբողջ ցանկությունն անմիջապես անհետացավ: Ես անհանգիստ դեսուդեն էի նայում՝ գիշերը բոլոր թփերը տարօրինակ տեսք էին ստանում, խիտ թավուտում երևում էին ինչ-որ փոսեր, որոնց վախենում էի նայել: Թեթև քամի դիպավ ծառերին, և տերևներն սկսեցին սրտաճմլիկ սոսափել: Հաշիվ չտալով ինձ, թե ինչ եմ անում, թաքնվեցի Պատոյի խցում: Մի րեղի՜ Պատո: Եթե նա այստեղ լիներ, ես, հավանաբար, չէի փախչի...

Ես միշտ ինձ համարել եմ քաջ տղա և ամաչում էի, որ վախից ատամներս չխկչխկում են ու ոտքերս ծալվում: Որոշեցի ինքս ինձ տիրապետել. եթե այդքան վախենում եմ, հարկավոր է անմիջապես վերադառնալ հորեղբոր մոտ: Ես դուրս եկա խցից և ուղիղ գնացի դեպի մեծ ծառը, որի երկար, առաջ ձգված ճյուղերը ասես փակում էին ճանապարհս: Կարծես ծառն ասում էր. «Կանգնի՛ր, ավելի հեռու չես գնա»: Սակայն երբ մոտեցա, ծառն անշարժ կանգնած էր, միայն սաղարթներում քնած

թռչուններն արթնացան ու ծվծվոցով թռան տարբեր կողմեր: Դա խիստ քաջալերեց ինձ. նշանակում է, ես էլ կարող եմ որևէ մեկին երկյուղ ներշնչել:

Իրերիս կապոցը նետեցի այգին բոլորող ցանկապատի վրայով, հետո փայտե սանդուղքի օգնությամբ մագլցեցի պատը և սկսեցի դիտել իմ աչքերի առջև փոված դաշտավայրը: Դաշտավայրն ամայի էր, լիակատար լռություն էր տիրում:

Ես ցատկեցի ներքև:

Մի ժամից ավելի վազում էի առանց ետ նայելու, զգում էի, որ եթե կանգ առնեմ ու նայեմ չորս կողմս, ապա վախից կմեռնեմ: Ի վերջո սկսեցի շնչապառ լինել և քայլերս դանդաղեցրի: Հայտնվեցի մարգագետնում, որ կտրտված էր ճահճային ջուրը դեպի ծովը տանող ամբարտակով: Խոտհունձն արդեն սկսվել էր, և մառախուղի շղարշի միջից երևում էին ճանապարհի եզրին բարձրացող հնձված խոտի դեզերը: Ես իջա մարգագետին և թաքնվեցի խոտի դեզի մեջ: Ես գիտեի, որ քաղաքից ընդամենը երկու մղոն եմ հեռու, բայց ինձ թվում էր, թե հասել եմ աշխարհի ծայրը: Հիմա կարող էի հանգիստ շունչ առնել:

Հոգնած, հուզմունքից տանջված, արյուն կորցնելուց ու քաղցից ուժասպառ եղած, ես անմիջապես քնեցի արևից տաքացած խոտի մեջ, գորտերի խլացուցիչ կոկոռցի օրորի տակ:

Ինձ արթնացրեց ցուրտը: Մինչև ոսկորները հասնող գիշերվա այն ցուրտը, որի մասին առաջ գաղափար չունեի: Աստղերն արդեն դժգունել էին, լայն ճերմակ շերտերն ակոսել էին գիշերային երկնքի կապտավուն խորությունը, մարգագետինը պատված էր մառախուղով, որ ծխի սյան նման քուլա-քուլա բարձրանում էր վեր: Հագուստս խոնավացել էր, կարծես ընկել էի հորդառատ անձրևի տակ, և ամբողջ մարմնով դողում էի: Թեև տաք խոտն սկզբում ջերմացրեց ինձ, բայց փոխարենը ցողն ամբողջովին թրջեց:

Սակայն ցրտից ավելի ինձ տանջում էր ինչ-որ անորոշ տագնապի զգացում: Նախորդ օրը երեկոյան ես շատ վիշտ ու հուզմունք կրեցի, իսկ հիմա արթնանալով, անհանգստություն ու խղճի խայթ էի զգում: Նավաբեկություն, անմարդաբնակ կղզի,— այդ բոլորն արդեն այնպես հրապուրիչ չէին թվում ինձ, ինչպես երեկ: Հանկարծ երբեք այլևս չվերադառնամ տուն, երբեք չտեսնեմ մայրիկին: Ես սկսեցի դառնորեն լաց լինել և, չնայած ցրտին, ձեռքերով ծածկել էի դեմքս ու անշարժ նստել:

Երբ կրկին բարձրացրի գլուխս, իմ ծրագրերը փոխվեցին: Որոշեցի հենց հիմա գնալ Պոր-Դյոն և Հավր չմեկնել, մինչև մայրիկին չտեսնեմ: Երեկոյան տուն գնալով, ես կարող եմ թաքնվել «խցիկում» և առավոտ վաղ հեռանալ այնպես, որ ոչ ոք ինձ չտեսնի: Գոնե հետո հիշողություններ կտանեմ մեր տան մասին և, ինչպես ինձ էր թվում, որոշ չափով կպակասի իմ մեղքը մայրիկի առջև, որին լքում էի:

Փոքրիկ կապոցը ձեռքս հարկավոր էր անցնել տասներկու լոյսից ոչ պակաս տարածություն. չէր կարելի ժամանակ կորցնել: Շուտով լույսը կբացվի, թռչուններն արդեն սկսել էին ծվվալ...

Քայլելն ինձ քաջալերեց, տխրությունս ու տագնապս անցան, հոգիս զվարթացավ ու խաղաղվեց: Երկնքում տարածվող վարդագույն լույսը ասես թափանցում էր իմ մեջ ու ցրում մտայլ մտքերս, ինչպես լույսը ցրում է գիշերվա զարհուրելի մղձավանջը:

Մառախուղը, որ պատել էր ամբողջ շրջակայքը, այժմ թանձրացել էր ամբարտակի երկարությամբ ձգվող առվի վրա: Դրա կաթնագույն սպիտակության միջից տեղ-տեղ երևում էին լացող ուռենիների գազաթները: Արևելքը շառագունեց նախ նարնջագույն, հետո վառ կարմիր լույսով, որը պատեց

ամբողջ երկինքը և իր շողով ողողեց նաև ինձ: Մեղմ քամին, ծառերին դիպչելով թոթափեց ցողի կաթիլները, խոտն ուղղվեց, ծաղիկները բարձրացրին գլխիկները, թեթև գոլորշիներն արագ վեր բարձրացան:

Բացվեց առավոտը: Քանի՜ անգամ ենք մենք պարոն Բիորելի հետ դիմավորել լուսաբացը, բայց ես երբեք ուշադրություն չեմ դարձրել դրա վրա: Իսկ հիմա, երբ հանկարծ հայտնվեցի ազատության մեջ, ինձ զգացի Տիեզերքի տերը և բարեհաճեցի բավականություն զգալ այդ տեսարանից:

Մակայն շուտով «տերը» նկատեց, որ եթե բնությունը շոյում է նրա հայացքը, ապա ոչինչ չի տալիս ստամոքսին: Չորս կողմը որքան ասես ծաղիկներ կան, սակայն ոչ մի տեղ չկան ոչ պտուղներ, ոչ հաստապտուղներ: Հավանաբար, անտեղի էի հույս դրել, որ ճանապարհին որևէ ուտելիք կպատահի:

Մի քանի ժամ հետո ես դրանում այլևս չէի կասկածում: Դաշտում ոչինչ չէի տեսնում, ուտելու ոչ մի բան: Դրա փոխարեն այն գյուղերում, որոնցով անցնում էի, կիրակնօրյա ճաշի պատրաստություններ էին տեսնում: Ճաշարանների սեղաններին բարձրանում էին մսի կույտեր, հացի խանութների ցուցափեղկերում՝ սպիտակ հացի հսկայական բոքոններ և ցորենի ալյուրից թխված ամոքուն բլիթներ, որոնցից տաք յուղի համեղ բուրմունք էր գալիս: Դրանց նայելիս բերանիս ջուրը գնում էր, ու ստամոքսս սաստիկ կծկվում:

Երբ որևէ դժբախտ պարտապան գանգատվում էր հորեղբորս, թե սովամահ է լինում, հորեղբայրը սովորաբար պատասխանում էր. «Ավելի ամուր ձգեք ձեր գոտին»: Միամտությանս պատճառով ես որոշեցի փորձել այդ միջոցը, բայց, հավանաբար, նա՝ ով այդպիսի մեծահոգի խորհուրդներ է տալիս, երբեք չի օգտվել դրանցից: Թեև գոտիս այնպես ամուր ձգեցի, որ դժվարությամբ էի շնչում, բայց միայն շոգեցի, իսկ քաղցն ամենևին չպակասեց:

Այդ ժամանակ որոշեցի, որ եթե չմտածեմ ուտելիքի մասին, ավելի լավ կզգամ ինձ և սկսեցի բարձրաձայն երգել: Ինձ հանդիպող կիրակնօրյա շքեղ զգեստներ հագած մարդիկ զարմացած նայում էին փոքրիկ կապոցը ձեռքին, ոտքերը հագիվ քարշ տվող և կոկորդով մեկ երգող մանչուկին:

Մակայն երգն էլ չէր օգնում. կոկորդս չորացել էր և հիմա քաղցին ավելացել էր նաև ծարավը: Բարեբախտաբար, դժվար չէր ծարավը հագեցնել: Ճանապարհին բավական հաճախ հանդիպում էին դեպի ծովը հոսող առվակներ:

Մաքուր տեղ ընտրեցի, ծունկ չոքեցի և ազահությամբ ընկա ջրի վրա: Ես շատ երկար էի խմում, որոշելով ստամոքսս լցնել գոնե ջրով: Հիշեցի, որ երբ մի քանի օր հիվանդ էի տենդով, ոչինչ չէի ուտում, միայն ջուր էի խմում ու քաղց չէի զգում:

Բայց քառորդ ժամ հետո քրտինքը ողողեց ինձ. արևի ներգործության տակ ջուրն սկսել էր գոլորշիանալ: Սոսկալի հոգնածություն զգացի, սիրտս մարում էր և, դժվարությամբ քարշ գալով մինչև ծառը, ես տեղավորվեցի սովերում: Երբեք չէի զգացել այդպիսի թուլություն. ականջներս խշշում էին, աչքերիս առջև կարմիր շրջանակներ էին լողում: Ես կանգ էի առել մի փոքրիկ գյուղի մոտ և լսում էի եկեղեցու զանգերի դողանջը, բայց չէի կարող հույս դնել մարդկանց օգնության վրա— չէ՞ որ ոչ մի սու չունեի, որպեսզի խանութից հաց գնեի:

Հարկավոր է արագ վեր կենալ ու հեռանալ: Առանց այդ էլ պատարագի շտապող գյուղացիները նայում էին ինձ ու ինչ-որ խոսքեր փոխանակում: Հանկարծ նրանց մտքով կանցնի հարցնել ինձ, թե որտեղից եմ գալիս և ուր եմ գնում: Իսկ հետո էլ, գուցե, ետ ուղարկեն հորեղբորս մոտ: Այդ մասին մտածելիս անգամ մարմնովս սարսուռ էր անցնում:

Հենց որ դադարն ու հովը մի փոքր ուժ տվեցին ինձ, նորից ճանապարհ ընկա: Ճանապարհը դժվար էր, քարքարոտ, ոտքերս ասես փայտացել էին: Արևն այրում էր անխնա: Ես հասկացա, որ եթե այնպես արագ գնամ, ինչպես քայլում եմ առավոտից, ապա կընկնեմ ու այլևս վեր չեմ կենա. որոշեցի առանց հանգստանալու կես լյուրից ավելի չանցնել և ամեն անգամ թուլություն զգալիս, մի քիչ նստել:

Մինչ ես դանդաղ առաջ էի շարժվում, հիշեցի այն ոտանավորը, որ սովորել էի, երբ ապրում էի պարոն Բիորելի մոտ: Ոտանավորը համառորեն միտքս էր գալիս, և ես ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել նրանից.

Աստված և՛ թռչնակին է կերակրում, և՛ ցող մաղում ծաղկի վրա,

Անօթևան որբուկին էլ անօգնական չի թողնի նա:

Ես հուսով էի, որ աստծու համար ավելի պակաս արժեք չունեմ, քան թռչնակները, որոնք ուրախ ճիչերով ճյուղից ճյուղ էին թռչում:

Այդպես գնում էի, մեքենայաբար կրկնելով այդ ոտանավորը և քայլելով նրա ռիթմի տակտով, որն ինձ համար հնչում էր որպես քայլերգ, խորամուխ չէի լինում իմաստի մեջ: Վերջապես մտա անտառ, իմ ճանապարհին հանդիպած առաջի՛ն անտառը: Եվ հանկարծ առվի եզրին, փշենիների մացառուտներում նկատեցի փոքրիկ կարմիր կետեր, որոնք երևում էին խոտերի միջից: Գետնամորի՛: Մի՞ թե գետնամորի է: Հոգնածությունս մոռացա և մի ուստյունով թռա փոսի վրայով: Չառիվայրն ամբողջովին ծածկված էր հատապտուղներով, ինչպես այգու մարդը: Գետնամորին աճել էր ամենուրեք, և՛ ծառերի տակ, և՛ բաց տեղերում, չորս կողմն ասես ծածկված էր կարմիր գորգով: Դրանից հետո ես շատ եմ կերել հատապտուղներ, որոնք ավելի խոշոր ու լավն են եղել, սակայն այնպես համեղ չեն թվացել ինձ: Այդ հատապտուղները ուժ, կայտառություն և հույս ներշնչեցին ինձ: Եվ իրոք, հիմա ես կարող էի գնալ թեկուզ աշխարհի ծայրը:

Անտառի գետնամորին չէր կարելի արագ հավաքել: Ստիպված ես տեղից տեղ անցնել, ամեն մի հատապտղի համար կռանալ: Մի քիչ կշտանալով, ավելի ճիշտ քաղցս փոքր-ինչ հագեցնելով, որոշեցի ճանապարհի համար հատապտուղներ հավաքել: Եթե բավականաչափ հավաքեմ, գուցե ինձ հաջողվի դրանք փոխանակել մի կտոր հացի հետ:

Մի կտոր հա՛ց, ահա թե ինչի մասին էի երազում: Մակայն չէր կարելի ժամանակ կորցնել. արդեն կեսօր էր, իսկ մինչև մեր գյուղը մնացել էր մոտավորապես վեց լյու: Ոտքերիցս զգում էի, որ այդ վեց լյուն ամենաերկար ու դժվարը կլինեն, այդ պատճառով փորձեցի հավաքել մի լիքը թաշկինակ, որի վրա կաղնու տերևներ էի փռել և կրկին դուրս եկա ճանապարհ: Այնուամենայնիվ հիմա շատ ավելի առույգ էի ու վստահ:

Մակայն հոգնածությունս չէր անցել և փոխանակ առանց հանգստանալու կես լյու անցնեի, ինչպես պատրաստվում էի, ես հանգստանում էի ամեն մի կիլոմետրից հետո, նստելով ճանապարհաեզրի ուղեայունիկին: Պետք է ենթադրել, որ ես տանջված տեսք ունեի, որովհետև կողքիցս անցնող ձկնավաճառը, որ քայլում էր իր սայլի առջևից, կանգ առավ, նայեց ինձ ու ասաց.

— Դուք, երիտասարդ, երևի շա՛տ եք հոգնել:

— Այո, պարոն:

— Երևում է: Իսկ հեռո՞ւ եք գնում:

— Դեռ հինգ լյո կա:

— Եթե Պոր-Դյոյի կողմն էք գնում, կարող եմ ձեզ տանել:

Վճռական պահ էր: Համարձակություն ձեռք բերելով, ես պատասխանեցի:

— Ես ոչ մի գրոշ չունեմ, բայց թարմ գետնամորի ունեմ, գուցե դա կվերցնեք որպես ուղեվճա՞ր,— և քանդեցի թաշկինակս:

— Քո հատապտուղներից լավ հոտ է գալիս... Դե ինչ արած, ուրեմն, ոչ մի գրոշ չունես, — անմիջապես տոնը փոխելով և ինձ այլևս «երիտասարդ» չմեծարելով, ասաց առևտրականը: — Դժբախտություն չէ, բարձրացիր սայլը: Շատ հոգնած ես երևում... Իսկ գետնամորին կվաճառես «Հրաշալի ջրաղաց» պանդոկում և այդ փողով մի գավաթ գինի կհրամցես ինձ:

«Հրաշալի ջրաղաց» պանդոկում ամբողջ գետնամորու համար ես ստացա ընդամենը վեց սու, այն էլ միայն նրա համար, որ ձկնավաճառն ամբողջ տնով մեկ բղավում էր, թե ավելի պակաս վճարել, նշանակում է կողոպտել խեղճ տղային:

— Իսկ հիմա,— գործարքը կայանալուց հետո հայտարարեց ձկնավաճառը,— երկու գավաթ գինի տվեք մեզ:

Ես այնպիսի վիճակում էի, երբ հարկ չկար ավելորդ նրբավարություն անել, և ասացի.

— Ձեր թույլտվությամբ, ես կնախընտրեի մի կտոր հաց ուտել:

— Լավ, խմիր: Իսկ եթե քաղցած ես, կվերցնես իմ պատվիրած հացաբաժնից:

Վերցնել նրա բաժին հացի՞ց: Իհարկե, ես չստիպեցի, որ երկրորդ անգամ ինձ խնդրեն:

Կարծում էի, որ Պոր-Դյո կհասնեն երեկոյան, բայց եկա ավելի շուտ, մոտավորապես ցերեկվա ժամը չորսին: Այդ ժամանակ մայրիկը սովորաբար գնում էր երեկոյան ժամերգության, այդ պատճառով էլ ես կարող էի աննկատելիորեն մտնել տուն և մուտք գործել «խցիկը», ուր մայրիկը համարյա երբեք չէր մտնում: «Խցիկն» իր հին տեղում էր, և ամեն ինչ այնտեղ մնացել էր առաջվա նման, ինչպես կար դեռ հանգուցյալ հայրիկի ժամանակ. այստեղ ընկած էին նրա ուռկանը և ձկնորսական մյուս պարագաները: Ուռկանն այնքան էր չորացել, որ կարծես սարդոստայն լիներ, բայց դեռ պահպանում էր ծովի ու կուպրի հոտը: Ես նախ համբուրեցի դրանք, հետո գիրկս առա ու ինձ համար անկողին պատրաստեցի: Այդ գործն ավարտելով, մոտեցա խոհանոցին նայող փոքրիկ պատուհանին, բաց արեցի, որպեսզի աննկատելի մնալով տեսնեի այն ամենը, ինչ կատարվելու է այնտեղ, և սկսեցի սպասել:

Սակայն ես մոռացել էի հոգնածությանս մասին: Դեռ նոր էի նստել ուռկանի վրա, երբ վայրկենապես քնեցի և արթնացա միայն խոսակցության ձայներից: Հավանաբար, երկար էի քնել, որովհետև դրսում արդեն մութ էր: Օջախի վրա կոացած մայրիկը փչելով բորբոքում էր կրակը: Նրա կողքին կանգնած էր մորաքույրս:

— Ուրեմն,— ասաց մորաքույրը,— կիրակի օրը պատրաստվում ես գնալ նրա մո՞տ:

— Այո, շատ եմ կարոտել: Բացի այդ, ուզում եմ ինքս տեսնել, թե ինչպես է ապրում այնտեղ: Թեպետ նամակներում ոչ մի բանից չի գանգատվում, բայց զգում եմ, որ սաստիկ տխրում է:

— Ինչ ուզում ես ասա, ես քո տեղը լինեի երբեք տղային չէի տա Սիմոն եղբորը:

— Քո կարծիքով, ավելի լավ կլինե՞ր թողնելի ծո՞վ գնար:

— Իսկ դա ինչո՞վ է վատ:

— Ինչով է վա՞տ: Իսկ որտեղ է քո ավագ որդին: Որտե՞ղ են մեր եղբայրները՝ Ֆորտյունեն ու Մաքսիմը: Որտե՞ղ է իմ խեղճ թանկագին ամուսինը: Տես, թե քանիսը չկան: Բոլորին էլ ծովն է տարել:

— Այնուամենայնիվ, ես ծովից ավելի քիչ եմ վախենում, քան Սիմոն եղբորից: Մի՞ թե նա մարդ է: Նա ոսկու պարկ է:

— Գիշերները չեմ քնում, շարունակ այդ մասին եմ մտածում: Եվ նույնիսկ այնքան չեմ հուզվում նրա համար, թե խեղճ տղաս ինչպես է դիմանում այնտեղ, որքան այն պատճառով, թե այդպիսի մարդու կողքին ապրելով, ինչպիսին կդառնա նա: Վերջերս Լեզյո եղբայրները հիշեցին նրան, ասում են մոտավորապես երեք հարյուր հազար ֆրանկ ունի: Նրա աշխատավարձով երբեք չի կարելի ազնիվ ճանապարհով այդքան դրսում կուտակել: Այս, ինչո՞ւ համաձայնվեցի ամբողջ հինգ տարով Ռոմենին նրան տալ:

— Մի՞թե՞ չես կարող հետ վերցնել տղային:

— Եթե հետ վերցնեմ՝ Սիմոնը կբարկանա: Կստիպի ինձ տուգանք վճարել, իսկ որտեղի՞ց վերցնեմ այդքան փող: Նրանից ամեն ինչ կարելի է սպասել: Բայց հիմա գոնե կտեսնեմ տղայիս...

— Այդ դեպքում շաբաթ օրը երեկոյան ես կբերեմ մի պուտուկ կարագ: Իմ կողմից կտաս Ռոմենին: Այնտեղ երևի վատ են կերակրում նրան:

Մորաքույրը գնաց, իսկ մայրիկն սկսեց ընթրիք պատրաստել: Տապակած կարտոֆիլի ախորժափեր բուրմուռքը հիշեցրեց ինձ այն օրերը, երբ քաղցած վերադառնում էի դպրոցից:

Մայրիկը նստեց սեղանի մոտ, ես տեսնում էի մոմի լույսով լավ լուսավորված նրա դեմքը: Նրա ընթրիքը երկար չտևեց: Նա հաճախակի դադարում էր ուտելուց և աչքերը հեռուն հառած, մտածումների մեջ ընկնում, ասես սպասում էր ինչ-որ մեկի կամ հոգոց հանելով նայում էր սեղանի այն թափուր տեղին, ուր մի ժամանակ ես նստում էի նրա դիմաց: Իմ խեղճ, սիրելի մայրիկ: Կարծես հիմա էլ աչքիս առջև է նրա այնքան տխուր ու հեզ սիրելի դեմքը: Նա մտածում էր իմ մասին, վշտանում մենակության մեջ, իսկ ես այստեղ էի, նրանից երեք քայլ հեռու և իմ անիծյալ որոշումից կաշկանդված ու քարացած, չէի կարող նետվել նրա գիրկը:

Մայրիկը, որ միշտ սիրում էր մաքրություն և կարգուկանոն, ամեն ինչ իր տեղը դրեց, ափսե՛ն լվաց և սեղանը սրբեց: Հետո ծնկաչոք կանգնեց պատից կախված սուրբ Ռոմենի պատկերի առջև և սկսեց ջերմորեն աղոթել:

Քանի անգամ ենք նրա հետ միասին կանգնել այդ նույն տեղում, այդ նույն ժամին և խնդրել աստծուն պահպանել հորս կյանքը...

Լսելով աղոթքի ծանոթ բառերը, որոնք այնքան հաճախ արտասանել ենք միասին, ես նույնպես չոքեցի ու սկսեցի կամացուկ կրկնել նրա հետևից: Միայն մայրիկի դողողացող շուրթերին ոչ թե հորս անունն էր, այլ իմը:

Այս, մինչև հիմա չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես դիմացա և այդ պահին չնետվեցի մայրիկիս գիրկը:

VIII

Ես ննջեցի արտասունքն աչքերիս և հայրական կտորի տակ ավելի անհանգիստ քնեցի, քան նախորդ օրը Դոլի մարգագետիններում:

Դեռ լուսաբացից առաջ, երբ մակընթացությունը նոր էր զարնվում առափնյա ժայռերին, կամացուկ դուրս եկա «խցից»:

Երեկ, երբ ցերեկվա ժամը չորսին եկա տուն, տեղատվությունը նոր էր սկսվել, և հիմա էլ մակընթացությունն ասում էր այն մասին, որ լույսը շուտով կբացվի, իսկ ես շատ էի վախենում, թե հարևաններից որևէ մեկը կարող է ինձ տեսնել:

Ճանապարհորդական ծրագրեր կառուցելիս, չէի կարծում, թե այդքան ծանր կլինի թողնել հայրենի տունը: Հասնելով փշենիների ցանկապատին, որ մեր տունը բաժանում էր լանդերից, ես ակամա կանգ առա ու շրջվեցի: Միրոս վշտից կտոր կտոր էր լինում: Աքաղաղը կանչում էր մեր հավանոցում, իմ ոտնաձայներից արթնացած հարևանների շները կաշվից դուրս գալով հաչում էին: Լսում էի, թե ինչպես են շառաչում շղթաները, երբ շները նետվում էին իմ կողմը: Արշալույսը ծագում էր, լույսի նեղ սպիտակ շերտը շողշողում էր ավամերձ ժայռերի գագաթներին, և այդ ֆոնի վրա մեր տնակը բոլորովին սև էր թվում:

Ես հիշեցի իմ ամբողջ մանկությունը այն օրից, երբ սկսել էի հասկանալ շրջապատը: Հիշեցի, ինչպես հայրս գիշերները գրկում էր ինձ, քայլում էր սենյակում և, աշխատելով քնեցնել, ցածր ձայնով երգում էր.

Մանրախիճը խշշում է գետնին,

Տիր-լիր-լի՛ր...

Հիշեցի այն թևը կտորած որորին, որին բռնել էի և որն ընտելանալով, ուտում էր իմ ձեռքից: Հիշեցի գիշերային փոթորիկները, երբ մայրիկը չէր կարողանում քնել, վախենալով ծով գնացած հայրիկի համար, և մենք նրա հետ միասին աղոթում էինք առկայծող մոմի առջև: Ես նրա բոլոր տանջանքների ու հուզմունքների վկան եմ եղել և հիմա, երբ մեկնեմ, նա նորից կսկսի տանջվել իմ պատճառով: Լքել նրան... բայց չէ՞ որ դա իսկական հանցագործությունն է:

Փարոսը մարեց, և ծովը կարծես փայլում էր դեռևս մութ երկնականարի տակ: Գյուղական տներում ծխնելույզներից դեպի վեր ձգվեցին դեղին ծխի սյունները: Քարքարոտ փողոցներում լավեց սաբոների³ թխկթխկոցը: Գյուղն արթնանում էր:

Իսկ ես դեռ կծկված նստել էի զառիվայրի փշենիների թփուտներում, անվճռականության ու կասկածանքի մեջ, դժբախտ, ընկճված ու ինքս ինձնից դժգոհ:

Արկածների ծարավը, առանց որևէ մեկից օգնություն խնդրելու, ինքնուրույն մարդ դառնալու աղոտ հույսը, բնածին սերը դեպի ծովը, հրապուրիչ ապագան—այդ բոլորն ինձ հեռու էին տանում Պոր-Դյոլից: Մովորությունները, մանկական երկչտությունը, որ բնական էր իմ տարիքում, երեկվա փորձությունները ու, ամենից շատ՝ մայրիկի հանդեպ տաժած սերը կրկին տուն էին ձգում ինձ:

Եկեղեցու զանգը դողանջեց: Դեռ չէին մարել դրա հնչյունները, երբ մայրիկը դուռը բացեց ու հայտնվեց շենքին. նա գնում էր աշխատանքի: Իսկ որտե՞ղ է աշխատելու այսօր: Մեր ավանում, թե՞

³ Սաբո — փայտե ոտնաման:

վերևում, արվարձանում, ուր ապրում էին դաշտավայրում հողագործությամբ զբաղվող գյուղացիները: Եթե աշխատելու է ավանում, ապա հիմա կիջնի ներքև, դեպի ծովը, իսկ եթե՝ արվարձանում, ապա կբարձրանա վերև ու կանցնի հենց այն տեղով, ուր նստած էմ ես: Տանջալից անհանգստությունից սիրտս կծկվեց, ես շատ հուզված էի և չգիտեի ինչ վճռել: Սակայն ճակատագիրը ցանկացավ, որ մայրիկն այդ օրն աշխատի ավանում, և ես ստիպված չեղա պայքարել նրա գիրկն ընկնելու գայթակղության դեմ:

Երբ լսեցի, ինչպես նրա հետևից ճռոջով ու աղմուկով փակվեց դռնակը, վեր թռա տեղիցս, որպեսզի մեկ անգամ էլ տեսնեմ մայրիկիս: Սակայն ոչինչ չտեսա, բացի նրա ձերմակ գլխարկից, որ մերթ ընդ մերթ երևում էր ճյուղերի արանքից:

Արևը ծագեց ժայռերի վրա և հիմա ավելի լավ լուսավորեց մեր տնակը: Արեգակի ճառագայթների տակ ձողտե տանիքի մամուռը կարծես հրաշալի կանաչ թավիշ լիներ, որի վրա սփռված էին դեղին ծաղիկների փնջերը: Փչեց թեթև քամի, որն իր հետ բերեց առավոտյան զովությունն ու ծովի բուրմունքը: Նույնիսկ հիմա, երբ պատմում եմ այս ամենը, դեմքիս վրա զգում եմ այդ շունչը, իսկ շրթունքներիս վրա՝ աղի թեթևակի համր:

Սակայն չեմ ուզում չափազանց երկար անձնատուր լինել հիշողություններին, որոնցով ակամա տարվեցի:

Ես հեռացա հայրական տնից այնպես, ինչպես հեռացել էի Դուլից, այսինքն՝ վազքով, և վազեցի այնքան ժամանակ մինչև սկսեցի շնչահեղձ լինել: Սրբնթաց վազքն օգնում է խլացնելու սրտի ցավը, բայց խորհրդածել կարելի է միայն հանգիստ վիճակում: Իսկ ես մտածելու շատ բան ունեի: Տնից հեռացա, սակայն չէ՞ որ դա դեռ բոլորը չէ: Պետք է հասնել նպատակին՝ ահա թե որն է գլխավոր դժվարությունը:

Նստեցի մի հյուսված ցանկապատի մոտ: Տեղն ամայի էր, և ես չէի վախենում որևէ մեկին հանդիպելուց: Միայն հեռվում, ծովի ժայռոտ ափին երևում էր մաքսային պահակի կերպարանքը, որ ուրվագծվում էր ծագող արևի պայծառ ֆոնի վրա:

Երկար մտորումներից հետո որոշեցի չգնալ մեծ ճանապարհով, ինչպես ենթադրում էի առաջ, այլ՝ ծովափի երկարությամբ: Երկօրյա փորձն ինձ ցույց տվեց, որ մեծ ճանապարհները այնքան էլ պիտանի չեն նրանց համար, ում գրպանը դատարկ է, իսկ ես ամենից շատ մտահոգված էի նրանով, թե ինչպես ուտելիք ձեռք բերեմ ճանապարհորդության ընթացքում:

Պարոն Բիորելը հաճախ ասում էր, թե ծովը կարող է ավելի լավ կերակրել մարդուն, քան հողը, և հիմա ես մտաբերեցի նրա խոսքերը: Ծովափին կարելի է որսալ ոստրեններ կամ ծովախեցգետիններ: Ոստրենների մասին մտածելիս, նույնիսկ բերանիս ջուրը գնաց: Վաղուց է, որ չեմ կերել: Ինչպիսի՞ խնջույք կսարքեմ:

Ես վեր կացա: Քանի մղոն կլինի մինչև Հավր, եթե գնամ ծովափով: Ըստ երևույթին, ավելի շատ... Էհ, մե՛ծ դժբախտություն չի: Եթե ստիպված լինեմ մի ամբողջ ամիս քայլել ավազի վրայով, ապա դա էլ սարսափելի չէ:

Սակայն ես սիրտ չէի անում անմիջապես ցած իջնել, վախենալով հանդիպել Պոր-Ղյոյի բնակիչներից մեկն ու մեկին, ով կարող էր ճանաչել ինձ: Ժայռոտ ափի երկարությամբ չորս լյռ անցնելուց հետո միայն իջա ծովափ, որպեսզի նախաճաշի համար որևէ բան գտնեմ:

Ուստրեններ չգտա, ստիպված էի բավարարվել ժայռերին առատորեն կպած միդիաներով: Քաղցս մի փոքր հագեցնելուց հետո ես պետք է շարունակեի ճանապարհս: Սակայն կրկին տեսնելով ծովը, այնպես երջանիկ էի զգում ինձ, որ սկսեցի ծովափում վազվզել ու ավազը փորփորել: Չէ՞ որ հիմա կարող էի անել ինչ ցանկանայի. երգել ու թռչկոտել: Որքան նման չէ այս ամենը Դուլի իմ գնդանին: Արդարև, ճանապարհորդելը ավելի հաճելի է:

Քարակույտերի մեջ տճու տախտակ գտնելով, ես անասելի ուրախացա. կարելի է դրանից նավակ սարքել: Տախտակը դանակով տաշելով, նավի տեսք տվեցի: Կենտրոնում քթամասին ավելի մոտիկ, մի անցք փորեցի, որի մեջ խրեցի ընկուզենու ձող և կապեցի ուռենու շիվերով, որպեսզի ուղիղ կանգնի: Ձողին խաչաձև ամրացրի երկրորդ փայտը, որին կապեցի իմ թաշկինակը: Հիանալի ֆրեզատ ստացվեց: Ես դա կոչեցի մայրիկի անունով և ամբողջ ժամանակ, քանի շարունակվում էր տեղատվությունը, շալվարս մինչև ծնկներս քշտած, նավակը բաց էի թողնում մեծ ջրափոսերում:

Երեկոն իջավ, բայց ես դեռ զբաղված էի այդ կարևոր գործով: Հարկավոր էր հոգալ գիշերելու տեղի մասին: Ժայռի մեջ փոքր քարայր գտա, որն ուժեղ մակընթացության ժամանակ քանդել էին ծովի ալիքները, քարշ տալով այնտեղ տարա մի քանի գիրկ չոր ջրիմուռներ և ինձ համար անկողին պատրաստեցի: Բհարկե, դա պալատ չէր, բայց ես զգում էի, որ այստեղ շատ ավելի հաճելի է, քան Դուլի ճահիճներում: Ես պատասխարված էի ցրտից, իսկ ամենագլխավորը՝ պաշտպանված էի ամեն տեսակի անակնկալներից: Բարձի փոխարեն գլխիս տակ դրեցի մի մեծ, կլոր քար, իսկ լամպի փոխարեն իմ առջև առկայծում էր փարոսը, և ես միայնակ չէի զգում ինձ: Այստեղ ես շատ հանգիստ քնեցի, կարծես պառկած էի տանիքի տակ և ամբողջ գիշեր իմ ֆրեզատով նավարկում էի անհայտ երկրներում: Նավաբեկությունից հետո ընկա մի հրաշալի կղզի, որտեղ, ինչպես խնձորները խնձորենիներից, ծառերից կախված էին վեց ֆունտանոց հացեր ու տապակած կոտլետներ: Վայրենիներն ինձ դարձրին իրենց թագավորը: Մայրիկն էլ հայտնվեց այնտեղ և դարձավ թագուհի: Իսկ երբ խմում էինք շատ համեղ ու քաղցր խնձորագինի, մեր հպատակները բղավում էին. «Թագավորը խմո՛ւմ է, թագուհին խմո՛ւմ է»:

Արշալույսին քաղցն արթնացրեց ինձ: Դաժան քաղցը, որից ստամոքսս կծկվում էր ու սիրտս խառնում: Սակայն ստիպված էի սպասել մինչև տեղատվության սկսվելը և միայն այդ ժամանակ զբաղվելի միդիաներ որոնելով: Բայց տարօրինակ էր, որքան շատ էի ուտում դրանք, այնքան ավելի սուր քաղց էի զգում: Իմ նախաճաշը երկու ժամից ավելի տևեց, նույնիսկ հոգնել էի խեցիները բացելուց, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում կշտանալ: Ես մտածեցի, որ չափազանց հաճելի կլինե՞ր մի կտոր հաց ավելացնել միդիաներին: Բայց որտեղի՞ց գտնեմ:

Ես շարունակ խոտում եմ հացի, ուտելիքի ու քաղցի մասին, և դուք, հավանաբար կկարծեք, թե սոսկալի շատակեր էի: Իրականում պարզապես լավ ախորժակ ունեի, ինչպես իմ տարիքի բոլոր երեխաները, սակայն այնպիսի պայմանների մեջ էի ընկել, որ ուտելիք հայթայթելու հարցը ինձ համար դարձել էր ամենաէականը: Նա, ով կարծում է, թե հասկացողություն ունի քաղցի մասին՝ ելնելով այն հաճելի զգացողությունից, ինչպիսին զգում է, երբ մեկ ժամ ուշացումով նստում է ճաշելու, չի կարող պատկերացնել, թե ինչ բան է իսկական քաղցը: Ինձ կարող են հասկանալ միայն այն մարդիկ, ովքեր մի քանի ամիս թերասնվելուց հետո ստիպված են եղել ամբողջ օրերով մնալ դատարկ ստամոքսով:

Եթե այնտեղ, ուր ես գիշերել էի, ուստրեններ լինեին. հաճույքով կմնայի որոշ ժամանակ: Ինձ այստեղ շատ դուր էր գալիս, որովհետև ափը հարմար էր ֆրեզատը բաց թողնելու համար: Ոչ ոք ինձ չէր անհանգստացնում, մոտակայքում քարայր ու փարոս կար, և ես չէի ցանկանում բաժանվել

դրանցից: Սակայն քաղցն ստիպեց առաջ գնալ այն հույսով, որ միդիաներից ավելի սննդարար բան կգտնեն:

Ֆրեզատի վրայից հանդերձանքները հանելով և առագաստը գրպանումս պահելով, ես թողեցի իմ հյուրընկալ ապաստարանը: Եվ ինչպես վայել է իսկական ճանապարհորդին, հեռանալուց առաջ այն կնքեցի «Թագավորական այր» անունով:

Քանի դեռ գնում էի ժայռոտ ափի երկարությամբ, ինձ շարունակ տանջում էր մի կտոր հաց ուտելու ցանկությունը, և վերջ ի վերջո քաղցն ուղղակի դարձավ անտանելի: Ճանապարհին հանդիպեցի մի փոքրիկ գետակի, որ պետք է անցնեի լողալով, որովհետև ջուրը հասնում էր գրեթե մինչև ուսերս: Ստիպված էի հագուստս հանել ու գլխիս վրա դրած տանել: Այդ անսպասելի սառը լոգանքից քաղցի զգացողությունն ավելի տանջալից դարձավ: Ոտքերս դողում էին, աչքերիս առջև մթնում էր, գլուխս պտտվում էր...

Այդպիսի վիճակում ես հազիվհազ հասա մի գյուղ, որն ամֆիթատրոնի նման ծովից բարձրանում էր վեր: Որոշեցի գնալ այդ գյուղի միջով, որովհետև համոզված էի, որ այնտեղ չեմ հանդիպի իմ ծանոթներից ոչ մեկին: Հասնելով եկեղեցու մոտ գտնվող հրապարակը, չկարողացա հաղթահարել հացի խանութի մոտ կանգնելու ցանկությունս: Լուսամուտում դրված էին մեծ, կարմրագույն բոքոններ, իսկ բաց դռնից ծորում էր այլուրի ու ամոքուն բլիթների հրաշալի բուրմունքը: Ես հիացմունքով նայում էի այդ գայթակղիչ տեսարանին, ափսոսալով, որ աչքերս չեն կարող մագնիսի նման ցուցափեղկից բոքոններն ուղղակի ձգել դեպի բերանս: Հանկարծ իմ հետևում լսեցի ինչ-որ աղմուկ, սաբոնների թխկթխկոց, բարձր ձայներ: Այդ երեխաներն էին դուրս գալիս դպրոցից:

Արդյոք այն պատճառով, որ չէին ճանաչում ինձ, թե այն պատճառով, որ իրոք արտասովոր տեսք ունեի, բայց նկատելով ինձ, նրանք անմիջապես շրջապատեցին ինձ: Եվ իրոք, ֆրեզատը թևատակիս դրած, փոքրիկ կապոցը ձեռքիս, փոշոտված կոշիկներով, գլխարկի տակից դուրս ցցված խճճված մազերով, ես, երևի, շատ ծիծաղելի թվացի: Նրանք, ովքեր առաջինն էին մոտեցել, մյուսներին էլ կանչեցին, և շուտով հայտնվեցի տղաների հոծ շրջապատում, որոնք հետաքրքրությամբ դիտում էին ինձ, ինչպես մի տարօրինակ գազանի:

Նրանց առանձնապես հետաքրքրեց իմ ֆրեզատը, ավելի ճիշտ այն փայտի կտորը, որ ես հորջորջում էի ֆրեզատ: Նրանք սկսեցին իրար հետ խոսել:

— Ժոզեֆ, ինչ ես կարծում, այդ ի՞նչ է նրա թևի տակ:

— Մի՞ թե չես տեսնում, տախտակ է:

— Ոչ, դա, երևի, երաժշտություն է:

— Հիմար, ինչ երաժշտություն: Չէ՞ որ նա արջամուկ չունի:

«Արջամուկ չունի...» Ինչպես երևում է, նրանք ինձ դրել են սավոյարի⁴ տեղ: Հպարտությունս խոցվեց.

— Սա ֆրեզատ է,— գոռոզաբար հայտարարեցի ես և փորձեցի դուրս գալ շրջապատումից:

— Ֆրեզա՛տ: Ա՛յ քեզ հիմար: Հապա այս ծովայինին նայե՛ք:

⁴ Սավոյար — ֆրանսիական Սավոյ գավառի բնակիչ: Սավոյարները զբաղվում էին երգեհոնների վրա նվագելու արհեստով և իրենց հետ ման էին ածում արջամուկներ:

Ինձ խլացրին նրանց աղաղակները: Նրանք քրքջում ու թռչկոտում էին իմ շուրջը:

Ես ուզում էի դուրս պրծնել նրանց ձեռքից, երբ հանկարծ զգացի, որ տղաներից մեկը, այդ հրոսակախմբից ամենաանպատկառը փախցնում է ֆրեզատը: Այդ նույն պահին մյուսը թոցրեց գլխարկս, և ես տեսա, ինչպես այն օդ թռավ:

Իմ գլխա՛րկը: Իմ հրաշալի տոնական գլխա՛րկը: Ես այս ու այն կողմ բոթեցի նրանց, ովքեր կանգնած էին իմ դիմաց, օդում որսացի գլխարկը, քաշեցի գլխիս և բռունցքներս սեղմած վերադարձա, որպեսզի ինչպես հարկն է վրեժս լուծեմ:

Սակայն այդ պահին հնչեց զանգի ձայնը: Ինձ էլ իրենց հետ քարշ տալով, տղաները նետվեցին եկեղեցու գավիթը:

— Կնունք է, կնունք է,— բղավում էին նրանք:

Կնքամայրն ու կնքահայրը դուրս էին գալիս եկեղեցուց: Դեռ նոր էին ոտքերը շեմքից դուրս դրել, երբ կնքահայրը՝ պատկառելի արտաքինով մի պարոն, ձեռքը մտցրեց մի մեծ պարկի մեջ, որ նրա հետևից բերում էր ծառան, և մի բուռ կոնֆետ նետեց հավաքվածներին: Տուրուդմփոց սկսվեց: Տղաները դեռ չէին հասցրել զետնից վեր կենալ, երբ կնքահայրը նետեց երկրորդ բուռը: Հիմա այստեղ կային ոչ միայն քաղցրավենիք. սալահատակի վրա զնգզնգալով գլորվում էին մետաղադրամներ: Դրանցից մեկը հայտնվեց իմ կողքին, և ես նետվեցի դեպի դրամը: Մինչ ես վերցնում էի այդ դրամը, կնքահայրը մի բուռ էլ նետեց, և ինձ հաջողվեց բռնել տասը սուլ արժողության մի մետաղադրամ: Թեպետ դա երկար չմնաց զետնին, բայց մյուս երեխաները հասցրեցին նկատել: Զայրանալով, որ դրամն իրենց չհասավ, նրանք բարձրաձայն աղաղակելով հարձակվեցին ինձ վրա:

— Նա օտար է: Նրան մի տվե՛ք:

Եվ աշխատում էին ձեռքս տրորել, որպեսզի խլեն մետաղադրամը: Սակայն ես ամուր բռնել էի և բռունցքս չէի բացում: Բարեբախտաբար, բաշխումը դեռ չէր վերջացել: Կնքահայրը նորից մի բուռ նետեց, և տղաները վազեցին դրա հետևից...

Ինձ մոտ ամբողջ տասներկու սուլ կար: Մտա հացի խանութ և խնդրեցի մի ֆունտ հաց կտրել: Աշխարհում ոչ մի երաժշտություն այնքան զմայլելի չէր թվում ինձ, որքան դանակի տակ կարմրագույն հացի կեղևի խոթխոթոցը: Ազահաբար ուտելով իմ գնած սպիտակ հացը, ես շտապեցի դուրս գալ գյուղից: Վրեժ լուծելու ցանկությունը ծխի պես չքացավ: Ես միայն մի բան էի ուզում՝ խույս տալ իմ թշնամիներից:

Մոտավորապես երկու ժամ քայլեցի, մինչև հասա մաքսային հին պահատնակին, որտեղ էլ որոշեցի գիշերել:

Բազմիցս լսել եմ, թե «հարուստները վատ են քնում», և հիմա այդ բանն զգացի ինձ վրա: Մի քանի գիրկ չոր երեքնուկ հավաքելով, ես հրաշալի անկողին պատրաստեցի, սակայն վատ քնեցի, որովհետև շարունակ մտածում էի, թե ինչպես ավելի լավ ծախսեմ փողերս: Մի ֆունտ հացի համար վճարեցի երեք սուլ, նշանակում է, իմ հարստությունից մնացել է դեռևս ինը սուլ: Արդյոք դա երեք օրում ծախսեի ուտելու վրա, թե՞ անհրաժեշտ հանդերձանք գնեի, որպեսզի կարողանայի կերակրվել ամբողջ ճանապարհորդության ընթացքում: Այդ հարցն ինձ տանջում էր ամբողջ գիշեր: Եթե երեկ կարողանայի որսածս եփել որևէ բանի մեջ, ապա այնքան սաստիկ չէի տառապի քաղցից,

այլ կկշտանայի եփած ծովախեցգետիններով կամ ձկներով: Իսկ եթե մի փոքրիկ ցանց ունենայի, որքան ծովախեցգետիններ կբռնեի:

Առավոտյան արթնանալով, որոշեցի իմ ճանապարհին հանդիպած առաջին իսկ գյուղում մի սու ծախսել լուցկի և երեք սու՝ բարակ թոկ գնելու վրա, իսկ մնացած փողով գնել երկաթե կաթսա՝ ձուկ եփելու համար: Սակայն պետք է խոստովանեմ, որ այդ խելացի որոշման վրա կանգ առա ոչ այնքան խոհեմությունից, որքան բարակ թոկ ունենալու ցանկությունից: Իմ ֆրեզատի հանդերձանքներն ամրացնելու համար ուռենու շիվերն, իհարկե, այնքան էլ պիտանի չէին և երբեք չէին կարող համեմատվել բարակ թոկի հետ: Իսկ եթե երեք սուի թոկ գնեմ, ապա դա միանգամայն կբավականացնի և հանդերձանքների, և ուռկանի համար: Այդ պատճառով ես նախ և առաջ գնեցի թոկը, իսկ հետո լուցկին: Սակայն կաթսայի հետ ծագեց չնախատեսված դժվարություն.

ամենաեթեման արժեք տասնհինգ սու: Բարեբախտաբար, խանութի անկյունում նկատեցի խիստ ճվլված մի աման, որն այնտեղ էին գցել, հավանաբար, այն պատճառով, որ հնարավոր չէր այլևս ուղղել: Ես հարցրեցի արդյոք դա չի՞ վաճառվում: Եվ խանութպանուհին «սիրալիրությունից», ինչպես ինքն ասեց, համաձայնվեց հինգ սուով այդ ամանը զիջել ինձ:

Այդ օրը ես ավելի քիչ ճանապարհ անցա, քան նախընթաց օրը, սակայն հենց որ հարմար տեղ գտա, անմիջապես զբաղվեցի կարթ, օղակապ ու փոքրիկ ուռկան պատրաստելով: Ես այդ աշխատանքին վարժված էի վաղ մանկությունից և այդ պատճառով հեշտությամբ գլուխ հանեցի: Այնուհետև ախորժակով կերա ծովախեցգետինները, որ բռնել էի իմ ուռկանով և եփել ծովի ջրում, կաթսան դնելով գետնին ընկած չոր ճյուղերից վառած խարույկի վրա:

Սակայն երբեք կատարյալ երջանկություն չի լինում: Ես իմ խոհանոցի հետ միասին տեղավորվել էի ծովափին, ժայռի ստորոտում, և խարույկի ծուխը քուլա-քուլա բարձրանում էր վեր: Դա գրավեց մաքսային հսկիչի ուշադրությունը: Ես տեսա, ինչպես ժայռի եզրին կանգնած, նա կռացավ ու սկսեց ուշադրությամբ նայել, թե որտեղից հայտնվեց կրակը: Հետո, ոչինչ չասելով, հեռացավ: Բայց երեկոյան, երբ զիջերելու տեղ էի փնտրում, նկատեցի, որ հսկիչը հետևում է ինձ և կարծես կասկածանքով է նայում ինձ վրա: Եվ իրոք, ես, երևի, շատ տարօրինակ տեսք ունեի: Ֆրեզատը մեջքիս կապած, փոքրիկ կապոցը ձեռքիս, մի կողքից ճոճվող կաթսայով, և մյուս կողմից կախ ընկած ուռկանով ես, ըստ երևույթին, ոչ մի վստահություն չէի ներշնչում: Գյուղերով անցնելիս կամ որևէ գյուղացու հանդիպելիս, իզուր չէ, որ բոլորն ապշած ինձ էին նայում և կանգ չէին առնում միայն այն պատճառով, որ անմիջապես արագացնում էի քայլերս: Հանկարծ հսկիչի մտքով անցնի հարցուփորձ անել ինձ, թե ինչու եմ եկել այստեղ և ինչ եմ անում: Հետո էլ բռնի: Ես վախեցա և, նրանից խույս տալու համար, չգնացի ծովափի երկարությամբ, այլ թեքվեցի դեպի դաշտավայրի խորքը տանող առաջին իսկ հանդիպած ճանապարհով: Հսկիչը չէր կարող իմ հետևից գալ. ես շատ լավ գիտեի, որ նա իրավունք չունի լքելու իր պահակակետը:

Դաշտում կարելի է չվախենալ մաքսային հսկիչներից, սակայն այնտեղ էլ զիջերելու համար խրճիթ չկար: Ստիպված էի քնել բացօթյա: Հակառակի պես էլ ոչ մի տեղ ծառ չէր երևում, միայն հեռվում մայրամուտի վառ կարմիր ֆոնի վրա սև կետերի նման աչքի էին ընկնում խոտի մի քանի դեզ: Հավանաբար, ինձ սպասում էր այնպիսի զիջեր, ինչպիսին անցկացրի Դոլի ճահճոտ մարգագետիններում: Սակայն այդ զիջերը շատ ավելի հաճելի անցավ: Ես դաշտում գտա մոռացված եղաններ, որոնք դեզի մեջ խրելով, ծածկի պես մի բան սարքեցի և վրան մի քանի գիրկ առվույտ փռեցի: Այդպիսով, մի անուշաբույր անկյուն ունեի, որտեղ լավ պաշտպանված էի ցրտից:

Վախենալով, որ հնձվորները կարող են ինձ տեսնել, ես վեր թռա, հենց որ լուսադեմի ցուրտն ու թռչունների ծվլոցը արթնացրին ինձ: Քունս սուսկալի տանում էր, հոգնածությունից ոտքերս նվում

Էին, սակայն ամենից շատ վախենում էի որևէ մեկին հանդիպելուց և որոշեցի ցերեկն ուրիշ տեղ մի կուշտ քնել:

Դուք, իհարկե, հասկանում եք, որ ուտելու ժամանակը որոշում էր ոչ թե իմ ախորժակը, այլ ծովի մակընթացությունն ու տեղատվությունը: Ես կարող էի նախաճաշել կամ ճաշել միայն այն դեպքում, երբ ծովը նահանջում էր, և ես կարողանում էի ձուլկոսել: Առավոտյան ութին տեղատվությունը դեռ չէր սկսվում, հետևապես կարող էի ուտել կեսօրից ոչ շուտ և ընդ որում սահմանափակվել միայն ծովախեցգետիններով, որոնց կարելի է մեծ քանակությամբ բռնել ավազի վրա, հենց որ ջուրն սկսում է իջնել: Այնուհետև այդպիսի տխուր վիճակի մեջ չընկնելու համար, որոշեցի մթերքի պաշար հավաքել և, ուտելուց հետո, նորից սկսեցի ծովախեցգետիններ բռնել: Ես բռնեցի մեծ քանակությամբ ծովախեցգետիններ և հենց այն տեսակից, որն առանձնապես գնահատվում է Փարիզում, իսկ, բացի այդ, երեք հրաշալի տափակաձուկ:

Երբ վերադարձա ծովափ և որսած ձկներս եփելու համար մի հարմար տեղ սկսեցի փնտրել, հանդիպեցի մի տիկնոջ, որն զբոսնում էր երկու աղջիկների հետ և նրանց սովորեցնում փոքրիկ փայտե թիակներով ավազի մեջ խեցիներ որոնել:

— Ի՞նչ է, փոքրիկ տղա,— դիմեց նա ինձ,— շա՞տ ձուլկոս ես բռնել:

Տիկինն ուներ գեղեցիկ ճերմակ մազեր, հաճելի դեմք և խոշոր բարի աչքեր: Նրա ձայնը սիրալիք էր հնչում: Այդ չորս օրվա ընթացքում առաջին անգամ ինձ դիմեցին սիրալիք խոսքերով: Աղջիկները շիկահեր էին ու գեղեցիկ: Ես ամենին չվախեցա ու չփախա:

— Այո, տիկին,— կանգ առնելով և բացելով ուռկանը, որտեղ թեթև խոշորով վիստում էին ծովախեցգետինները, պատասխանեցի ես:

— Արդյոք չե՞ս ցանկանում վաճառել քո որսած ձկները,— հարցրեց տիկինը:

Կարո՞ղ եք պատկերացնել, ինչպես ուրախացա այդ առաջարկության համար: Հսկայական բոքոսներն սկսեցին պարել աչքիս առաջ, և ես արդեն զգում էի այրված հացի բույրը:

— Որքա՞ն վճարեմ քեզ:

— Տասը սու,— առանց մտածելու պատասխանեցի ես:

— Տա՞սը սու: Միայն ծովախեցգետիններն արժեն ոչ պակաս քան քառասուն սու: Ապրանքիդ գինը չգիտես: Դու, երևի, ձկնորս չես, սիրելիս:

— Ոչ, տիկին:

— Եթե դու ձկնորսություն ես անում քո հաճույքի համար, ապա ծովախեցգետինների փոխարեն ես քեզ առաջարկում եմ քառասուն սու և նույնքան էլ ձկան համար: Համաձա՞յն ես:

Տիկինն ինձ պարզեց երկու արծաթե մետաղադրամ: Ես այնպես էի շշմել նրա պարզից, որ ուրախությունից պապանձվել էի:

— Դե վերցրու,— տեսնելով իմ շփոթմունքը և ցանկանալով ինձ քաջալերել, շարունակեց նա:— Այս դրամով դու կարող ես գնել այն ամենը, ինչ դուրդ գա:

Եվ նա ձեռքս դրեց չորս ֆրանկ: Այդ ժամանակ աղջիկներից մեկը իմ ուռկանից ծովախեցգետինները լցրեց իր զամբյուղը, իսկ մյուսը վերցրեց թելի վրա շարած ձուկը:

Չորս ֆրանկ: Հենց որ իմ գնորդները հեռացան, ես հիացմունքից սկսեցի խենթի պես թռչկոտել ավազի վրա: Չորս ֆրանկ:

Այստեղից չորս լյո հեռավորության վրա երևում էին փայտե տնակներ: Ես անմիջապես ուղևորվեցի այնտեղ, որպեսզի գնեմ երկու ֆունտ հաց: Հիմա էլ չէի վախենում ո՛չ ոստիկանությունից, ո՛չ մաքսավորներից, ո՛չ դաշտային հսկիչներից: Եթե հանդիպեմ դրանցից որևէ մեկին, և նրանք սկսեն հարցուփորձ անել ինձ, ես կպարզեմ չորս ֆրանկը և կասեմ.

«Թույլ տվեք անցնել: Տեսնո՞ւմ եք, թե ինչ հարուստ եմ»:

Բայց ես ոչ մեկին չհանդիպեցի՝ ո՛չ ոստիկանին, ո՛չ էլ մաքսային հսկիչին, սակայն չգտա նաև հացի խանութ: Երկու անգամ անցա այդ գյուղի միակ փողոցով. տեսա պանդոկը, նպարեղենի խանութը, ճաշարանը, իսկ հացի խանութ չկար:

Սակայն ինձ հաց էր հարկավոր: Եվ լսելով, թե մետաղադրամներն ինչպես են զնգում տաբատիս գրպանում, ես չկարողացա հրաժարվել այդ մտքից: Հիմա առաջվա նման երկչոտ չէի: Ճաշարանի տիրուհին կանգնել էր տան շենքին, և ես հարցրեցի նրան, թե որտե՞ղ է ապրում հացավաճառը:

— Մեզ մոտ հացի խանութ չկա,— պատասխանեց նա:

— Այդ դեպքում, գուցե, դո՞ւք ինձ մի ֆունտ հաց կվաճառեք:

— Մենք հաց չենք վաճառում, իսկ եթե քաղցած եք, կարող եմ ճաշ տալ:

Բաց դռնից զգացվում էր կաղամբի ախորժաբեր հոտը, և լսվում էր, թե ապուրն ինչպես է եռում կաթսայում: Ես չկարողացա դիմանալ:

— Ի՞նչ արժե ճաշը:

— Մի բաժին ապուրը, խոզաճարպով կաղամբն ու հացը արժեն երեսուն սու, չհաշված խնձորագինին:

Գինը շատ բարձր էր, բայց եթե նա չորս ֆրանկ էլ պահանջեր, միևնույն է կհամաձայնեի: Տանտիրուհին ինձ տարավ ցածր առաստաղով մի փոքր սենյակ, նստեցրեց սեղանի մոտ, և բերեց երեք ֆունտից ոչ պակաս կշռող մի լրիվ հաց:

Այդ հացը կործանեց ինձ: Խոզաճարպը շատ յուղոտ էր և փոխանակ պատառաքաղով փոքրիկ կտորներով ուտելու, ես դրեցի հացի վրա և սարքեցի հսկայական բուտերբրոդներ, որոնք շատ հաստ էին ու համեղ: Սկզբում կերա մի բուտերբրոդը, այնուհետև երկրորդն ու երրորդը: Որքան համե՛ղ էր: Հացն արագորեն պակասում էր: Ես կտրեցի չորրորդ կտորը, որ առաջիններից ավելի մեծ էր և որոշեցի, որ դա կլինի վերջինը: Սակայն այդ էլ ուտելով, տեսա, որ դեռ մի քիչ խոզաճարպ է մնացել և նորից մի կտոր հաց կտրեցի: Ամբողջական հացից մնաց միայն մի բարակ պատառիկ: Վերջ ի վերջո, եթե այդպիսի երջանիկ առիթ է ներկայացել, ինչպես չօգտվել դրանից: Ես կարծում էի, թե սենյակում մենակ եմ նստած, բայց հանկարծ լսեցի ինչ-որ խշռոց, ցածրաձայն խոսակցություն ու զսպված ծիծաղ: Ես շուտ եկա և նայեցի դռան կողմը: Այնտեղ ապակու հետևում վարագույրը բարձրացրած կանգնել էին ճաշարանի տիրուհին, նրա ամուսինն ու աղախինը: Նրանք նայում էին ինձ ու ծիծաղում:

Ես դեռ երբեք այդպես շփոթված չէի եղել: Նրանք մտան սենյակ:

— Դե, պարոն, ինչպես է, լա՞վ ճաշեցիք,— հարցրեց տիրուհին:

Եվ նորից բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:

Ես ուզում էի անմիջապես փախչել և նրան մեկնեցի քառասուն սու արժողությամբ մետաղադրամը:

— Ճաշի համար ես մի մարդուց սովորաբար վերցնում եմ երեսուն սու, սակայն քեզ նման շատակերից հարկավոր է վերցնել քառասուն սու,— ասաց տիրուհին և, մետաղադրամը թաքցնելով, մանրը չվերադարձրեց:

Ես դուրս եկա, բայց նա ձայն տվեց ինձ.

— Տես հա՛, զգույշ եղիր, դանդաղ գնա, առանց շտապելու, թե չէ ճանապարհին կարող ես պայթել:

Մինչև վերջ լսելով նրա խորհուրդը, ես սկսեցի այնպես արագ վազել, կարծես ինձ հետապնդում էին և միայն բավականաչափ հեռանալով, քայլերս դանդաղեցրի:

Ես ավստոսում էի, որ այդքան շատ փող ծախսեցի ճաշի վրա, սակայն փոխարենը շատ լավ կերա: Դուրից հեռանալու օրվանից դեռ ոչ մի անգամ այդպես առույգ և ուժեղ չէի զգացել ինձ:

Ես կուշտ ճաշել էի, գրպանումս դեռ քառասուն սու կար... Ինձ թվում էր, թե կարող եմ նվաճել ամբողջ աշխարհը:

Եթե միայն հաց գնեմ, ապա փողը կբավականացնի մի քանի օր: Ես որոշեցի հեռանալ ծովափից և գնալ այն երթուղիով, որ նշել էի առաջ, այսինքն Կալվադոսով:

Այստեղ ես հանդիպեցի մի չնախատեսված դժվարության: Որտե՞ղ եմ ես: Իմ ճանապարհին ընկած էին մի քանի գյուղ և երկու քաղաք, բայց ես չգիտեի դրանց անունները: Մեծ ճանապարհին կային կիլոմետրերը ցույց տվող սյուներ, բայց ես գնում էի ծովափով, որտեղ ոչ մի ուղենիշ չկար, իսկ հարցնել, թե ինչպես է կոչվում մոտակա գյուղը կամ քաղաքը, սիրտ չէի անում: Ինձ թվում էր, քանի դեռ քայլում եմ այն մարդու նման, որ հաստատ գիտի, թե ուր է գնում, ինձ ոչինչ չի սպառնում, բայց եթե սկսեմ հարցուփորձ անել, թե ինչպես գնամ, իսկույնսեթ կբռնեն ինձ: Ես լավ էի պատկերացնում Լա-Մանշ դեպարտամենտի գծագրությունը, և գիտեի, որ այն սեպագծով մտնում է ծովը: Հետևապես, եթե չեմ ուզում գնալ ծովափով, պետք է գնամ դեպի արևելք: Մակայն ո՞ւր կհասցնի ինձ այն ճանապարհը, որով պատրաստվում եմ գնալ Իզիլյո, թե՞ Վիր: Եթե հասցնի Իզիլյո, ապա կրկին դուրս կգամ ծովափ, որտեղ կարող եմ զբաղվել ձկնորսությամբ: Իսկ եթե տանի Վիր, ապա այնտեղ ուտելիք չկա, որովհետև ծով չկա, և ես ուտելու բան չեմ գտնի, երբ ծախսեմ իմ քառասուն սուն:

Հարցը շատ լուրջ էր, և ես հիանալի հասկանում էի դա:

Երկար տատանումներից հետո որոշեցի գնալ առանց մտածելու և առաջին իսկ հանդիպած ճանապարհով հեռացա ծովից, հույս ունենալով շուտով տեսնել ուղենիշերը: Եվ իրոք, անմիջապես տեսա մի սյուն հետևյալ մակագրությամբ. «Կերտվիլ — երեք կիլոմետր»: Նշանակում է, պետք է գնալ երեք կիլոմետր, իսկ այնտեղ ամեն ինչ պարզ կլինի:

Հասնելով Կերտվիլ, ես պատի երկնագույն ֆոնի վրա տեսա սպիտակ տառերով գրված մի նոր մակագրություն. «Լա-Մանշ դեպարտամենտ, N 9 ճանապարհը: Կերտվիլից մինչև Գալանյեր հինգ կիլոմետր է»: Բայց քարտեզի վրա ես չէի հիշում այդպիսի անուններ և խիստ անհանգստացա: Որտե՞ղ եմ ես: Արդյոք չե՞մ կորցրել ճանապարհը:

Ես անցա ամբողջ գյուղով և բավականաչափ հեռանալով հետաքրքրասեր հայացքներից, նստեցի չորս ճանապարհների խաչմերուկի մոտ բլրի գագաթին գտնվող գրանիտե խաչի տակ: Չորս կողմը փռված էր լայնարձակ դաշտավայրը, որ տեղ-տեղ պատված էր անտառներով: Այս ու այնտեղ երևում էին եկեղեցիների քարե զանգակատները, իսկ հեռվում ծովի սպիտակ շերտը ձուլվում էր հորիզոնին: Ես ճանապարհ էի ընկել վաղ առավոտից: Արևն ավելի ու ավելի ուժեղ էր այրում, շատ շոգ էր: Հենվեցի աստիճանին, որպեսզի հանգիստ խորհեմ իմ վիճակի մասին և աննկատելիորեն ննջեցի:

Արթնանալով, զգացի, որ ինչ-որ մեկը ուշադիր նայում է ինձ և լսեցի, ինչպես մեկի ձայնը արտասանեց.

— Հանգիստ պառկիր, մի շարժվիր:

Ես, իհարկե, չենթարկվեցի, այլ անմիջապես վեր թռա և, պատրաստվելով փախչել, սկսեցի շուրջս նայել:

Սկզբում մեղմ հնչող ձայնի մեջ անհամբերություն լսվեց:

— Մի շարժվիր, փոքրիկ: Դու շատ սագում ես այդ բնապատկերին: Եթե նախկին դիրքն ընդունես ու պառկես, ես քեզ կտամ տասը սու:

Ես նստեցի: Ինձ հետ խոսող տղամարդն, ըստ երևույթին, չէր պատրաստվում ինձ ձերբակալել: Ֆետրե փափուկ գլխարկով, մոխրագույն թավշյա զգեստով այդ բարձրահասակ երիտասարդը նստել էր քարակույտերին և ծնկներին դրել մի կտոր ստվարաթուղթ: Ես հասկացա, որ նա նկարում է իմ դիմանկարը, ավելի ճիշտ ամբողջ լանդշաֆտը, խաչն ու իմ ֆիգուրան, որ ինչպես ինքն արտահայտվեց, սագում էր այդ բնապատկերին:

— Կարող ես աչքերդ չփակել և խոսել,— ասաց նա, երբ ես պառկեցի նախկին դիրքով:— Ինչպե՞ս է կոչվում այս վայրը:

— Չգիտեմ, պարոն:

— Մի՞ թե դու տեղացի չես: Գուցե կլայելո՞ղ էս:

Ես ակայամից բարձրաձայն ծիծաղեցի:

— Խնդրում եմ, չծիծաղես: Եթե կլայելող չես, ապա բացատրիր, թե ինչու ես մեջքիցդ կախել այդ ամբողջ խոհանոցը:

Եվ անմիջապես էլ սկսվեց հարցուփորձը: Սակայն նկարիչն այնքան համակրելի մարդ էր թվում, որ ես միանգամից վստահություն զգացի դեպի նա: Ես նրան պատմեցի, որ գնում եմ Հավր, կաթսայում եփում եմ բռնած ձուկը, մի շաբաթ է, ինչ ճանապարհ եմ ընկել և գրպանումս քառասուն սու ունեմ:

— Եվ չե՞ս վախենում հայտնել, որ քեզ մոտ այդքան շատ դրամ կա: Հանկարծ ես քեզ սպանեմ ու կողոպտեմ...Չէ, դու պարզապես քաջ տղա ես: Ինչ է, չե՞ս հավատում ավագակների գոյությանը:

Ես նորից բարձրաձայն ծիծաղեցի: Նկարելիս, նա շարունակում էր ինձ հարցեր տալ, և ես ակամա պատմում էի նրան, թե ինչպես եմ ապրել նախքան իմ ճանապարհորդությունը:

— Դե ինչ կա որ, փոքրիկ տղա, դու հպարտանալու բան ունես, հիրավի, շատ հետաքրքիր տղա ես: Ճիշտ է, սկզբում մեծ հիմարություն ես արել, բայց հետո կարողացել ես դուրս պրծնել

դժբախտությունից: Միբու՞ն էմ այդպիսի կտրիճների: Ուզո՞ւմ ես ինձ հետ բարեկամություն անել: Եվ գիտե՞ս, թե ինչ եմ առաջարկելու քեզ: Ես նույնպես Հավր եմ գնում, բայց գնում եմ առանց շտապելու: Հնարավոր է, որ այնտեղ հասնեմ մի ամիս հետո, ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ վայրերով կգնամ: Եթե դրանք ինձ դուր գան, կանգ կառնեմ ու կնկարեմ, իսկ եթե ոչ՝ կողքից կանցնեմ: Արի միասին գնանք: Դու կտանես իմ պարկը՝ այն, որ դրված է այնտեղ, իսկ ես կկերակրեմ քեզ և կհոգամ գիշերելու տեղի մասին:

Հաջորդ օրը ես նկարիչին պատմեցի իմ ամբողջ պատմությունը, որ դուք արդեն գիտեք:

— Այ թե անզգամն է քո հորեղբայրը, — իմ պատմությունը մինչև վերջ լսելով, բացականչեց նա: — Ուզո՞ւմ ես վերադառնանք Դու: Դու ցույց կտաս նրան, իսկ ես ծաղրանկարներ կնկարեմ ու կփակցնեմ ամբողջ քաղաքով մեկ: Նկարների տակ էլ կգրեմ. «Ահա Սիմոն Կալբրին, որ սովամահ էր անում իր եղբորորդուն»: Երկու շաբաթ հետո նա ստիպված կլինի փախչել այդ քաղաքից... Դու չե՞ս ուզում: Գերադասում ես չհանդիպե՞լ նրան: Բարի տղա ես և չես պատրաստվում վրեժ լուծել: Գուցե և իրավացի ես: Բայց քո պատմության մեջ կա մի հանգամանք, որն ինձ դուր չի գալիս: Դու որոշել ես ծովային դառնալ, շատ լավ: Ինչպես երևում է, դա քո կոչումն է, էլի լավ, և ես ամենին էլ չեմ ցանկանում վիճել քեզ հետ, թեև, իմ կարծիքով, դա անպետք զբաղմունք է. մշտական վտանգներ, ծանր աշխատանք և ուրիշ ոչինչ: Քեզ հրապուրում են արկածներն ու սխրանքները, էլի շատ լավ, եթե դա քեզ դուր է գալիս: Դու անում ես այն, ինչ կամենում ես և թեպետ դեռ շատ ջահել ես, բայց այն ամենից հետո, ինչ տարել ես հորեղբորդ մոտ, թերևս, իրավունք ունես այդպես վարվելու: Սակայն մի բանի իրավունք չունես՝ այդքան վիշտ պատճառել մայրիկիդ: Մտածե՞լ ես արդյոք, թե որքան հուզմունք ու երկյուղ է կրել նա այս շաբաթվա ընթացքում, այն պահից, երբ հորեղբայրդ հայտնել է նրան քո փախուստի մասին: Նա, երևի, մտածում է, որ դու այլևս ողջ չես: Այդ պատճառով հենց հիմա իմ ուսապարկից հանիր գրենական պիտույքներ, և մինչև ես կուրվագծեմ այս ջրադաշտը, մայրիկին գրիր այն ամենի մասին, ինչ հիմա պատմեցիր ինձ, ինչպես և ինչու ես փախել հորեղբոր տանից և ինչպես ես ապրել այս օրերին: Գրիր նաև, որ պատահականությունը, կարող ես նույնիսկ ավելացնել «երջանիկ պատահականությունը», քեզ ծանոթացրեց նկարիչ Լյուսյեն Արդելին և որ այդ նկարիչը քեզ կհասցնի Հավր, որտեղ անձամբ կհանձնի իր բարեկամ նավատիրոջը, իսկ վերջինս քեզ կտեղավորի անվտանգ նավարկության մեկնող նավի վրա: Կտեսնես, թե այդ նամակը գրելուց հետո հոգիդ ինչպես կթեթևանա:

Լյուսյեն Արդելին իրավացի դուրս եկավ: Թեև մայրիկին նամակ գրելիս հոնգուր-հոնգուր լաց էի լինում, բայց երբ ավարտեցի, անհամեմատ ավելի հանգիստ զգացի ինձ: Կարծես ուսերիցս մի ծանր բեռ ընկավ:

Լյուսյեն Արդելի հետ անցկացրած այդ մի քանի օրը իմ ճանապարհորդության ընթացքում ամենաերջանիկ օրերն էին:

Մենք առաջ էինք գնում առանց որոշակի երթուղու, երբեմն երկար ժամանակով կանգ էինք առնում որևէ ծառի կամ բնանկարի մոտ, որը նկարիչը տեղն ու տեղը սկսում էր նկարել, իսկ երբեմն էլ ամբողջ օրը քայլում էինք առանց դադարի: Ես տանում էի նրա ուղեպարկը, որ ծանր չէր և զինվորական պայուսակի նման կարելի էր կապել մեջքին: Շատ հաճախ նկարիչն ինձնից վերցնում էր պարկը և ինքն էր տանում, որպեսզի ես հանգստանամ: Իմ պարտականության մեջ էր մտնում նաև ամեն առավոտ գնել մթերքներ՝ հաց, պինդ խաշած ձու, խոզապուխտ և տափաշշի մեջ լցնել գինի, որին մենք ջուր էինք խառնում: Սովորաբար նախաճաշում էինք մեծ ճանապարհի վրա աճած որևէ ծառի տակ կամ ուղղակի որտեղ պատահեք: Երեկոյան ընթրում էինք ճաշարանում: Հիմա

արդեն ես ուսում էի ոչ թե ծովախեցգետիններ, այլ համեղ տաք ապուր և քնում էի ոչ թե խոտի, այլ մաքուր սպիտակ սավանով ծածկված ներքնակի վրա, իսկ քնելուց առաջ հագուստներս հանում էի:

Լյուսյեն Արդելը զարմացել էր, որ ես ավելի զարգացած էի, քան սովորաբար լինում են գյուղացի երեխաները: Այն գիտելիքները, որ ես ձեռք էի բերել պարոն Բիորելի մոտ, հաճախ զարմացնում էին նրան: Ծառերի, միջատների ու խոտերի կյանքի մասին ես ավելի շատ բան գիտեի, քան ինքը, հիշում էի դրանց անունները, գաղափար ունեի այն անսահման մանր էակների աշխարհի մասին, որ հայտնի էր միայն շատ քչերին: Մենք նրա հետ շարունակ զրուցում էինք: Նա կենսախինդ, հաճելի ուղեկից էր, իսկ նրա վարակիչ զվարթությունը փոխանցվում էր նաև ինձ: Այդպես մենք առաջ էինք գնում ուր աչքներս կտրում էր և հայտնվեցինք Մորտենի շրջակայքում: Թեև դա ընկած չէր Հավրի ճանապարհին, սակայն ես ամենևին չէի անհանգստանում: Ես համոզված էի, որ այսպես թե այնպես կհասնեմ Հավր և մարդատար մեծ շոգենավերից մեկով կուղևորվեմ Բրազիլիա: Եվ միթե՞ միևնույն չէ, թե դա կլինի մեկ օր ուշ կամ մեկ օր շուտ:

Մորտենի շրջակայքը իրավացիորեն համարվում էր Նորմանդիայի ամենագեղատեսիլ վայրերից մեկը: Մոճու անտառներ, դարիվեր բլուրներ, բարձր ժայռեր, մութ կիրճեր, ամենուրեք հանդիպող փրփրադեզ գետակներ, որ հոսում էին ծառերի տակով կամ ջրվեժի նման գահավիժում գառիթափերից, վերջապես, հրաշալի, թարմ, վառ կանաչ բուսականությունը, այս ամենը հրապուրում էր նկարիչներին, որոնք ամեն քայլափոխում թեմաներ էին գտնում իրենց ուրվագծերի կամ նկարների համար:

Ոչ մի տեղ երկար չմնալով, մենք թափառում էինք Մորտենի շրջակայքում, շրջանցելով այն: Մինչ Լյուսյեն Արդելը նկարում էր, ես մեր ընթրիքի համար բռնում էի կարմրախայտեր կամ խեցգետիններ էի հանում բներից:

Ես չափազանց երջանիկ էի, իսկ այդպիսի երջանկությունը չէր կարող երկար տևել, թե չէ դուրս կգար, որ իմ փախուստի համար վարձատրված եմ, այլ ոչ թե պատժված:

Մի անգամ առավոտյան, երբ մեզնից ամեն մեկը զբաղված էր իր գործով, տեսանք, որ մեզ է մոտենում մի ոստիկան: Հեռվից նա բավականին անճոռնի էր թվում և, իհարկե, նրան ծառայության էին վերցրել ամենևին ոչ նրբագեղ կազմվածքի կամ վեհապանձ կեցվածքի համար:

Լյուսյեն Արդելը, որ մարդկանց մեջ արագորեն նկատում էր ամեն մի ծիծաղելի բան, մատնացույց արեց ոստիկանին, իսկ ինքն այդ պահին իր ուրվագծի լուսանցքում մի քանի բնորոշ գծերով նկարեց նրա գլուխը:

Ոստիկանն ավելի մոտեցավ մեզ և, տեսնելով, որ մենք ուշադիր նայում ենք իրեն, ուղղեց շիկակարմիր մազերին դրած եռանկյունի գլխարկը, ձգեց սուսերակալը և քայլերը դանդաղեցրեց, աշխատելով ծանրակշիռ տեսք ընդունել:

Թղթի վրա մատիտը ճշտորեն վերարտադրեց նրա շարժումները և այնպիսի զվարճալի ծաղրանկար ստացվեց, որ ես ծիծաղից թուլացա:

Դա դուր չեկավ ոստիկանին: Նա ընդհուպ մոտեցավ մեզ ու ասաց.

— Ներեցեք, դուք շատ լավ գննեցիք ինձ, իսկ հիմա էլ ես եմ ուզում տեսնել, թե դուք ինչ մարդիկ եք:

— Ինչ կա որ, ոստիկան,— իր նկարածը թղթապանակի մեջ պահելով պատասխանեց Լյուսյեն Արդելը:— Խնդրում եմ, չքաշվեք: Ես բավական երկար նայեցի ձեզ, հիմա էլ դուք նայեք ինձ, և մենք քվիտ կլինենք:

— Իզուր խույս մի տվեք. դուք հիանալի հասկանում եք, որ ինձ հետաքրքրում են ձեր անձնագրերը: Իմ պարտականությունն ու իմ պարտքն է անձնագիր պահանջել այն մարդկանցից, ովքեր թափառում են մեծ ճանապարհներին:

Ոստիկանին ոչինչ չպատասխանելով, Լյուսյեն Արդելն ասաց.

— Ռոմեն, իմ ուղեպարկից հանիր անձնագիրը, որ ծխախոտի հետ դրված է միևնույն տեղում, և քաղաքավարությամբ ներկայացրու ոստիկանին...— Այնուհետև նորից դիմեց նրան:— Ձեր բարձր պարտականությունների հանդեպ տաճած հարգանքից ելնելով, ես կցանկանայի անձնագիրը մատուցել արծաթե սկուտեղով, սակայն, ինչպես գիտեք, ճանապարհին դժվար է ունենալ այն ամենը, ինչ ցանկանում ես: Այդ իսկ պատճառով Ռոմենը չունի սպիտակ ձեռնոցներ, բայց քանի որ դուք էլ չունեք, ապա մենք նորից քվիտ ենք:

Այդ պահին ոստիկանը, որ սկզբում բարեհաճորեն լսում էր այդ քաղաքավարի խոսքերը, հասկացավ, որ ծաղրում են իրեն: Նա կարմրատակեց, շրթունքները սեղմեց ու գլխարկը քաշեց աչքերին: Այնուհետև ծանրակշիռ տեսքով սկսեց կարդալ:

— «Մենք... առաջարկում ենք քաղաքացիական ու զինվորական իշխանություններին թույլ տալ ազատ տեղափոխվել ու բնակություն հաստատել պարոն... հըմ... հըմ պարոն Ար... պարոն Արդել Լյու... Լյուս... Լյուսյենին, որ պրոֆեսիայով...»,— հասնելով այդ բառերին նա կմկմաց ու շփոթված կանգ առավ, հետո, կարծես քաջություն հավաքելով, շարունակեց կարդալ,— «...պրոֆեսիայով նկար... նկարիչ պասսաժիստ է»:

Ատամների արանքից էլի ինչ-որ մոթմոթալով, ոստիկանը ետ վերադարձրեց անձնագիրը:

Երբ նա շրջվեց, որ հեռանա, շտապելով վերջ տալ իր համար տհաճ այդ խոսակցությանը, Լյուսյեն Արդելը, որին կարծես սատանան դրդեց, կանգնեցրեց նրան:

— Ներեցեք, պարոն ոստիկան, բայց իմ անձնագրում դուք բաց թողեցիք ամենազվիսավորը, այսինքն այն կետը, որի համար ես առանց առարկելու վճարել եմ երկու ֆրանկ:

— Այդ ո՞ր կետն է:

— Այն, որ դուք պարտավոր եք օգնություն և հովանավորություն ցույց տալ ինձ:

— Ի՞նչ բանում:

— Այ օրինակ, բարեհաճեցեք ասել, թե ես իբրև ինչ կարող եմ ճանապարհորդել մեծ ճանապարհներով:

— Իբրև այն, ինչ նշված է ձեր անձնագրում:

— Նշանակում է, իբրև նկարիչ պասսաժի՞ստ:

— Իհարկե, եթե դա ձեր պրոֆեսիան է:

— Այդ դեպքում, խնդրում եմ բացատրեք, թե իմ պրոֆեսիայով ինձ ինչ է թույլատրվում և ինչ է արգելվում:

— Ախ, այդպե՛ս: Նշանակում է, ես դեռ պետք է ձեզ սովորեցնեմ ձեր արհե՞ստը:

— Խոսքը արհեստի մասին չէ, մի լավ հասկացեք: Ձեր կարծիքով ես նկարիչ պասաժիստ եմ, չէ՞:

— Հըմ... այո:

— Շատ լավ: Սակայն մի երկու մղոն անցնելուց հետո ես կրկին կարող եմ հանդիպել ոստիկանի, որը նորից անձնագիր կպահանջի ինձնից: Իսկ եթե հենց այդ պահին ես այնպիսի բան անեմ, ինչ իրավունք չունեմ որպես նկարիչ պասաժիստ, այդ դեպքում նա կձերբակալի՞ ինձ:

— Անտարակույս:

— Հետևապես, ես պետք է իմանամ, թե ինձ ինչ է թույլատրվում և ինչ է արգելվում:

Քրտինքի խոշոր կաթիլները գլորվում էին խեղճ ոստիկանի դեմքով: Նա հասկացավ, որ իր վրա ծիծաղում են և ինքը, երևի, որևէ հիմարություն է թոցրել բերանից: Այդ ժամանակ նա լուրջ զայրացավ.

— Դեռ երկա՞ր պետք է այստեղ մորուք տմբտմբացնեք ու իշխանությանը ծաղրեք: Այլևս ոչ մի խոսք: Եթե անձնագրում ձեր պրոֆեսիան ճիշտ չի նշված, նշանակում է, ինչ-որ բան կարգին չէ և հարկավոր է պարզել: Իսկ եթե այդպես է, ապա ես պետք է ձերբակալեմ ձեզ: Գնանք քաղաքագլխի մոտ, այնտեղ դուք նրան ամեն ինչ կբացատրեք... Իսկ այս տղան,— նա մատնացույց արեց ինձ,— անձնագրում նշված չի և հայտնի չէ, թե ինչ թոչուն է: Եվ այսպես, բարեհաճեցեք ենթարկվել: Գնանք:

— Նշանակում է, դուք ինձ ձերբակալում եք որպես նկարիչ պասաժի՞ստ:

— Ես պարտավոր չեմ բացատրություններ տալու: Ձերբակալում եմ, որովհետև անհրաժեշտ եմ գտնում ձերբակալել, ուրիշ ոչինչ: Գնացեք հոժարակամ, թե չէ ստիպված կլինեմ ուժով տանել:

— Ի՛նչ արած, գնանք: Եթե պարոն քաղաքագլուխն էլ ձեզ նման է, ապա ես մեծ հաճույք կստանամ... Ռոմեն, վերցրու պարկը և գնանք... Ոստիկան:

— Էլի ի՞նչ եք ուզում:

— Ձեռքերս կապեք և թուրը մերկացրեք: Եթե ես ձերբակալված եմ, ապա ուզում եմ, որ դա լինի բոլոր կանոնների համաձայն:

Սակայն ես ամենին չէի բաժանում նրա ուրախ տրամադրությունը և գտնում էի, որ շատ ավելի լավ կլիներ, եթե Լյուսյեն Արդելը լրեր: «Իսկ այս տղան... հայտնի չէ, թե ինչ թոչուն է»,— ասաց ոստիկանը: Նրա խոսքերը դեռ հնչում էին իմ ականջին: Կսկսեն հարցուփորձ անել, կիմանան, թե ով եմ և կուղարկեն հորեղբորս մոտ: Լյուսյեն Արդելը քայլում էր և ուրախ երգում.

Խեղճ կալանավորին

Տանում են կախելու...

Ոստիկանը գնում էր նրա հետևից, իսկ ես քարշ էի գալիս նրանցից հինգ քայլ հեռու: Մինչև գյուղ մնացել էր մոտավորապես կես լյո և հարկավոր էր անցնել անտառի միջով: Բախտի բերմամբ, մեր

ճանապարհին ամայի էր: Հագիվ էինք անտառով մի հարյուր քայլ արել, երբ, ուժգին սարսափով համակված, ես անսպասելի որոշում ընդունեցի: Ինչպիսի դժվարություն ուզում է թող հանդիպի ինձ, միայն թե չիմանան իմ ով լինելը և ետ չուղարկեն Դոլ: Ուղեպարկը ես տանում էի ձեռքիս բռնած, այլ ոչ թե մեջքիս կապած, ինչպես անում էի միշտ: Ես կամացուկ դանդաղեցրի քայլերս, պարկը շարտեցի գետին և մի ոստյունով թռա ատվի վրայով:

Պարկի ընկնելու թխկոցը լսելով, ոստիկանը ետ նայեց, բայց ես արդեն անհետացել էի անտառում:

— Բռնե՛ք դրան,— աղաղակեց նա:

— Ինչի՞ց ես վախենում,— ձայն տվեց ինձ Լյուսյեն Արդելը:— Մենք միայն մի քիչ կզվարճանանք:

Բայց պատասխանի փոխարեն ես բղավեցի.

— Վախենում եմ հորեղբորիցս, մնաք բարով,— և նետվեցի դեպի անտառ:

Արդյոք կհետապնդե՞ն ինձ: Ես վազում էի առանց ետ նայելու և ուշադրություն չէի դարձնում ոչ դեմքս ձաղկող ճյուղերի, ոչ էլ ինձ չանգող փշերի վրա: Ես սլանում էի խենթի նման, առանց շուրջս նայելու, և հանկարծ գետինը չքացավ ոտքերիս տակից, և ես ընկա մի մեծ փոսի մեջ: Որոշ ժամանակ անշարժ պառկել էի այնտեղ, բայց ոչ նրա համար, որ վնասվել էի, այլ այն պատճառով, որ հայտնվել էի այնպիսի խիտ խոտերի ու փշոտ թփերի մացառուտներում, որոնց միջից նույնիսկ երկինքը չէր թափանցում: Ես ղեկավարվում էի այն վայրի գազանի բնագրով, որին հետապնդում են շները: Ես սեղմվեցի գետնին, կուչ եկա, աշխատելով որքան հնարավոր է աննկատելի մնալ և շունչս պահած սկսեցի ականջ դնել: Սակայն ոչինչ չլսեցի, բացի վախեցած թռչունների ճիչերից և իմ ընկնելուց տեղահան արված ավազի մեղմ խշշոցից, որ քիչ-քիչ թափվում էր փոսի պատերի վրայով, ինչպես ավազի մեծ ժամացույցում:

Մի քանի րոպե հետո, համոզվելով, որ ինձ ոչ ոք չի հետապնդում, ես արդեն կարող էի մտածել իմ վիճակի մասին:

Ես դատում էի այսպես: Այն բանից հետո, երբ Լյուսյեն Արդելին կտանեն քաղաքագլխի մոտ, ոստիկանն իմ մասին կհայտնի իր ընկերներին, և բոլորը կգնան ինձ որոնելու: Եթե չեմ ուզում ինձ բռնեն, պետք է անմիջապես հեռանամ, որպեսզի առաջ անցնեմ իմ հետապնդողներից: Մտքովս անգամ չէր անցնում, որ քաղաքագլխի մոտ ամեն ինչ բարեհաջող կվերջանա, նկարչին բաց կթողնեն, և մենք նրա հետ միասին հանգիստ կշարունակենք մեր ճանապարհը դեպի Հավր, ինչպես մտադրվել էինք: Ես այնպիսի վիճակում էի, երբ մարդն ընդունում է ամենաձայրահեղ որոշումները, որովհետև վախը մթափում է նրա դատողությունը: Ոստիկանների ձեռքը չընկնելու և նորից Դոլ չվերադառնալու համար, ինձ թվում է, որ կրակի մեջ էլ կնետվեի: Մտովի ես ներողություն էի խնդրում Լյուսյեն Արդելից իմ փախուստի համար, բայց մի՞ թե նրա հիմար կատակները չեղան մեր հարկադրված բաժանման պատճառը:

IX

Երկու ժամ հետո ես արդեն Սուրդևալի առաջին տների մոտ էի: Վախենալով, որ հանկարծ կարող են ինձ նկատել, ես չգնացի քաղաքի միջով, այլ հետնաբակերով գաղտագողի դուրս եկա դեպի Վիր տանող ճանապարհը:

Արագ քայլերը փոքր-ինչ հանգստացրեց ինձ, թեպետ չէի կասկածում, որ մինչև Գոնֆլեր շատ դժվար ճանապարհ էր սպասում ինձ: Հիմա ես չունեի կաթաս՝ իրերիս կապոցը մնացել էր Մորտենում, և կրկին հայտնվեցի դաշտերում այն նույն վիճակում, ինչպես փախուստի առաջին օրը: Դեռ քաղցած չէի, որովհետև առավոտյան կուշտ նախաճաշել էի, բայց, անկասկած, շուտով ուտելու ցանկություն կունենայի:

Այդ բոլորին ավելացրեք նաև, որ ամեն տեղ աչքիս ոստիկաններ էին երևում, և դուք կհասկանաք, թե ինչ տխուր տրամադրությամբ էի քայլում: Ամենից առաջ շատ էի ափսոսում, որ բաժանվեցի ուրախ ընկերոջից, և հիմա հեռվում երբեմն երևացող յուրաքանչյուր գլխարկը, նույնիսկ կանացի գլխարկը ինձ թվում էր ոստիկանի եռանկյունի գլխարկ: Այդ երեք լյոն անցնելու ընթացքում մի տասն անգամ փախա մեծ ճանապարհից ու թաքնվեցի տարեկանի արտերում կամ մոշով պատված առուններում: Այդ առուններից մեկի վրայով թռչելիս, լսեցի, ինչպես գրպանումս մի բան զնգաց: Ձեռքս տարա գրպանս և, պրպտելով, դուրս հանեցի վեց սու և մի քանի մանրադրամ, բայց ամենահաճելին այն էր, որ այնտեղ կային նաև քառասուն սու արժողությամբ երկու մետաղադրամ: Նախորդ օրը երեկոյան նկարչի համար ծխախոտ էի գնել և ինձ մոտ մնացել էր հինգ ֆրանկից ավելացած դրամը: Արդյո՞ք այդ փողը պետք է պահեմ նրա համար: Իսկ ինչպե՞ս վերադարձնեմ: Ինքս ինձ խոսք տվեցի առաջին իսկ հնարավորության դեպքում վերադարձնել:

Թեև այդ գումարն ինձ համար մի ամբողջ կարողություն էր, բայց ես հասկանում էի, որ չի բավարարի բոլոր ծախսերի համար: Մի լավ խորհելով, ես կանգ առա հետևյալ որոշման վրա. կշարունակեմ ճանապարհս, կգիշերեմ անտառում կամ դաշտում, բայց ուտելու հաշվին չեմ տնտեսի: Այդքան փողով կարող եմ ինձ չզրկել ամենաանհրաժեշտ ուտելիքից:

Դեռ լույսով հասա Վիր, բայց քաղաքի փողոցներում մոլորվեցի: Փոխանակ դուրս գալու Վիլյե-Բոկած տանող ճանապարհը, ես հայտնվեցի այն ճանապարհին, որը տանում էր դեպի Կոնդե-սյուր-Նուարո և Շենդոլ հասնելուց հետո միայն նկատեցի իմ սխալը: Ես շատ լավ էի ուսումնասիրել քարտեզը, պարզ պատկերացնում էի և գիտեի, որ Գարկուրից կարող եմ ընկնել Կան, այդ պատճառով չվշտացա կատարածս շրջանի համար և, խոտի դեզի մեջ մտնելով, հիանալի քնեցի: Իմ ապաստարանից ոչ հեռու նկատեցի հովվի խրճիթ ու ոչխարի փարախ: Մեղմ քամին ինձ էր հասցնում բնակավայրի տաք ու քաղցրավուն բույրը: Ես լսեցի, ինչպես իմ ներկայությունն զգալով սկսեցին հաչալ փարախում կապված շները, և անհամեմատ ավելի հանգիստ զգացի ինձ, գիտենալով, որ մենակ չեմ այս անձայրածիր կանաչ դաշտավայրում:

Ծովափով կատարած իմ ճանապարհորդության մասին լսելով, Լյուսյեն Արդելը շատ անգամ է ինձ ասել, թե հրաշք է համարում, որ չեմ մրսել լուսադեմի ցրտից ու տենդով չեմ հիվանդացել: Այդ պատճառով հազիվ լույսը ծագած արթնանալով և զգալով, որ սառել եմ, անմիջապես վեր թռա տեղիցս: Դեռ չէր լուսացել, բայց արշալույսն արդեն լուսավորել էր ծառերի կատարները: Արևելքում հորիզոնը դեղին գույն էր ստացել, իմ գլխավերևում աստղերը թույլ առկայծում էին դժգույն երկնքում, իսկ չորս կողմը փովել էր հսկայական սև երկնակամարը, որի վրա երկար օձերի պես ձգվել էին հովիտներից քուլա-քուլա բարձրացող գորշագույն մառախուղի շերտերը: Գոնապարհի փոշին թրջվել էր, կարծես անձրևը կացրել էր գետնին, իսկ ճյուղերին նստած թռչնակներն իրենց փետուրներից թափ էին տալիս գիշերվա ցողը:

Արդեն երկու օր էր, ինչ շարունակում էի ճանապարհս և այդ ժամանակամիջոցում ոչ մի ուշագրավ բան չպատահեց ինձ հետ: Մակայն չկարծեք, թե առանց հանգստանալու քայլում էի առավոտից մինչև երեկո: Կեսօրի մոտ, եթե հարմար տեղ էի գտնում, պառկում էի ու մի քանի ժամ քնում:

Երբորդ օրը, Գարկուրն անցնելուց հետո, հայտնվեցի մի մեծ անտառի մոտ: Թեև դեռ վաղ առավոտ էր, սակայն անչափ տոթ էր ու շոգ, և ես անհամբերությամբ սպասում էի կեսօրին, որ մի քիչ քնեմ: Դեռ երբեք այդպես չէի շոգել: Շիկացած գետինը այրում էր ոտքերս, և ես մտա անտառի խորքը, հույս ունենալով ծառերի տակ մի քիչ զովություն գտնել, սակայն այնտեղ էլ չհովացա: Ամենախիտ թավուտում անգամ օդը նույնքան հեղձուցիչ էր, որքան մեծ ճանապարհին. տոթից ամեն ինչ քարացել էր: Չէր լսվում ոչ տերևների սուսափյունը, ոչ թռչունների ծվլոցը՝ ամենուրեք մեռելային լռություն էր տիրում, կարծես «Քնած գեղեցկուհին» հեքիաթի չար փերին կախարդական փայտիկը կպցրել էր երկնքին, կենդանիներին ու բույսերին: Միայն միջատներն ու մլակները չէին ենթարկվել ընդհանուր քնահարությանը: Մի մասը խոտերի մեջ այս ու այն կողմ էր շարժվում, մյուսները սլանում էին ծառերի վրայով սահող արեգակի թեք ճառագայթների մեջ և խմբեր կազմած խուլ բզզոցով պտտվում, կարծես անտանելի շոգը աշխուժացրել էր դրանց:

Դեռ նոր էի տեղավորվել հաճարենու տակ, երբ ձեռքս գլխատակիս դնելով, անմիջապես քնեցի: Արթնացա վզիս սուր ցավից: Ձեռքով շփեցի և բռնեցի մի մեծ կարմրագորշ մրջյուն: Նույն պահին էլ ուժեղ խայթեցին ոտքս, հետո կուրծքս, իսկ այնուհետև միանգամից մի քանի տեղ: Արագ հանվեցի ու սկսեցի հագուստներս թափահարել, որտեղից դուրս թափվեց մի ամբողջ մրջյանոց: Սակայն այդ գարշելի արարածների խայթոցի ցավը չէր անցնում: Անկասկած, դրանք էլ մոծակների նման վերքի մեջ թողնում են իրենց թույնը, որովհետև շուտով ամբողջ մարմինս սկսեց քոր գալ: Եվ որքան շատ էի քորում կծած տեղերը, այնքան քորն անտանելի էր դառնում: Մի ժամ հետո եղունգներս ամբողջովին արյունոտվեցին:

Եթե դուք երբևէ առիթ եք ունեցել ամառվա մի ամպրոպային օր դաշտում տեսնել բռների երամի հարձակմանը ենթարկված ոչխարների, եթե տեսել եք, թե խեղճ կենդանիներն ինչպես են դեսուղեն ընկնում, գետնին թավալվում, փշերին դիպչելով պլոկվում, ապա կարող եք պատկերացնել իմ վիճակը: Ես կարծում էի, եթե դուրս գամ թավուտից, ապա դրությունս կթթթանա: Բայց ճանապարհը շարունակվում էր անտառով և թվում էր, թե վերջ չունի: Բարձր ծառերը չորս կողմից շրջապատել էին ինձ, շիկացած օդը, ինչպես վառարանից, փչում էր դեմքիս: Վերջապես բարձրանալով բլուրը, տեսա մի փոքրիկ գետակ, որ ոլորապտույտ հոսում էր ծառերի միջով: Տասը բույսերում վազելով հասա այնտեղ, մի ակնթարթում հանվեցի ու նետվեցի ջուրը:

Դա մի հրաշալի, ամբողջովին կանաչով պատված գով տեղ էր, ինչպիսին հաճախ է հանդիպում Նորմանդիայում: Մոտակայքում աղմկող ջրաղացի ջրարգելակներով ամբարտակված գետը հանգիստ հոսում էր ջրում արտացոլվող փարթամ խոտով ծածկված ափերի երկայնքով: Բյուրեղի պես թափանցիկ ջրի միջից երևում էր դեղին ավազով ծածկված հատակը, որտեղ ցիր ու ցան ընկած էին մամռապատ քարեր: Դարափին աճած լաստենիներն ու կաղամախիները գետը պաշտպանում էին արևի ճառագայթներից, և նրանց խիտ սաղարթների տակ շոգից պատսպարվել էին բզզոցող մլակների երամները: Ջրի մակերեսին ընկած սափորուկների ու ջրային մյուս բույսերի մեջ վազվզում էին երկարոտն սարդեր, իսկ հրանուկների, հիբիկների ու սպիրեյների ծաղկաբաժակներում թաքնվել էին երկնագույն փոքրիկ ճանճեր ու թափանցիկ թևիկներով ճպուռներ: Իմ ջուրն ընկնելուց առաջացած աղմուկից վախեցած վայրի աղավնիները թռան կաղամախիների գագաթը, բայց շուտով կրկին վերադարձան ու տեղավորվեցին գետափին: Նրանք իրենց փոքրիկ գլուխներն ընկղմում էին ջրի մեջ և, դունդունալով, թափահարում զզզված փետուրները, իսկ ավելի վախկոտ ձկնկուլները, չհամարձակվելով ինձ մոտենալ, թռչում էին շուրջս: Երբ նրանք նետի արագությամբ սլանում էին արեգակի ճառագայթների միջով, լագուրե փետուրներն աչք էին կուրացնում:

Ես, երևի, մի քանի ժամ դուրս չգալի ջրից, այնքան հաճելի էր գովացնում հրաշալի սառը ջուրը, բայց հանկարծ այնտեղից, ուր թողել էի հագուստներս, լավեց մեկի բարկացած ձայնը.

— Ա՛խ դու ավագակ, նորի՞ց ես լողանում այստեղ: Դե հիմա քո շորերը կստանաս միայն քաղաքային վարչությունում:

Իմ շորե՛րը... Նա դրանք կտանի քաղաքային վարչություն: Նշանակում է, հագուստներս կհայտնվեն գետի այն կողմում, իսկ ես կմնամ այստեղ: Ես չէի հավատում ականջներին:

Զարմանքից ինձ կորցրած, նայում էի այդ կարճահասակ, շատ գիրուկ մարդուն, որ կանգնել էր ճանապարհի եզրին և բռունցքով սպառնում էր ինձ: Նա հագել էր բրոյա մոխրագույն բաճկոն, իսկ կրծքին ոսկու նման փայլում էր դեղին վահանակը:

Ըստ երևույթին, այդ մարդը չէր սիրում անտեղի ժամանակ կորցնել և անմիջապես ի կատար ածեց իր սպառնալիքը: Նա կռացավ, հագուստներս վերցրեց ու անփութորեն փաթաթեց:

— Պարո՛ն, պարո՛ն,— գոռացի ես:

— Դե լավ, ի՞նչ ես կանգնել,— պատասխանեց նա:— Քաղաքային վարչությունում գլուխ կհանենք:

Ուզում էի ջրից դուրս թռչել, վազել նրա հետևից, աղաչել, բայց վախեցա նրա դեղին վահանակից, ամաչեցի իմ մերկությունից և տեղիցս չշարժվեցի: Այդ մարդը դաշտային հսկիչ էր, նա թուր ուներ և կարող էր ինձ բանտ նստեցնել: Բացի այդ, ի՞նչ պետք է ասեմ, եթե սկսի հարցուփորձ անել:

Հագուստներս վերցնելով, նա ձեռքով սպառնաց ինձ:

— Ամեն ինչ կբացատրես քաղաքային վարչությունում,— հրաժեշտ տալով, գոռաց նա ու անհետացավ:

Ես այնպես էի շվարել, որ նույնիսկ դադարեցի ոտքերս ու ձեռքերս շարժել և, իհարկե, ջրի տակն անցա:

Դուրս գալով ջրի երես, լողացի դեպի ավին ու ամոթից ինձ կորցրած, թաքնվեցի եղեգնուտում, որի ձկուն, երկար ցողուններն իրար էին միացել իմ գլխավերևում, և ես զգացի, որ թաքնված եմ հայացքներից ու որոնումներից:

Անմիջապես հասկացա իմ վիճակի ողջ անելանելիությունը: Այս տեսքով ինչպե՞ս գնամ քաղաքային վարչություն հագուստներիս հետևից: Բացի այդ, ես չգիտեի, թե որտեղ է գտնվում քաղաքային վարչությունը: Ամենայն հավանականությամբ՝ գյուղի կենտրոնում: Հո չե՞մ կարող մերկ քայլել ճանապարհով: Ինչպե՞ս հայտնվեմ գյուղի փողոցներում:

Ահա թե երբ հնարավորություն եղավ դառնալու իսկական Ռոբինզոն: Սակայն կյանքում ծանր դրությունից շատ ավելի դժվար է ելք գտնել, քան գրքերում:

Այն ժամանակվանից, ինչ ես հեռացել էի Դոլից, չնայած ճանապարհին ինձ վիճակված բոլոր դժվարություններին ու անախորժություններին, դեռ ոչ մի անգամ չէի վհատվել: Իսկ հիմա համոզված էի, որ կկործանվեմ, կոչնչանամ. այլևս ոչ ուժ ունեի, ոչ կամք, մի խոսքով, լրիվ հուսահատության մեջ էի:

Ես երկար լաց եղա և նույնիսկ չնկատեցի, ինչպես սառեցի: Ցրտից ատամներս սկսեցին չիկչիկալ: Երկու հարյուր քայլի վրա ես տեսա արևով լուսավորված բարձր գետափը, որտեղ տապից խոտը

դեղնել ու չորացել էր: Այնտեղ, հավանաբար, կարող եմ տաքանալ չոր ավազի վրա: Բայց ես այնպես վախեցած էի, որ դեռ չէի համարձակվում տեղիցս շարժվել: Վերջ ի վերջո ցուրտը թափանցեց մինչև ոսկորներս: Ես սիրտ արեցի, նետվեցի ջուրը և լողալով հասա մյուս ափը: Այստեղ ափը մի երկու մետր բարձր էր ջրից: Ներքևում խիստ հեղեղված էր, իսկ վերևից ջրի մեջ կախվել էին գայլուկի ու պատատուկի միահյուսված ցողունները:

Ես բռնեցի դրանցից և, բավական քերծվելով դժվարությամբ մագլցեցի վերև:

Արևն իսկույն տաքացրեց ինձ: Ջերմության հետ միասին վերադարձավ նաև ապրելու ցանկությունը, և ես սուկալի քաղց զգացի: Բայց որտեղի՞ց ուտելիք գտնեմ: Հսկիչը հագուստներիս հետ տարել էր նաև դրամը:

Մինչդեռ ժամերն անցնում էին իրար հետևից, իսկ ես դեռ չէի կարողանում որևէ բան մտածել: Ժամանակ առ ժամանակ վերևում, ինձանից մի քանի քայլ հեռու, ճանապարհով անցնում էին սայլեր: Սակայն ի՞նչ օգնություն կարելի էր սպասել դրանցից: Ինչպե՞ս կարող եմ բոլորովին մերկ դուրս գալ իմ թաքստոցից: Թերևս կարող էի ծածկվել տերևներով, եղեգնուտով կամ ձողոտով, բայց մտքովս չէր անցնում այդ անել:

Արեգակն սկսել էր թեքվել դեպի արևմուտք: Շուտով վրա կհասնի գիշերը: Բայց դժվար թե բաց երկնքի տակ այնպիսի հաճելի գիշեր անցկացնեմ, ինչպես նախընթաց օրը: Այն ժամանակ ես քնեցի հոտավետ խոտի մեջ և ինձ տաքացնում էր հագուստս: Իսկ հիմա բոլորովին մերկ նստել եմ նեղ ավազաշերտին: Ի՞նչ անել: Ես նայում էի ջրին, որի արագ հոսանքից գլուխս սկսեց պտտվել: Ինձ թվում էր, որ այնտեղ արդեն տեսնում եմ գիշերային զարհուրելի հրեշների:

Մինչև մայրամուտ մի ժամից էլ պակաս էր մնացել, երբ հանկարծ ճանապարհին լսեցի մի քանի սայլերի անհիմների աղմուկը: Անսպասելիորեն աղմուկը դադարեց. սայլերը կանգ առան ուղիղ իմ հետևում: Այնտեղից, ուր ես թաքնվել էի, ճանապարհը չէր երևում, բայց շղթաների ճռռոցից ու երկաթի զնգոցից հասկացա, որ ձիերին արձակում են լծից: Այդ պահին լավեց մռնչոց կամ ոռնոց, ինչպիսին մինչ այդ երբեք չէի լսել, որովհետև դա նման չէր ոչ ձիու խրխնջոցի, ոչ էլ էշի գռռոցի, այլ շատ ավելի ահարկու էր: Թռչունները, որ գիշերելու համար արդեն տեղավորվել էին թփերում, աղիողորմ ճիչերով թռան տարբեր կողմեր: Դաշտային մի մեծ առնետ նետվեց ոտքերիս տակ ու մտավ իր որջը, որի մոտ ես նստել էի:

Մի քանի բույե հետո ինձ թվաց, որ վերևում, մարգագետնում ինչ-որ մեկը քայլում է: Եվ ես չսխալվեցի:

— Մի հավ եմ թոցրել, — ասաց ինչ-որ մեկի ձայնը:

— Ինչպե՞ս հաջողվեց:

— Մտրակի ծայրին քար կապեցի ու դրանով հարվածեցի, իսկ հետո դուրս քաշեցի, ինչպես ձուկը ջրից: Ա՛յ թե իրարանցում ընկավ հավերի մեջ...

— Հարկավոր է եփել:

— Եթե Կաբրիոլը տեսնի, կխլի, և մեզ կմնան միայն ոսկորները:

Այդ խոսակցությունը ոչ մի լավ բան չէր գուշակում: Սակայն հենց դրա համար էլ համարձակություն ներշնչեց ինձ, որ երբեք չէի ունենա, եթե ազնիվ մարդիկ լինեին:

Երկու ձեռով գառիվայր լանջից կառչելով, ես ձգվելով բարձրացա վերև և, գլուխս դուրս հանեցի գայլուկի թփուտներից, որպեսզի տեսնեմ, թե ինչ է կատարվում մարգագետնում:

Երկու գրուցակիցները, որոնց խոպոտ ձայների պատճառով մեծահասակների տեղ էի դրել, իմ տարիքի տղաներ էին: Դա բոլորովին հանգստացրեց ինձ և, որոշում ընդունելով, ես ավելի դուրս եկա:

— Թույլ սովեք հարցնել...— սկսեցի ես:

Նրանք շուտ եկան և սկզբում չհասկացան, թե ձայնը որտեղից է գալիս, որովհետև չնկատեցին թփերի միջից երևացող գլուխս: Զարմացած ու վախեցած, նրանք կանգ առան, չիմանալով, ինչ անել՝ ավելի մոտենալ, թե իսկույն փախչել:

— Այստեղ ինչ-որ գլուխ է երևում,— ինձ տեսնելով, բացականչեց նրանցից մեկը:

— Երևի ջրահեղձ է,— նկատեց երկրորդը:

— Հիմար, ի՞նչ ջրահեղձ, չէ՞ որ նա խոսում է:

Այդ պահին մեծ ճանապարհից լսվեց մի կոպիտ բղավոց:

— Է՛յ, անպիտաններ, դեռ երկա՞ր պետք է խոստ քաղեք:

Ես նայեցի այդ կողմը և տեսա դեղին ու կարմիր գույնի ներկած երեք երկար սայլեր, որ շարքով կանգնել էին իրար հետևից: Հավանաբար, դա թափառաշրջիկ դերասանախումբ էր:

— Կաբրիոլ, Կաբրիո՛լ,— բղավեցին տղաները:

— Ի՞նչ կա:

— Եկեք, այստեղ վայրենի կա: Իսկական վայրենի՛:

Կաբրիոլը մոտեցավ նրանց:

— Դե, որտե՞ղ է ձեր վայրենին:

— Այստեղ է, թաքնվել է թփերում...

Երեքն էլ մոտեցան և, զննելով ինձ, ծիծաղից թուլացան:

— Ի՞նչ լեզվով է խոսում ձեր վայրենին,— հարցրեց նա, ում անունը Կաբրիոլ էր:

— Ֆրանսերեն, պարոն,— պատասխանեցի ես:

Եվ պատմեցի իմ չարաբաստիկ արկածի մասին, որը նրանց շատ ավելի զվարճալի թվաց, քան ինձ: Նրանք ուղղակի ծիծաղից թուլանում էին:

— Լաբույի,— տղաներից մեկին դիմեց Կաբրիոլը,— գնա նրա համար տաբատ ու բլուզ բեր:

Երկու բոպեից Լաբույին վերադարձավ: Մի ակնթարթում ես հագնվեցի ու դուրս թռա թփերի միջից:

— Իսկ հիմա,— ասաց Կաբրիոլը,— գնանք մեր տիրոջ մոտ:

Նա ինձ տարավ առաջին սայլի մոտ, և ես փայտե սանդուղքով բարձրացա վերև: Վառարանի մոտ, որտեղ մարմանդ կրակի վրա եփվում էր ռագուն, նստած էր նիհար ու խորշումած դեմքով մի կարճահասակ մարդ, իսկ նրա կողքին բազմել էր մի այնպիսի հսկա ու գեր կին, որ ես նույնիսկ վախեցա:

Ստիպված էի նորից կրկնել իմ պատմությունը, որը կրկին ընդհանուր ծիծաղ առաջացրեց:

— Եվ այսպես, դու գնում ես Հավր և ուզում ես նավաստի՞ դառնալ,— հարցրեց փոքրամարմին մարդը:

— Այո, պարոն:

— Իսկ ինչո՞վ կվճարես տաբատի ու բլուզի համար:

Մի պահ ես չիմացա, ինչ պատասխանել, բայց հետո, սիրտ առնելով, ասացի.

— Եթե համաձայն եք, կարող եմ աշխատանքով վճարել:

— Իսկ ի՞նչ կարող ես անել: Դու ակրոբատ՞ ես:

— Ոչ:

— Կարո՞ղ ես թուր կուլ տալ:

— Ոչ:

— Փող, տրոմբոն կամ թմբուկ նվագել գիտե՞ս:

— Ոչ:

— Այդպե՛ս: Իսկ ի՞նչ են սովորեցրել քեզ: Վատ են զբաղվել քո դաստիարակությամբ, տղաս, շատ վատ:

— Սա մեզ համար գյուտ չէ: Նա այլանդակ չէ, այլ սովորական կազմվածք ունի,— ոտքից գլուխ ինձ գննելով, հայտարարեց հսկա կինը:— Եվ դեռ երևակայում է, թե կարող է աշխատել մեր խմբում: Նա ուսերը թոթվեց և արհամարհանքով շուտ եկավ:

«Երանի՛ թե երկզվխանի կամ երեք թևանի հրեշ լինեի»,— ափսոսանքով մտածեցի ես:

— Կարո՞ղ ես ձիերին խնամել,— անվրդով շարունակում էր ինձ հարցաքննել փոքրամարմին մարդը:

— Կփորձեմ, պարոն:

— Դե լավ, որևէ բանի պետք կգաս: Ուրեմն, այսօրվանից դու ծառայության ես ընդունվում կոմս Լապոլադի հոչակավոր զազանանոցում, որ հայտնի է իր զազանների գեղեցկությամբ և գեղեցիկ Դյելետտայի քաջությամբ, մեր դուստր՝ Դյելետտայի, որ սանձահարում է դրանց: Գնա Կաբրիոլի հետ, նա քեզ ցույց կտա, թե ինչ պետք է անես, իսկ մի ժամ հետո վերադարձիր ընթրելու:

Ես չէի կարող ընտրություն անել: Իմ վիճակում հնարավոր չէր չմահավանություն հանդես բերել: Այդ անսպասելի ու տարօրինակ առաջարկությունը ես ընդունեցի որպես ճակատագրի պարզև:

X

Եվ այսպես, ես դարձա կրկեսի ակրոբատ, ավելի ճիշտ, պարզապես կոմս Լապոլադի թափառաշրջիկ խմբի ձիերը խնամող ծառա:

Իմ տիրոջ տիտղոսն ամենևին մտացածին չէր, ինչպես կարող են ենթադրել ոմանք: Նա ուներ իսկական փաստաթղթեր, որոնք իրավունք էին տալիս կոչվելու կոմս և սիրով ցույց էր տալիս ամեն պատեհ առիթով: Նա հախուռն կյանք էր անցկացրել, անձնատուր լինելով ամեն տեսակի կրքերի ու մոլության և, կամաց-կամաց ընկնելով, դարձել էր թափառաշրջիկ դերասան: Կոմսի անկումն ավարտվել էր նրանով, որ հուսահատության պահին ամուսնացել էր այն հսկայամարմին կնոջ հետ, որն այնպես խստորեն դիմավորեց ինձ: Այդ վիթխարի մեծության կինը, որ եվրոպական բոլոր տոնավաճառներում հայտնի էր «Բորդոյցի հսկա կին» մականունով, թեև նրա ծննդավայրը Օվերենն էր, երիտասարդ ժամանակ հասել էր «Ֆենոմենի» բարձր դիրքի:

Բալագանի աֆիշներից մեկում նա պատկերված էր վարդագույն զգեստով և սպիտակ գուլպա հագած հսկայական ոտքով, որ կոկետորեն ցուցադրում էր աթոռակի վրա: Մեկ ուրիշում, երկնագույն թավշյա ժակետ հագած, սուսերը ձեռքին կանգնած էր կարաֆինների բրիգադի դիմաց, որի հասակը շատ ցածր էր այդ կնոջից: Ներքևում ոսկեգույն տառերով գրված էր. «Զգուշացե՛ք, պարոն զինվորական»:

Տոնավաճառներում հանդես գալով, նա բավականաչափ գումար էր կուտակել և դրանով էլ հրապուրել Լապոլադին, որը «մուշտարի» կանչողի տաղանդից բացի, ուրիշ ոչինչ չուներ: Սակայն «կոկորդ պատռելու» արվեստում նա հասել էր մեծ վարպետության: Խմբում ոչ ոք չէր կարող նրա հետ մրցել հասարակությանը զվարճացնելու և ժողովրդին ներկայացում կանչելու հմտությամբ: Հսկա կինն ու Լապոլադը ընկերություն էին հիմնել, և այդ հարգարժան գույքը գնել էր գազանանոց, որն իր գոյության առաջին տարիներին մրցում էր նույնիսկ հռչակավոր Յուգե դը Մասիլյայի գազանանոցի հետ: Բայց այն, ինչ կազմում էր Լապոլադի ուժը, միաժամանակ նաև նրա թուլությունն էր. «կլայեկած կոկորդը» շատ թանկ էր նստում նրա վրա, որովհետև Լապոլադը սոսկալի հարբեցող էր ու որկրամուլ:

Կենդանիներին նա վատ էր խնամում և ավելի վատ կերակրում, այդ պատճառով մի մասը սատկել էր, իսկ մյուսներին ստիպված էին եղել վաճառել: Երբ ես հայտնվեցի թատերախմբում, գազանանոցում մնացել էին միայն մի ծեր առյուծ, երկու բորենի, մի օձ և վարժեցրած ձի, որը ցերեկը քարշ էր տալիս սայլը, իսկ երեկոները ներկաների մեջ գտնում էր ամենահիմար մարդուն:

Ընթրիքի ժամանակ ես ծանոթացա խմբի բոլոր դերասանների հետ: Բացի տերերից՝ պարոն և տիկին Լապոլադներից, խմբի մեջ մտնում էին ծաղրածու Կաբրիոլը, Լաբույին, Ֆիլյասը՝ երկրորդ տղան, որին արդեն տեսել էի, երկու գերմանացի՝ կլառնետիստ Հերմանը և թմբկահար Կարոլյուսը և, վերջապես, հռչակավոր Դյելետտան՝ տասնմեկ-տասներկու տարեկան մի աղջիկ, որն արտաքուստ շատ քնքուշ էր ու նյարդային և ուներ կուսածաղկի պես կապույտ, խոշոր աչքեր:

Թեև ես միայն ծառա էի, բայց ինձ թույլ տվեցին սեղան նստել այդ հռչակավոր մարդկանց հետ:

«Սեղան» բառը առանձնապես չէր համապատասխանում այն առարկային, որի շուրջը մենք ընթրում էինք: Դա երկար ու լայն չներկված փայտե արկղ էր, որ դրված էր սայլի մեջտեղում և եռակի դեր էր կատարում. արկղի ներսում պահում էին զգեստները, վրան դնում էին փսեսները, իսկ զիջերը դրա վրա ներքնակ էին զցում, և արկղը դառնում էր Դյելետտայի մահճակալը: Արկղի երկու կողմում դրված էին ավելի նեղ ու երկար երկու ուրիշ արկղներ: Դրանք խմբի անդամների

համար ծառայում էին որպես նաստարաններ, որովհետև արժույթը բավականացնում էին միայն տերերին:

Չնայած շատ համեստ կահավորությանը, սայլի այդ բաժանմունքը բավական հարմարավետ էր թվում. Փարիզի շատ բնակարաններում չես տեսնի այդպիսի ընդարձակ ճաշասենյակ: Երկփեղկանի ապակեպատ դուռը տանում էր դեպի արտաքին սրահը, իսկ կարմիր վարագույրներով երկու փոքրիկ լուսամուտներից երևում էին ճանապարհամերձ ծառերը:

Ընթրիքի ժամանակ ստիպված եղա կրկին պատմել իմ արկածների մասին: Սակայն ես չսասցի ո՛չ մայրիկի, ո՛չ հորեղբոր ազգանունները, չսասցի նաև, թե որտեղ է իմ ծննդավայրը: Երբ հասա ոստիկանի հետ տեղի ունեցած ընդհարմանը, Դյելետտան հայտարարեց, որ ես հիմար եմ: Եթե նա իմ տեղը լինեք, մի լավ կզվարճանար: Երկու երաժիշտն էլ հավանություն տվեցին նրա քաջությանը, բայց ոչ թե խոսքերով՝ նրանք ընդհանրապես ոչինչ չէին խոսում, այլ խլացուցիչ քրքիջի միահամուռ պորթկումով, ինչպես կարող են ծիծաղել միայն բավարացիները:

Երբ ընթրիքն ավարտեցինք, վերջալույսը դեռ բոլորովին չէր մարել:

— Հիմա, երեխաներ,— ասաց Լապոլադը,— քանի դեռ լույս է, զբաղվենք մարմնամարզությամբ: Հարկավոր է մկանները զարգացնել:

Նա տեղավորվեց սայլի դրսի սրահում, ուր Դյելետտան նրա համար բերեց վառած ծխամորճը, իսկ Ֆիլյանն ու Լաբույին խոտերի վրա դրեցին մի փոքրիկ փակ արկղ: Ֆիլյասը հանեց բաճկոնը, սկսեց ձեռքերն ու ոտքերը ձգել և գլուխն այնպես պտտեցնել, կարծես ուզում էր պոկել, իսկ հետո կափարիչը բարձրացրեց, մտավ արկղի մեջ ու անհետացավ: Ես ապշեցի. արկղն այնքան փոքր էր, որ թվում էր, թե մի տարեկան երեխան էլ չի կարող թաքնվել:

Հերթը հասավ Լաբույիին: Բայց որքան էլ նա ջանք էր թափում, չէր կարողանում տեղավորվել արկղում: Այդ ժամանակ, առանց տեղից վեր կենալու Լապոլադն ամբողջ ուժով մտրակեց նրան:

— Դու նորից չափից ավելի ես կերել,— ասաց նա:— Վաղը քո օրաբաժինը կպակասեցնեմ:— Այնուհետև Լապոլադը շրջվեց իմ կողմը:— Դե, հիմա էլ դու փորձիր:

Ես մի քանի քայլ հետ գնացի, որպեսզի նրա մտրակը չհասնի ինձ:

— Մտնեմ արկղի մե՞ջ,— վախեցած հարցրեցի ես:

— Առայժմ ոչ: Նախ մեզ ցույց տուր, թե ինչի ես ընդունակ. թո՛իր այս առվի վրայից:

Առուն շատ խորն էր ու լայն: Բայց ես ամբողջ երկու ոտնաչափ հեռու թռա եզրից:

Լապոլադը շատ գոհ մնաց և հայտարարեց, որ ես պիտանի եմ ճոճածողի վրա աշխատելու համար:

Առաջին սայլում բնակվում էին տերերը, երկրորդում՝ գազանները: Երկրորդ սայլը խմբի մնացած անդամների համար ծառայում էր որպես ննջարան, այստեղ էին պահում նաև բոլոր բուտաֆորային պարագաները: Սայլի ներսում ինձ համար արդեն տեղ չգտնվեց, ինձ տվեցին երկու գիրկ ծղոտ, և ես պառկեցի սայլի տակ:

Թեև անկողինս ավելի լավն էր, քան նախորդ գիշերները, բայց երկար ժամանակ չէի կարողանում քնել: Լույսերը մարել էին, ցերեկվա աղմուկը դադարել էր և գիշերվա լռության մեջ լավում էր միայն, թե սայլերին կպած ձիերն ինչպես են շարժվում, ինչպես են ձգում պարանները և խոթխոթացնում

ճանապարհամերձ փոշոտ խոտը: Ժամանակ առ ժամանակ գազանանոցից լսվում էր առյուծի ծանր հառաչը, կարծես ամառային այս գիշերվա լռությունն ու շոգը նրան հիշեցնում էին հայրենի Աֆրիկայի անապատը: Երբեմն լսում էի, ինչպես առյուծը զայրացած հարվածում էր իրեն պոչով, ասես նրա թուլացած գիտակցության մեջ բռնկվում էր արիություն, և մի պահ նրան պատում էր ցատումն ու վանդակից դուրս պրծնելու ցանկությունը:

Առյուծը նստած էր երկաթե ամուր վանդակում, իսկ ես ազատության մեջ էի, և հանկարծ մտքովս անցավ հեռանալ ու շարունակել իմ ճանապարհը: Բայց ի՞նչ անեմ հագուստը, որն ինձ տվեց Լապուլադը: Տանել, նշանակում է գողանալ: Դա թույլ չէր տալիս խիղճս, և ես վճռեցի, որ պետք է կատարեմ պայմանը և հագուստի համար աշխատանքով վճարեմ նոր տիրոջս: Վերջ ի վերջո, դժվար թե նա հորեղբորիցս ավելի վատը լինի, իսկ երբ պարտքս վճարեմ, նորից ազատ կլինեմ:

Մեր խումբը Ֆալեգով գնում էր Գիբբե՝ տոնավաճառի: Այնտեղ ես առաջին անգամ տեսա Դելետտային առյուծի վանդակում և լսեցի, ինչպես է Լապուլադը հանդիսատեսներին հրավիրում իր բալագանը:

Մնդուկներից հանեցին զգեստները: Դելետտան տրիկոյի վրայից հագավ ոսկեգույն փայլքերով արծաթավուն շրջագեստ, գլխին դրեց վարդերից հյուսած պսակ: Տղաները՝ Ֆիլասն ու Լաբույին, հագնվեցին կարմիր սատանի ձտերի պես: Գերմանացիները պճնվեցին լեռ ուլանների զգեստներով և գլխներին դրեցին գլխարկներ, որոնց փետրափնջերը կախ էին ընկնում նրանց աչքերին: Դեմքիս, կրծքիս ու թևերիս մինչև արմունկները սև ներկ քսելով, ինձ դարձրին նեգր: Ես պատկերում էի աֆրիկացի ստրուկի, որին առյուծի հետ միասին բերել էին անապատից: Ինձ խստորեն հրամայված էր ֆրանսերեն ոչ մի բառ չխոսել: Հաճախորդների բոլոր հարցերին պատասխանելու փոխարեն ես պետք է ժպտայի և ատամներս ցույց տայի: Այդ տեսքով նույնիսկ հարազատ մայրս չէր ճանաչի ինձ: Հենց դրան էլ գլխավորապես ձգտում էր Լապուլադը, վախենալով, որ ամբոխի մեջ հանկարծ չհանդիպի իմ հայրենակիցներից որևէ մեկը:

Մենք աներևակայելի աղմուկ էինք բարձրացրել և մի երկու ժամ այնպես էինք գոռոռում, որ, երևի, մեռածն էլ կարթնանար: Կաբրիոլն ավարտեց իր դերը: Դելետտան ինչ-որ պար պարեց Լաբույիի հետ, այնուհետև բեմահարթակ դուրս եկավ Լապուլադը՝ գեներալի զգեստով: Մեզ հաջողվեց մեծ բազմություն հավաքել: Ես շլացել էի կանանց գլխարկների ճերմակությամբ, որ զարդարում էին մեզ նայող նորմանդուհիների գլուխները: Գեներալը բարձրացրեց ձեռքը, և երաժշտությունը լռեց:

Թեքվելով իմ կողմը և մեկնելով իր ծխած սիգարը, Լապուլադն ասաց.

— Չթողնես հանգչի, մինչև խոսքս վերջացնեմ:

Ես շփոթված նայում էի նրան, երբ հանկարծ հետևից ուժեղ հարվածեցին ոտքով:

— Դե ասեք, հիմար չի՞ այս սևամորթը,— բղավեց Կաբրիոլը:— Տերը սիգար է տալիս, իսկ նա նազ է անում:

Կատակը շատ զվարճալի թվաց ամբոխին, և բոլորն սկսեցին քրքջալ ու ծափահարել:

Ես երբեք չէի ծխել և չգիտեի, ինչ անել. ծուխը ներս քաշել, թե՞, ընդհակառակը, բաց թողնել: Բայց հիմա հարցուփորձի ժամանակ չէր: Կաբրիոլը մի ձեռքով բռնեց կզակս, մյուսով վեր քաշեց քիթս, իսկ Լապուլադը արագորեն սիգարը խցկեց բերանս: Ըստ երևույթին, ես սաստիկ ծամաձուռում էի դեմքս, որովհետև հանդիսատեսները ծիծաղից մեռնում էին:

Գեներալը հանեց իր փետրափնջով գլխարկը: Լռություն տիրեց:

— Ձեր առջև,— ասաց նա,— կանգնած է հռչակավոր Լապուլադը: Իսկ ո՞ւր է նա: Միթե՞ այս շառլատանն է գեներալի հագուստով... Նույն ինքը: Իսկ ինչո՞ւ, կհարցնեք դուք, այդ հռչակավոր մարդը հագնվել է խեղկատակի նման: Նրա համար, որպեսզի դուր գա ձեզ, ողորմած տերեր: Թեև ձեզանից ամեն մեկն առանձին վերցրած պատվարժան մարդ է, բայց երբ հավաքվում եք միասին, դառնում եք իսկական բերանբացներ:

Ամբոխի մեջ լավեցին դժգոհ բացականչություններ ու փնթփնթոց:

Ամեննին չշփոթվելով, Լապուլադն իմ բերանից հանեց սիգարը, մի քանի անգամ հանգիստ ներս քաշեց ծուխը, այնուհետև, չնայած իմ վրդովմունքին ու զզվանքին, նորից բերանս մտցրեց:

— Է՛յ, դուք,— շարունակեց նա,— սաղավարտով, փոկով ու կարմիր քթով պարոն, ի՞նչ եք մոթմոթում: Մի՞թե վիրավորվեցիք, երբ ինձնից լսեցիք, որ տանը պատվարժան մարդ եք, իսկ այստեղ, հրապարակում, բերանբաց: Այդ դեպքում ներողություն եմ խնդրում... Ես ուրիշ կերպ կասեմ... Տանը կատակասեր եք, իսկ այստեղ իսկական իմաստուն:

Ամբոխն հրճվանքից ոտքերով դոփեց: Երբ աղմուկը մի քիչ դադարեց, Լապուլադը շարունակեց.

— Այսպիսով, եթե ես գեներալի շորեր չհագնեի, դուք բերաններդ բաց արած չէիք կանգնի այստեղ և աչքներդ չէիք չոփ վրաս, այլ հանգիստ կգնայիք ձեր ճանապարհով: Բայց ես ճանաչում եմ մարդկանց և գիտեմ, ինչպես նրանց թակարդը գցել: չենց դրա համար էլ Գերմանիայից կանչել եմ երկու հռչակված երաժշտի, որոնց տեսնում եք ձեր առջև, մեր խումբն եմ հրավիրել հայտնի Ֆիլյասին, որի փառքը թնդում է ամբողջ աշխարհում, ինչպես նաև Լաբույիին՝ ահա նա կանգնած է ձեր առջև և, վերջապես, զմայլելի Կաբրիոլին, որին կարիք չկա գովելու, քանի որ ինքներդ արդեն ըստ արժանվույն գնահատեցիք: Դուք կանգնած եք այստեղ այն պատճառով, որ ձեր հետաքրքրությունը շարժվել է և ասում եք. «Տեսնեք, թե հիմա ինչ են ցույց տալու»: Է՛յ, պարոնայք երաժիշտներ, մի ուրախ բան նվագեք մեզ համար:

Ես մինչև հիմա անգիր հիշում եմ այդ ելույթը, որ Լապուլադը ձևափոխում էր նայած տեղին ու հանդիսատեսներին, և կարող եմ բառ առ բառ կրկնել: Ջարմանալի է, թե ինչու որոշ հիմարություններ ընդմիջտ պահպանվում են հիշողության մեջ, մինչդեռ օգտակար բաները դժվար են հիշվում:

Սակայն առաջին օրը միտքս մնաց միայն նրա ելույթի սկիզբը: Միգարի ծխից սիրտս խառնում էր և երբ մտա բալագան, կարծես բթացած լինեի ու շարժվում էի, ինչպես երագում: Դերի համաձայն՝ ես պետք է բացեի գագանների վանդակների դռները, ուր մտնելու էր Դյելետտան:

Կարծես մառախուղի միջից տեսա, որ նա մոտեցավ ինձ: Մի ձեռքով բռնել էր մտրակը, իսկ մյուսով օղային համբույրներ էր հղում ամբոխին: Բորենիները թեթև կաղալով դանդաղ պտտվում էին վանդակում, իսկ առյուծը, մոռութը թաթերին դրած, կարծես ննջում էր:

— Ստրուկ, բաց արա դուռը,— հրամայեց Դյելետտան ու մտավ վանդակը:

Առյուծը չշարժվեց: Այդ ժամանակ իր փոքրիկ ձեռքերով նա բռնեց գագանի ականջներից ու սկսեց ամբողջ ուժով ձգել դեպի վեր, աշխատելով բարձրացնել նրա գլուխը: Առյուծը չէր շարժվում:

Առջիկն անհամբերությամբ մտրակեց նրա մեջքը: Առյուծը վեր թռավ, կարծես ինքնանետիչով վեր նետեցին, կանգնեց հետևի թաթերի վրա և այնպես սպառնալիորեն մոնչաց, որ ոտքերս թուլացան:

Սարսափից ու ծխելուց առաջացած սրտախառնոցից աչքերիս առաջ մթնեց, շուրջս ամեն ինչ պտույտ եկավ, և ես կիսաուշաթափ վայր ընկա:

Ճարպիկ ու հնարամիտ Լապուլադը կարողանում էր օգտվել ամեն մի պատահականությունից:

— Տեսնում եք, ինչ սարսափելի է այս առյուծը,— դիմեց նա ժողովրդի — Նրա մոնչոցը լսելով, նույնիսկ անապատի զավակները ուշաթափ վայր են ընկնում:

Իմ ուշաթափությունը կեղծ չէր, դա երևում էր առաջին հայացքից, և հասարակությունը հասկացավ, որ այդ տեսարանը նախապատրաստված չէր: Բոլորն սկսեցին ուժգին ծափահարել, իսկ Կաբրիոլը ձեռքերի վրա ինձ դուրս տարավ սրահից և հնոտիքի պարկի նման նետեց բալազանի հետևում ինչ-որ տեղ:

Մինչ ներկայացումը շարունակվում էր, ես պառկել էի այնտեղ ու շատ վատ էի զգում ինձ, ուժ չունեի տեղիցս շարժվելու, բայց լսում էի այն ամենը, ինչ կատարվում էր շուրջս. և՛ առյուծի մոնչոցը, և՛ բորենիների ոռնոցը, և հասարակության հիացմունքի ճիչերը:

Հետո լավեց հեռացող ամբոխի ոտնաձայնը, իսկ մի քանի րոպե հետո ինչ-որ մեկը քաշեց թևս: Դա Դյելետտան էր: Նրա ձեռքին մի բաժակ ջուր կար:

— Առ, մի քիչ շաքարաջուր խմիր,— ասաց նա:— Ինչ հիմարն ես, որ այդպես վախեցար ինձ համար: Բայց միևնույն է, դու բարի տղա ես:

Դրանք առաջին բառերն էին, որով նա դիմեց ինձ այն պահից, ինչ ես ընկել էի Լապուլադի թատերախումբը: Նրա կարեկցանքը հուզեց ինձ: Հիմա այնպես միայնակ չէի զգում ինձ: Ֆիլյասն ու Լաբույին շարունակ խաղեր էին սարքում իմ գլխին, այդ պատճառով ես երջանիկ էի, որ ընկերուհի էի գտել:

Հաջորդ օրը որոշեցի շնորհակալություն հայտնել Դյելետտային: Բայց աղջիկը չլսեց ինձ, նա արագ երեսը շուռ տվեց և չպատասխանեց ո՛չ խոսքով, ո՛չ հայացքով: Ստիպված էի հրաժարվել նրա հետ ընկերություն անելու մտքից: Այդ ժամանակ վճռեցի, որ բավական է մնամ այստեղ, ուր շարունակ աքացիներ ու բռունցքի հարվածներ եմ ստանում և ձիերին խնամելով, ցերեկը գազանների վանդակները մաքրելով, իսկ երեկոները նեգրի դեր կատարելով, ես անկասկած արդեն հատուցել եմ բամբակե հին տաբատի ու բլուզի արժեքի դիմաց, ուստի կարող եմ մաքուր խղճով հեռանալ բալազանից և ուղևորվել Հավր: Իմ սիրելի մայրի՛կ: Մի՞թե ես նրան լքեցի, որ դառնամ թափառաշրջիկ դերասան: Ա՛խ, եթե նա տեսներ ինձ, եթե իմանար, ինչպես եմ ապրում...

Մոտենում էր աշունը: Գիշերներն ավելի ցուրտ էր, ցերեկը հաճախ անձրև էր գալիս: Շուտով հնարավոր չի լինի գիշերել դաշտում: Հարկավոր է շտապել, մանավանդ որ Լապուլադը պատրաստվում էր Գիբրեից Լուարայով իջնել ներքև և հեռանալ Հավրից:

Բայց այս անգամ ես որոշեցի ավելի շրջահայաց լինել և նախօրոք նախապատրաստվեցի ճանապարհորդության: Սկսեցի չոր հացի պաշար հավաքել, իսկ ազատ ժամանակ հին կոշիկների ձուլքերից ինձ համար ոտնամաններ պատրաստել: Ես մշակել էի մանրամասն պլան և որոշել էի փախչել հենց առաջին գիշերը, երբ խումբը ճանապարհ ընկնի:

Երեկոյան, փախուստի նախօրյակին, երբ զբաղված էի կոշիկներս պատրաստելով, անսպասելիորեն ինձ մոտեցավ Դյելետտան:

— Ուզում ես փախչել լ,— կամաց հարցրեց նա:

Ես թափահարեցի ձեռքս, որպեսզի նա լռի:

— Ամբողջ շաբաթ հետևում եմ քեզ,— շարունակեց նա:— Դու հացի պաշար ես թաքցրել վարսակի կերամանի տակ, իսկ դա անտեղի չի: Բայց մի վախենա, ես չեմ մատնի քեզ: Իսկ եթե համաձայն ես, արի միասին փախչենք:

— Ուզում ես հորդ լքե՞լ,— ասացի ես այն մարդու խիստ տոնով, որը սեփական փորձով գիտի, թե ինչ է նշանակում ծնողներից հեռանալ:

— Իմ հո՞րը,— զարմացավ նա:— Բայց նա ամենին էլ հայրս չի, ոչ էլ հսկա կինը մայրս է... Սակայն այստեղ կարող են ականջ դնել մեզ: Գնա և պատնեշի մոտ սպասիր ինձ, կաշխատեմ գալ քեզ մոտ: Եթե դու բարի տղա ես, կօգնես ինձ, իսկ ես էլ քեզ կօգնեմ:

Երկու ժամից ավելի սպասեցի պատնեշի մոտ, իսկ նա չէր գալիս: Ես արդեն մտածում էի, որ Դյելետտան ծիծաղեց ինձ վրա, երբ հանկարծ նա հայտնվեց:

— Գնանք թաքնվենք կաղնուտում,— առաջարկեց նա:— Պետք չի, որ մեզ միասին տեսնեն, թե չէ կարող են գլխի ընկնել:

Ես գնացի նրա հետևից: Երբ մտանք կաղնուտի ու լաստենու խիտ թփերի մեջ, որտեղ մեզ ոչ ոք չէր կարող տեսնել, Դյելետտան կանգ առավ:

— Նախ պետք է քեզ պատմեմ իմ պատմությունը,— ասաց նա:— Այն ժամանակ կհասկանաս, թե ինչու եմ ես էլ ուզում փախչել:

Թեև Դյելետտայի հետ մենք գրեթե հասակակիցներ էինք, բայց նա ինձ հետ խոսում էր այնպիսի տոնով, ինչպես չափահաս մարդն է խոսում երեխայի հետ, և ես ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե ինչու այդ ինքնավստահ աղջիկը օգնության կարիք է զգում ինձ նման մի խղճուկ տղայից: Սակայն նա ինձ դուր էր գալիս և, բացի այդ, գիտեր իմ գաղտնիքը, այդ պատճառով ես չառարկեցի և համաձայնվեցի դառնալ նրա հավատարմատարը:

— Լապուլադը հայրս չէ,— սկսեց նա:— Ես չեմ հիշում իմ հորը, որովհետև նա մահացել է, երբ ես բոլորովին փոքր եմ եղել: Մայրս արդուզարդի ապրանքներ էր վաճառում Փարիզում, դեպի Կենտրոնական շուկան տանող փողոցում: Ես չեմ հիշում ո՛չ մորս ազգանունը, ո՛չ էլ այն փողոցի անունը, որտեղ մենք ապրում էինք: Հիշողությանս մեջ մնացել է միայն, որ մայրս երիտասարդ էր ու գեղեցիկ, որ նա ուներ շատ երկար հրաշալի խարսոյաշ մազեր, և երբ եղբորս հետ խաղում էինք նրա անկողնում, մենք թաքնվում էինք նրա մազերի մեջ:

Նա շատ էր սիրում մեզ, հաճախ համբուրում էր և երբեք չէր ծեծում: Եղբայրս մի քիչ մեծ էր ինձնից, նրա անունը Էժեն էր: Մեր փողոցով շատ կառքեր էին անցնում: Առավոտյան սալահատակի վրա կարելի էր տեսնել կաղամբի, գազարի ու ամեն տեսակ բանջարեղենի կույտեր, իսկ մեր տան շենքից երևում էր բարձր եկեղեցու ժամացույցի մեծ ոսկեգօծ թվատախտակը: Ժամացույցից վերև մի փոքրիկ աշտարակ կար, և այդ աշտարակի վրա երկար սև սլաքներն ամբողջ օրը շարժվում էին մերթ այս, մերթ այն կողմ: Անցյալ տարի ես հարցուփորձ արեցի Փարիզից եկած ծաղրածուին, և նա ինձ ասաց, որ դա Մուրբ Եվստաֆի եկեղեցին է, իսկ սև մեծ սլաքները՝ հեռագրատունը:

Մայրս աշխատում էր ամբողջ օրը և ոչ մի տեղ չէր գնում մեզ հետ, իսկ մենք հաճախ զբոսնում էինք նրա աշակերտուհիներից որևէ մեկի հետ: Մի անգամ, դա ամռանն էր, որովհետև սաստիկ շոգ էր, և փողոցն էլ շատ փոշոտ, մենք գնացինք տոնավաճառ, որտեղ քաղցրաբլիթներ էին վաճառում: Դա

այն տոնավաճառն է, որ լինում է «Գահական ուղեկալի» մոտ: Դու, հավանաբար, բազմիցս լսել ես, ինչպես են մեր բալագանում խոսում այդ մասին: Չեմ հիշում, թե ինչու եղբայրս չեկավ մեզ հետ, այլ մնաց տանը:

Ես առաջին անգամ էի տեսնում ակրոբատների, և նրանք ինձ շատ դուր եկան: Ես ուզում էի այցելել բոլոր բալագանները, բայց մայրիկի աշակերտուհին դրամ չունեի, իսկ ինձ մոտ կար ընդամենը չորս սու, որ մայրիկը տվել էր քաղցրաբլիթների համար: Նա վերցրեց այդ փողը, և մենք մտանք վրաններից մեկը:

«Այս ի՞նչ վրան է»:

«Ախ, հիմարիկ, դու ոչինչ չգիտես: Սա այնպիսի բալագան է, որտեղ ցույց են տալիս զանազան արտասովոր բաներ, հսկա կին, վարժեցրած փոկ և ուրիշ շատ հետաքրքիր բաներ...»

Այստեղ իրոք ցույց էին տալիս մեծ տաշտակում լողացող երկու փոկ: Ես չնկատեցի, ինչպես բալագանի տերը խոսքի բռնվեց իմ դայակի հետ: Նա երկար նայեց ինձ ու հայտարարեց, որ ես սիրունիկ եմ: Նա մեզ հետ միասին դուրս եկավ, և մենք գնացինք գինու կրպակը: Փոքրիկ, մութ սենյակում մեզնից բացի ոչ ոք չկար: Ես շատ հոգնել էի ու շոգում էի, և մինչ նրանք ինչ-որ ամանից քաղցր գինի էին խմում, ես ննջեցի:

Երբ արթնացա, արդեն բոլորովին մութ էր, և մայրիկի աշակերտուհին սենյակում չէր:

Ես հարցրեցի բալագանի տիրոջը, թե ուր է գնացել: Նա պատասխանեց, եթե ուզում եմ, կարող եմք գնալ նրա մոտ: Ես համաձայնվեցի, և մենք գնացինք: Փողոցում շատ մարդիկ կային, բալագանները վառ լուսավորված էին, ամեն տեղից երաժշտության ձայն էր գալիս: Տղամարդը քաշում էր ձեռքիցս, այնպես որ ես հագիվ էի հասնում նրա հետևից:

Շուտով մենք դուրս եկանք ամբոխի միջից և հայտնվեցինք մի լայն ճանապարհի վրա, որի երկու կողմերում ծառեր էին տնկած: Այստեղ լապտերներ համարյա չկային, և միայն երբեմն հանդիպում էին փոքրիկ առանձնատներ:

Ես սկսեցի վախենալ: Տղամարդն զգաց, որ ավելի դանդաղ եմ քայլում և առաջարկեց գրկած տանել ինձ, բայց ես չհամաձայնվեցի: Նա ուզեց գոռով գրկել ինձ, այդ ժամանակ սկսեցի բղավել: Մեր կողքից անցնող զինվորները կանգ առան:

«Ինչո՞ւ ես գոռում,— ասաց տղամարդը,— չէ՞ որ մենք գնում ենք մայրիկի մոտ»:

Ես նորից գնացի նրա հետևից: Ճանապարհն ինձ ավելի երկար թվաց, քան ցերեկը, երբ գնում էինք տոնավաճառ, բացի այդ, ես բոլորովին չճանաչեցի այդ փողոցը: Մենք անցնում էինք բարձր, մոայլ պատերի, հսկայական դարպասների մոտով, ուր կանգնած էին ժամապահներ, այնուհետև մտանք անտառ, որին վերջ չկար: Այստեղ ես այնպես սարսափեցի, որ կանգ առա:

«Ճանապարհը շարունակելո՞ւ ես, անպիտան աղջիկ,— կոպիտ գոռաց տղամարդը:— Եթե կամակորոթյուն անես, ես քեզ ցույց կտամ»:

Չորս կողմը ոչ ոք չկար, նա ուժեղ քաշեց թևիցս, և ես, դառնորեն լաց լինելով, գնացի նրա հետևից: Պատկերացրու, չէ՞ որ ընդամենը հինգ տարեկան էի: Ես վախենում էի ամեն ինչից և հետո կարծում էի, թե գնում ենք մայրիկի մոտ:

Չգիտեմ, թե որքան ժամանակ քայլեցինք, հոգնածությունից հագիվ էի ոտքերս շարժում, երբ հանկարծ մեր առջև սկսեցին փայլփլել գյուղի ճրագները: Գյուղի մուտքի առջև, հրապարակում, փայտե ցանկապատի մոտ կանգնած էին թափառաշրջիկ դերասանների սայլեր: Մենք մտանք դրանցից մեկի մեջ: Մեզ դիմավորեց մի կին, որ ոտքեր չուներ, նա օղի էր խմում:

Տղամարդը կամաց ինչ-որ բան շշտացնում նրա ականջին: Եվ նրանք երկուսով երկար գնում էին ինձ:

«Մի՞ թե չես տեսնում,— ասաց կինը,— որ նրա այտին խալ կա»:

Ահա այստեղ կարմիր հաղարջի հատապտղիկի պես մի խալ ունեի, հիմա դրա տեղը փոքրիկ փոս է մնացել:

«Դատարկ բան է,— պատասխանեց տղամարդը:— Հեշտությամբ կարելի է հեռացնել»:

Ես նորից սարսափեցի և հարցրեցի, թե որտե՞ղ է մայրիկը:

«Մայրիկը վաղը կգա, ջանիկս,— ասաց կինը,— իսկ հիմա խելոք պառկիր ու քնիր»:

«Նա, երևի, քաղցած է»,— նկատեց տղամարդը:

«Ոչինչ, հիմա կկերակրենք մեր սիրունիկին»:

Այստեղ միայն ես տեսա, որ այդ կինը բոլորովին ոտքեր, չունի և շարժվում է ամբողջ մարմնով գլորվելով ու ձեռքերի վրա հենվելով: Դա ինձ խիստ զարմացրեց ու նորից սարսափեցրեց: Բայց ընթրիքին նա ինձ տվեց շատ համեղ կերակուր՝ վառարանից հենց նոր հանած կանաչ ոլոռ, և ես մեծ հաճույքով սկսեցի ուտել:

«Լավ աղջիկ է,— ասաց կինը, նկատելով, թե ինչպիսի ազատությամբ եմ ուտում ոլոռը նույնիսկ առանց աղի ու յուղի: Դժվար չի լինի նրան կերակրել»:

Նա չգիտեր, որ ոլոռն իմ ամենասիրելի կերակուրն էր, իսկ տանը դրանից չէին տալիս: Փոքր հասակում ես հաճախ հիվանդանում էի, և բժիշկը խորհուրդ էր տվել ինձ կերակրել տապակած մսով:

«Իսկ հիմա պառկիր քնիր»,— ասաց կինը, երբ վերջացրի ուտելը:

Եվ նա մի կողմ քաշեց խտակտավի վարագույրը, որով անջատված էր սայլի հետևի մասը: Այնտեղ կար երկու անկողին:

«Ա՛յ թե զվարճալի է սայլում քնելը»,— մտածեցի ես և մի ակնթարթում քունս տարավ:

Երբ արթնացա, ինձ թվաց, թե մահճակալս պարում է: Սկզբում կարծեցի, թե երագում եմ տեսնում, բայց շարունակում էի մի կողքից մյուսը ճռճվել: Այնուհետև լսեցի զանգակների դողանջն ու անիվների ճռռոցը: Իմ մահճակալի վերևը մի փոքրիկ լուսամուտ էր սարքած, որից լույս էր թափանցում: Ես ծնկաչոք կանգնեցի ու դուրս նայեցի: Սկսել էր լուսանալ, ծառերն արագ անցնում էին իրար հետևից: Հեռվում, մարգագետնի մյուս կողմում շողշողում էր գետը: Ես հասկացա, որ մահճակալս գնում է սենյակի հետ միասին և հիշեցի այն ամենը, ինչ կատարվել էր ինձ հետ: Սկսեցի բարձրաձայն կանչել. «Մայրիկ, մայրի՛կ»: Մի անձանոթ կոպիտ ձայն պատասխանեց. «Մայրիկի մոտ ենք գնում»:

Բայց ես շատ էի վախենում և սկսեցի ավելի բարձրաձայն կանչել:

Այդ ժամանակ սայլ մտավ մի մարդ, որին առաջ չէի տեսել: Նա այնպիսի հսկայական հասակ ուներ, որ զինվորական գլխարկով նրա գլուխը դիպչում էր սայլի առաստաղին: Նա ասաց.

«Եթե բղավես, քեզ կսպանեն»:

Պատկերացնում ես, թե ինչպես վախեցա ու ճչացի: Իսկ նա ձեռքերը պարզած մոտեցավ ինձ, և ես որոշեցի, որ նա պատրաստվում է ինձ խեղդել ու, արցունքներս կուլ տալով, լռեցի:

Երբ նա դուրս եկավ, սկսեցի փնտրել զգեստս, որպեսզի հագնվեմ: Բայց ոչ մի տեղ չգտա և, չհամարձակվելով հարցնել, թե ուր են դրել, մնացի անկողնում պառկած:

Սայլը շարունակում էր գլորվելով առաջ շարժվել, անցնելով մերթ սալահատակի, մերթ ավազի վրայով: Լուսամուտից տեսնում էի, ինչպես ենք անցնում ինչ-որ գյուղերի մոտով: Վերջապես սայլը կանգ առավ և ինձ մոտ եկավ անոտք կիներ:

«Իսկ մայրի՞ կը: Որտե՞ղ է իմ մայրիկը»,— հարցրեցի ես:

«Շուտով կգնանք նրա մոտ»,— պատասխանեց կիներ:

Նրա սիրալիք ձայնը մի փոքր սիրտ տվեց ինձ:

«Ուզում եմ վեր կենալ»:

«Ժամանակն է, ժամանակն է: Հապա մի հագնվիր, ահա քո շորը»:— Եվ նա մատնացույց արեց ինչ-որ մի զգվելի քուրջ:

«Դա իմ զգեստը չէ»:

«Ինչ արած, այնուամենայնիվ ստիպված ես հագնել»:

Ես ուզում էի բղավել ու ծվեն-ծվեն անել այդ կեղտոտ լաթը, բայց անոտք կիներ այնպիսի մի արտահայտիչ հայացք գցեց վրաս, որ ես չհամարձակվեցի:

Երբ հագա այդ զգվելի շորը, անոտք կիներ թույլ տվեց ինձ դուրս գալ սայլից: Մենք կանգ էինք առել մի մեծ դաշտավայրում, չորս կողմը, որքան աչքդ կտրում է, փոված էին կանաչ դաշտեր:

Զինվորական գլխարկով մարդը խարույկ էր վառել մեծ ճանապարհին և երեք փայտերով եռոտանի սարքելով, դրանից կախել էր մի փոքրիկ կաթսա: Ես շատ քաղցած էի և հաճույքով լսում էի կաթսայում դղլացող ապուրի ձայնը: Անոտք կիներ դեռ նստած էր սայլում: Տղամարդը մոտեցավ նրան, գրկեց ու իջեցրեց գետին:

«Չե՞ս մոռացել խալի մասին»,— ինձ նայելով հարցրեց կիներ:

«Իսկապես, բոլորովին մոռացել եմ»:

Այդ չար մարդը բռնեց ինձ, սեղմեց իր ոտքերի մեջ և այնպես ամուր ոլորեց թևերես, որ ես չէի կարող շարժվել: Անոտք կիներ բարձրացրեց գլուխս և մկրատով կտրեց այտիս խալը:

Արյան շիթը դուրս ցայտեց և ողողեց դեմքս ու հագուստս: Ես ենթադրեցի, թե այդ կիներն ուզում է ինձ մորթել և սկսեցի սաստիկ բղավել, աշխատելով կծել նրան: Իսկ նա, ոչ մի ուշադրություն չդարձնելով իմ աղաղակների վրա, ինչ-որ բանով այրեց այտս, և արյունն իսկույն կանգ առավ:

«Բաց թող նրան»,— ասաց նա տղամարդուն:

Անոտք կինը կարծում էր, որ ես անմիջապես կփախչեմ: Ինչպե՛ս չէ: Ես նետվեցի նրա վրա ու սկսեցի ամբողջ ուժով ծեծել:

Նա, երևի, բարկությունից կխեղդեր ինձ, բայց տղամարդը գրկեց ինձ, նետեց սայլի մեջ և դուռը կողպեց: Ամբողջ օրը ոչինչ չտվեցին ուտելու: Միայն երեկոյան դուռը բացեցին ու ինձ դուրս թողեցին: Ամենից առաջ ես հարցրեցի մայրիկի մասին:

«Նա մահացել է»,— պատասխանեց անոտք կինը:

Բայց սայլում մենակ նստած ժամանակ ես շատ բան էի հասկացել:

«Մտո՛ւմ եք: Մայրիկս ողջ է, իսկ դուք գող եք»:

Պատասխանի փոխարեն նա բարձրաձայն քրքջաց, որը խիստ հուսահատեցրեց ինձ:

Մոտավորապես մեկ ամիս ապրեցի անոտք կնոջ ու զինվորական գլխարկով մարդու հետ: Նրանք կարծում էին, թե քաղցած պահելով ինձ կհնազանդեցնեն, ինչպես սանձահարում են գազաններին, բայց այդ բանը չհաջողվեց նրանց: Որպեսզի ինձ կերակրեն, ես կատարում էի այն ամենը, ինչ հրամայում էին, բայց ուտելուց հետո նորից դադարում էի նրանց լսել: Անոտք կինը հասկացավ, որ երբեք չեմ ների նրան այն վիրահատության համար, որ կատարեց ինձ հետ և բազմիցս ասում էր, թե վախենում է դանակով խփեմ իրեն:

Վերջապես մենք հասանք մի օտար երկիր, որտեղ հացին «brot» էին ասում և որտեղ շատ գետեր կային: Տեսնելով, որ չեն կարողանում ինձ հետ գլուխ հանել, նրանք ինձ վաճառեցին մի «կույր» մարդու: Նա ինձնից ու քեզնից վատ չէր տեսնում, բայց կույր էր ձևանում, որպեսզի ողորմություն խնդրեր: Ամբողջ օրը ես պետք է ձեռքս մեկնած կանգնեի կամուրջի վրա: Բարեբախտաբար, նա մի պտուղ էլ ուներ և երեկոյան, երբ վերադառնում էինք տուն, ես կարող էի խաղալ շան հետ: Եթե այդ շունը չլիներ, ես, հավանաբար, տխրությունից կմեռնեի:

Ես տանել չէի կարողանում ողորմություն խնդրելը և արցունքն աչքերիս չէի ընկնում այն մարդկանց հետևից, ովքեր ոչինչ չէին տալիս, իսկ դրա համար «կույրն» ամեն օր փայտով ծեծում էր ինձ: Վերջապես «կույրը» ձանձրացավ ծեծելուց և ինձ վերավաճառեց թափառաշրջիկ երաժիշտներին: Հիմա ես պետք է երաժիշտների ելույթից հետո ժողովրդից դրամ հավաքեի:

Էլ ո՞ւր ասես, որ չեղանք նրանց հետ: Ես տեսել եմ Անգլիան, Հյուսիսային Ամերիկան, որտեղ ձմեռն այնքան ցուրտ է լինում, որ մարդիկ ճանապարհորդում են ոչ թե անիվների, այլ ձյան վրա սահող սահնակների վրա: Այդ երկիրն ընկնելու համար մենք ստիպված եղանք մի ամբողջ ամիս լողալ շոգենավով և կտրել-անցնել օվկիանոսը:

Երբ նորից վերադարձանք Ֆրանսիա, երաժիշտներն ինձ վաճառեցին Լապոլադին: Նա որոշեց ինձ դարձնել ակրոբատ, իսկ մինչ այդ ես կերակրում էի գազաններին: Այն ժամանակ մենք ունեինք երեք առյուծ: Դրանցից մեկը, որ շատ կատաղած էր, շուտով բարեկամացավ ինձ հետ և դարձավ բոլորովին ձեռնասուն: Երբ նրան ուտելիք էի տալիս, նա լիզում էր ձեռքերս:

Մի անգամ, բարկանալով, որ չեմ կարողանում ինչ-որ համար կատարել, Լապոլադն սկսեց մտրակով ծեծել ինձ: Ես բարձրաձայն բղավեցի: Դա տեղի էր ունենում իմ առյուծի վանդակի մոտ: Տեսնելով, որ ինձ ծեծում են, բարի առյուծը գազազեց, թաթը դուրս հանեց վանդակից, բռնեց Լապոլադի ուսից և քարշ տվեց իր մոտ: Լապոլադը փորձում էր դուրս պրծնել, բայց առյուծը

ճանկերը խրել էր նրա մարմնի մեջ և պահում էր ինչպես թակարդում: Եթե օգնության չհասնեին մետաղաձողերով զինված մարդիկ, Լապուլադի վերջը վատ կլիներ:

Այդ դեպքից հետո Լապուլադը երկու ամիս հիվանդ պատկեց: Հենց այդ ժամանակ էլ նրա գլխում միտք ծագեց՝ ինձ դարձնել զագաններ վարժեցնող: «Առյուծները սիրում են քեզ,— ասաց տիրուհին,— նրանք քեզ չեն ուտի: Իսկ եթե որևէ բան պատահի, ծեր առյուծը քեզ կպաշտպանի»:

Ես գերադասում էի գործ ունենալ զագանների հետ, քան զբաղվել օդային ակրոբատիկայով, և այդ ժամանակվանից աֆիշներն ազդարարում են. «Հոչակավոր Դյելետտան իր հրապույրով սանձահարում է անապատի կատաղի բնակիչներին»:

Մի՞ թե Լապուլադը հիմար չէ, որ դրանց անվանում է անապատի կատաղի բնակիչներ: Ախր նրանք շներից էլ հեզ են: Ա՛խ, եթե կենդանի լիներ իմ լավ մեծ Շեկոն, դու կտեսնեիր, թե ինչեր էի անում նրա հետ: Երեք առյուծներին էլ նստեցնում էի միևնույն վանդակում: Երկուսին այնքան էի մտրակում, որ նրանք սկսում էին զագագել, իսկ այդ ժամանակ ասում էի Շեկոյին. «Պաշտպանիր ինձ»: Նա անմիջապես առաջ էր նետվում այնպիսի սպառնալի մոնյունով, որ բոլորը սոսկում էին: Այդ ժամանակ ես ձևացնում էի, թե ուշաթափվում եմ, իսկ նա լիզում էր դեմքս: Վանդակը բաց էին անում, և Շեկոն երախի մեջ առած տանում էր ինձ: Եթե միայն տեսնեիր, թե ինչպես էին ինձ ծափահարում: Ծաղկեփնջեր, կոնֆետներ, քաղցր կարկանդակներ էին նետում, գեղեցիկ կանայք համբուրում էին ինձ:

Այնպիսի հաջողություն ունեի, որ Լապուլադին առաջարկեցին մեկնել Փարիզ: Պատկերացնում ես, որքան երջանիկ էի. Փարիզում ես կարող էի փախչել ու գտնել մայրիկիս...

Սակայն մեկնելու օրը Շեկոն հանկարծ հիվանդացավ: Ձմեռ էր, իսկ առյուծն այնքան մրսկան էր, որ շարունակ դողում էր ցրտից: Ա՛խ, ինչպես էի ես այն ժամանակ խնամում նրան... Գիտես, ես նույնիսկ քնում էի նրա հետ միևնույն վերմակի տակ: Բայց ոչինչ չօգնեց՝ առյուծն այնուամենայնիվ սատկեց: Ինչպե՞ս էի ես վշտանում: Նույնիսկ կարծում էին, թե ես էլ կմեռնեմ: Մեր խումբը չմեկնեց Փարիզ, և ես ստիպված էի հրաժարվել մայրիկին որոնելու մտքից:

Դրանից հետո բազմիցս մտածել եմ փախուստի մասին: Սակայն մենակ չեմ համարձակվում, իսկ Ֆիլյասին ու Լաբույիին չեմ վստահում: Բայց դու... դու մեր բալագանից չես... Կուզե՞ս մայրիկիս փնտրելու գործում օգնել ինձ: Կտեսնես, թե նա որքան երջանիկ կլինի և ինչպիսի ջերմությամբ կհամբուրի քեզ...

Հավրի փոխարեն գնալ Փարիզ... Այդժամ ես էլ, իմ հերթին, Դյելետտային պատմեցի ամբողջ ճշմարտությունն իմ մասին:

— Ինչ կա որ,— ասաց նա,— նախ կգնանք Փարիզ, իսկ հետո մայրիկը կվճարի քո ճանապարհածախսը մինչև Հավր, և մենք երկուսով կգանք քեզ ուղեկցելու:

Ես փորձում էի նրան բացատրել, թե որքան դժվար է ոտքով գնալ մեծ ճանապարհներով, ինչպես հաճախ ուտելու բան չի լինում, քնելու տեղ չի լինում:

— Ես հավաքել եմ յոթ ֆրանկ և ութ սու,— ասաց Դյելետտան:— Դա կբավականացնի ուտելու համար, իսկ գիշերը կքնենք դրսում: — Եթե դու հետս լինես, ես չեմ վախենա:

Ինձ խիստ շոյեց այդ վստահությունը, և ես համաձայնվեցի: Բացի այդ, չնայած իր դեռատի տարիքին, Դյելետտան այն մարդկանցից էր, որոնց հնարավոր չէ հակաճառել: Նրա խոշոր

կապույտ աչքերի հայացքը, որ ամոթխած էր ու համարձակ, մանկան պես միամիտ ու խորաթափանց, քնքուշ ու միաժամանակ հաստատուն, չէր հանդուրժում առարկություն կամ մերժում:

Մենք որոշեցինք Օրլեանում փախչել:

— Իսկ մինչ այդ,— ասաց Դյելետտան,— ես քեզ հետ չեմ խոսի մարդկանց ներկայությամբ: Դու չես կարողանում կեղծել, չափազանց լավ տղա ես և կարող ես մատնել քեզ:

Ես դժգոհությամբ դեմքս ծամածռեցի: Նա հասկացավ, որ ամենևին շոյված չեմ այդ գովասանքից:

— Ձեռքդ տուր ինձ,— ասաց նա և ամուր սեղմեց:— Հենց այն պատճառով, որ լավ տղա ես, ես հավատում եմ քեզ:

X

Դա տեղի ունեցավ շաբաթ օրը, երբ շուկայի օր էր և փողոցներում շատ մարդիկ կային: Ես անցնում էի մեծ հրապարակով և գնում դեպի մեր սայլերը, երբ տեսա, որ Ֆիլյասն ու Լաբույին կանգնեցին Թյուրքետենի մոտ, որը թուրքական թմբուկի ու տրոմբոնի հնչյունների տակ այնպիսի արագությամբ էր հանում հաճախորդների ատամները, որ ատամները միայն փայլում էին օդում, կարծես այդ մարդը ճան էր խաղում:

Այն ժամանակ Թյուրքետենը դեռ շատ երիտասարդ էր և այնպիսի հոշակ չէր վայելում, ինչպես ձեռք բերեց ավելի ուշ՝ նորմանդական ծնոտների հետ երեսուն տարի մարտնչելուց հետո: Մակայն արդեն այն ժամանակ էլ շնորհիվ իր հաստատակամ ձեռքի և խորամանկ ու ծաղրասեր բնավորությանը, նրա հոշակը տարածվել էր Ֆրանսիայի արևելյան բոլոր դեպարտամենտներում: Նրա սայլակառքի մոտ շարունակ մարդիկ էին խոնվում:

Վատ ակրոբատ լինելով, Լաբույին ճարպիկ ձեռնածու էր և շատ էր սիրում գանազան գվարձալի արարքներով հիմարացնել գյուղացիներին: Տեսնելով նրան Թյուրքետենին շրջապատող մարդկանց մեջ, ես անմիջապես հասկացա, որ եկել է այստեղ մի քիչ գվարձանալու և կանգ առա, որպեսզի տեսնեմ, թե ինչ օյիններ է սարքելու: Բայց իմանալով, որ այդ չարաճճությունների համար Լաբույինն հաճախ են պատժել, ես խելամտորեն որոշեցի մի կողմ կանգնել:

Եվ ինչպես կտեսնեք, լավ արեցի:

Այդ օրն ընկերներս գվարձանում էին նրանով, որ քթախոտ քաշող մարդկանց գրպաններից հանում էին ծխախոտատուփերը, իսկ քթախոտ չքաշողների գրպաններից՝ թաշկինակները: Ձեռքերի ճարպկությամբ աչքի ընկնող Լաբույին պրպտում էր գրպանները և դրանց պարունակությունը հանձնում Ֆիլյասին, որը ծխախոտի փոխարեն ծխախոտատուփերի մեջ լցնում էր սուրճի մրուր, իսկ թաշկինակներին շաղ տալիս ծխախոտ, որից հետո Լաբույին այդ բոլորը նորից մտցնում էր գրպանները:

Թյուրքետենի հրավիրումները լսելով, իրենց հերթին սպասող դժբախտ հաճախորդներին նայելով, թուրքական թմբուկի աղմուկից ու խաբեբայի բարձրաձայն աղաղակներից խլացած հանդիսականները կանգնել էին հմայվածի պես և որևէ բան չնկատելով, թույլ էին տալիս, որ պրպտեն իրենց գրպանները:

Արդեն մի քանիսը թաշկինակը հանելով ու դեմքին մոտեցնելով հանկարծ սկսում էին փռշտալ՝ մեծ հաճույք պատճառելով երկու դավադիրներին: Մյուսները քթախոտ քաշելիս այնպիսի անկեղծ ու ծիծաղաշարժ զարմանքով էին նայում իրենց ծխախոտատուփերին, որ ես էլ խիստ ցանկություն ունեցա մասնակցել այդ զվարճությանը:

Ես արդեն ուզում էի միանալ ընկերներին, երբ հանկարծ տեսա, որ նրանց հետևում հայտնվեց ոստիկանը և այն պահին, երբ Լաբուլյին ձեռքը մտցրեց մի տարեց կնոջ գրպանը, բռնեց նրա օձիքից: Ամբոխն սկսեց աղմկել ու հուզվել: Ֆիլյասին նույնպես բռնեցին:

Չսպասելով այդ պատահարի վախճանին, ես շտապեցի դուրս գալ ինձ շրջապատող ամբոխից և վախից դողալով նետվեցի դեպի մեր բալագանն ու պատմեցի տեղի ունեցածի մասին:

Մի ժամ հետո հայտնվեց ոստիկանությունը, որպեսզի խուզարկություն կատարի մեր սայլերում: Նրանք, իհարկե, ոչինչ չգտան, որովհետև Ֆիլյասն ու Լաբուլյին գողեր չէին: Այնուամենայնիվ նրանց բանտ նստեցրին: Լապոլադի ոչ մի բացատրությունը, որ փորձում էր ոստիկաններին համոզել, թե դա միայն երկու հիմար տղաների կատակ է, չհավատացին, իսկ նա չէր համարձակվում պնդել, վախենալով, որ իրեն էլ պատասխանատվության կենթարկեն որպես մեղսակից կամ առնվազն որպես թաքցնող: Ոստիկանությունն այնքան էլ չի սիրում թափառաշրջիկ դերասաններին: Եթե այն վայրում, ուր շրջում են դերասանները, որևէ հանցագործություն է կատարվում, ամենից առաջ կասկածն ընկնում է նրանց վրա: Եվ ոստիկանությունը նույնիսկ նրանց մեղավորության ապացույցներ չի պահանջում: Ընդհակառակը, այդ նրանք պետք է ապացուցեն, որ մասնակից չեն գործին:

Հանցանքի վայրում բռնված Ֆիլյասն ու Լաբուլյին չէին կարող ապացուցել, թե գողության համար չեն մտել ուրիշների գրպանները, այդ պատճառով էլ նրանց դատապարտեցին ազատազրկման ուղղիչ տանը մինչև չափահաս դառնալը:

Որոշվեց, որ հիմա, երբ խումբն այդպիսի կորուստ էր կրել, ես պետք է փոխարինեի այդ երկուսին: Երբ Լապոլադն այդ մասին հայտնեց ինձ, ես վճռականորեն առարկեցի. ես չեմ կարող և չեմ ցանկանում երեք տակ ծավելել ու թաքնվել արկղի մեջ:

— Լավ, արկղը կհանենք, — պատասխանեց Լապոլադը և քաշեց մազերս, որ նրա մոտ փաղաքշանք ու խրախուսում էր նշանակում:— Դու շատ ճկուն ես և լավ լարախաղաց կլինես:

Իմ նոր դերով ես առաջին անգամ ելույթ ունեցա Ալանսոնի տոնավաճառում:

Դժբախտաբար, դեռ շատ քիչ փորձ ու հմտություն ունեի և, թեպետ ամենահեշտ վարժություններն էի անում, ինձ հետ դժբախտ դեպք պատահեց, որը խանգարեց իրականացնել մեր փախուստը:

Դա տեղի ունեցավ կիրակի օրը: Ներկայացումներն սկսվեցին կեսօրին և առանց ընդմիջման շարունակեցինք մինչև երեկո: Խեղճ երաժիշտներն այնպես էին հոգնել, որ հազիվ էին նվագում իրենց գործիքները: Լապոլադն ինչ-որ անհասկանալի բաներ էր բղավում, նրա կոկորդից դուրս էին գալիս խռպոտ հնչյուններ, որ ավելի շուտ նման էին հաչոցի, քան մարդկային խոսակցության: Առյուծը չէր ուզում վեր կենալ և, երբ Դյելետտան սպառնում էր մտրակով, նա աղջկան նայում էր տանջված հայացքով, աղերսելով խնայել իրեն: Իսկ ես ուղղակի մեռնում էի հոգնածությունից, քաղցից ու ծարավից և հազիվ էի շարժում ոտքերս ու ձեռքերս:

Արդեն երեկոյան ժամը տասնմեկն էր, իսկ ժողովուրդը դեռ շարունակում էր խոնվել մեր բալագանի մոտ, և Լապոլադը որոշեց, որ պետք է մի վերջին ներկայացումը տանք:

— Ես իմ պարտքն եմ համարում գոհացնել հանդիսատեսին,— իր համառոտ ելույթում հայտարարեց նա:— Մենք չափազանց հոգնած ենք, բայց պատրաստ ենք տեղն ու տեղը մեռնել, միայն թե մի քիչ զվարճացնենք ձեզ: Ներս եկեք, ներս եկե՛ք:

Ներկայացումն սկսվում էր իմ ելույթով. սկզբում պետք է թռչեի չորս ձիերի վրայով, իսկ հետո զանազան վարժություններ կատարեի ձողանի ծայրին, որ պահում էր Կաբրիոլը: Թռիչքները չէին հաջողվում, և հասարակությունը դժգոհ մնաց: Երբ Կաբրիոլը վերցրեց ձողանը, ես ուզում էի գոռալ, որ այլևս ուժ չունեմ, սակայն Լապոլադի սպառնալի ու արտահայտիչ հայացքը, ինքնասիրությունս և հանդիսատեսների գրգռված ակնկալությունը ստիպեցին ինձ վճռել: Ես բարձրացա Կաբրիոլի ուսերին և բավական հեշտությամբ մագլցեցի ձողանի վրա:

Կաբրիոլն էլ շատ էր հոգնել և, երբ ձեռքերս հորիզոնական դիրք ընդունեցի, ուղիղ անկյուն կազմելով ձողանի հետ, զգացի, որ ձողանը տատանվեց: Սարսափից սիրտս նվաղեց, մատներս թուլացան և ձեռքերս տարածած վայր ընկա:

Ամբոխն ա՛խ արեց: Ես ընկել էի հինգ մետր բարձրությունից և ուժեղ զարկվել գետին: Եթե գետինը ծածկված չլիներ սղոցուքներով, ես, հավանաբար, ջարդ ու փշուր կլինեի: Ուսիս մեջ ինչ-որ բան ճթաց, և ես սուսկալի ցավ զգացի:

Սակայն անմիջապես էլ վեր թռա և ուզում էի, ինչպես հարկն է, գլուխ տալ հանդիսատեսներին, որ տեղներից վեր էին թռել ու սարսափով նայում էին ինձ, բայց չէի կարողանում աջ ձեռքս շարժել:

Ինձ շրջապատեցին, սկսեցին բոլորը միասին խոսել: Հրիբոցից շունչս սկսեց կտրվել, ես սուսկալի ցավ էի զգում և գիտակցությունս կորցրի:

— Դատարկ բան է,— հայտարարեց Լապոլադը:— Խնդրում ենք հանդիսատեսին զբաղեցնել տեղերը: Ներկայացումը շարունակվում է:

— Նա միայն չի կարող այլևս այսպես անել,— ձեռքերը գլխից վեր բարձրացնելով ասաց Կաբրիոլը,— այդ իսկ պատճառով բարի մարդիկ կարող են հանգիստ քնել:

Հասարակությունը ծափահարեց, և բոլորը բարձրաձայն ծիծաղեցին:

Եվ իսկապես, ամբողջ վեց շաբաթ ես չէի կարողանում անել Կաբրիոլի ցույց տված շարժումը, որովհետև անրակա կոտորվել էր:

Բալագաններում հազվադեպ են դիմում բժիշկների օգնությանը: Երբ ներկայացումն ավարտվեց, Լապոլադն ինքը վիրակապ դրեց ուսիս, իսկ դեղի փոխարեն ինձ թողեց առանց ընթրիքի:

Գազանների սայլում ես ապրում էի մենակ և արդեն երկու ժամից ավելի պառկած էի անկողնում, բայց չէի կարողանում քնել: Ինձ տանջում էր ծարավը, ես մի կողքից մյուսն էի շրջվում և ոչ մի կերպ չէի կարողանում հարմար դիրք գտնել հիվանդ ուսիս համար:

Հանկարծ ինձ թվաց, թե սայլի դուռը կամացուկ ճռռաց:

— Այդ ես եմ,— շշուկով ասաց Դյելետտան:— Քնած չե՞ս:

— Ոչ:

Նա արագ մոտեցավ մահճակալիս ու համբուրեց ինձ:

— Այդ բոլորն իմ մեղքով եղավ: Կներե՞ս արդյոք ինձ,— հարցրեց նա:

— Ինչի՞ համար ներեմ:

— Եթե ես քեզ չպահեի, այսօր չէիր ջարդվի:

Փոքրիկ պատուհանից ներս էր ընկնում լիալուսնի լույսը ու ողողում Դյելետտայի դեմքը, և ես տեսա, որ նրա աչքերը լի են արտասուքով: Ես որոշեցի ինձ պահել քաջի պես:

— Դատարկ բան է, — պատասխանեցի ես: — Մի՞ թե դու ինձ համարում ես փափկասուն:

Ես փորձեցի ձեռքս պարզել, սակայն սուր ցավ զգալով, սկսեցի հառաչեցի:

— Այ տեսնում ես, — ասաց Դյելետտան: — Այդ բոլորն իմ պատճառով է, իմ պատճառով:

Եվ կտրուկ շարժումով նա հետ ծալեց կոֆտայի թևքը:

— Ահա տես, — ասաց նա:

— Այդ ի՞նչ է:

— Շոշափիր:

Նա զգուշությամբ բռնեց ձեռքս ու դրեց իր թևի վրա, արմունկից վերև: Ինչ-որ խոնավ բան զգացի, որ նման էր արյան:

— Երբ տեսա, որ անրակո կոտրեցիր, ես ամբողջ ուժով կծեցի թևս: Ուզում էի որքան հնարավոր է ուժեղ ցավ պատճառել ինձ, որովհետև ընկերները պետք է միասին տանջվեն:

Այդ բառերը նա արտասանեց մոայլ վճռականությամբ, և լուսնի լույսի տակ նրա աչքերը շողացին աղամանդների պես: Այն, ինչ նա արել էր, իհարկե, մեծ հիմարություն էր, սակայն խիստ հուզեց ինձ:

— Հիմարիկ, — նկատելով իմ հուզմունքը ասաց Դյելետտան: — Դու էլ նույնը կանեիր ինձ համար... Ա՛խ, հա, չէ՞ որ ես քեզ համար խաղող եմ բերել: Ուզո՞ւմ ես ուտել:

— Ես շատ ծարավ եմ, խաղողը կթեթևացնի ինձ:

Ստվերի նման անաղմուկ դուրս սահելով սայլից, նա գնաց ինձ համար մի բաժակ ջուր բերելու:

— Իսկ հիմա, — վերադառնալով ասաց Դյելետտան, — քնելու ժամանակն է, — և գլուխս դրեց բարձին: — Դու պետք է շատ շուտ առողջանաս, որպեսզի փախչենք այստեղից: Այն օրը, երբ կապաքինվես, մենք կհեռանանք: Ես չեմ ուզում, որ դու նորից մագլցես ձողանին: Այդ բոլոր ֆոկլուսները քեզ համար չեն:

— Իսկ եթե Լապոլադը ստիպի՞:

— Չի համարձակվի, թե չէ Մուտոնին քսի կտամ, և առյուծը կուտի նրան: Դա ամենևին էլ դժվար չէ. թաթի մի հարված և Լապոլադից ոչինչ չի մնա:

Նախքան դուռն իր ետևից փակելը, Դյելետտան շեմքին կանգնած բարեկամաբար զլխով արեց ինձ.

— Քնի՛ր:

Ինձ թվաց, թե ուսիս ցավը մի քիչ մեղմացավ: Ես հարմար դիրք գտա, մեկնվեցի ու մայրիկի մասին մտածելով քնեցի: Թեև դեռ հուզված էի, բայց արդեն այնպես վշտացած չէի:

Այս պատմության մեջ ամենատհաճն այն էր, որ մեր փախուստը ձգձգվում էր, այնինչ վրա էր հասնում աշունը և դրա հետ էլ վատ եղանակը: Բացօթյա կարելի է գիշերել միայն ամռան տաք գիշերներին, բայց ոչ նոյեմբերին, երբ գիշերները երկար են ու ցուրտ, երբ անձրև է գալիս, իսկ երբեմն էլ ձյուն է տեղում:

Դեյլետտան թույլ չէր տալիս ինձ աշխատել, ինքն էր խնամում գազաններին և ինձնից ավելի անհամբերությամբ էր սպասում իմ առողջանալուն: Իսկ երբ նրան ասում էիր որ թերևս ավելի խելամիտ կլինի սպասել մինչև գարուն, նա խիստ բարկանում էր.

— Եթե այստեղ մնաս,— առարկում էր նա,— մինչև գարուն չես ապրի: Լապուլադը կսկսի քեզ սովորեցնել պտտվել ճոճաձողի վրա, և դու կջարդվես: Բացի այդ մենք ավելի ու ավելի ենք հեռանում Փարիզից, իսկ գարնանը, հավանաբար, կլինենք արդեն հարավում:

Այդ փաստարկը վերջնականապես համոզեց ինձ:

Հարկավոր էր շատ շուտ ապաքինվել: Ամեն առավոտ Դեյլետտան գնում էր ուսս, այնուհետև ես մեջքով դառնում էի դեպի սայլը և որքան կարող էի բարձրացնում էի հիվանդ թևս, իսկ նա դանակով նշան էր անում պատին: Այդ նշանը համեմատելով նախորդի հետ, մենք օրեցօր հետևում էինք թե ինչպես է ընթանում իմ ապաքինումը...

Ալանսոնից մենք գնացինք Վանդոմ, իսկ Վանդոմից Բլուա: Բլուայից պատրաստվում էինք մեկնել Տուր, և որոշված էր, որ այնտեղ ես նորից կսկսեմ մասնակցել ներկայացումներին: Այդ պատճառով Դեյլետտայի հետ որոշեցինք Բլուայում հեռանալ խմբից և Օրլեանով գնալ Փարիզ: Նա ինձ դրամ տվեց, և Վանդոմում ես հնազրավաճառից գնեցի Ֆրանսիայի մի հին քարտեզ: Հերկայից կարկին սարքեցի և հաշվեցի, որ Բլուայից մինչև Փարիզ քառասուն լյո է: Նոյեմբերին այդպիսի ճանապարհ անցնելը շատ դժվար է, որովհետև տարվա այդ ժամանակ ցերեկները տասը ժամից ավելի չեն լինում: Դեյլետտան սովոր չէր երկար քայլել. կկարողանա՞ր արդյոք օրական վեց լյո անցնել: Նա հավատացնում էր ինձ, որ կարող է, բայց ես խիստ կասկածում էի դրանում: Համենայն դեպս մենք պետք է գնանք մի շաբաթից ոչ պակաս: Բարեբախտաբար, Դեյլետտան էլի մի քիչ դրամ էր կուտակել, և հիմա մենք ունեինք տասը ֆրանկ: Մթերքի պաշար տեսանք, կռշիկներս պատրաստ էին, իսկ Դեյլետտային հաջողվել էր ճանապարհին գտնել ձիու մի հին ծածկոց, որով որոշեցինք ծածկվել գիշերները:

Հիմա ամեն ինչ պատրաստ էր, և մենք սպասում էինք իմ լրիվ ապաքինմանը, որ ըստ մեր հաշվումների, իսկ ամենագլխավորը, դատելով պատին արված նշաններից, պետք է համապատասխաներ Բլուայից մեր մեկնելուն: Սակայն հենց այդ ժամանակ Մուտոնը, որ սովորաբար այնքան խաղաղ ու հնազանդ էր, ապստամբեց և նորից ուշացրեց մեր փախուստը:

Մի անգամ երեկոյան Դեյլետտայով հիացած երկու անգլիացի մոտեցան նրան, երբ հասարակությունն արդեն ցրվել էր և խնդրեցին, որ մեկ անգամ էլ ցույց տա իր արվեստը: Լապուլադը հաճույքով համաձայնվեց կատարել նրանց խնդրանքը, համոզված լինելով, որ այդ կուշտ կերած ու, հավանաբար, առատաձեռն պարոնները լավ կվճարեն իրեն: Դեյլետտան նորից մտավ վանդակը:

— Ինչ սքանչելի՜ երեխա է:

— Եվ որքան համարձակ է:

Եվ նրանք սկսեցին ուժգին ծափահարել:

Չգիտես ինչու, բայց դրանից Լապուլադի ինքնասիրությունը վիրավորվեց, և նա հայտարարեց, որ Դելետտան կարողանում է այդպես աներկյուղ խաղալ առյուծի հետ միայն այն պատճառով, որ ինքը՝ Լապուլադը հիանալի վարժեցնող է:

— Դուք... — նրան նայելով ծիծաղեց անգլիացիներից կրտսերը, որ գեղեցիկ, շիկահեր ու կարմրաթուշ մի երիտասարդ էր, — դուք պարզապես պարծենկոտ եք: Ես համոզված եմ, որ սիրտ չեք անի անգամ վանդակը մտնել:

— Գրագ կգամ տասը լուիդորի վրա, որ դուք չեք մտնի վանդակը, — ավելացրեց երկրորդը:

— Ես ընդունում եմ ձեր գրագը:

— Հիանալի է: Բայց աղջիկը թող դուրս գա, և դուք մենակ մտեք ներս:

Գուցե անտեղի են կարծում, թե գիշատիչ գազանների վանդակը մտնելու համար մեծ քաջություն է պետք:

— Մտրակը տուր, — դիմելով Դելետտային, ասաց Լապուլադը:

— Ուրեմն համաձայն եք, — շարունակեց կրտսեր անգլիացին, — որ աղջիկը հեռանա այստեղից և չմոտենա վանդակին:

— Համաձայն եմ:

Մենք բոլորս հավաքվեցինք նրանց շուրջը. Կաբրիոլը, տիկին Լապուլադը, երաժիշտները և ես: Ես պետք է բացեի վանդակի դուռը: Լապուլադը հանեց գեներալի զգեստը:

— Եթե այս առյուծը խելացի է, — ասաց անգլիացիներից մեկը, — ապա ձեռք չի տա նրան: Այդ մարդու միսը չափազանց կոշտ է:

Եվ նրանք սկսեցին կատակել ու ծիծաղել մեր տիրոջ վրա, որը մեծ հաճույք պատճառեց մեզ բոլորիս:

Այո, Մուտոնը խելացի էր, նա շատ լավ էր հիշում, թե Լապուլադն ինչպես էր վանդակի ճաղերի միջից մետաղաձողով ծեծում իրեն և սկսեց ամբողջ մարմնով դողալ, հենց որ տերը բարձրացրած մտրակով մոտեցավ նրան: Տեսնելով, որ Մուտոնը դողում է, Լապուլադը սրտապնդվեց: Նա վճռեց, որ ձեր առյուծը վախենում է և մտրակեց նրան, ստիպելով վեր կենալ: Սակայն մտրակի հարվածները նման չեն մետաղաձողի հարվածներին: Մուտոնը հասկացավ, որ թշնամին հիմա իր ձեռքումն է: Քաջությունը բռնկվեց նրա հոգնած սրտում: Նա մոնչաց, կանգնեց հետևի թաթերին, և Լապուլադը դեռ չէր հասցրել մի քայլ անել, երբ առյուծը թռավ ու իր ամբողջ ծանրությամբ ընկավ նրա վրա:

Ճանկերը դուրս ցցելով, հսկայական թաթերով բռնեց Լապուլադին ու սպառնալի մոնչուն արձակելով ճզմեց նրան:

— Մեռնո՛ւմ եմ, — բղավեց Լապուլադը:

Լապուլադի վրա կռացած, առյուծը ճաղերի արանքից նայում էր մեզ: Նրա աչքերը վառվում էին: Նա պոչով հարվածում էր իր կողերին, կարծես թմբուկ էր զարկում:

Կարբիոլը վերցրեց մետաղաձողն ու սկսեց թակել առյուծի մեջքը, բայց վերջինս նույնիսկ չշարժվեց: Այդ ժամանակ անգլիացիներից մեկը գրպանից հանեց ատրճանակը և ուզում էր կրակել Մուտոնի ականջին, որ համարյա կպած էր վանդակի ճաղին, բայց տիկին Լապուլադը հրեց նրա ձեռքը:

— Չսպանե՛ք Մուտոնին,— գոռաց նա:

— Օհո՛, — բացականչեց անգլիացին:— Նա առյուծին ավելի շատ է սիրում, քան իր ամուսնուն:— Եվ էլի մի քանի բառ ավելացրեց անգլերեն:

Ադմուկի ու իրարանցումի վրա վազելով եկավ Դյելետտան ու նետվեց դեպի վանդակը: Ճաղերից մեկը տեղից շարժվում էր, որպեսզի առյուծի անսպասելի հարձակման դեպքում Դյելետտան կարողանա դուրս թռչել վանդակից: Բարալիկ աղջիկը հեշտությամբ անցնում էր այդ նեղ ճեղքից, իսկ առյուծը չէր կարող դուրս հանել իր մեծ գլուխը: Դյելետտան մի կողմ տարավ ձողը և աննկատելի մտավ վանդակը: Մուտոնը, որ մեջքով կանգնած էր նրա կողմը, չնկատեց աղջկան:

Դյելետտայի մոտ մտրակ չկար, բայց նա համարձակ բռնեց առյուծի բաշը: Անսպասելի հարձակումից զարմացած և չիմանալով, թե ով է մտել իր մոտ, առյուծն այնպես արագ շրջվեց, որ աղջկան սեղմեց ճաղերին: Մակայն, ճանաչելով Դյելետտային, անմիջապես իջեցրեց հարվածի համար բարձրացրած թաթը, Լապուլադին բաց թողեց ու գնաց դեպի վանդակի անկյունը: Լապուլադը ողջ էր, բայց այնպես ուժեղ էր ճգմվել, որ նրան դժվարությամբ դուրս հանեցին վանդակից, մինչ Դյելետտան հայացքով զսպում էր ամոթահար արված առյուծին:

Նա ինքն էլ վանդակից դուրս եկավ մի քիչ կաղալով. առյուծը ճգմվել էր նրա ոտքը: Մի ամբողջ շաբաթ նա չէր կարողանում քայլել և օրերով նստում էր աթոռին: Իսկ կիսամեռ, պլոկված, արյան մեջ ողողված Լապուլադին պատկեցրին անկողնում:

Միայն երկու շաբաթ հետո Դյելետտան ասաց, որ կարող է քայլել և ժամանակն է իրականացնել մեր ծրագիրը, մանավանդ որ վիրավոր Լապուլադը չի կարող հետապնդել մեզ:

XI

Արդեն նոյեմբերի երեքն էր, բայց եղանակը դեռ տաք էր: Եթե ոչ մի տեղ երկար չմնանք, ապա մինչև ցրտերն ընկնելը կարելի է հասնել Փարիզ:

Մենք երկար քննարկում էինք փախուստի ծրագիրը և վերջ ի վերջո կանգ առանք հետևյալի վրա: Հիմա ինձ վրա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, և ես պետք է առաջինը դուրս գայի բալագանից, ինձ հետ տանելով մեր բոլոր իրերը, այսինքն չորացրած հացի պաշարը, ձիու ծածկոցը, մի շիշ, երկրորդ գույգ կոշիկը, սպիտակեղենի մի փոքրիկ կապոց, որ Դյելետտան թաքցրել էր իմ արկղում և թիթեղյա կաթսան, մի խոսքով, ճանապարհորդության համար անհրաժեշտ բոլոր իրերը: Այնուհետև, երբ տերերը քնեն, Դյելետտան վեր կկենա, աննկատելի դուրս կգա սայլից, և մենք կհանդիպենք զբոսայգում՝ նախօրոք նշված ծառի մոտ:

Ես այնտեղ եկա ուղիղ երեկոյան ժամը տասնմեկին, իսկ Դյելետտան հայտնվեց միայն կեսգիշերին: Ես արդեն հուսահատվել էի, մտածելով, որ կարող են հետ պահել նրան, երբ հանկարծ զբոսայգում

լւեցի նրա թեթև ոտնաձայնը: Դյելետտան մտավ լույսի շերտը, և ես ճանաչեցի նրա կարմիր թիկնոցը, որ սովորաբար հագնում էր, երբ դուրս էր գալիս ներկայացումից:

— Ես արդեն մտածում էի, որ ինձ չի հաջողվի դուրս գալ,— շնչասպառ լինելով ասաց նա:— Լապոլադը տնքում էր փոկի նման ու չէր կարողանում քնել: Իսկ հետո ես պետք է հրաժեշտ տայի Մուտոնին: Խե՛ղճ Մուտոն, ա՛յ, թե ով կկարոտի ինձ... Դու ոչինչ չե՞ս մոռացել:

Բայց հիմա իրերը ստուգելու ժամանակը չէր: Ես ասացի, որ կարող են հայտնաբերել մեր բացակայությունը, այդ պատճառով հարկավոր է շտապ դուրս գալ քաղաքից:

— Լավ, գնանք,— ասաց նա:— Բայց նախ ձեռքդ տուր ինձ:

— Ինչո՞ւ:

— Ձեռքդ տուր և երդվենք, որ կյանքի ու մահու բարեկամներ կլինենք: Ուզո՞ւմ ես:

— Իհարկե, ուզում եմ:

— Այդ դեպքում ձեռքդ տուր և իմ հետևից կրկնիր. երդվում ենք օգնել միմյանց ամբողջ կյանքում, մինչև մահ:

— Մինչև մահ,— կրկնեցի ես:

Նա ամուր սեղմեց ձեռքս, և ես խիստ հուզվեցի, նրա ձայնը դողում էր, երբ արտասանում էր երդումի խոսքերը:

Քաղաքում մեռելային լռություն էր տիրում: Միայն շատրվանի ջուրն էր մեղմ խոխոջալով շիթերով հոսում ավազանի մեջ և սրտաճմլիկ ճռռում էին երկաթե շղթաներից կախված փողոցի լապտերները, որոնք օրորվում էին ու մեծ, երերուն ստվերներ գցում սալահատակին:

— Հիմա գնանք,— ասաց Դյելետտան:

Մենք արագ դուրս եկանք քաղաքից ու հայտնվեցինք դաշտում:

Հետևելով Դյելետային, ես հետաքրքրությամբ նայում էի նրան: Ինձ թվաց, որ թիկնոցի տակ նա մի կլոր առարկա էր պահում: Բոլոր իրերն ինձ մոտ էին, և ես տարակուսում էի, թե ինչ է տանում նա: Վերջապես չհամբերեցի ու հարցրեցի:

— Մա իմ հափուկն է,— թիկնոցը լայն բաց անելով ասաց նա:

Ես տեսա արծաթագույն թղթի մեջ փաթաթած մի փոքրիկ թաղար: Դյելետտան շարունակ խնամում էր իր հափուկը, որ դրված էր սայլի փոքրիկ պատուհանին: Ծաղկի հետ նրա երկար զբաղմունքը հաճախ գայրացնում էր Լապոլադին:

— Մի՞թե դա էլ պետք է քարշ տանք մեզ հետ,— այդ ավելորդ բեռից դժգոհ հարցրեցի ես:

— Ես չեի կարող թողնել, ծաղիկը կփչանար... Առանց այն էլ լքել եմ Մուտոնին: Խե՛ղճ կենդանի: Գիտես, քիչ էր մնում հետս բերելի: Ինչպե՞ս էր նայում ինձ, երբ հեռանում էի: Ես համոզված եմ, որ նա ամեն ինչ հասկացավ:

Մուտոնին շան պես սանձափոկով կապած տանել մեզ հետ: Այդ միտքը խիստ զվարճալի թվաց ինձ, և ես ակամա ժպտացի:

Դյելետտան որոշեց հավասար մասերի բաժանել մեր բեռը, և ես մեծ դժվարությամբ համոզեցի նրան, որ շատը ինձ թողնի: Թեև ցրտերը դեռ չէին սկսվել, բայց գիշերը բավականին սառն էր: Աստղերը պայծառ փայլում էին մուգ կապույտ երկնքում: Շուրջն ամեն ինչ հանգչում էր խաղաղ քնով: Օտռերը կանգնած էին անշարժ, տերևներն ասես քարացել էին: Թռչունների ձայնը չէր լսվում, միջատները չէին բզզում խոտերում, ինչպես ամռանը: Միայն երբ անցնում էինք տների կողքով, շները հաշոցով ուղեկցում էին մեզ: Դրանց ձայներին արձագանքում էին հարևան շները, և գիշերային լռության մեջ այդ հաշոցը հնչում էր վտանգի մասին միմյանց նախազգուշացնող ժամապահների բղավոցի նման:

Մենք որոշեցինք առանց կանգ առնելու գնալ ամբողջ գիշերը, որպեսզի Լապուլադը չհասնի մեզ, եթե հանկարծ խելքին փչի հետապնդել: Ես վախենում էի, որ Դյելետտան չի դիմանա, բայց նա միայն լուսադեմին գանգատվեց հոգնածությունից: Մենք անցանք մի քանի քնած գյուղերով և ճանապարհասյուններից իմացանք, որ Բլուայից հեռացել ենք հինգ լյո: Երկնքում ծագեց դեղին արշալույսը, արթաղներն արթնացան ու սկսեցին միմյանց ձայն տալ հավաքներում: Փեղկերով ծածկված լուսամուտներում սկսեցին փայլփլել լույսերը, և շուտով ճանապարհին հանդիպեցին գյուղացիներ, որոնք սայլերով դանդաղ գնում էին աշնանային դաշտային աշխատանքների:

— Արի հանգստանանք,— առաջարկեց Դյելետտան:— Հիմա էլ չեմ վախենում:

— Մի՞ թե վախենում էիր:

— Այն էլ ինչպե՛ս: Ամբողջ ժամանակ, հենց որ դուրս եկանք Բլուայից:

— Ինչի՞ց էիր վախենում:

— Լռությունից: Ես չեմ սիրում գիշերները: Ամենուրեք սև ստվերներ են երևում, որոնք մերթ մեծանում են, մերթ կարճանում: Հենց որ դրանց տեսնում եմ, սիրտս սկսում է մեկ արագ-արագ բաբախել, մեկ էլ վախից մարել...

Մինչ մենք նախաճաշում էինք չորացած հացի կտորներով, գորշ մառախլապատ օրը բացվեց, և մենք տեսանք, որ գտնվում ենք լերկ հարթավայրում: Միայն տեղ-տեղ ծառախմբերի հետևում երևում էին տնակներ, որոնց տանիքներից դեպի երկինք էին ձգվում դեղնագույն ծխասյունները: Նոր հերկած արտերը փոխարինում էին խոզաններին, բայց ոչ մի տեղ կանաչ չէր երևում: Երկնքում թռչում էին ագռավի երամներ և ծանրորեն թափահարում թևերը, այնուհետև փոքր խմբերի բաժանվելով, նստում էին գուլթանների մոտ, որոնցով աշխատում էին գյուղացիները:

Մենք կրկին ճանապարհ ընկանք և անցանք ևս երկու լյո: Բայց հիմա հոգնածությունն ավելի էր զգացնել տալիս, իսկ Դյելետտան ուղղակի քնում էր քայլելիս: Նա այնպես էր հոգնել, որ հինգ ժամ անընդհատ քնեց:

Ամենից շատ ինձ անհանգստացնում էր այն միտքը, թե որտեղ պետք է գիշերենք մեր ճանապարհորդության ընթացքում: Ես արդեն գիտեի, թե ինչ է նշանակում բացօթյա քնել և խիստ անհանգստանում էի, երբ մտածում էի վրա հասնող ցրտերի մասին: Այդ պատճառով որոշեցինք առանց կանգ առնելու գնալ այնքան ժամանակ, մինչև չգտնենք լավ պաշտպանված անկյուն: Զբոսայգու ցանկապատի մոտ այնպիսի տեղ գտանք, որտեղ քամին հավաքել էր մի մեծ կույտ չորացած տերևներ:

Դեռ ցերեկվա ժամը չորսն էր, և մենք գիշերելու համար անկողին պատրաստելու բավական ժամանակ ունեինք: Անտառում հավաքեցի մի քանի գիրկ չոր տերևներ և ավելացրի պատի մոտ

եղած մեծ կույտին: Վերևում, քարերի ճեղքերի մեջ մտցրեցի երկար ճյուղեր, իսկ սյուս ծայրերը ամուր խրեցի հողի մեջ: Ստացվեց ծածկի պես մի բան, որի վրա քաշեցի ձիու ծածկոցը: Հիմա մենք ունեինք և՛ անկողին, և՛ տանիք:

Դելետտային շատ դուր եկավ այդ կառույցը: Կարծես անտառում սարքած իսկական խրճիթ լիներ, ինչպես «մատնաչափիկի» հեքիաթում: Ա՛ խ, եթե մենք յուղ ունենայինք, նա այնպիսի համեղ ապուր կեփեր: Բայց մենք յուղ չունեինք:

Սակայն ճաշից հետո, որ նախաճաշի նման բաղկացած էր միայն չորացած հացից, երբ մարեց արեգակի վերջին ճառագայթը, երբ թռչունները լռեցին ու թաքնվեցին խիտ եղևնիներում, և մուրը պատեց անտառը, Դելետտան կրկին տխրեց:

— Քունդ տանո՞ւմ է,— հարցրեց նա ինձ:

— Ոչ:

— Այդ դեպքում շատ եմ խնդրում չքնես մինչև իմ քնելը՝ ես ավելի քիչ կվախենամ:

Ծածկոցը լավ էր պաշտպանում քամուց, բայց նրա վրա այնքան անցքեր կային, որ մենք տեսնում էինք ինչպես են աստղերը փայլվում մեր գլխավերևում: Շուրջը կարծես ամեն ինչ քնած էր, բայց մեր ականջին հասնում էին մեղմ, անհասկանալի ձայներ, որոնք հիշեցնում էին, որ քնած ենք բաց երկնքի տակ:

Բավական երկար ժամանակ Դելետտան շուռուճուճ էր գալիս և չէր կարողանում հանգստանալ: Վերջապես հոգնածությունը հաղթեց, և նա քնեց: Ես շատ ուրախացա, որ կարող եմ այլևս չհսկել նրան և նույնպես քնեցի:

Ես իրավացի էի, երբ վախենում էի ցրտից: Լուսաբացից շատ առաջ սաստիկ ցուրտն արթնացրեց մեզ:

— Մրսե՞լ ես,— զգալով, որ արթնացել եմ հարցրեց Դելետտան:— Ես բոլորովին փայտացել եմ:

Սակայն ոչինչ անել չէինք կարող, որովհետև սպառել էինք բոլոր հնարավորությունները. այլևս ծածկվելու բան չունեինք: Մտում էր մի կերպ քնել մինչև առավոտ: Բայց որքան էլ չարչարվում էի, ինձ չէր հաջողվում քնել. այնպես էի մրսել, որ ամբողջ մարմնով դողում էի: Բացի այդ, մեր շուրջը լավում էին ինչ-որ տարօրինակ, մեզ անգստացնող ձայներ. գետին թափված տերևներն այնպես էին խշշում, կարծես դրանց վրայով սողում էին բազմաթիվ միջատներ:

— Լսո՞ւմ ես,— շշուկով հարցրեց Դելետտան:

Որքան էլ ուզում էի չվախեցնել նրան, դարձյալ չէի կարող ասել, թե ոչինչ չեմ լսում: Բացի այդ, ես էլ էի վախենում, թեև ուզում էի քաջ լինել. չե՞ որ պետք է պաշտպանեի ընկերուհուս: Իսկ եթե մենակ լինեի, հավանաբար, կփախչեի այդտեղից:

Կես ժամի չափ պառկեցինք, վախենալով շարժվել: Ես լսում էի, ինչպես էին չիսկիսկում Դելետտայի ատամները: Տերևներից պատրաստած մեր անկողինը դողում էր մեզ հետ միասին, իսկ դրսից շարունակ լավում էր նույն ճրճոցը: Ձայները ոչ մի կերպ չէին դադարում, դրանք համաչափ էին, միալար, և դա մի փոքր հանգստացրեց ինձ: Եթե այստեղով մարդ կամ գազան քայլեր, ապա ոտնաձայները այլ կերպ կհնչեին: Հարկավոր է տեսնել, թե ինչ է կատարվում:

Ես մի փոքր բարձրացրի ծածկոցը: Երկինքը ծածկված էր աստղերով, և լուսնի աղոտ լույսի տակ ես համոզվեցի, որ շուրջը ոչինչ չի փոխվել: Սրտապարկվելով, ձեռքս հենեցի տերևներին, աշխատելով ավելի շատ դուրս հանել գլուխս և սկսեցի դիտել շուրջս: Տերևները ճռճռացին: Դրանք սառել էին ու գնդաձև կպել իրար: Ահա թե բանն ինչու՞մ էր:

Այդ հայտնությունը հանգստացրեց մեզ, բայց ամեննին չտաքացրեց: Ընդհակառակը, մեզ թվաց, թե ավելի ցրտեց:

Հանկարծ Դյելետտան վեր թռավ տեղից:

— Ի՞նչ պատահեց, — հարցրեցի ես:

— Իմ հափուկը, իմ խեղճ հափուկը: Կսառչի ու կփչանա:

Նա վերցրեց թաղարն ու թաքցրեց թիկնոցի տակ, որ տաքացնի ծաղիկին:

Ժամը քանի՞սն է: Լուսաբացը մոտ է, թե՞ դեռ շարունակվում է գիշերը: Լուսինը մայր էր մտել, բայց չգիտեի, թե որ ժամին է մայր մտնում: Այլևս հնարավոր չէր մնալ մեր ապաստարանում: Թեև նստել էինք իրար ամուր սեղմված, մեր ատամներն այնպես էին չխկչխկում, որ դժվարանում էինք խոսել: Որոշեցինք ճանապարհ ընկնել. գուցե քայլելն ավելի շուտ տաքացնի:

Հարկավոր էր իրերը դարսել ու շալակել: Սակայն այստեղ ծագեց մի անսպասելի դժվարություն: Դյելետտան, անպայման ուզում էր հափուկը պահել թիկնոցի տակ, այնպես որ նրա մի ձեռքը զբաղված էր:

Ես առաջարկեցի դեն նետել ծաղիկը, բայց նա բարկացավ ու հայտարարեց, որ ես սիրտ չունեմ: Դրանից հետո չհամարձակվեցի պնդել:

Եվ ահա մենք կրկին քայլում ենք մեծ ճանապարհով: Գիշեր է: Սառնամանիք: Մեր ճանապարհորդությունն անհաջող է սկսվել, բայց ես ոչ մի կերպ չեի կարողանում Դյելետտային հայտնել իմ երկյուղը: Նա շատ աշխույժ էր քայլում և ամբողջ ժամանակ որևէ զվարճալի բան պատմում, որը խիստ քաջալերում էր ինձ:

Մի ժամ քայլելուց հետո արևոտական լսեցինք ու շատ ուրախացանք՝ նշանակում է, շուտով լույսը կբացվի: Հիմա արդեն տաքացել էինք և, հիշելով գիշերվա սարսափները, ուրախ ծիծաղում էինք միմյանց վրա: Մենք նույնիսկ մի փոքր վիճեցինք, բայց համաձայնության եկանք, որ ես Դյելետտայից ավելի քաջ եմ, իսկ նա՝ ինձանից ավելի խելոք է:

Վախենալով, որ հանկարծ Լապուլաի խելքին կփչի հետապնդել մեզ և գնալ Փարիզ տանող ճանապարհով, մենք Բլուայից ուղևորվեցինք Շարտր: Քարտեզին նայելով, ես տեսա, որ մենք միայն մի փոքրիկ կեռման ենք կատարել:

Երեկոյան անցնում էինք Շատոդենով: Օրը տաք էր, բայց գիշերը նորից ցրտեց, և մենք որոշեցինք գիշերել իջևանատանը: Բհարկե, մեզ համար դա շատ մեծ ծախս էր, բայց այնուամենայնիվ ավելի լավ էր փող ծախսել, քան սառչել:

— Երբ մեր դրամը վերջանա, — հայտարարեց Դյելետտան, — ես կսկսեմ գյուղերում երգել և ճանապարհի համար փող վաստակել:

Նա այնպիսի վճռականությամբ ասաց, որ նրա վստահությունը փոխանցվեց նաև ինձ: Բայց շուտով մենք տեսանք, որ այնքան էլ հեշտ չի երգելով դրամ վաստակել, այնինչ ծախսելը շատ հեշտ է:

Շատողենից երկու լյո հեռավորության վրա մեզ թողեցին հյուրանոց, բայց գիշերելու համար պահանջեցին քառասուն սու, ընդ որում պետք է բացատրեինք, թե ովքեր ենք և ուր ենք գնում: Բարեբախտաբար, ես նախօրոք մտածել էի, թե ինչ պետք է ասեմ. մենք պատասխանեցինք, որ գնում ենք Շարտր՝ մեր բալագանի համար տեղ գտնելու, իսկ սայլերը գալիս են մեր հետևից և այստեղ կլինեն վաղը կամ մյուս օրը:

Ոչ ես, ոչ էլ Դյելետտան չէինք սիրում ստել, և այդ հարկադրական սուտը ստորացուցիչ էր թվում մեզ:

Շատողենից դեպի Շարտր տանող ճանապարհը ձգվում էր հսկայական ամայի հարթավայրով, որտեղ ցաք ու ցրիվ ընկած էին փոքրիկ գյուղեր, բայց ճանապարհի մոտ բոլորովին բնակավայրեր չկային:

Մենք հասանք Բոնվիլ, որ բավական մեծ գյուղ էր և որոշեցինք, որ այստեղ կարելի է լավ դրամ վաստակել: Մակայն մեզ տվեցին միայն երեք սու, եթե չհաշվենք այն մի բաժակ ջուրը, որ մեր գլխին լցրեց մորուքը սափրող մի առատաձեռն պարոն, իսկ մսավաճառը մեզ վրա քսի տվեց իր շանը, որը պատռեց Դյելետտայի շրջագգեստը: Փողոցային երգիչները դժվարությամբ են դրամ վաստակում:

— Եթե առյուծը մեզ հետ լիներ, իսկ դու էլ ֆլեյտա նվագեիր, մենք շատ դրամ կվաստակեինք,— ասաց Դյելետտան:— Ջարմանալի է, ինչո՞ւ ես ողորմություն տալիս միայն նրանց, ովքեր ձեռնունայն չեն:

Դյելետտան համբերության անսպառ պաշար ուներ: Նրան չէին զայրացնում անհաջողություններն ու մարդկանց չար արարքները:

Բարեբախտաբար, այդ երեկո մենք ստիպված չեղանք վճարել գիշերելու համար: Մեզ ներս թողեցին ազարակ և թույլ տվեցին գիշերել ոչխարների փարախում, որտեղ շատ տաք էր: Ոչխարները հիանալի տաքացրել էին, և այդ գիշերը ճանապարհին մեր անցկացրած բոլոր գիշերներից ամենահաճելին էր: Երբ առավոտյան հեռանում էինք, ազարակի տիրուհին պատրաստվում էր մեկնել Շարտրի շուկան: Դյելետտայի հոգնատանջ տեսքը շարժեց նրա գույթը, և նա առաջարկեց նստել սայլը: Բայց Դյելետտան արտահայտիչ հայացք գցելով ինձ վրա, հրաժարվեց: Ազարակի տիրուհին անմիջապես հասկացավ, որ նա չի նստի սայլը, եթե ես ոտքով գնամ, և երկուսիս էլ առաջարկեց նստել:

Գիշերելով մերթ ազարակում, մերթ հյուրանոցում մենք օրական անցնում էինք այնքան լյո, որքան պատում էր մեր ուժը և վերջապես հասանք Բևրի մոտ ընկած փոքրիկ գյուղը, որ Փարիզից հեռու էր երեք լյո:

Մենք տեղ հասանք ճիշտ ժամանակին. մեզ մոտ մնացել էր ընդամենը տասնմեկ սու, իսկ Դյելետտայի կոշիկները բոլորովին մաշվել էին: Բացի այդ, նա հարել էր ոտքը, և ամեն մի քայլը սոսկալի ցավ էր պատճառում նրան, մանավանդ, երբ դադարից հետո շարունակում էինք ճանապարհը: Երկուսս էլ հոգնածությունից ուժասպառ էինք եղել, և մեզ թվում էր, թե մեր ոտքերը լցված են արձիճով:

Մակայն Դյելետտան բոլորովին չէր զանգատվում և ամեն առավոտ ինձանից շուտ էր ոտքի ելնում:

Մեր տասնմեկ սուն հնարավորություն չէր տալիս մտածել այնպիսի շքեղության մասին, ինչպիսին իջևանատանը գիշերելն է, բայց մեզ հաջողվեց Սակրեում հանդիպել քարհանքատիրոջ, որի հետ անցանք ճանապարհի մի մասը, և նա թույլ տվեց գիշերել իր ախոռում:

— Վաղը պետք է շուտ վեր կենանք,— ասաց ինձ Դյելետտան: — Վաղը Եվգենիի օրն է, և ես ուզում եմ ժամանակին հասնենք, որպեսզի մայրիկին շնորհավորեմ հրեշտակի օրվա առթիվ ու նրան նվիրեմ հափուկը:

Խեղճ ծաղիկ: Տերևները թափվել էին, ամբողջովին խորշումել ու դեղնել, բայց ծաղիկը դեռ լրիվ չէր չորացել, և մի քանի կանաչավուն ցողուններն ապացուցում էին, որ դեռ կարող է կենդանանալ:

Մենք հեռացանք լուսաբացին, հենց որ տանտերն սկսեց մաքրել իր ախոռը:

Մինչ այդ եղանակը ասես հրաշքով նպաստում էր մեզ: Թեև գիշերները ցուրտ էր լինում, բայց դրա փոխարեն, ցերեկը տաք էր: Սակայն այն առավոտ, երբ մենք դուրս եկանք ախոռից, զգացինք, որ եղանակը խիստ փոխվել է: Երկինքը պատվել էր ամպերով և ոչ մի աստղ չէր փայլում, իսկ արևելքում, ալ կարմիր ու բոտրագույն ցլքերի փոխարեն, ինչպիսին մենք հաճախ էինք տեսնում ճանապարհորդության ընթացքում, կախվել էին ծանր, կապարագույն ամպեր: Հյուսիսից փչող ուժգին քամին պոկում ու պտտում էր չոր տերևները, որոնք երբեմն այնպիսի խիտ վարագույրի պես թռչում էին դեպի մեզ, կարծես ուզում էին փակել մեր ճանապարհը: Դյելետտայի համար շատ դժվար էր թիկնոցի տակ պահել հափուկը:

Վերջապես բոլորովին լուսացավ, և բացվեց մռայլ ամպամած օրը:

— Արեգակն այսօր հանգստանում է, ավելի լավ: Այսպիսի օրը մեր կեղտոտ ցնցոտիները աչքի չեն ընկնի,— հայտարարեց Դյելետտան, որ կարողանում էր ամեն ինչում մի լավ բան տեսնել:

— Մի անհանգստանա, նախքան մեր Փարիզ հասնելը, անձրևը դեռ կհասցնի դրանք լվանալ:

Ես կարծում էի, թե անձրև կսկսվի, բայց դրա փոխարեն ձյուն եկավ: Սկզբում ձյան փաթիլները քամուց հալածված փոքրիկ թիթեռնիկների պես սկսեցին պտտվել օդում: Բայց հետզհետե ավելի ու ավելի շատացան, և շուտով առատ ձյուն տեղաց: Մառը քամին ձեռնում էր մեր դեմքերն ու բռնում աչքերը:

Մենք դժվարությամբ անցանք մի լյո: Ճանապարհի երկու կողմերում ձգվում էր անտառը: Շուրջը ոչ մի բնակավայր չէր երևում, և մենք որոշեցինք պատասպարվել ծառերի տակ: Թեև շատ էինք շտապում հասնել Փարիզ, բայց հնարավոր չէր քայլել այդ ձնաբուքին:

Առունների գառիվայր եզրերը տեղ-տեղ ծածկված էին հաճարենու թփուտներով, որոնց վրա դեռ պահպանվել էին չորացած տերևները: Մենք քամուց թաքնվեցինք այդպիսի գառիվայրերում աճած թփերի տակ, որոնք մի որոշ ժամանակ պաշտպանում էին մեզ ձյունից: Քամին այնպիսի ուժով էր փչում, որ սպիտակ փոշու ամպ բարձրացնելով, ձյունը պտտվում էր ուղղակի գետնի վրա և կանգ առնում միայն այնտեղ, ուր հանդիպում էր որևէ արգելքի: Վերջ ի վերջո ձյունը ծածկեց ամբողջ գառիվայրը, որի հետևում պատասպարվել էինք և, գառիվայրի կատարից գլորվելով, վերևից թափվեց մեզ վրա: Ձյունը տեղում էր մեր գլխին, լցվում օձիքի տակ և հալվելով հոսում մեջքի վրայով: Ուզում էինք թաքնվել ձիու ծածկոցի տակ, բայց քամին շարունակ պոկում էր:

Մեր հագուստը վեր էր ածվել ցնցոտիների, որոնք վատ էին պաշտպանում ցրտից: Դյելետտան ամբողջովին կապտել էր, նրա ատամները չիսչիկում էին: Նա սեղմվեց ինձ, բայց ես էլ էի շատ

մըսում և չէի կարող տաքացնել նրան: Օձիքից ներս լցվող ձյունը ամբողջովին թրջել էր ինձ, կարծես լողացել էի գետում:

Ամբողջ երկու ժամ նստել էինք գառիվայրի տակ, իսկ քամին դեռ չէր մեղմանում: Կարծես ձյունը թափվում էր ոչ թե երկնքից, այլ ուղղակի թռչում էր գետնի վրա և հազարավոր սուր ասեղներով ծակծկում մեզ: Երբեմն էլ վեր էր բարձրանում ու սյունաձև պտտվում:

Դյելետտան առաջվա պես թիկնոցի տակ ամուր սեղմած պահել էր հափուկի թաղարը, բայց ձյունը թափանցում էր ամեն տեղ: Տեսնելով, որ թաղարի հողը ծածկվել է ձյան շերտով, նա ծաղիկը մեկնեց ինձ:

— Ի՞նչ անեմ,— հարցրեցի ես:

— Շատ եմ խնդրում, աշխատիր փրկել:

Ինձ զայրացնում էր, որ նա շարունակ մտածում էր այդ ծաղիկի մասին: Ուներս թոթվեցի ու ցույց տվեցի սառը թաղարից փայտացած նրա մատները:

— Ա՛խ,— բարկացած ասաց նա,— ինչո՞ւ չիրամայեցիր անմիջապես դեն նետել հափուկը:

Դժվար պահերին կո՞վը շատ արագ է բռնկվում: Առաջին անգամ մենք մի քանի կոպիտ խոսքեր ասացինք իրար: Հետո լռեցինք և, իրարից շուռ գալով, սկսեցինք նայել թափվող ձյանը:

Հանկարծ զգացի, որ Դյելետտան շոշափելով փնտրում է ձեռքս:

— Ուզում ես ծաղիկը գցե՞մ,— տխուր հարցրեց նա:

— Մի՞ թե չես տեսնում, որ արդեն փչացել է: Տերևները սևացել ու թառամել են:

Նա ոչինչ չպատասխանեց, միայն աչքերը լցվեցին արտասուքով:

— Նշանակում է, մայրիկին նվեր չեմ տանի:

— Դե, մի գցիր,— ասացի ես ու նրա ձեռքից վերցրի թաղարը:

Ձյունը շարունակում էր տեղալ, բայց քամին սկսել էր մեղմանալ և հետզհետե բոլորովին դադարեց: Բայց, դրա փոխարեն, հիմա ձյունը թափվում էր առատ փաթիլներով: Մի քանի բոպեում գետինն ամբողջովին ծածկվեց սպիտակ հաստ սավանով, որ հասնում էր մինչև մեր ծնկները, կարծես ձյունն ուզում էր մեզ փաթաթել իր սառցե ծածկոցով:

Այդպես շարունակվեց մի ժամից ոչ պակաս: Ծառերը կռացել էին ձյան ծանրության տակ: Մենք զգում էինք, որ մեր ծածկոցի վրա, որն այնուամենայնիվ մի փոքր տաքացնում էր, մի քանի ֆունտ ձյան շերտ էր նստած: Իրար սեղմված լուռ նստել էինք ու չէինք շարժվում: Ցուրտը թափանցում էր մինչև ոսկորներս, և մենք կամաց-կամաց սառչում էինք, բայց չէինք հասկանում, թե ինչ վտանգ է սպառնում: Վերջապես փաթիլներն սկսեցին ավելի ու ավելի պակասել, և շուտով ձյունը դադարեց:

— Գնանք,— ասաց Դյելետտան:

Մինչև ծնկները ձյան մեջ թաղված, մենք կրկին դուրս եկանք մեծ ճանապարհ: Շուրջը, որքան աչքդ կտրում է, ամայի էր. ոչ սայլեր էին անցնում, ոչ էլ դաշտերում գյուղացիներ կային: Միակ կենդանի

արարածները ճանապարհամերձ ծառերին նստած կաչաղակներն էին, որ բարձրաձայն կչկչում էին, երբ անցնում էինք նրանց մոտով, ասես ծաղրում էին մեզ:

Ինչ-որ մի գյուղով անցնելով, մենք բարձրացանք բլրի գագաթը, որտեղից տեսանք երկու սպիտակ բարձունքների միջև փոված հսկայական քաղաքի վրա կախված ծխի ամպեր: Մեր ականջին հասնում էր մի անորոշ դղրոյուն, որ նման էր ծովի աղմուկին:

— Դա Փարի՛զն է,— բացականչեց Դյելետտան:

Անմիջապես մոռացանք ցրտի մասին և ավելի առույգ զգացինք մեզ: Այժմ ճանապարհին սկսեցին հանդիպել քաղաք ուղևորվող կառքեր ու սայլեր:

Սակայն մինչև Փարիզ դեռ բավական տարածություն կար, և երբ իջանք բլրից ու ցանկալի նպատակակետը թափնվեց մեր տեսողությունից, նորից մեզ զգացինք հոգնած ու տանջված:

Ամեն քայլափոխին երերալով ու սայթաքելով, գրեթե առաջ չէինք շարժվում: Մեր թաց հագուստից գոլորշի էր բարձրանում:

Ճանապարհի ձյունը ավելի ու ավելի էր մզանում, մինչև որ վերածվեց սև, ջրիկ ցելխի: Կառքերի մի մասն դիմացից էին գալիս, մյուսներն առաջ էին անցնում և ամեն քայլափոխին ավելի շատ էին հանդիպում: Տները հաջորդում էին իրար, դաշտերում երևում էին ինչ-որ սև դիտանոցներ, իսկ չորս կողմը ցաքուցրիվ թափված էին քարակույտեր: Չնայած մեծ կամքի ուժին, Դյելետտան չէր կարողանում առաջ գնալ և կանգ առավ: Քրտինքը թափվում էր նրա դեմքից, նա սաստիկ կաղում էր: Ես ձեռքով մաքրեցի տներից մեկի առջև դրված նստարանի ձյունը, և Դյելետտան նստեց:

— Հարցրու նրան, դեռ շա՞տ պետք է գնանք,— մատնացույց անելով մեր կողքից անցնող սայլապանին, ասաց Դյելետտան:

— Իսկ ո՞ր էք գնում,— հարցրեց սայլապանը, երբ ձայն տվեցի նրան:

— Կենտրոնական շուկա:

— Ուտքով այնտեղ կարելի է հասնել ոչ պակաս, քան մեկուկես ժամից:

— Ես չեմ հասնի,— նրա պատասխանը լսելով, ասաց Դյելետտան:

Նա նստել էր գունատ, մարած աչքերով և դժվարությամբ էր շնչում:

Ստիպված էի նրան բարձրացնել, որովհետև նստած ավելի շատ կմրսեր: Ես նրան հիշեցրի, որ գնում է մայրիկի մոտ, և դա մի փոքր քաջալերեց նրան: Ենթադրելով, որ շուտով տեղ կհասնենք և ճանապարհի իրերն այլևս պետք չեն գա, ես որոշեցի դրանք թողնել նստարանին և Դյելետտաին առաջարկեցի հենվել ինձ վրա:

Մենք նորից ճանապարհ ընկանք:

— Կտեսնես, թե մայրիկն ինչպես կհամբուրի քեզ,— ասում էր նա:— Հետո մեզ կհյուրասիրի համեղ ապուրով ու կարկանդակներով: Իսկ ես անմիջապես անկողին կմտնեմ և մի ամբողջ շաբաթ կպառկեմ առանց վեր կենալու:

Ուղեկալի մոտ ես հարցրեցի, թե ինչպես գնանք Կենտրոնական շուկա, և ինձ պատասխանեցին, որ պետք է ուղիղ գնալ մինչև գետը: Փարիզի փողոցներն ավելի լպրծուն էին ու ցեխոտ, քան կառքի

ճանապարհը: Անցորդները կանգ էին առնում ու նայում մեր ետևից: Կեղտոտ, պատառոտված հագուստներով, թրջված ու շփոթված, մենք անցնում էինք աղակալից ամբոխի ու արագ սլացող կառքերի միջով և, հավանաբար, նման էինք մոլորված շան քոթոթների: Իր մայրիկին շուտով տեսնելու հույսը ուժ էր տվել Դյելետտային, և մենք բավական արագ էինք քայլում:

Երբ հասանք Մենային, մեզ ուղարկեցին դեպի Նոր կամուրջը, իսկ այնուհետև շրջվելով աջ, հայտնվեցինք ուղիղ Սուրբ Եվստաֆի եկեղեցու մոտ:

Երբ տեսանք աշտարակի ժամացույցի ոսկեգույն թվատախտակը, ես զգացի, որ Դյելետտան սկսեց ամբողջ մարմնով դողալ:

— Ժամացույցը՝,— ուրախ բացականչեց նա:— Ահա ժամացույցը:

Սակայն նրա ուրախությունն անմիջապես էլ անցավ:

— Այո, ժամացույցը կա, բայց ես ոչ մի տուն չեմ տեսնում:

Մենք մի պտույտ կատարեցինք եկեղեցու շուրջը:

— Երևի սխալվել ենք: Սա Սուրբ Եվստաֆի եկեղեցին չի:

Ես նորից հարցրեցի անցորդներին, թե ինչպես է կոչվում եկեղեցին և ինձ կրկին պատասխանեցին, որ դա Սուրբ Եվստաֆի եկեղեցին է:

Դյելետտայի աչքերը լրիվ հուսահատություն էին արտահայտում: Հուզմունքից նա համարյա չէր կարողանում խոսել:

— Փնտրենք դեպի ժամացույցը տանող բոլոր փողոցներում,— առաջարկեցի ես:

Դյելետտան հնազանդորեն հետևեց ինձ, բայց նրան ուժ տվող ոգևորությունը անմիջապես մարեց: Նա չէր ճանաչում ոչ մի փողոց: Եկեղեցու դիմաց մի ամայի տարածություն կար, այնտեղ եղած տները քանդել էին, և հիմա որմնադիրներ էին աշխատում:

— Մեր տունն այստեղ էր,— ասաց Դյելետտան և հոնգուր-հոնգուր լաց եղավ:

— Գնանք հարցնենք,— առաջարկեցի ես:

— Ի՞նչ պետք է հարցնենք: Փողոցի անունը չեմ հիշում, մայրիկի ազգանունը նույնպես: Ես միայն հիշում եմ տունը, որն անմիջապես կճանաչեի:

Նույնիսկ չափահաս և ուժեղ մարդը չէր դիմանա ճակատագրի այդ դաժան հարվածին: Այնքան դժվարություններ հաղթահարել, այնպիսի զրկանքներ տանել, այնպես հույս ունենալ և այդպես հուսախաբ լինել: Մենք կանգնել էինք եկեղեցու մոտ և շվարած ու շփոթված նայում էինք իրար, իսկ անցորդները արմունկներով դիպչում էին մեզ և չորս կողմից հրում: Ումանք կանգ էին առնում և հետաքրքրությամբ նայում երկու դժբախտ ցնցոտիավոր երեխաներին, որոնք ողորմելի ու ծիծաղելի էին թվում ամբոխի մեջ:

Լինելով ավելի պակաս հուսախաբված ու ցնցված, իսկ ամենագլխավորը, Դյելետտայից ավելի քիչ հոգնած, ես առաջինը ուշքի եկա և, բռնելով նրա ձեռքը, տարա դեպի շուկայի մեծ, ծածկած շենքը, որտեղ թափված էին ամեն տեսակ բանջարեղենի կույտեր: Այնտեղ ես նրան նստեցրի անկյունում

ընկած դատարկ գամբուղներից մեկին: Թվում էր, թե նրա խելքը մթագնել է: Չգիտեի ինչ ասեմ և լուռ նայում էի նրան: Դյելետտայի դեմքը բոլորովին գունատ էր, և նա ամբողջ մարմնով դողում էր:

— Հիվանդ ես:

— Մայրի՛կ, — շնչաց նա և աչքերից թափվեցին արտասուքի խոշոր կաթիլներ:

Մեր շուրջը խռնված էր ամբոխը: Մարդիկ բղավում էին, վիճում, վաճառում, գնում, ինչ-որ բաներ էին բերում ու տանում: Չորս կողմը գվվոց էր, իրարանցում, հրհրոց. շուկայում կյանքը եռում էր: Շուտով մեզ վրա ուշադրություն դարձրին: Երկու ցնցոտիավոր երեխա, գունատ ու տանջված, դառնորեն լաց լինող աղջիկ — այդ բոլորը հետաքրքրեց բացբերաններիս:

— Ի՞նչ եք անում այստեղ, — հարցրեց մի ծեր կին:

— Հանգստանում ենք:

— Այստեղ հանգստանալու տեղ չի:

Ոչինչ չպատասխանելով, ես բռնեցի Դյելետտայի ձեռքը, որպեսզի տանեմ այստեղից: Ինքս էլ չգիտեի, թե ուր ենք գնալու: Սաստիկ հոգնած աղջիկն այնպիսի հուսահատությամբ նայեց ինձ, որ ծեր կինը խղճաց նրան.

— Միթե՞ չես տեսնում, թե ինչպես է հոգնել: Էլ ո՞ւր ես քարշ տալիս:

Խոսք խոսքի ետևից ես պատմեցի, թե ինչպես ենք հայտնվել այստեղ, ասացի, որ եկել ենք հեռվից, հույս ունենալով գտնել Դյելետտայի մորը և որ տունը, ուր նրանք ապրում էին, քանդել են:

— Այ քեզ պատմություն՜ս, — մինչև վերջ լսելով պատմածս, բացականչեց կինը:

Նա մոտ կանչեց մյուս կանանց, և նրանք շրջապատեցին մեզ:

— Ուրեմն, դու չգիտե՞ս ոչ նրա մոր ազգանունը, ոչ էլ փողոցի անունը, — կրկնեց կանանցից մեկը այն բանից հետո, երբ ես նորից պատմեցի մեր տխուր պատմությունը: — Իսկ դո՞ւք, — դիմեց նա մյուսներին: — Գուցե ձեզանից որևէ մեկը ճանաչո՞ւմ էր այս քանդված տներում բնակվող արդուգարդի խանութի տիրուհուն:

Մկավեցին հարցուփորձեր, պատասխաններ, ենթադրություններ, հիշողություններ, բայց այդպես էլ հնարավոր չեղավ ոչ մի բան պարզել: Անցել էր ութ տարի, ինչպե՞ս կարելի էր հիմա որևէ հետք գտնել: Տները քանդվել են, փողոցները վաղուց վերակառուցվել են: Սպիտակեղեն վաճառող խանութները բազմաթիվ էին: Դրանցից ո՞րն է պատկանել Դյելետտայի մորը: Որտե՞ղ է նա ապրում: Որտե՞ղ փնտրել նրան:

Մինչ շարունակվում էին այդ բանակցությունները, Դյելետտան ավելի գունատվեց, նա այնպես էր դողում, որ ատամները չխկչխկում էին:

— Աղջիկը բոլորովին սառել է, — ասաց կանանցից մեկը: — Գնանք, աղավնյակս, նստիր իմ ջեռակի մոտ տաքացիր:

Նա մեզ տարավ իր կրպակը: Երկու-երեք կին հետևեցին մեզ, մյուսները քննարկելով տեղի ունեցածը, վերադարձան իրենց վաճառարկողների մոտ:

Բարի կինը ոչ միայն տվեց իր ջեռակը, այլև բերեց մեկական ափսե արգանակ: Իսկ երբ մենք տաքացանք և ուժ առանք, ձեռքս դրեց քսան սու:

Դա նրա համար չափազանց շատ էր, իսկ մեզ համար, որ այնքան աղետալի վիճակում էինք, շատ քիչ էր: Ո՞ւր գնանք: Ի՞նչ անենք այսուհետև: Իմ ողին նշված էր՝ ես պետք է գնամ Հավր, բայց ի՞նչ կլինի Դելետտայի հետ: Նա հասկանում էր, որ հիմա գնալու տեղ չունի, այդ պատճառով էլ հենց որ դուրս եկանք փողոց, առաջին հերթին հարցրեց.

— Իսկ ո՞ւր ենք գնալու:

Մենք կանգնած էինք Սուրբ Եվատաֆի եկեղեցու առջև: Կրկին ձյուն եկավ և հնարավոր չէր փողոցում մնալ:

— Մտնենք այստեղ,— ցույց տալով եկեղեցին, ասացի ես:

Մենք ներս մտանք: Մեզ պարուրեց ջերմությունը: Եկեղեցում ամայի էր ու լուռ, միայն մի քանի հոգի ծնկաչոք աղոթում էին: Մենք մտանք ամենամութ կողմը:

— Աստված իմ, աստված իմ,— շշնջում էր Դելետտան:

— Լսիր, Դելետտա,— ասացի ես,— քանի որ չես կարողանում գտնել մայրիկիդ, գնանք իմ մայրիկի մոտ:

— Պոր-Դյո՞:

— Այո: Դու հո չե՞ս ուզում նորից վերադառնալ Լապոլադի մոտ: Հերիք է, որքան մնացիր բալագանում: Գնանք մայրիկիս մոտ: Դու կաշխատես նրա հետ միասին՝ նա քեզ կսովորեցնի իր արհեստը: Իսկ երբ ես վերադառնամ նավարկությունից, կգամ ձեզ մոտ, և մենք միասին կապրենք: Կտեսնես, որ մայրիկս շատ կսիրի քեզ: Ես էլ ավելի հանգիստ կլինեմ, իմանալով, որ դու նրա հետ ես, և նա մենակ չի տխրի: Իսկ եթե հիվանդանա, կխնամես նրան:

Դելետտան շատ ողջամիտ էր. նա անմիջապես այնպիսի ուրախությամբ համաձայնեց իմ առաջարկությանը, որ շատ լավ ցույց էր տալիս, թե որքան պարզ էր գիտակցում իր դրության սուսկալիությունը: Նրան միայն մի բան էր հուզում:

— Մայրիկդ չի ցանկանա ինձ ընդունել:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես եղել եմ թափառաշրջիկ կրկեսում:

— Ի՞նչ անենք: Չե՞ որ ես էլ եմ եղել:

— Քոնը բոլորովին այլ է, — տխուր ասաց նա:

Իհարկե, լավ էր, որ հիմա մենք գիտեինք, թե ուր ենք գնալու, բայց դեռ հարկավոր էր հասնել Պոր-Դյո: Ապագան մեզ թվում էր վճռված, բայց ներկան...

Ես չէի կարող ստույգ ասել, թե Պոր-Դյոն ինչ հեռավորության վրա էր գտնվում Փարիզից, բայց գիտեի, որ շատ հեռու է:

Երբ Մոնրուժում դեն նետեցինք մեր իրերը, ինչպես նաև ծովն է գցում ավելորդ բեռը, որպեսզի չսուզվի, բարեբախտաբար ես չէի գցել ուղեքարտեզը, և հիմա հանելով գրպանիցս, փռեցի աթոռին ու սկսեցի ուսումնասիրել: Փարիզից դուրս գալու համար մենք պետք է գնայինք Սենայի երկարությամբ:

Ես իմացա ամենակարևորը, ավելի ուշ կուսումնասիրեմ հետագա ճանապարհը: Սակայն առանց կոշիկի, խղճուկ ցնցոտիներով, գրպանում ունենալով միայն քսան սու, ինչպե՞ս ուղևորվենք այդքան երկար ճանապարհորդության: Ինչպե՞ս ճանապարհ ընկնենք, երբ երկուսս էլ այնքան ուժասպառ ենք եղել, մանավանդ Դյելետտան, որ կարող էր ամեն վայրկյան ուշակորույս վայր ընկնել: Նա մերթ կարմրում էր, մերթ գունատվում և տենդից ցնցվում էր. այդ ցրտին ու ձյանը ինչպե՞ս զիջերենք փողոցում, երբ դեռ այսօր առավոտյան քիչ էր մնում սառչեինք:

— Կարո՞ղ ես քայլել,— հարցրեցի ես Դյելետտային:

— Չգիտեմ... Երբ գալիս էինք այստեղ, ես պատկերացնում էի մայրիկիս, և դա օգնում էր ինձ: Իսկ քո մայրիկին չեմ կարող պատկերացնել:

— Ի՞նչ եք անում այստեղ,— հանկարծ մեր թիկունքում լավեց մեկի ձայնը:

Բաց արած քարտեզը աթոռի վրա էր. միանգամայն պարզ էր, որ դրանով աղոթք չէինք կարդում:

— Շուտ հեռացե՛ք այստեղից:

Ստիպված էինք ենթարկվել ու հեռանալ: Եկեղեցու պահակը քթի տակ ինչ-որ բան մոթմոթալով, գալիս էր մեր հետևից:

Ձյունը դադարել էր, բայց սառը քամի էր փչում, և շատ ցուրտ էր: Մենք նորից գնացինք այն փողոցով, որը մեզ բերեց քաղաք: Դյելետտան դժվարությամբ էր քարշ տալիս ոտքերը: Իսկ ես արգանակից մի փոքր ուժ էի առել և շատ մեծ հոգնածություն չէի զգում, բայց տագնապով մտածում էի մոտալուտ ճանապարհորդության մասին:

Տասը բռպե էլ չէինք քայլել, երբ Դյելետտան կանգ առավ:

— Ես այլևս չեմ կարող քայլել,— ասաց նա:— Տեսնո՞ւմ ես, դողում եմ: Շունչս կտրվում է, կուրծքս էլ ցավում է: Կարծես թե հիվանդացել եմ...

Նա նստեց ուղեսյունիկին, բայց մի քանի բռպե հանգստանալուց հետո վեր կացավ, և մենք նորից ճանապարհ ընկանք: Հասնելով Սենային, թեքվեցինք աջ: Սենայի ափերը ծածկված էին ձյունով, և ճերմակ ափերի միջև գետի ջուրը բոլորովին սև էր թվում: Թիկնոցների մեջ փաթաթված անցորդները արագ անցնում էին մեր կողքով: Երեխաները սահում էին սառցակալած մայթերի վրա:

— Դեռ շա՞տ պետք է գնանք,— հարցրեց Դյելետտան:

— Մինչև որտե՞ղ:

— Այնտեղ, ուր պետք է զիջերենք:

— Չգիտեմ: Գնանք:

— Բայց ես քայլելու ուժ չունեմ: Լսիր, Ռոմեն, թող ինձ այստեղ... Տար մի անկյուն և թող որ մեռնեմ:

Ես բռնեցի նրա ձեռքը: Ուզում էի շուտ դուրս գալ քաղաքից: Ես մտածում էի, որ գյուղում ավելի հեշտ կլինի գտնել որևէ ապաստարան՝ լքված աղյուսի գործարան, ամայի տուն, պանդոկ, քան Փարիզում, որտեղ անցորդները չգիտես, թե ուր էին շտապում և չէին նկատում մեզ, իսկ ոստիկաններն այնպես կասկածամտորեն էին նայում, որ սիրտս մարում էր:

Մի քառորդ ժամ էլ քայլեցինք, բայց կարծես բոլորովին առաջ չէինք շարժվում: Տներն արդեն վերջացել էին: Ճանապարհի մի կողմում ձգվում էր ցածր ցանկապատը, իսկ մյուս մասում՝ անասահման երկար մի պատ: Պատի հետևում կային ձյունածածկ ծառեր և ժամապահներ էին քայլում: Դյելետտան այլևս չէր կարողանում ոտքի վրա մնալ, և ես գրեթե գրկած էի տանում նրան: Չնայած ցրտին, հոգնածությունից ու հուզմունքից քրտինքը ողողել էր դեմքս: Ես հասկանում էի, որ Դյելետտան հիվանդ է և բոլորովին ուժասպառ է եղել: Ի՞նչ է լինելու մեզ հետ:

Ի վերջո Դյելետտան դուրս սահեց ձեռքերիս միջից ու նստեց, ավելի ճիշտ՝ ընկավ ձյան վրա: Ուզեցի Բարձրացնել նրան, բայց չկարողացավ ոտքի վրա մնալ և նորից ընկավ:

— Ամեն ինչ վերջացավ, — շշնջաց նա:

Նստեցի նրա կողքին ու սկսեցի համոզել, որ շարունակի ճանապարհը: Նա ոչինչ չպատասխանեց և, ըստ երևույթին, նույնիսկ չլսեց ինձ: Կյանքն, ասես, լքել էր նրան, միայն ձեռքերն էին դեռ ողջ մնացել և կրակի պես այրվում էին:

Անցավ մի քանի րոպե, և ինձ պատեց սարսափը: Ճանապարհին անցորդներ չկային: Ես վեր կացա ու նայեցի հեռուն: Քարե երկու պատից և դրանց միջև ընկած ձյան երկար շերտից բացի ուրիշ ոչինչ չկար: Սկսեցի Դյելետտային խնդրել, աղաչել, որ վեր կենա, բայց նա չէր պատասխանում: Փորձեցի գրկած տանել. նա չդիմադրեց, բայց մի քանի րոպե քայլելուց հետո ստիպված եղա կանգ առնել՝ այդպիսի բեռը իմ ուժերից վեր էր:

Նա կրկին ցած սահեց, և ես նստեցի նրա կողքին: Մի՞թե մեր վերջը հասել է: Մի՞թե՞ մեռնելու ենք: Դյելետտայի գիտակցությունը երևում է դեռ բոլորովին չէր մարել, որովհետև նա թեքվեց դեպի ինձ և կամաց համբուրեց իր սառը դողողոջուն շրթունքներով: Վշտից սիրտս կծկվեց, և ես լաց եղա: Սակայն այնուամենայնիվ հույս ունեի, որ նրա ուժերը կվերականգնվեն, եւ մենք նորից կշարունակենք մեր ճանապարհը: Իսկ նա աչքերը փակած ու ինձ վրա հենված, շարունակում էր անշարժ նստել: Եթե չլինեք նրան երբեմն ցնցող դողը, ես կարող էի մտածել, որ մահացել է: Երկու թե երեք անցորդ զարմացած այն բանից, որ նստել ենք ձյան վրա. կանգ առան, անվճռականորեն նայեցին մեզ, այնուհետև գնացին իրենց ճանապարհով:

Հարկավոր էր մի բան մտածել: Ես որոշեցի օգնություն խնդրել առաջին իսկ հանդիպած մարդուց: Այդ ժամանակ մեզ մոտեցավ մի ոստիկան և հարցրեց, թե ինչու ենք նստել այստեղ: Ես պատասխանեցի, որ քույրս հիվանդացել է և չի կարողանում քայլել:

Այդ ժամանակ սկսեցին իրար հետևից հարցեր տեղալ: Ես նախապես հորինել էի մի ճշմարտանման պատմություն և ասացի, որ վերադառնում ենք Պոր-Դյո մեր ծնողների մոտ: Նրանք ապրում են շատ հեռու, ծովափին, և մենք արդեն տասը օր է գնում ենք:

Ոստիկանը զարմանքից աչքերը չռել էր:

— Աղջիկը կարող է այստեղ մեռնել, — ասաց նա: — Գնանք ոստիկանատուն:

Բայց Դիելետտան բոլորովին թուլացել էր և չէր կարողանում վեր կենալ: Նա չէր կարողանում քայլել, երբ ես աղերսում էի նրան, չէր կարողանում նաև հիմա, երբ ոստիկանը հրամայում էր:

Այդ ժամանակ ոստիկանը գրկեց նրան և հրամայեց ինձ հետևել իրեն: Հինգ րոպե հետո մեզ հանդիպեց երկրորդ ոստիկանը, և առաջինը պատմեց նրան այն ամենը, ինչ լսել էր ինձնից: Երկրորդ ոստիկանը օգնեց տանել Դիելետտային, և շուտով մենք բոլորս մոտեցանք մի տան, որի դռներին լապտեր էր կախված: Մեծ սենյակում վառվող վառարանի շուրջը նստած էին ևս մի քանի ոստիկան:

Դիելետտան չէր կարողանում խոսել, և ես ստիպված էի պատասխանել նրանց բոլոր հարցերին: Ես կրկին պատմեցի իմ պատմությունը:

— Կարծում եմ, որ աղջիկն արդեն մահացել է,— ասաց ոստիկաններից մեկը:

— Ոչ, բայց դա հեռու չէ: Հարկավոր է նրան տանել ոստիկանական գլխավոր վարչություն:

— Իսկ դու ի՞նչ պետք է անես,— հարցրեց ինձ ոստիկանապետը:— Ապրուստի միջոցներ ունե՞ս:

Ես զարմացած նայեցի նրան, չհասկանալով հարցի իմաստը:

— Փող ունե՞ս:

— Քսան սու:

— Դե լավ... Աշխատիր հենց այսօր երեկոյան հեռանալ քաղաքից: Եթե փողոցներում թափառես, քեզ կձերբակալեն:

Դիելետտային փաթաթեցին վերմակի մեջ, դրեցին պատգարակին, վարագույրները քաշեցին, և երկու ոստիկան, պատգարակը բարձրացնելով, ճանապարհ ընկան:

Ես ցնցված էի: Ոչ, ես չէի կարողանում հավատալ, որ Դիելետտան այդքան ծանր հիվանդացել է և ուզում էի իմանալ, թե ինչ է պատահել նրան: Իսկ եթե ոստիկանները ձերբակալեն ինձ, երբ հանդիպեն փողոցում: Ի՞նչ կլինի այն ժամանակ: Այնուամենայնիվ նրանցից թույլտվություն խնդրեցի ու գնացի պատգարակի հետևից:

Մենք բավական երկար քայլեցինք, անցանք Մենայի կամուրջով և կանգ առանք մի հրապարակում, որի խորքում վեր էր բարձրացել մեծ, գեղեցիկ եկեղեցի: Ինձ թույլ տվեցին բոլորի հետ ներս մտնել: Մն զգեստով մի պարոն հետ քաշեց պատգարակի վարագույրները: Հիմա Դիելետտան կարմիր ծաղկի նման ամբողջովին կարմրել էր: Մն զգեստով պարոնը սիրալիր խոսեց նրա հետ, բայց Դիելետտան լուռ էր: Այդ ժամանակ ես սկսեցի պատասխանել նրա փոխարեն և երրորդ անգամ պատմեցի մեր պատմությունը:

— Ամեն ինչ պարզ է,— ասաց սև զգեստով պարոնը:— Մրսել է ու սաստիկ հոգնել... թոքերի բորբոքում ունի: Հարկավոր է տեղավորել հիվանդանոցում:

Նա մի քանի բառ գրեց թղթի կտորի վրա, և մենք նորից ճանապարհ ընկանք: Լպրծուն ձյան վրա քայլելը շատ դժվար էր, ոստիկանները հաճախ կանգ էին առնում ու հանգստանում, իսկ ես մոտենում էի պատգարակին և խոսում Դիելետտայի հետ: Երբեմն նա թույլ ձայնով պատասխանում էր ինձ, բայց ավելի հաճախ լռում էր:

Մենք ավելի երկար գնացինք, քան առաջին անգամ: Վերջապես կանգ առանք մի սակավամարդ փողոցում, կանաչ ներկած դռան առջև: Մեզ ներս թողեցին բավական մութ մի սենյակ, որտեղ կային սպիտակ խալաթներ հագած շատ մարդիկ:

Ինչպես երևում է, Դյելետտան ինձնից վատ չէր հասկանում, որ հիմա ստիպված կլինենք բաժանվել: Նա հետ քաշեց պատգարակի վարագույրը և տենդից այրվող աչքերով նայեց ինձ:

— Դու ինձ կթողնես այստեղ ու կշարունակես ճանապարհ, — հարցրեց նա:

Բայց ես մոռացել էի իմ պլանները և միայն մտածում էի Դյելետտայի մասին, այն մասին, որ նա բոլորովին մենակ կմնա: Այ, հիմա նա պառկել է այդ սուկալի պատգարակի վրա և խնդրում է, որ չլքեմ իրեն:

— Ոչ, չեմ գնա, — պատասխանեցի ես:

Նա հազիվ հասցրեց հայացքով շնորհակալություն հայտնել, բայց այդ հայացքը բառերից ավելի պերճախոս էր: Նրան տարան:

Շփոթված ու ընկճված, ես անշարժ կանգնել էի, մինչև ինձ մոտեցավ դռնապանը և ասաց, որ գնալու ժամանակն է:

— Կարո՞ղ եմ էլի գալ հիվանդին տեսնելու:

— Այո, կիրակի և հինգշաբթի ընդունելության օր է:

Եվ նա համարյա դուրս հրեց ինձ:

Արդեն մթնել էր, մոտենում էր գիշերը, և շատ տներում լույսերն արդեն վառվում էին: Հիմա իմ գլխավոր խնդիրն էր գիշերելու համար տեղ գտնել: Այն մասին, թե ինչպես և ինչով պետք է ապրեմ Փարիզում մինչև Դյելետտայի ապաքինվելը, որոշեցի մտածել վաղը: Անցել էր այն ժամանակը, երբ ծրագրեր էի կազմում, աշխատելով նախապես գուշակել ամեն ինչ: Երբ ամեն օր իրար ետևից ձախորդություններ են պատահում, դադարում ես մտածել, թե ինչ է սպասում քեզ ապագայում: Թեև հիմա իմ առջև միայն մի խնդիր կար, բայց ոչ կերպ չէի կարողանում վճռել: Ախր չէի էլ ենթադրում, որ այս հսկայական քաղաքում կարող են ինձ նման բազմաթիվ թշվառներ լինել, որոնք հենց այդ նույն ժամին չգիտեն ուր դնեն իրենց հոգնած գլուխը և այնուամենայնիվ վերջ ի վերջո գտնում են և՛ ապաստարան, և՛ մի կտոր հաց: Ես մեծացել էի գյուղում և գիշերելու համար գիտեի միայն այնպիսի տեղեր, ինչպիսին է հին ցախատունը, ախոռը, խոտի դեզը: Իսկ հիմա իմ շուրջը միայն տներ էին, պատեր ու նորից տներ...

Հիվանդանոցից դուրս գալով, ես թեքվեցի դեպի աջ: Անկյունում կարդացի փողոցի անունը. «Ռյու դը-Մեվր» և հայտնվեցի մեծ ծառերով մի լայն զբոսայգում: Թե ուր էր տանում այդ զբոսայգին, ես չգիտեի, և դա ինձ չէր էլ հետաքրքրում: Ես գնալու տեղ չունեի, միևնույն չէ՞, թե ինչ ճանապարհ կընտրեմ: Ես քայլում էի շատ դանդաղ, հոգնածությունից հազիվ քարշ տալով ոտքերս: Ամբողջ օրը համարյա ոտաբոբիկ քայլել էի ձյան վրա, և հիմա ոտքերս կարծես փայտացել էին: Զբոսայգու կողմնային ծառուղում տղաները սահադաշտ էին սարքել: Ես ակամա կանգ առա ու սկսեցի նայել նրանց:

Որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ այդ բազմության մեջ անսպասելիորեն տեսա մի ծանոթի: Դա Վինյալի դերասանախմբի տղաներից էր, որի անունը Բիբոշ էր: Ես նրան հանդիպել եմ Ֆալեզում:

Նրանց բալագանը Լապուլադի սայլի մոտ էր, և մենք երբեմն խաղում էինք միասին: Քանի որ հիմա ես միակ հանդիսատեսն էի, Բիբոշն անմիջապես ճանաչեց ինձ ու մոտեցավ:

— Այդ դո՞ւ ես, Ռոմեն: Ի՞նչ ես անում Փարիզում... Ձեր առյու՞ծն էլ է այստեղ: Ես կուզենայի հանդիպել Դյելետտային:

Ես պատասխանեցի, որ փախել եմ Լապուլադից, միայն այսօր առավոտյան եմ եկել Փարիզ և խիստ մտահոգված եմ նրանով, որ քնելու տեղ չունեմ: Ես ոչինչ չասացի Դյելետտայի մասին, այլ միայն հարցրեցի, թե ինձ չե՞ն ընդունի նրա խումբը:

— Անկասկած կընդունեն, եթե ճարպիկ լակոտ ես: Իսկ դու ճարպի՞կ լակոտ ես:

Ես չէի պատկերացնում, թե ինչպիսի հատկություններով պետք է օժտված լինի «ճարպիկ լակոտը» բայց գիշերելու տեղ ստանալու հնարավորությունն այնքան հրապուրիչ էր, որ ես դրական պատասխան տվեցի:

— Այդ դեպքում համաձայն եմ,— հայտարարեց Բիբոշը:

— Իսկ ի՞նչ կասի տերը:

— Ի՛նչ հաստագլուխ տղա ես: Ես եմ քեզ հրավիրում, ես էլ կտվորեցնեմ պրպտել:

Ես չգիտեի գողերի ժարգոնը և մտածեցի, որ դրանք պարզապես Փարիզում օգտագործվող ինձ անձանոթ բառեր են: Բայց որոշեցի նրա մոտ չարտահայտել զարմանքս, թեև չափազանց ապշած էի, լսելով, որ տասնմեկամյա Բիբոշը, այդ փոքրամարմին տղան դերասանախմբի տերն է:

— Սառե՞լ ես,— տեսնելով, որ ամբողջ մարմնով դողում եմ, հարցրեց Բիբոշը:— Գնանք, ես քեզ կտաքացնեմ:

Նա ինձ տարավ գինու կրպակը և ստիպեց մի բաժակ տաք գինի խմել:

— Հիմա, երբ փորդ մի քիչ լցվեց, գնանք ընթրելու :

Բայց փոխանակ գնալու Փարիզի կենտրոնը, մենք թեքվեցինք աջ և բավական երկար քայլեցինք ամայի փողոցներով, կեղտոտ ու աղքատ տնակների մոտով:

Բիբոշը նկատեց իմ զարմանքն ու սկսեց ծիծաղել:

— Կարծում էիր, թե քեզ հրավիրելու եմ Տյուիլրի՞:

Եվ իսկապես, նա ինձ տանում էր ոչ թե թագավորական պալատ, այլ մի ամայի տեղ: Արդեն երեկո էր, բայց դեռ բոլորովին չէր մթնել: Մենք դուրս եկանք ճանապարհից և գնացինք դաշտի կաճանով: Մի մեծ փոսի եզրին Բիբոշը կանգ առավ.

— Ահա այստեղ է,— ասաց նա:— Ձեռքդ տուր ինձ և տես, վայր չընկնես:

Ըստ երևույթին, մենք իջնում էինք ինչ-որ քարհանք: Անցնելով մեծ քարաբեկորների միջով, մենք մի քանի անգամ թեքվեցինք մերթ աջ, մերթ ձախ և մտանք ստորգետնյա մի սրահ: Բիբոշը գրպանից հանեց մոմը և վառեց: Ես ավելի ու ավելի էի զարմանում...

— Մի րոպե ևս, ու մենք տանն ենք:

Եվ իրոք, նույն պահին էլ ես տեսա քարհանքը լուսավորող մի կարմիր լույս: Գետնին դրված էր մարմանդ այրվող ածուխով լի կրակարան, որի մոտ պառկած էր մոտավորապես Բիբոշի տարիքի մի տղա:

— Էլ ոչ ոք չկա՞, — հարցրեց Բիբոշը:

— Ոչ ոք:

— Այդպես... Իսկ սա իմ ընկերն է: Աշխատիր նրա համար համապատասխան կոշիկ գտնել: Նա դրա կարիքը խիստ զգում է:

Տղան դուրս եկավ և անմիջապես էլ վերադարձավ ամեն տեսակ ոտնամանների մի մեծ կապոցով: Կարելի էր ենթադրել, թե ընկել էմ կոշիկի խանութ:

— Ընտրիր,— ասաց Բիբոշը:— Եվ եթե սովոր ես գուլպաներին, խնդրում եմ չքաշվես, ասա. այդ բարիքից որքան ուզես ունենք:

Չեմ կարող հայտնել, թե ինչպիսի երանություն էի զգում, երբ խոնջացած, փայտացած ոտքերիս հագա բրդյա տաք գուլպաներ և նոր կոշիկներ:

Չէի հասցրել ոտնամանները հագնել, երբ եկան ևս երկու տղա, այնուհետև հայտնվեցին երրորդն ու չորրորդը և, վերջապես, էլի երեք հոգի: Ընդամենը հավաքվեցին ինը տղա: Բիբոշը ներկայացրեց ինձ.

— Սա իմ վաղեմի բարեկամն է բալագանից, նա հրաշալի, ճարպիկ լակոտ է... Դե, իսկ դուք ինչո՞վ կարող եք պարծենալ այսօր:

Բոլորը հերթով սկսեցին շուռ տալ գրպանները: Մեկը բերել էր մի բուդ, մյուսը՝ գինով լի շշեր, իսկ երրորդը գրպանից հանեց արծաթե եղջյուրիկով մի փոքրիկ շիշ:

Լսվեցին բացականչություններ, կատակներ, ծաղրուծանակ:

— Հիանալի է,— նկատեց Բիբոշը:— Հենց ինքն էլ կխամի այդ եղջյուրիկից:

Բոլորը տեղավորվեցին կրակի շուրջը, նստելով ուղղակի գետնին: Բիբոշն ինձ հետ վարվում էր հյուրի նման և առաջինը ինձ էր մատուցում ուտելիքը: Վաղուց արդեն ես չէի տեսել այդպիսի առատություն, նույնիսկ տանը և պարոն Բիբոշի մոտ երբեք այդպիսի համեղ բաներ չէի կերել: Բոլորը հետո սկսեցին ուտել սառը հնդուհավ, իսկ հնդուհավին հետևեց սազի լյարդից պատրաստած պաշտետը: Ես այնպիսի գայլի ախորժակ ունեի, որ ամբողջ խումբը հիացել էր:

— Կեցցե՛ս,— նկատելով իմ թողած տպավորությունը, հայտարարեց Բիբոշը:— Խիստ հաճելի է հյուրասիրել այն բարեկամներին, ովքեր այդպես լավ են խժռում:

Ուտելիքից, տաքությունից, իսկ ավելի շատ հոգնածությունից, քունս անտանելի տանում էր:

— Դու ննջում ես,— ասաց Բիբոշը, տեսնելով, որ աչքերս փակվում են:— Խնդրում եմ չքաշվես: Շատ ափսոսում եմ, որ չեմ կարող թագավորական մահիճ առաջարկել, բայց առանց դրա էլ հիանալի կքնես:

Ես չհամարձակվեցի Բիբոշին հարցնել, թե լավ քնելու համար ինչիս էր պետք ինչ-որ «մահիճ»: Անկասկած դա էլ Փարիզում օգտագործվող բառ է, որ գավառում չգիտեն:

— Քննելուց առաջ մի բաժակ փունջ խմիր,— առաջարկեց Բիբոշը:

Ես հրաժարվեցի փունջից, որով խիստ զարմացրի ամբողջ խմբին և Բիբոշից հարցրեցի, թե որտեղ պառկեմ:

— Հիմա ցույց կտամ:

Բիբոշը նորից վառեց մոմը և, առաջ անցնելով, ինձ տարավ քարհանքի կողասրահը:

Այնտեղ գետնին փռված էր ծղոտե հաստ շերտ, իսկ վերևից մի քանի հաստ բրոյա վերմակ:

— Հիմա քնիր, իսկ վաղը կխոսենք ամեն ինչի մասին:— Եվ մոմը իր հետ տանելով, Բիբոշը հեռացավ:

Ինձ համար մի քիչ սարսափելի էր այդ քարհանքում, որի խորությունը չէի կարողանում որոշել: Միևնույն ժամանակ ես շատ էի ուզում իմանալ, թե ովքեր են իմ նոր ընկերները: Ամեն ինչով լեփ-լեցուն գրպանները, բուդը, արծաթե եղջյուրիկը — այդ ամենը խիստ կասկածելի էր թվում ինձ: Սակայն ես այնպես տանջված էի, որ հոգնածությունը հաղթեց անհանգստությանը և դեռ չէի հասցրել փաթաթվել վերմակի մեջ, երբ վայրկենապես քնեցի: Բիբոշն ասաց. «Վաղը կխոսենք»,— նշանակում է, վաղն ամեն ինչ կպարզվի: Ես լավ ընթրեցի, գիշերելու տեղը տաք էր, իսկ օրն այնքան ծանր էր անցել, որ ուզում էի շուտ մոռանալ դրա մասին: Եվ այնքան ամուր քնեցի, որ նույնիսկ երկու քայլ հեռավորության վրա աղմկող տղաների ձիչերն ու ծիծաղը ամեննին չէին անհանգստացնում ինձ:

Հաջորդ օրն առավոտյան Բիբոշն արթնացրեց ինձ, թե չէ ամբողջ օրը կքնեի:

— Վերցրու այս հնոտիքն ու հագնվիր,— ասաց նա:

Ես հանեցի ցնցոտիներս ու հագա այն շորերը, որ նա գցել էր ծղոտին:

Դա հիանալի տաքատ էր ու բրոյա տաք կուրտկա:

Վերևում ինչ-որ տեղից ընկնում էր ցերեկվա աղոտ լույսը, դժվարությամբ թափանցելով այս խորության մեջ:

— Դե, ծերուկ,— ասաց Բիբոշը, մինչ ես հագնվում էի,— ես մտածում էի քո մասին և ահա թե ինչ որոշեցի: Չէ՞ որ դու քիչ ես գլուխ հանում մեր «արհեստից», ճի՞շտ է:

— Այո, շատ քիչ...

— Այդպես էլ կարծում էի, դա անմիջապես երևում է: Եթե սկսես աշխատել առանց նախապատրաստության, վայրկենապես կբռնվես: Որպեսզի այդ բանը տեղի չունենա, ես քեզ կկցեմ մի ճարպիկ տղայի, և դու կդառնաս նրա «առնետիկը»:

Թեև շատ անհարմար էր խոստովանելը, որ չեմ հասկանում Փարիզում օգտագործվող բառերը, այնուամենայնիվ որոշեցի Բիբոշին հարցնել, թե ինչ է նշանակում «առնետիկ»: Քանի որ պետք է աշխատեմ որպես «առնետիկ», ուստի պետք է իմանամ, թե ինչ բան է դա:

— Պատրա՞ստ ես,— հարցրեց Բիբոշը, տեսնելով, որ աչքերս չռել եմ իր վրա:

— Այո:

— Հիանալի է: Եկ առաջ նախաճաշենք, իսկ հետո ես քեզ կտանեմ բարեկամիս մոտ:

Ես գնացի նրա հետևից: Կրակարանն արդեն մարել էր, և երեկվա կերուխումից հետք անգամ չէր մնացել: Մենք հիմա ավելի մոտիկ էինք ելքին և այստեղ լույսն ավելի շատ էր: Խավարի միջից դուրս էին ցցվել կամարի քարե դիմհարները և ամենուրեք թափված էին քարակույտեր: Պատի փորվածքի միջից Բիբոշը հանեց մի շիշ գինի, մի բոքոն հաց և բուդի մնացորդը:

— Մի քիչ ուտենք, իսկ ինչպես հարկն է կնախաճաշենք քո նոր տիրոջ մոտ:

Այդ ժամանակ ես սիրտ արեցի ու հարցրեցի.

— Չծիծաղես ինձ վրա, Բիբոշ, դու գիտես չէ՞, որ ես Փարիզից չեմ, այդ պատճառով խնդրում եմ բացատրես, թե ինչ է նշանակում «առնետիկ»:

Իմ հարցն այնքան ծիծաղելի թվաց նրան, որ քիչ մնաց Բիբոշը ծիծաղելիս խեղդվեր:

— Այ թե հիմարներ են ապրում ձեր կողմերում,— ասաց նա:— Դե իմացիր, «առնետիկը» ճարպիկ լակոտ է, կամ, այլ խոսքով, մեր տարիքի ճարպիկ ու ժիր տղա: Դու, հավանաբար, չգիտես նաև, թե առևտրականներն ինչպես են կողպում իրենց կրպակները, երբ գնում են ճաշելու:

Չհասկանալով, թե ինչ կապ կարող է լինել այդ երկուսի միջև, ես պատասխանեցի, որ իրոք չգիտեմ, թե առևտրականներն ինչպես են կողպում իրենց կրպակները:

— Նրանք մուտքը փակում են ցածրիկ միջնորմով,— շարունակեց Բիբոշը, ինձ հանձնելով շիշը, որ արդեն հասցրել էր կիսով չափ դատարկել:— Այդ միջնորմին ամրացված է զսպանակ, որը միացած է զանգին: Եթե որևէ մեկը ցանկանում է մտնել խանութ և հրում է միջնորմը, զանգը հնչում է, և առևտրականը, որ ճաշում է ներսի սենյակում կամ խոհանոցում, դուրս է գալիս տեսնելու, թե ով է եկել: Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու համար է «առնետիկը»:

— Ոչ, չեմ հասկանում: Գուցե նա պետք է փոխարինի՞ զանգին:

Բիբոշն այնպես ծիծաղեց, որ քիչ մնաց ծիծաղից շունչը կտրվեր: Դադարելով հազալուց, նա նախ և առաջ մի հարված հասցրեց վզակոթիս:

— Եթե մեկ էլ խելքիդ փչի այդպիսի հիմարություն ասել, նախօրոք զգուշացրու, թե չէ ծիծաղից կմեռնեմ: «Առնետիկը» չի փոխարինում զանգին, ընդհակառակը, նա չի թողնում, որ զանգը հնչի: Դրա համար «առնետիկին» անց են կացնում միջնորմի վրայով, իսկ այնուհետև նա սողալով հասնում է դրամարկդին, թոցնում է կուտակված գումարը և հանձնում ընկերոջը: Վերջինս դրսից հսկում է, «առնետիկին» գրկում է ու դուրս բերում միջնորմի վրայից: Ահա և բոլորը: Առևտրականը նույնիսկ չի էլ կասկածում, թե իրեն կողոպտել են... Դե, ինչ կասես, համաձայն ես:

Ես քար էի կտրել:

— Բայց չէ՞ որ դա գողություն է:

— Իհարկե, իսկ ի՞նչ է որ:

— Նշանակում է, դու գո՞ղ ես:

— Այո, գող եմ: Իսկ դու ի՞նչ ես: Հիմա՛ր:

Ես լուռ էի: Մտածում էի այն մասին, թե ինչ տեսա երեկոյան և հասկացա, որ Բիբոշն իրավացի է, որ ինձ հիմար է անվանում: Մակայն հարկավոր էր որևէ վճիռ ընդունել:

— Լսիր,— ասացի ես նրան,— եթե այդ գործում հույսդ դրել ես ինձ վրա, ապա սխալվում ես:

Այս անգամ նա չծիծաղեց, այլ սաստիկ բարկացավ: Ես չէի արդարացրել նրա հույսերը: Իսկ եթե հիմա բաց թողնի ինձ, կարող եմ մատնել:

— Ոչ,— բղավեց նա,— ես թույլ չեմ տա, որ մեզ մատնես: Դու այստեղից այլևս չես գնա:

— Ես անմիջապես կգնամ:

Չէի հասցրել արտասանել այդ բառերը, երբ նա նետվեց ինձ վրա: Բիբոշն ավելի ճկուն էր ու ճարպիկ, քան ես, բայց փոխարենը ես նրանից ավելի ուժեղ էի: Մենք երկար չկռվեցինք: Սկզբից, երբ Բիբոշն անսպասելիորեն թռավ վզիս, նա ինձ գետին գլորեց, բայց ես արագ դուրս պրծա և խեղդեցի նրան:

— Դե ինչ, հիմա բաց կթողնե՞ս:

— Իսկ դու չե՞ս մատնի:

— Ոչ:

— Երդվիր:

— Երդվում եմ,— ասացի ես ու ոտքի ելա:

— Հիմար ես դու,— կատաղած բղավեց նա:— Կատարյալ հիմար: Տեսնենք, թե ինչպես կապրես քո ազնվությամբ: Եթե երեկ պատահաբար չհանդիպեիր ինձ, հիմա արդեն սատկել էիր սովից ու ցրտից: Դու ողջ ես մնացել միայն այն պատճառով, որ կերել ես գողացած խոզապուխտ և խմել գողացած գինի: Եթե ոտքերդ չեն մրսում, ապա այն պատճառով, որ քեզ տվեցի գողացած կոշիկներ: Եվ չես սառչի միայն այն պատճառով, որ հագիդ գողացած շորեր են:

Հրաշալի է տաք զգեստը: Ես այնպես լավ ու հարմար էի զգում ինձ դրա մեջ, կարծես ամբողջ կյանքում իմն էր եղել:

— Մոմը տուր ինձ,— ասացի ես Բիբոշին:

— Ինչո՞ւ:

— Ուզում եմ հին շորերս վերցնել:

— Մի՞ թե հագուստը երեսովդ եմ տալիս: Ես նվիրում եմ քեզ:

— Շնորհակալություն, բայց ես չեմ վերցնի:

Ուսերը թոթվելով, Բիբոշն իմ հետևից եկավ այն սրահը, ուր անց էի կացրել գիշերը:

Ես հանեցի նրա տված զգեստը և հագա դեռևս չչորացած ցնցոտիներս: Շատ տհաճ էր դրանք հագնել, իսկ երբ սկսեցի հագնել հին կոշիկներս, պարզվեց, որ մեկը բոլորովին մաշվել է: Բիբոշը լուռ նայում էր ինձ: Ես ամաչեցի իմ չքավորությունից և ականայից դեմքս շրջեցի:

— Որ հիմար ես, դա անկասկած է,—բարեսրտորեն ասաց նա:— Բայց քո վարմունքը, հավատո՞ւմ ես, սաստիկ հուզում է ինձ:— Եվ նա հարվածեց իր կրծքին:— Ասա, մի՞ թե այդքան հաճելի է, երբ ազնիվ ես զգում:

— Իսկ ինչո՞ւ ինքդ չես փորձում:

— Ուշ է:

— Իսկ եթե քեզ ձերբակալեն ու բանտ նստեցնեն, ի՞նչ կասի մայրդ:

— Մա՛յրս: Ես մայր չունեմ և, խնդրում եմ, այդ մասին ինձ հետ չխոսես:

Ես ուզում էի շարունակել, բայց նա ընդհատեց ինձ:

— Բավական է գլխիս քարոզ կարդաս,— բղավեց նա:— Հանգիստ թող ինձ: Միայն թե չեմ ուզում, որ այդ տեսքով գնաս: Եթե չես ցանկանում հագնել այդ շորերը, որովհետև դրանք գողացված են, ապա գուցե կվերցնե՞ս այն զգեստը, որ հագնում էի, երբ աշխատում էի բալագանում: Ես դրանք ձեռք եմ բերել ազնիվ աշխատանքով: Վերցրու որպես հիշատակ:

Ես երախտագիտությամբ համաձայնվեցի:

— Լավ,— շարունակեց Բիբոշը,— շատ ուրախ եմ: Գնանք ինձ հետ, ես դրանք կտամ քեզ:

Մենք վերադարձանք Փարիզ: Նա ինձ բերեց ուղեկալի մոտ գտնվող մի տուն, որտեղ կահավորված սենյակներ էին վարձով տալիս: Մենք բարձրացանք մի սենյակ, և նա պահարանից հանեց տաբատ ու կուրտկա, որոնք Ֆալեզում իրոք տեսել էի նրա հագին: Դրանց ավելացրեց նաև մի գույզ կոշիկ, որոնք թեպետ այնքան էլ նոր չէին, բայց դեռ բավական ամուր էին:

— Իսկ հիմա գնաս բարո՛վ,— ասաց նա, երբ ես հագնվեցի:— Եթե հանդիպես մեր խմբից որևէ մեկին, ձևացրու, թե չես ճանաչում:

Դեռ ժամը տասը չէր խփել: Գիշերելու տեղ փնտրելու համար դեռ մի ամբողջ օր ժամանակ ունեի:

Եղանակը չոր էր: Հագուստս ու կոշիկներս տաք էին և փորս էլ կուշտ էր, այդ պատճառով էլ քիչ էի մտահոգված, թե ինչպես կացարան գտնեմ, թեև Փարիզում դա շատ դժվար գործ էր:

Դեռ չէր կարելի այցելել Դյելետտային և, հույսս դնելով երջանիկ պատահականության վրա, գնացի ուր այքս կտրում էր:

Սակայն անցավ երկու ժամ, և ես ոչինչ չգտա, ոչ մի բան չմտածեցի, թեև եղա ամենատարբեր թաղամասերում: Չարժե, թերևս, հույս դնել պատահականության վրա. ավելի լավ է ինքս հոգամ իմ մասին: Եվ ես գնացի դեպի Սենան, որոշելով գնալ Կենտրոնական շուկա: Գուցե այն բարի կլինը, որ մեզ նվիրեց քսան սու, որևէ աշխատանք կգտնի ինձ համար, կամ կսովորեցնի ինչպես գտնել:

Սկզբում նա ինձ չճանաչեց Բիբոշի զգեստով: Հետո, երբ բացատրեցի, թե ով եմ ես, նա հարցրեց, թե ուր եմ տարել քրոջս: Ես նրան պատմեցի այն ամենը, ինչ տեղի էր ունեցել նախորդ օրը և տեսա, որ իմ խոսքերը հուզեցին նրան: Այն ժամանակ ավելացրի, որ Փարիզում մենակ չեմ թողնի Դյելետտային և որոշել եմ սպասել մինչև նրա ապաքինվելը: Բայց դրա համար պետք է որևէ աշխատանք գտնեմ: Զիմանալով ում դիմել, ես մտածեցի նրա մասին և որոշեցի...

— Որոշեցիր, որ հարկավոր է գնալ մորաքույր Բերսոյի մո՞տ,— ընդհատեց ինձ կինը:— Լավ ես արել, տղաս: Ինձ համար հաճելի է, եթե դեմքիցս գուշակել ես, որ ես այնպիսի կին չեմ, որ թույլ տամ երեխան քաղցից մեռնի փողոցում: Թեպետ ես հարուստ չեմ, բայց բարի սիրտ ունեմ:

Նա մոտ կանչեց երկու-երեք հարևանուհու, և նրանք սկսեցին խորհրդակցել, թե որտեղ տեղավորեն ինձ: Դա հեշտ գործ չէր, որովհետև սովորաբար երեխաներին շուկայում չեն վերցնում: Վերջապես երկար բանակցություններից ու հարցուփորձից հետո իմանալով, որ պարզ գրել գիտեմ, միահամուռ որոշեցին, որ կարող եմ արտագրել շուկայում վաճառվող ապրանքների մասին հայտարարություններն ու թղթերը, եթե միայն ինձ համար ազատ տեղ ճարվի:

Ես չէի մասնակցում այդ իրարանցմանը, որ, ինչպես հետագայում իմացա, բավական դժվար գործ էր: Միայն գիտեմ, որ հաջորդ օրն առավոտյան ժամը հինգին ինձ նստեցրին այն վաճառասեղանի կողքին դրված փոքրիկ սեղանի մոտ, որտեղ աճուրդով ձուկ էր վաճառվում, և ես պետք է արտագրեի փոքրիկ հաշիվներ: Գործը բարդ չէր, ես գրում էի արագ ու պարզ: Երբ մորաքույր Բերսոն ներս մտավ իմանալու, արդյոք գլուխ հանո՞ւմ եմ աշխատանքից, ինձ գովեցին և ասացին, որ օրական ստանալու եմ երեսուն սո: Աշխատավարձը բարձր չէր, բայց մորաքույր Բերսոն թույլ տվեց ինձ գիշերել իր կրպակում, իսկ սնվելու համար այդ գումարը լի ու լի բավական էր:

Դյելետտային հիվանդանոց պատկեցրին երկուշաբթի: Ես անհամբեր սպասում էի հինգշաբթի օրվան և, այդ օրն աշխատանքն ավարտելով, անմիջապես գնացի Սևր փողոցը: Շուկայում ինձ տվել էին մեծ քանակությամբ նարինջ, որով լցրել էի գրպաններս: Ես շատ էի անհանգստանում Դյելետտայի համար, այդ պատճառով էլ ընդունելության ժամից շատ շուտ էի եկել: Ինչպե՞ս է նա: Արդյոք ո՞ղջ է: Իսկ եթե հանկարծ մահացե՞լ է:

Երբ ինձ ցույց տվեցին նրա հիվանդասենյակը, ես իսկույն վազեցի այնտեղ: Հիվանդանոցի ծառայողը կանգնեցրեց ինձ և խստորեն ասաց, որ եթե այդպես աղմկեմ, անմիջապես դուրս կվճռեն ինձ: Եվ ես սկսեցի քայլել ոտքերիս մատների վրա:

Դյելետտան ոչ միայն ողջ էր, այլև արդեն սկսել էր կազդուրվել: Երբեք չեմ մոռանա նրա աչքերի արտահայտությունը, երբ տեսավ ինձ:

— Այդպես էլ գիտեի, որ այսօր անպայման կգաս, եթե միայն չես սառել փողոցում,— ասաց նա:

Դյելետտան խնդրեց պատմել, թե ինչ եմ արել այն օրից, երբ բաժանվեցինք իրարից: Եվ մինչև վերջ լսելով քարհանքում գիշերելու իմ պատմությունը, ասաց.

— Լավ է, շատ լավ է, իմ թանկագին եղբայր:

Առաջ նա երբեք ինձ եղբայր չէր անվանել:

— Համբուրիք ինձ,— այտը դեմ անելով, խնդրեց նա:

Իսկ երբ Դյելետտան իմացավ, թե ինչ է արել ինձ համար մորաքույր Բերսոն, արտասունքն աչքերին բացականչեց.

— Ի՛նչ հրաշալի կին է:

Հետո նա սկսեց պատասխանել իմ հարցերին: Սկզբում նրա վիճակը շատ ծանր էր:

Գիտակցությունը կորցրել է, շատ բարձր ջերմություն է ունեցել և զառանցել է: Բայց իրեն շատ լավ են խնամել: Բուժքույրերից մեկը առանձնապես սիրալիր ու բարի է եղել նրա նկատմամբ:

— Այնուամենայնիվ ուզում եմ շուտ դուրս գալ այստեղից,— շշուկով ասաց Դելետտան:— Այստեղ այնպես սարսափելի է: Անցյալ գիշեր իմ կողքին մի աղջիկ մահացավ: Երբ նրան դրեցին մեծ արկղի մեջ, ես շատ վատ զգացի:

Դելետտան իզուր էր կարծում, թե շուտով դուրս կգա հիվանդանոցից: Նրա հիվանդությունը շատ լուրջ էր, և ապաքինումը խիստ դանդաղ էր ընթանում: Նա երկու ամսից ավելի պառկեց անկողնում:

Ասենք, ամեն ինչ մեզ համար շատ բարեհաջող դասավորվեց:

Այդ ժամանակամիջոցում Դելետտային խնամողները՝ բուժքույրը, գլխավոր բժիշկն ու նրա օգնականը, սիրեցին նրան, որովհետև Դելետտան բոլորի հետ սիրալիք էր ու բարեհամբույր: Բոլորն արդեն գիտեին մեր պատմությունը,— գոնե այն, ինչ մենք հնարավոր էինք համարում պատմել,— և մեզ վերաբերվում էին անկեղծ կարեկցանքով: Երբ կիրակի ու հինգշաբթի օրերը գնում էի այցելության, ինձ դիմավորում էին ինչպես վաղեմի բարեկամի:

Վերջապես եկավ հիվանդանոցից Դելետտայի դուրս գալու օրը: Բժիշկն ու բուժքույրն ասացին, որ հոգացել են այն մասին, որ մենք ստիպված չլինենք ոտքով վերադառնալ Պոր-Դյո: Նրանք գտել են գյուղերից ծծմայրեր բերող մի գործակալի և հանձնարարել նրան, որ մեզ հասցնի Վիր: Վիրում գործակալը պետք է մեզ նստեցնի Պոր-Դյո մեկնող դիլիժանսը և վճարի մեր ճանապարհածախսը: Հիվանդասենյակներում դրամահավաք կազմակերպեցին և մեզ տվեցին քսանհինգ ֆրանկ: Դա լի ու լի բավական էր: Դելետտայի հիվանդության ընթացքում ես շատ էի մտածում մեր հետագա ճանապարհորդության մասին, և չիմանալով, որ ամեն ինչ այդպիսի ընթացքը կստանա, ամեն օր հետ էի դնում մի քանի սու: Այդպես ես հավաքեցի ևս երկու ֆրանկ:

Ինչպիսի՜ մեծ տարբերություն կար երկու ամիս առաջ մեր Փարիզ գալու և այժմ մեկնելու միջև: Բարի մորաքույր Բերտոն մեզ ուղեկցեց մինչև սայլը և ճանապարհի համար ամեն տեսակ ուտելիք տվեց:

Ճիշտ է, սայլը շատ անհարմար փոխադրական է. փայտե երկար նստարաններ և ոտքերի տակ մի քիչ ծղոտ, ահա բոլորը: Բայց մեզ համար դա շքեղություն էր:

Հունվարի վերջն էր, սակայն եղանակը ցուրտ չէր: Ճանապարհորդությունը մեզ շատ դուր եկավ: Մենք երես առած չէինք և շուտով բարեկամացանք ծծմայրերի հետ, որոնք դաստիարակության վերցրած երեխաների հետ միասին վերադառնում էին գյուղ: Երբ փոքրիկներն սկսում էին չափազանց ուժեղ բղավել կամ երբ նրանց բարուրում էին, մենք իջնում էինք սայլից ու գնում ոտքով:

Վիրում գործակալը մեզ նստեցրեց դիլիժանս, որը մեզ համարյա տեղ հասցրեց: Հիմա մինչև մեր ավանը մնացել էր մոտավորապես մեկ լյո: Կիրակի էր, ուղիղ յոթ ամիս էր անցել այն օրից, ինչ ես հեռացել էի տանից:

Որոշ ժամանակ մենք քայլում էինք լուռ ու շփոթված, երկուսս էլ ասելիք ունեինք, բայց չգիտեինք ինչից սկսել: Դելետտան առաջինն ընդհատեց այդ ճնշող լռությունը:

— Կամաց քայլենք,— ասաց նա,— բան պետք է ասեմ քեզ:

Սկիզբը դրված էր, հիմա արդեն ես սկսեցի խոսել:

— Ես նույնպես ասելիք ունեմ: Ահա նամակը, այն կհանձնես մայրիկին:

— Ինչո՞ւ ես նամակ տալիս: Ինչո՞ւ չես ուզում ինձ հետ ներս մտնել: Ինչո՞ւ չես ուզում ինձ տանել մայրիկի մոտ: Չէ՞ որ դու չգիտես, արդյոք նա կցանկանա՞ ընդունել ինձ: Իսկ եթե դուրս անի, ես ո՞ւր կգնամ:

— Այդպես մի խոսիր, չէ՞ որ դու չես ճանաչում մայրիկին:

— Ոչ, ես գիտեմ, թե նա ինչպիսին է: Բայց հայտնի չէ, արդյոք կների՞ ինձ, որ քեզ չեմ համոզել մնալ: Կհավատա՞, որ թախանձել ու աղերսել եմ, իսկ դու չես լսել և այնուամենայնիվ գնացել ես: Հապա մտածիր, դու ինձ ուղեկցել ես մինչև տուն և չես ցանկացել ներս մտնել ու գրկել մայրիկիդ: Դժվար է դրան հավատալ:

— Հենց այդ մասին էլ գրում եմ նրան իմ նամակում: Ես գրում եմ, որ գնում եմ առանց նրա հետ տեսնվելու միայն այն պատճառով, որ եթե տեսնեմ նրան, այլևս գնալու ուժ չեմ ունենա: Իսկ եթե չգնամ, ստիպված կլինեմ վերադառնալ հորեղբորս մոտ: Մենք գրավոր պայմանագիր ունենք, իսկ հորեղբայրն այնպիսի մարդ չի, որ հրաժարվի իմ նկատմամբ ունեցած իրավունքներից:

— Գուցե մայրիկդ որևէ միջոց կգտնի քեզ հետ վերցնելու հորեղբորից:

— Եթե մայրիկը խախտի պայմանագիրը, ստիպված կլինի տուգանք վճարել: Իսկ եթե ես ծովային ծառայության մտնեմ, հորեղբայրս ոչինչ չի կարող անել ոչ նրա, ոչ էլ ինձ հետ, երբ վերադառնամ, որովհետև նավաստին պատկանում է պետությանը, իսկ պետությունը հորեղբորիցս ավելի գորեղ է: Տեսնում ես, ես ամեն ինչի մասին արդեն մտածել եմ:

— Իհարկե, ես չգիտեմ այդ բոլոր կանոնները և չեմ կարող գլուխ հանել դրանցից, բայց զգում եմ, որ դու վատ ես վարվում:

Ինքս էլ լրիվ համոզված չեի իմ իրավացիության մեջ և երբ մտածում էի մայրիկի մասին, խիղճս շատ էր տանջում, այդ պատճառով էլ նրա առարկությունները զայրացրին ինձ:

— Քո կարծիքով, ես վա՞տ եմ վարվում:

— Այո, շատ վատ: Եվ եթե մայրիկդ սկսի դատապարտել, եթե ասի, որ դու չես սիրում իրեն, ես չեմ կարողանա պաշտպանել քեզ, որովհետև ինքս էլ եմ այդպես մտածում:

Ես չեի պատասխանում և մի բոլոր լուր քայլեցի Դյելետտայի կողքից: Վշտացած ու հուզված, ես արդեն պատրաստ էի զիջել, բայց շուտով տիրապետեցի ինձ:

— Երբևէ քեզ հետ դաժան վարվե՞լ եմ:

— Ոչ, երբեք:

— Ինչ ես կարծում, կարո՞ղ եմ ուրիշների հետ դաժան լինել:

Դյելետտան նայեց ինձ:

— Դե, պատասխանի՛ր:

— Ոչ:

— Գուցե մտածում ես, որ չե՞մ սիրում մայրիկիս, որ դիտավորյալ եմ նրան ստիպում տանջվել:

Դիլեմատան հույս ուներ համոզել ինձ, բայց տեսնելով, որ շարունակում եմ համառել, լռեց: Ես նորից սկսեցի խոսել.

— Այդ դեպքում, եթե թեկուզ մի փոքր շնորհակալ ես ինձնից, եթե հավատում ես, որ ես չար չեմ, այլևս այդ մասին չխոսես ինձ հետ: Գուցե համոզես ինձ մնալ, բայց ես գիտեմ, որ դա կդժբախտացնի բոլորիս:

Դիլեմատան այլևս ոչ մի բառ չասաց, և մենք տխուր ու ընկճված, լուռ քայլում էինք կողք-կողքի:

Որևէ մեկին չհանդիպելու համար, ես ընտրեցի լանդերի միջով անցնող ճանապարհը, որը մեզ հասցրեց մինչև մեր բակին կպած առուն: Եկեղեցում զանգահարությունն ավարտվել էր: Նշանակում է, պատարագը վերջացել է, և մայրիկը վերադարձել է տուն:

— Ահա մեր տունը,— փշենու թփերում թաքնված ասացի ես և ցույց տվեցի այն տունը, որտեղ երջանիկ եմ եղել և որտեղ ինձ սիրել են:

Դողդողացող ձայնիցս Դիլեմատան հասկացավ, որ սաստիկ հուզված եմ:

— Ռոմե՛ն,— թախանձագին ասաց նա:

Բայց ես ձևացրի, թե չեմ նկատում, ինչպիսի ջերմ պաղատանքով է նա արտասանում իմ անունը:

— Կիջնես ներքև,— արագ-արագ սկսեցի խոսել ես,— կմտնես տուն, նամակը կտաս մայրիկին ու կասես. «Ահա, ձեր որդուց նամակ»: Համոզված եղիր, որ կարդալուց հետո նա քեզ բաց չի թողնի: Ես կվերադառնամ կես տարի հետո: Հավրից կգրեմ ձեզ: Մնաս բարո՛վ:

Ես ուզում էի վազել, բայց Դիլեմատան նետվեց դեպի ինձ:

— Թող ինձ, հետ մի պահիր: Տեսնում ես, չե՞, որ հիմա ես լաց կլինեմ:

Նա իջեցրեց ձեռքերը:

— Քո փոխարեն համբուրե՛մ նրան, Ռոմեն:

Ես արդեն մի քանի քայլ հեռացել էի, բայց վերադարձա և գրկելով Դիլեմատային, ամուր համբուրեցի: Ես զգացի, որ նրա դեմքն ամբողջովին թրջվել էր արցունքներից:

«Եթե հենց հիմա չգնամ, ապա այլևս գնալու ուժ չեմ ունենա»,— մտածեցի ես և առանց ետ նայելու սրընթաց վազեցի:

Սակայն շուտով կանգ առա, սողալով վերադարձա ու թաքնվեցի փշենու թփերում: Դիլեմատան իջավ դեպի բակը և մտավ տուն:

Երկար ժամանակ նա դուրս չէր գալիս: Ես ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէի լսում, տանջվում էի անհանգստությունից: Իսկ եթե մայրիկն այլևս այստե՞ղ չի, եթե նա էլ Դիլեմատայի մոր նման անհետացե՞լ է...

Բայց երբ այդ սոսկալի միտքը ծագեց իմ գլխում, տան շեմքին հայտնվեց Դիլեմատան, իսկ նրա հետևից դուրս եկավ նաև մայրիկը:

Նա ողջ էր, Դիլեմատան նրա հետ էր, նրանք իրար ձեռք էին բռնել, երկուսի աչքերն էլ լացակումած էին: Ես նետվեցի դեպի առուն:

Երեք ժամ հետո արդեն նստած էի դիլիժանսում, իսկ երկու օր անց, ետևում թողնելով Կանն ու Գոնֆլերը, հասա Հավրը: Իմ դրամապանակում դեռ յոթ ֆրանկ կար:

XII

Ես կարծում էի, թե հենց որ հայտնվեմ Հավրում, անմիջապես ինձ ծառայության կընդունեն:

Հասնելով Հավր, իսկույն գնացի արտաքին նավահանգիստ և սկսեցի ծովափում թափառել ու հարմար նավ որոնել: Թագավորական նավանորոգարանում կանգնած էին մի քանի շոգենավ, բայց դրանք ինձ դուր չեկան: Բարրի նավանորոգարանում ես տեսա ամերիկական մեծ նավեր, որոնցից բամբակի հսկայական հակեր էին բեռնաթափում ծովափ: Սակայն դրանք էլ չհրապուրեցին ինձ. ուզում էի ֆրանսիական նավ գտնել:

Առևտրական նավանորոգարանի շուրջը մի պտույտ կատարելով, ես հիացա. այնտեղ կանգնած էին աշխարհի բոլոր երկրների նավերը: Կային և մեծ, և փոքր նավեր, կայմերի մի ամբողջ անտառ էր, զարդարված ծովադրոշներով ու պատվադրոշներով: Այդ տեսարանը Փարիզից անհամեմատ ավելի գրավիչ թվաց ինձ:

Որոշ նավերից եղեգնաշաքարի այնպիսի ուժեղ հոտ էր գալիս, որ բերանիս ջուրը գնաց: Մյուսները պղպեղի ու դարչինի անուշ բուրմունք էին արձակում: Նավերի մի մասը բեռնաթափում էին, իսկ մյուսներին ապրանք էին բեռնում: Մաքսային աստիճանավորները հետևում էին, թե ինչպես են դուրս բերում սուրճով լի պարկերը և մելամաղձոտ տեսքով լսում էին նավաստիների երգը:

Նավերից մեկն առանձնապես դուր եկավ ինձ: Դա ոչ մեծ եռակայմ նավ էր, որն ամբողջովին սպիտակ էր և երկնագույն եզրագիծ ուներ: Կայմապարանին ամրացրած ցուցատախտակի վրա կարդացի. «Ապրանքով բեռնված «Լուսաստղ» անհապաղ մեկնում է Պերնամբուկո և Սան-Մավվադոր: Նավապետ Ֆրիգար»: Ինչպիսի՜ հրաշալի ճանապարհորդություն կարելի է կատարել այս գեղեցիկ, սպիտակ-երկնագույն նավով: Պերնամբուկո՛ և Սան-Մավվադոր՛, արդյոք հնարավո՞ր է ամբողջ աշխարհում ավելի հրապուրիչ անուններ գտնել:

Ես բարձրացա տախտակամած: Նավաստիներն ու բանվորները զբաղված էին բեռնելով: Լայն բացված նավամբարի մեջ իջեցնում էին շոթաների վրա ճոճվող ծանր արկղեր: Սկզբում ինձ վրա ոչ մի ուշադրություն չդարձրեցին: Բայց այնքան երկար կանգնեցի անշարժ, չհամարձակվելով մոտենալ իր կողքով տարվող արկղների քանակը գրի առնող մարդուն, որին ես նավապետի տեղ էի դրել, որ ի վերջո նա ինքը նկատեց ինձ:

— Հեռացի՛ր այստեղից,— գոռաց նա ինձ վրա:

— Ներեցեք, պարոն, ես ուզում եմ ձեզ հետ խոսել:

Եվ ես խնդրեցի նրան, որ ինձ վերցնի որպես կրտսեր նավաստի:

Նա նույնիսկ չպատասխանեց, այլ ձեռքի շարժումով ցույց տվեց, որ կարող եմ գնալ այնտեղ, որտեղից եկել եմ:

— Բայց, պարոն...

Նա բռունցքով սպառնաց ինձ, և ես նվաստացած ու, ճիշտն ասած, փոքր-ինչ անհանգստացած, հեռացա: Արդյոք կընդունեն ինձ որևէ նավում:

Սակայն պետք չէր հուսալքվել ու չհավատալ: Ես շարունակեցի ճանապարհս: Ինչպես երևում է, «Լուսաստղն» ինձ համար չափազանց շքեղ նավ էր: Այդ իսկ պատճառով ընտրեցի «Կոնգր» անունով մի սև ու կեղտոտ բրիգ, որն ուղևորվում էր Տամպիկո: Այստեղ ինձ պարզ ու կոնկրետ ասացին, որ իրենց ոչ ոք պետք չէ: Երբորդ նավում ես որոշեցի դիմել ոչ թե նավապետին, այլ մի նավաստու: Երբ շարադրեցի իմ խնդրանքը, նա ուսերը թոթվեց ու ինձ անվանեց զվարճալի տղա. դրանից ավելի ոչինչ չկարողացա ստանալ նրանից: Վերջապես դեպի Աֆրիկայի ափերն ուղևորվող երկկայան առագաստանավի նավապետը, որն ամենևին վստահություն չներշնչող արտաքին ուներ, համաձայնվեց վերցնել ինձ: Բայց իմանալով, որ ես հայր չունեմ, որ կարողանար պայմանագիր ստորագրել նրա հետ, որ ես ծովային չեմ, որ ոչ միայն չունեմ իրերի պարկ, այլև ընդհանրապես նավաստուն անհրաժեշտ ոչ մի իր, նա հրամայեց ինձ անմիջապես հեռանալ, քանի դեռ չեմ ճաշակել նրա բռունցքները:

Դրությունս լավ չէր, և ես ինձ վատ զգացի: «Մի՞ թե ստիպված կլինեմ վերադառնալ Պոր-Դո»: Երբ մտածեցի, որ կտեսնեմ մայրիկին ու Դելետտային, սաստիկ ուրախացա: Սակայն հորեղբայրս... չէ՞ որ պետք է ծառայել նրա մոտ: Ես չէի մոռացել այդ չարաբաստիկ պարտավորության մասին, ուստի շարունակեցի որոնումները:

Շրջելով բոլոր նավանորոգարանները, ես կրկին վերադարձա արտաքին նավահանգիստ: Մակընթացությունն սկսվել էր, և արդեն մի քանի ձկնորսական նավակներ դուրս էին եկել բաց ծով: Ես գնացի ծովապատնեշ, որպեսզի տեսնեմ, թե նավերն ինչպես են մտնում նավահանգիստ ու դուրս գալիս: Որքա՞ն վաղուց չեմ հիացել այդ գեղեցիկ տեսարանով: Սկսված մակընթացությունը, ծովային անձայրածիր հեռաստանը, Կանից, Ռուանից, Գոնֆլերից եկած նավակները, հեռավոր նավարկության մեկնող մեծ նավերը, թաշկինակներ թափահարող ուղևորների վերջին կանչերը, նավաստիների աղաղակները, ճախարակների ու պարանասարքերի ճռոռոցը, անհամար սպիտակ առագաստները, որոնք լցրել էին ամբողջ խարսխակայանն ու հասել մինչև հորիզոն,— այս տեսարանը հրապուրել էր ինձ, և ես մոռացել էի հոգսերս:

Ճաղաշարին հենված, ես երկու ժամից ավելի կանգնեցի այնտեղ, երբ հանկարծ զգացի, որ մեկը քաշում է մազերս: Ջարմացած ետ նայեցի և իմ առջև տեսա Հերմանին՝ Լապոլադի խմբի երաժիշտներից մեկին:

— Միթե՞ Լապոլադը Հավրում է,— այնպիսի սարսափով հարցրեցի ես, որ ծիծաղից Հերմանը մի պահ չկարողացավ ոչինչ պատասխանել:

Վերջապես, փոքր-ինչ հանգստանալով, նա պատմեց, որ ինքն էլ է հեռացել Լապոլադից և հիմա պատրաստվում է մեկնել եղբոր մոտ, որն ապրում է Էկվադորի հանրապետությունում: Հիմա Լապոլադից զգուշանալու հարկ չկա. նա չի փնտրի ինձ, որովհետև բավականին մեծ ժառանգություն է ստացել և վաճառել իր գազանանոցը, ավելի ճիշտ՝ այն, ինչ մնացել էր գազանանոցից. չէ՞ որ մեր փախուստից երկու շաբաթ հետո խեղճ Մուտոնը վշտից ու քաղցից սատկել էր: Դելետտայի գնալուց հետո նա դարձել էր կատաղած ու մոայլ և համառորեն հրաժարվում էր ուտելիքից:

Միայն պատրաստ էր խժռել Լապոլադին և, նկատելով նրան, սկսում էր կատաղաբար դեռ ու դեն նետվել վանդակում: Սակայն Լապոլադն ամենևին չէր ցանկանում սեփական կյանքի գնով փրկել

առյուծի կյանքը, և տարաբախտ Մուտոնը սատկեց, զոն գնալով Դելետտայի հանդեպ տաճած սիրուն ու հավատարմությանը:

Հերմանն ինձ հարցրեց՝ արդյոք դարձե՞լ եմ նավաստի, և ես նրան պատմեցի, թե ինչպիսի անհաջողության եմ հանդիպել:

Հերմանն իզուր չէր այդքան տարիներ անցկացրել բալագանում. նա ամեն տեսակ հնարանքների վարպետ էր:

— Ուզու՞մ ես եղբորդ անվան տակ քո փոխարեն ստորագրեմ պայմանագիրը, — առաջարկեց նա:

— Իսկ որտեղի՞ց փող գտնեմ հանդերձանքի համար:

Ահա թե որն էր գլխավոր դժվարությունը: Հերմանն էլ ինձ նման աղքատ էր: Նրա ճանապարհածախսը վճարել էր եղբայրը և նույնիսկ մեր ունեցած ամբողջ դրամը գումարելով, չէինք կարող գնել բոլոր անհրաժեշտ իրերը:

Ստիպված էինք հրաժարվել այդ ծրագրից: Մի փոքր խրախուսելու և զվարճացնելու համար, Հերմանն ինձ տարավ ճաշելու, այնուհետև մենք նրա հետ գնացինք թատրոն: Նրա հայրենակիցը, որ նույնպես նվագախմբի երաժիշտ էր, երկու տոմս էր տվել նրան: Այդ օրը «Բացահայտ պատերազմ» կատակերգություն պրեմիերան էր, որտեղ գործող անձերից մեկին բեմ են բերում արկղի մեջ դրած:

— Դա հենց այն է, ինչ պետք է մեզ, — ասաց Հերմանը: — Ընդմիջմանը կպատմեմ, թե ինչ եմ մտածել:

Նրա ծրագիրը հետևյալն էր. մենք կգնենք մեծ սնդուկ, և ես կթաքնվեմ դրա մեջ: Մեկնելուց մեկ ժամ առաջ փակված և պարանով կապած սնդուկը ուղեբեռի անվան տակ Հերմանը կբերի շոգենավ: Երբ դուրս գանք բաց ծով, Հերմանը կբացի սնդուկը, և նավապետը ստիպված կլինի ինձ թողնել նավում, որովհետև չի կարողանա ափ իջեցնել: Շո՞ չի նետելու ջուրը: Իսկ ճանապարհորդության ընթացքում ես պետք է որևէ համապատասխան աշխատանք գտնեմ:

Թեև ծրագիրը խելահեղ էր, բայց խոստանում էր մի շարք արկածներ և դրանով էլ հրապուրեց ինձ:

Հաջորդ օրը մենք Հերմանի հետ շրջեցինք գործածված իրերի բոլոր խանութները և վերջապես տասը ֆրանկով ձեռք բերեցինք մի հսկայական երկաթապատ սնդուկ, որ ճիշտ իմ հասակին էր, կարծես իմ չափսով էր պատրաստված: Հերմանը սնդուկը տարավ իր տունը, որտեղ ապաստարան էր տվել նաև ինձ, այնուհետև մի քանի անցք բացեց սնդուկի վրա, որպեսզի շնչահեղձ չլինեմ: Ես մտա սնդուկը, Հերմանը փակեց կափարիչը, և ես երկու ժամ հանգիստ նստեցի այնտեղ: Ես կարող էի շարժել ոտքերս ու ձեռքերս, պառկել կողքի և մեջքի, մի խոսքով, ըստ ցանկության փոխել դիրքս:

Նավը, որով մեկնելու էր Հերմանը, ճանապարհ էր ընկնելու հաջորդ օրը ցերեկվա ժամը երկուսին: Մինչև մեկնելը ես գնեցի այդ նավը, որ կոչվում էր «Օրինկո», իսկ հետո մանրամասն նամակ գրեցի մայրիկին: Նամակում նրան հայտնեցի իմ մոտալուտ մեկնումի մասին, ներողություն խնդրեցի, որ վարվում եմ հակառակ իր ցանկության և հույս հայտնեցի, որ այդպես ավելի լավ կլինի բոլորիս համար: Այդ նամակին կցեցի երկրորդը, որ հասցեագրել էի Դելետտային: Այնտեղ ես դրեցի այն ամենը, ինչ իմացել էի Հերմանից և խնդրեցի սիրալիք լինել մայրիկիս հետ:

Մակընթացությունից երկու ժամ առաջ, այսինքն կեսօրին, Հերմանն ինձ նստեցրեց սնդուկի մեջ և մի կտոր հաց տվեց:

— Մինչև վաղը,— ծիծաղելով ասաց նա:— Եթե քաղցածանաս, ուտելու բան կունենաս:

Ես պետք է քսան ժամ մնայի արկղում: Մենք որոշեցինք, որ ինձ չի կարելի ավելի շուտ հայտնվել, քանի դեռ բավականին չենք հեռացել Հավրից, այլապես նավապետը կարող է ինձ ետ դարձնել ձկնորսական նավակով կամ նավավարի նավով, իսկ բաց ծովում կարելի է չվախենալ նման հանդիպումից: Վերջին օրերը հարավային ուժեղ քամիներ էին փչում, այդ պատճառով քսան ժամ հետո մենք կլինեինք Շերբուրգից շատ հեռու, Լա-Մանշում:

Մնդուկի ներսի պատերին մենք ամրացրինք երկու կաշվե օղակներ, որոնցից պետք է բռնեի, որպեսզի բեռնման ժամանակ շատ դեսուդեն չնետվեի: Հերմանը երկու փականքն էլ բանալիով կողպեց, սնդուկը պարանով կապեց և շալակեց: Այդ ժամանակ նա այնպես էր հռհռում, որ ես վերվեր էի թռնում, կարծես ձի էի հեծել:

Բայց երբ նա բարձրացավ «Օրինոկո», նրա ամբողջ ուրախությունը վայրկենապես անհետացավ:

— Այդ ի՞նչ էք տանում,— բղավեց նավապետը:

— Իրերիս սնդուկը:

— Շատ ուշ է. բեռների բաժանմունքը փակ է:

Մենք էլ հենց դրա վրա էինք հույս դրել: Եթե լյուկերի կափարիչները բաց լինեին, ինձ կիջեցնեին նավամբար, սնդուկի վրա կլցնեին ուրիշ արկղեր և այն ժամանակ ստիպված կլինեի մինչև Էկվադոր մնալ արկղում: Իսկ հիմա ինձ կթողնեն տախտակամածում կամ կտեղավորեն Հերմանի նավախցիկում:

Սակայն պարզվեց, որ դա այնքան էլ հեշտ չէ կազմակերպել: Նավապետը երկար ժամանակ չէր համաձայնվում ընդունել սնդուկը, և ես արդեն մտածում էի, որ ինձ կրկին կտանեն ափ: Վերջ ի վերջո ինձ տեղավորեցին վերնի և ներքնի տախտակամածների միջև, վերջին պահին բերված մյուս արկղների կողքին:

— Երբ դուրս գանք ծով, իրերը կիջեցնենք նավամբար,— ասաց նավաստիներից մեկը:

Նրա խոսքերը չվախեցրին ինձ, ես հույս ունեի, որ երկար չեմ նստի սնդուկում:

Շուտով լսեցի, ինչպես կառանապարաններն ընկան ջուրը, այնուհետև նավը պտույտ գործեց: Իմ գլխավերևում լսվում էին նավահանգստից նավը դուրս բերող նավաստիների համաչափ ոտնաձայները:

Ես հիանալի լսում էի այն ամենը, ինչ տեղի էր ունենում շուրջս և սնդուկում պառկած կարող էի հետևել նավի շարժմանը, կարծես կանգնած էի տախտակամածում և ամեն ինչ տեսնում էի սեփական աչքերով:

Լսելով վերահանների աղմուկն ու բարձր հնչող ձայներ, ես հասկացա, որ մտանք սահմանադուր: Մի քանի րոպե նավը կանգնեց տեղում, իսկ հետո դանդաղ առաջ շարժվեց: Դա նավաքարշ շոգենավն էր մեզ դուրս բերում բաց ծով: Ոչ մեծ ողնօրորումը ցույց տվեց, որ մենք մտանք արտաքին նավահանգիստ: Ճոճումը սաստկացավ, հետևապես, մենք գնում ենք ամբարտակների միջով: Լսվեց ճախարակների ճոճոցը, նշանակում է, առագաստներն են բարձրացնում: Նավը թեքվեց կողքի վրա, բուքսիրի պարանն ընկավ ջուրը, ղեկն սկսեց ճռալ՝ մենք դուրս եկանք բաց ծով:

Կատարվե՞ց: Ինձ համար սկսվում էր նավաստու կյանք: Ես միշտ մտածում էի, որ այդ ցանկալի պահը, որին հասել էի մեծ գրկանքների գնով, հսկայական ուրախություն կպատճառի ինձ: Սակայն հիմա միայն թախիծ ու տագնապ էի զգում: Իրոք, իմ վիճակն այնքան էլ ուրախալի չէր:

Եթե ես նավաստիների հետ գտնվեի տախտակամածում, զբաղվեի իմ գործով, առջևում տեսնեի բաց ծովը, իսկ ետևում ցամաքն ու նավահանգիստը, ես, հավանաբար, ուրախությամբ ընդառաջ կգնայի անհայտությանը... Սակայն փակի տակ նստած, չէի կարողանում հաղթահարել ինձ համակած ակամա երկյուղը:

Սնդուկի պատին հասցրած թեթև հարվածը վանեց ինձանից տխուր մտքերը: Սակայն ոչ ոք ձայն չտվեց, և ես սիրտ չարեցի պատասխանել, վախենալով, որ կարող էր թակել այդտեղով անցնող նավաստիներից մեկը: Բայց թակոցը կրկնվեց, և ես հասկացա, որ Հերմանն է եկել: Պատասխանի փոխարեն ես նույնպես թակեցի դանակի կոթով:

Նրա ներկայությունը հանգստացրեց ինձ. նշանակում է, ինձ չեն մոռացել: Վերջ ի վերջո այնքան էլ սարսափելի չէ մի քանի ժամ սնդուկում մնալը, իսկ դրա փոխարեն հետո կլինեն ծովում և կսկսեմ ապրել լիարժեք կյանքով:

Սառը քամի էր փչում: Ալիքները զարնվում էին նավին, և վերջինս ուժեղ ճոճվում էր:

Ես մանկությունից սովոր էի գնալ ձկնորսության ու ճոճվել խարիսխ գցած նավակում և երբեք չէի տառապում ծովախտով: Ես ինձ համարում էի անխոցելի և զարմացա, երբ սրտխառնոց զգացի:

Սկզբում մտածեցի, որ այդ զգացողությունն առաջացել է օդի պակասությունից: Չնայած սնդուկի պատերին բաց արած անցքերին, օդը դժվարությամբ էր ներս թափանցում և առավել դժվարությամբ դուրս գալիս, այդ պատճառով սնդուկի օդը սոսկալի ծանր էր: Սակայն գնալով իմ դրությունը վատանում էր: Գլխապտույտն ու սաստիկ սրտխառնությունը, որ զգում էի, երբ նավը ճոճվելիս իջնում էր, ոչ մի կասկած չէին թողնում, որ ինձ մոտ ծովախտ է սկսվում: Դա խիստ անհանգստացրեց ինձ. ախր ես գիտեի, որ այդ հիվանդությանը ենթակա մարդիկ այնքան վատ են զգում, որ հաճախ տնքում են: Հանկարծ ես էլ սկսեմ տնքալ և ձայնս լսի այնտեղից անցնող նավաստիներից մեկն ու մեկը:

Ծովախտի դեմ ամենալավ միջոցը, ինչպես լսել էի, քունն էր: Բացի այդ, քունն ինձ համար միակ մատչելի միջոցն էր, և գլուխս ձեռքերի մեջ առնելով, ամեն կերպ աշխատում էի քնել: Բավական երկար ժամանակ դա ինձ չէր հաջողվում. անկողինս սաստիկ անհարմար էր: Ինչո՞ւ գլխի չընկա բանտիս հատակին մի քիչ ծղոտ փռել: Մի րոպե մերթ մարում էր, մերթ ասես պոկվում էր տեղից, երբ նավը ցած էր իջնում, բայց ի վերջո այնուամենայնիվ քնեցի:

Որքան ժամանակ քնած մնացի, չգիտեմ: Լույսը չէր թափանցում իմ սնդուկը, ես պառկած էի լրիվ խավարում և չէի կարող որոշել՝ հիմա գիշեր է, թե՞ ցերեկ: Միայն շուրջս տիրող լռությունից կարելի էր ենթադրել, որ արդեն գիշեր է: Տախտակամածում լսվում էին հերթապահող նավաստիների համաչափ ոտնաձայները, և ժամանակ առ ժամանակ լսվում էր դեկի ճռոցը: Նավն սկսեց ավելի ուժեղ ճոճվել, կայմերը ճարճատում էին, նավասարքերը ճոճում էին, ալիքներն աղմուկով զարնվում էին նավին. ինչպես երևում է, քամին սաստկացել էր: Չգիտեմ արդյոք գիշերվա ցրտից սնդուկի օդը մի քիչ մաքրվել էր, թե՞ ես ընտելացել էի ճոճմանը, բայց այլևս չէի զգում ծովախտի նշանները և ծովի մոայլ երաժշտության օրորի տակ նորից քուն մտա: Այդ ամենն իմ մտքերը տանում էր դեպի հայրենի տան փոքրիկ սենյակը և հիշողությանս մեջ վերականգնում այն գիշերները, երբ լուսամուտի հետևում փոթորկվում էր ծովը:

Ինձ արթնացրեց սարսափելի հարվածը, դորդունն ու ճարճատյունը: Նավը ցնցվեց, այնուհետև տախտակամածի վրա ինչ-որ բան փլվեց, կարծես բոլոր կայմերը մեկեն խորտակվեցին: Լսվում էին կրակոց հիշեցնող ձայներ, դրանք պարանասարքերն էին կտրվում ու պատռվում, իսկ կայմերը կոտրվում էին:

— Կանգնի՛ր, — անգլերեն գոռաց ինչ-որ մեկը:

— Բոլորը դեպի տախտակամա՛ծ, — ֆրանսերեն հրամայեց մեկի ձայնը:

Ճիչերի, աղմուկի ու իրարանցման մեջ լսվեց մի խուլ ու խռպոտ շառաչյուն, և ես անմիջապես հասկացա, որ գոլորշին է դուրս գալիս: Ըստ երևույթին, մենք բախվել էինք անգլիական շոգենավին, որ խրվել էր մեր նավի մեջ, և վերջինս ընկել էր կողքի վրա: Ես դա զգում էի, որովհետև ինքս էլ գլորվել էի դեպի սնդուկի կողքի պատը:

Նախքան կհասցնեի ուշքի գալ, գոլորշու շառաչյունը դադարեց: Նոր ճարճատյուն լսվեց և տախտակամածից ինձ հասան սոսկալի ճիչեր: Համարյա այդ նույն պահին «Օրինոկոն» ուղղվեց: Ի՞նչ պատահեց: Անգլիական շոգենավը խորտակվեց, թե՞ հեռացավ մեզանից:

Ես սկսեցի բղավել որքան ուժ ունեի, հուսալով, որ անձնակազմից որևէ մեկը կօգնի ինձ դուրս գալու արևդից, այնուհետև ականջ դրեցի: Տախտակամածից լսվում էին ձայներ, մարդիկ ետ ու առաջ էին վազում, ալիքները սոսկալի ուժով զարնվում էին տախտակամածին, և այդ բոլոր ձայները խլանում էին քամու և փոթորկի ռոնոցից:

Մի՞թե խորտակվում ենք: Մի՞թե Հերմանն ինձ կթողնի այս սնդուկում: Հնարավոր չէ բառերով արտահայտել, թե ինչպիսի սարսափ պատեց ինձ: Միբոլոր մարեց և սառը քրտինքից ձեռքերս խոնավացան, ասես ընկղմվել էի ջրի մեջ: Բնագոյաբար փորձեցի տեղիցս վեր թռչել և գլուխս զարկեցի սնդուկի կափարիչին, բարձրացա ծնկներիս և որքան ուժ ունեի աշխատեցի մեջքով հրել կափարիչը: Սակայն փականքներն ամուր էին, կափարիչը դրված էր քիփ տեղը և ամրացված կաղնե շրտուններով: Իմ ջանքերը ոչ մի արդյունք չտվեցին, և սարսափից կիսամեռ ընկա սնդուկի հատակին:

Մի քանի րոպե հետո նորից սկսեցի գոռալ ու կանչել Հերմանին, բայց այդ ժամանակ տախտակամածի վրա այնպիսի աղմուկ բարձրացավ, որ ես չէի լսում սեփական ձայնս: Նավաստիները կացիններով ջարդում էին կայմերը:

«Որտե՞ղ է Հերմանը: Ինչո՞ւ օգնության չի գալիս»:

Մինչ նավաստիների մի մասը ջարդում էր կայմերը, մյուսները ջուրն էին հանում: Ես պարզորոշ լսում էի պոմպերի համաչափ թխթխկոցը:

Նշանակում է, խորտակվում ենք: Մկսեցի կատաղաբար թակել սնդուկի կափարիչը, սակայն վեջինս տեղի չէր տալիս, և հուսահատությունից ու սալ սարսափից նորից կորցրի գիտակցությունս:

— Հերմա՛ն, Հերմա՛ն:

Իմ գլխավերևում, այսինքն՝ տախտակամածում, նույն ձայներն էին լսվում, սակայն ոչ ոք չէր մոտենում ինձ: Փակ սնդուկը, հավանաբար, խլացնում էր ձայնս: Բայց եթե իմ հուսահատական ճիչերը նույնիսկ հասնեին տախտակամած, միննույն է, կխլանային քամու աղմուկի ու փոթորկի հզոր ռոնոցի մեջ:

Մի՞թե Հերմանն ընկել է ջուրը: Կամ ալիքը նրան քշել է, կամ էլ ճզմվել է տապալված կայմի տակ: Իսկ գուցե մտածելով սեփական կյանքը փրկելու մասին, նա բոլորովին մոռացել է ինձ: Ուրեմն, ես կմեռնեմ այստեղ, այս արկղում:

Մի՞թե՞ ոչ մի տեղից չեմ կարող օգնություն սպասել:

Երբեմն նույնիսկ երեխան էլ ընդունակ է արհաբար սպասել մահվանը, նայելով ուղիղ մահվան աչքերին, սակայն մի պայմանով, որ դա լինի ազատության մեջ, որ հնարավորություն ունենա պայքարելու իր կյանքի համար և նոր ուժեր քաղելու այդ պայքարում: Բայց փակված լինել ինչ-որ արկղում, որտեղ չի կարելի ոչ շարժվել, ոչ շնչել՝ հիրավի հրեշավոր բան է:

Ես կատաղությամբ նետվեցի իմ բանտի պատերի վրա, սակայն դրանք շատ ամուր էին և նույնիսկ չերեքացին: Ուզում էի նորից բղավել, բայց կոկորդոս չորացել էր և չէի կարողանում ձայն հանել: Չգիտեմ, թե այդ վիճակում ինչ կաներ չափահաս մարդը, բայց ես դեռ երեխա էի և գիտակցությունս կորցրի:

Որքան ժամանակ ուշակորույս պառկեցի, չգիտեմ, բայց երբ սթափվեցի, մի տարօրինակ զգացում համակեց ինձ: Թվում էր, թե արդեն մահացել եմ, պառկած եմ ծովի հատակում, և ալիքն օրորում է ինձ: Մակայն տախտակամածում տիրող աղմուկն ինձ վերադարձրեց իրականության գիրկը: Դեռ շարունակում էին պոմպերով ջուրը հանել, և փականներում երբեմն լսվում էր ջրի չարագույժ կլկլոցը: Քամին ոռնում էր, իսկ ալիքներն այնպիսի ուժով էին զարնվում նավի եզրին, որ ցնցում էին ամբողջ իրանը: Նավը սաստիկ ճոճվում էր, և ես զարնվում էի սնդուկի մերթ աջ, մերթ ձախ պատին: Նորից սկսեցի բղավել, իսկ երբեմն էլ լռում էի, որպեսզի ականջ դնեմ: Մակայն բացի փոթորկի խլացուցիչ ոռնոցից, ուրիշ ոչինչ չէի լսում:

Ես շնչահեղձ էի լինում իմ արկղում և որոշեցի հանվել: Երբ հանում էի բաճկոնակս, ձեռքս շոշափեց դանակը, որի մասին բոլորովին մոռացել էի: Դա եղջյուրե կոթով և սուր կարծր սայրով գեղջկական ամուր դանակ էր:

Քանի որ ոչ ոք չի գալիս օգնության, ինքս պետք է օգնեմ ինձ:

Դանակը բացեցի և սկսեցի զբաղվել փականքներից մեկով: Իհարկե, ես չէի պատրաստվում ջարդել այն, որովհետև սայրը չէր դիմանա այդպիսի աշխատանքի, բայց ուզում էի փականքը կտրել հանել: Մնդուկը պատրաստված էր հաճարենու ամուր տախտակներից, որոնք չորացել էին ծառայության քսան-երեսուն տարիների ընթացքում և երկաթի պես կարծր էին: Դրանք դժվարությամբ էին տեղի տալիս դանակի հարվածներին:

Այնպիսի եռանդով կպա գործի, որ շուտով ամբողջովին քրտնեցի: Դանակը սահում էր թաց մատներիս մեջ, և ես ստիպված էի ամեն րոպե ձեռքերս սրբել:

Գործը վատ էր առաջ գնում, որովհետև նավը դեռ ու դեն էր նետվում և հենց որ ուզում էի դանակը հուպ տալ, նետվում էի դեպի սնդուկի մյուս պատը:

Վերջապես փականքը թուլացավ և հիմա բավական էր մի ուժեղ հարված, որպեսզի դուրս թռչեր:

Այդ ժամանակ սկսեցի տեղահան անել երկրորդ փականքը: Դանակս այնպես էր տաքացել, որ երբ լիզեցի, որպեսզի մի քիչ սառեցնեմ, լեզուս այրվեց:

Պոմպերն այլևս չէին աշխատում, սակայն տախտակամածում շարժումը չէր դադարում:
Ունաձայներն առաջվանից ավելի էին արագացել. ինչպես երևում է, մարդիկ շտապում էին ինչ-որ գործ ավարտել: Բայց նրանք ինչ էին անում, ես չէի կարողանում հասկանալ:

Թվում էր, թե հսկայական արկղի կամ նավակի պես մի բան էին քարշ տալիս: Ինչո՞ւ: Ի՞նչ է նշանակում այս ամենը:

Սակայն այդ մասին խորհելու և ականջ դնելու ժամանակ չունեի: Նորից սկսեցի աշխատել:

Դանակս բոլորովին բթացել էր, և երկրորդ փականքը ավելի դժվար էր կոտրել, քան առաջինը, թեպետ աշխատում էի որքան ուժ ունեի: Ես սաստիկ հոգնել էի, ձեռքս թմրել էր, անհարմար դիրքից մեջքս ցավում էր և ակամա ստիպված էի երբեմն կարճ ժամանակով դադարեցնել աշխատանքը:

Այդ պահերին նորից էի լսում փոթորկի ոռնոցը, ալիքների հարվածները և ջարդվող նավի ճարճատյունը:

Հավանաբար, այդպես աշխատեցի մոտավորապես կես ժամի չափ: Սակայն այդ կես ժամն ինձ թվում էր հավիտենականություն: Վերջապես շարժվեց նաև երկրորդ փականքը:

Ես ծունկի չոքեցի և, հենվելով ձեռքերիս, որքան ուժ ունեի մեջքով սկսեցի հրել սնդուկի կափարիչը, աշխատելով մի փոքր բարձրացնել: Երկու փականքներն էլ թռան տեղից, բայց կափարիչը չբացվեց:

Ես բոլորովին մոռացել էի, որ սնդուկը չորս կողմից ամուր կապված է: Հիմա էլ հարկավոր էր թոկը կտրատել: Ես դա համարում էի դատարկ բան, բայց սաստիկ սխալվեցի: Թեև կափարիչը մի քիչ բարձրանում էր, բայց կողքերի շերտաձողիկները խանգարում էին ձեռքս դուրս հանել և թոկին հասնելու համար հարկավոր էր նախ կտրել այդ շերտաձողիկները: Մի նոր աշխատանք էր սպասվում: Սակայն ես որոշեցի չհուսահատվել և անմիջապես գործի անցա:

Բարեբախտաբար, հիմա փայտը կտրում էի հյուսվածքի ուղղությամբ: Ահա և հասա թոկին ու կտրեցի. վերջապես ես ազատ եմ:

Արագորեն հրեցի կափարիչը, որն էլի մի փոքր բարձրացավ, այնուհետև կրկին տեղն ընկավ: Ավելի ուժեղ հրեցի, սակայն կափարիչը միայն կիսով չափ բացվեց: Հիմա ի՞նչն է պահում:

Իմ հուսահատությունն այնքան մեծ էր, որ համարյա ուշակորույս ընկա սնդուկի հատակին:

Բայց արդեն այնքան շատ բան եմ արել, որ պետք է մինչև վերջ հասցնեմ պայքարը: Կափարիչն այնքան էր բարձրանում, որ կարող էի ձեռքս դուրս հանել, բայց ավելի վեր հնարավոր չէր բարձրացնել: Այդ ճեղքից ձեռքս դուրս հանելով, սկսեցի չորս կողմը պրպտել: Ես ոչինչ չէի տեսնում,— ըստ երևույթին, արդեն գիշեր էր, և միայն թույլ, հազիվ նկատելի լույսի մի շող էր թափանցում իմ սնդուկը:

Չորս կողմը շոշափելով, ես հասկացա, թե բանն ինչու՞մն է: Հիմա էլ խոչընդոտ էր հանդիսանում մի հսկայական արկղ, որ դրված էր մեկ այլ արկղի վրա և մի ծայրով ծածկել էր իմ սնդուկը: Թեև այդ արկղը չէր հենվում սնդուկին, սակայն հնարավորություն չէր տալիս բաց անել կափարիչը: Փորձեցի մի կողմ քշել, բայց արկղը շատ ծանր էր և տեղից չշարժվեց: Բացի այդ ծնկաչոք կանգնած ես համարյա ոչինչ չէի կարող անել: Ես չէի կարողանում նույնիսկ ինչպես հարկն է մեկնել ձեռքս: Ուղղակի անհիմաստ էր աշխատել արկղը փոքր-ինչ բարձրացնել կամ տեղից շարժել: Մի՞թե անտեղի այդքան ուժ ու եռանդ ծախսեցի: Ի՞նչ անել: Տանջալից հուզմունքից ամբողջ մարմնով

դողում էի և թվում էր, թե արյունը գլխումս եռում է, ինչպես մի հսկայական կաթսայում: Երբ սնդուկը փակ էր, իմ աղաղակները չէին հասնում վերև: Բայց, գուցե, հիմա, երբ կիսաբաց է, վերջապես կլսեն ինձ: Եվ ես սկսեցի ուժգին բղավել, այնուհետև ականջ դրեցի: Տախտակամածում ուժեղ դրփյուն էր լսվում, շուտով կարծես մի ծանր բան ընկավ ջուրը... Բայց եթե ես ամեն ինչ լսում եմ, ինչու ինձ ոչ ոք չի լսում: Մկսեցի նորից բղավել ու ականջ դնել: Բացի քամու ռոնոցից, հիմա այլևս չէր լսվում ոչ աղմուկ, ոչ շարժում, ոչ ոտնաձայներ: Եվ, տարօրինակ է, ինձ թվաց, թե աղաղակները գալիս են ծովից, այն նավեզրի կողմից, որին հենված էր իմ սնդուկը:

Հիմա արդեն հասկացա, որ ոչ ոք չի լսի ինձ: Որոշեցի պոկել ծխնիները որոնցով ամրացված էր սնդուկի կափարիչը: Եթե դա հաջողվի, ես կարող եմ կափարիչը չբացել, այլ միայն մի կողմ հրել ու դուրս սողալ:

Ես նոր եռանդով գործի անցա: Տիրող լռությունը սարսափեցնում էր ինձ: Մի՞ թե ամբողջ անձնակազմը զոհվել է: Միանգամայն հնարավոր է. սոսկալի ճոճումն ու քամու ռոնոցն ասում էին, որ փոթորիկը չի դադարել:

Ծխնիներն այնպես ամուր չէին, ինչպես փականքները: Ստիպված չեղա չորս կողմից փայտը կտրել. դրանք ուղղակի մեխած էին և հարկավոր էր սկսել հենց դրանցից, այլ ոչ թե փականքներից: Ինձ հաջողվեց դանակի ծայրով պոկել ծխնիներից մեկը, այնուհետև կատաղաբար տարուբերելով կափարիչը, պտուտահանել երկրորդը:

Ես հրեցի կափարիչը և, առանց դժվարության տեղից շարժելով, իսկույն դուրս թռա իմ սոսկալի բանտից: Ի՛նչ երջանկություն է, երբ քեզ զգում ես ազատության մեջ և կարող ես շարժվել ինչպես ուզում ես: Մեռնե՛լ այդ սնդուկում, դրանից էլ սոսկալի մահ չի կարելի պատկերացնել:

Հաջողությունը հույս ներշնչեց ինձ: Սակայն փորձությունները դեռ ամեննին էլ չէին վերջացել: Լույսի նեղ շերտ նկատելով, ես խարխափելով ուղղվեցի դեպի սանդուղքը: Բարեբախտաբար, լյուկը միայն կիսով չափ էր ծածկված, բայց փակ չէր և կափարիչը մի փոքր բարձրացնելով, հայտնվեցի տախտակամածում:

Լույսը դեռ նոր էր բացվում, բայց աչքերս ընտելացել էին խավարին: Մի հայացք գցելով տախտակամածին, ես այնտեղ ոչ մի մարդ չտեսա: Ղեկի մոտ ոչ ոք չկար. ըստ երևույթին, թե անձնակազմը, թե ուղևորները լքել էին նավը:

Նետվելով դեպի նավախելային մասը, սկսեցի ուշադրությամբ նայել հեռուն և լուսաբացի աղոտ լույսով ծովում նկատեցի մի սև կետ. դա նավից հեռացող մի մեծ նավակ էր:

Մկսեցի գոռալ որքան ուժ ունեի, բայց նավակը չափազանց հեռու էր, ուժեղ քամին խլացնում էր ձայնս և, իհարկե, ինձ ոչ ոք չէր կարող լսել:

Փոթորկվող ծովում ես մնացի մենակ այս լքված, ջարդված, խորտակվող նավում և, այնուամենայնիվ, ավելի լավ էի զգում ինձ, քան երբ փակված էի անիծյալ սնդուկում:

Զննելով նավը, ես տեսա, որ «Օրինոկոն» ձեռքվածք էր ստացել իրանի մեջտեղում: Ուղղակի՛ հրաշք էր, որ չէր կիսվել: Հավանաբար, անգլիական շոգենավը շեղակի էր հարվածել: Այդ հարվածից կտրվել էին գլխավոր կայմի ու հետակայմի կայմապարանները: Երկուսն էլ կորցնելով հենարանը, այն էլ քամու փչած կողմից, չէին դիմացել քամու հոսանքին և լուցկու նման կոտրվել էին: Անվնաս էին մնացել միայն առաջակայմի կետը և քթակայմը, իսկ առագաստներից՝ կլիվերն ու մեծ մարսելը, այն էլ ամբողջովին պատառոտված:

Լույսն սկսեց բացվել: Արևելքում առկայծում էին փայլակները և ամպերի եզրերը լուսավորում կարմրավուն ցուլերով, որոնք արագորեն անհետանում էին սև երկնքում: Ծովը ծածկված էր սպիտակ փրփուրով և աղոտ լուսից չարագույժ էր թվում: Քամին այնպիսի ուժով էր փչում, որ թոցնում էր ալիքների կատարները:

Եթե անձնակազմն ու ուղևորները լքել են նավը, նշանակում է վերջինիս կործանում է սպառնում. դա միանգամայն ակնհայտ է:

Առանց ղեկավարման ու առագաստների, քամու և ալիքների քահաճույքին հանձնված նավը կատաղորեն այս ու այն կողմ էր ճոճվում, իսկ ալիքներն այնպես էին թափվում վրան, որ թվում էր, թե պատրաստվում են կլանել:

Ես արդեն ամբողջովին թրջվել էի, կարծես սուզվել էի ջրի մեջ և վախենալով, որ ալիքը հանկարծ կքշի տախտակամածից, թոկով ինձ կապեցի պարանսարքերից մեկին:

Ես ուզում էի ավելի ստույգ իմանալ, թե շոգենավի հետ բախվելուց ինչպիսի վնասվածք է ստացել «Օրինկոն»: Ամուր բռնելով ֆայլբորտից, ես թեքվեցի և նավեզրի վրա տեսա խոր ճեղքվածք: Արդյոք այդ ճեղքվածքը միայն հասնում էր ջրագծին, թե՞ իջնում էր ներքև: Այդ հարցին չէի կարող պատասխանել: Ես չէի կարող նաև որոշել, արդյոք շա՞տ ջուր կար նավամբարում, որովհետև իմ ուժերից վեր էր գործի գցել ծանր պոմպերը:

Այդպիսի վնասվածքով «Օրինկոն» որքա՞ն կարող է դիմանալ, որքա՞ն ժամանակ կարող է պայքարել քամու և ծովի հետ: Դժվար էր ասել...

Որ նավն անխուսափելիորեն ջրի տակը կսուզվի, ես չէի կասկածում: Բայց չե՞ որ կարող է այդքան շուտ չխորտակվել և մոտիկից անցնող որևէ նավ կտեսնի ու կփրկի ինձ: Ես հույսս չէի կտրում: Հիշելով, որ միայն հաստատակամությունն ու համառությունն օգնեցին ինձ դուրս գալ իմ սարսափելի սնդուկից, ես որոշեցի մինչև վերջին թույլն անհաշիվ պայքարել կյանքիս համար:

Ես մի փոքր ծանոթ էի ծովային գործին և հասկանում էի, որ եթե նավը մնա առանց ղեկավարման, ալիքներն անխուսափելիորեն կջարդեն, և նավը կխորտակվի: Հարկավոր էր ղեկը ձեռքն առնել և չհոգալով ուղղության մասին, աշխատել առաջակայմի օգնությամբ նավը պահել քամուն համընթաց:

Սակայն մինչև հիմա ես առիթ եմ ունեցել ղեկավարել միայն ոչ մեծ ձկնորսական նավակներ: Հազիվ էի ղեկանիվը ձեռքս առել, երբ ալիքները վերև նետեցին նավը, ղեկանիվը պտտվեց, դուրս պրծավ ձեռքիցս և մի քանի քայլ հեռու շարտեց ինձ:

Բարեբախտաբար, նավի վրա ամեն ինչ պատրաստված էր փոթորկի դեմ պայքարելու համար: Ղեկը, հանդերձված լիսեռնայթուկերով, որ հնարավորություն էր տալիս առանց վտանգի ենթարկվելու ղեկավարել: Չիմանալով, թե որտեղ եմ գտնվում և չպատկերացնելով, թե ինչ ուղղությամբ պետք է շարժվեմ, ես պարզապես ղեկն ամրացրի այնպես, որ գնամ քամուն համընթաց:

Ինձ մնացել էր միայն մի հույս. հանդիպել որևէ նավի: Այդ պատճառով գնացի նավախելային մասը և նստեցի այնպես, որ չորս կողմից մինչև հորիզոն տեսնեմ ծովը:

Ինձ թվում էր, որ քամին կամաց-կամաց մեղմանում է: Արդեն օրը բացվել էր, երկինքը թեթևակի մաքրվել էր ամպերից, և տեղ-տեղ հայտնվել էին բաց երկնագույն լուսաշերտեր: Թեև ծովն առաջվա

պէս մոլեգնում էր, բայց փրկվելու հույսը վերականգնվում էր իմ հոգում: Ես այնքան մոտիկ էի լողում ավերին, որ դժվար թէ չհանդիպէի որևէ նավի:

Երեք ժամից ոչ պակաս նստել էի և աչքս չէի հեռացնում ծովից, բայց ոչինչ չտեսա: Քամին զգալիորեն թուլացել էր, ծովը խաղաղվել էր, ալիքներն այլևս անկանոն չէին կիտվում իրար վրա, այլ սլանում էին որոշակի ուղղությամբ և համաչափ բարձրացնում ու իջեցնում էին նավը, առանց սպառնալու ջարդուփշուր անել այն:

Հանկարծ ծովի վրա կախված հսկայական սև ամպի ֆոնի վրա նկատեցի մի սպիտակ կետ, որը շարունակ մեծանում էր. դա նավ էր: Ես ավելի ու ավելի պարզ էի տեսնում նավը, որ գնում էր քամուն համընթաց, այսինքն այն նույն ուղղությամբ, ինչ որ «Օրինոկոն»:

Ես նետվեցի դեպի դեկը, որպեսզի իմ նավով կտրեմ նրա ճանապարհը: Բայց նավը սլանում էր բոլոր առագաստները պարզած, իսկ ինձ մոտ կար միայն մի խղճուկ կլիվեր, որը համարյա չէր ուռչում քամուց: Ամբողջ կես ժամ նավը շարունակ մեծանում էր աչքերիս առջև: Հիմա կարող էի հաշվել բոլոր առագաստները, այնուհետև սկսեց կամաց-կամաց փոքրանալ:

Ես վազեցի դեպի զանգը և սկսեցի ամբողջ ուժով զարկել, այնուհետև ցատկեցի պաշտպանական առաջնակալի վրա ու սկսեցի նայել նավին, որն առաջվա պէս շարունակում էր իր ճանապարհը և ավելի ու ավելի էր փոքրանում: Ըստ երևույթին, ինձ չտեսան ու չլսեցին...

Ինչ սուսկալի հիասթափություն էր: Մի ժամից ավելի ես հայացքով հետևում էի հեռացող նավին, որը շարունակում էր փոքրանալ, մինչև վերածվեց հազիվ նկատելի կետի և վերջապես բոլորովին անհետացավ: Նորից մնացի մենակ անծայրածիր ծովային լայնարձակության մեջ:

Ես հասկացա, որ տեսնել մոտակայքում անցնող նավը՝ դեռ չի նշանակում փրկվել: Անհրաժեշտ է, որ այդ նավն էլ տեսնի «Օրինոկոյին»: Չի կարելի ուղղակի սպասել օգնության, հարկավոր է այն նախապատրաստել, հարկավոր է ուշադրություն գրավել:

Պահարանում, ուր պահվում էին ազդանշանները, ես գտա ամենամեծ դրոշակը: Բոլոր պարանասարքերը կտրված էին, և ես դրոշակը ձեռքիս մագլցեցի մարսի գագաթն ու դրոշակն ամրացրի այնտեղ: Մագլցելը շատ դժվար էր, որովհետև նավը սաստիկ ճոճվում էր, բայց, բարեբախտաբար, ես լավ էի մագլցում և, մեծ հույս դնելով քամուց ծածանվող այդ հսկայական դրոշակի վրա, բարեհաջող իջա ներքև: Դա յուրաքանչյուր տեսնողին կասի, որ նավը աղետի մեջ է:

Հիմա, երբ ծովը հանդարտվել էր, ես ամենից շատ վախենում էի, որ ձեռքից ներս լցվելով, ջուրը կարող է ջրասույզ անել նավը, բայց չէի նկատում, որ ջուրն ավելանում է, իսկ կարծես նավը չի իջնում: Այնուամենայնիվ վախենալով, որ «Օրինոկոն» հանկարծ կսկսի սուզվել, ես հավաքեցի տախտակամածում թափված տախտակներն ու արկղները, ամուր կապեցի իրար և լաստի պես մի բան սարքեցի:

Մոտենում էր կեսօրը: Երեկվանից ոչինչ չէի կերել և հիմա սաստիկ քաղց զգացի: Կայմերի հետ միասին ալիքները ծովն էին քշել նաև կամբուրը: Որոշեցի իջնել ներքև ու որևէ ուտելիք փնտրել: Սակայն երկար ժամանակ սիրտ չէի անում հեռանալ տախտակամածից: Իսկ եթե նավը ջրի տակն անցնի՝ այն պահին, երբ ես ներքևում լինեմ: Այնուամենայնիվ, քաղցը վերջ ի վերջո հաղթեց վախին:

Ես իջա ներքև, բայց հազիվ էի երկու քայլ արել, երբ լսեցի ինչ-որ մեկի մոնչունը: Մարսափից հետ-հետ գնացի: Անսպասելիորեն ինչ-որ կենդանի թռավ վրաս և, նավախցից դուրս թռչելիս, քիչ մնաց գետին զցեր ինձ: Դա նավապետի շունն էր՝ Թյուրք անունով, որին մոռացել էին նավում: Թյուրքն էլ

ինձ նման փակված էր և հիմա դուրս թռչելով, առաջինը հայտնվեց տախտակամածում: Շունը շրջվեց և հայացքն անվստահությամբ սևեռեց վրաս: Բայց, ինչպես երևում է, ես դուր եկա նրան, որովհետև դյուրահավատությամբ առաջ ցցելով դունչը, շուտով մոտեցավ ինձ: Մենք անմիջապես բարեկամացանք: Թյուրքն էլ քաղցած էր և եկավ իմ ետևից:

Ես գտա այն ամենը, ինչ պետք էր ինձ. հաց, սառը տավարի միս, գինի: Արագորեն վերցնելով, ինչ ձեռքս ընկավ, ես վազեցի վերև:

Մազ էր մնացել, որ մեռնեի, բայց այնուամենայնիվ մեծ ախորժակով ուտում էի: Դիմացս նստած Թյուրքը օդում որսում էր այն պատանները, որ նետում էի նրան:

Մենք լրիվ բարեկամացանք, և ես արդեն մենակ չէի զգում ինձ:

Ուտելուց հետո շունը տեղավորվեց ոտքերիս մոտ և չէր հեռանում ինձանից: Նա այնպիսի փաղաքշական հայացքով էր հետևում ինձ, որ չդիմացա և համբուրեցի նրան:

Նավապետի խցիկում սեղանի վրա տեսել էի երկու ատրճանակ և հիմա որոշեցի գնալ դրանց հետևից: Եթե որևէ նավ հայտնվի, կսկսեմ կրակել, որպեսզի ուշադրություն գրավեմ:

Մոտենում էր երեկոն: Ամբողջ օրն այդպես էլ ոչ մի առագաստ չհայտնվեց հորիզոնում: Ծովը համարյա խաղաղ էր, իսկ քամին բոլորովին մեղմացել էր: «Օրինոկոն» լավ էր դիմանում. ըստ երևույթին, ջուրը ներս չէր թափանցում ճեղքից: Դրա համար էլ ես առանձնապես չէի վախենում վրա հասնող գիշերից: Ինձ թվում էր, որ ալիքները մեզ այնքան շատ չէին հեռացրել ավից: Հնարավոր է, որ գիշերային խավարում փարոս նկատեմ, այդ ժամանակ նավը կողողեմ այնտեղ ու կփրկվեմ:

Վերջապես բոլորովին մթնեց, բայց հույսերս չարդարացան: Երկնքում սկսեցին մեկը մյուսի հետևից վառվել աստղերը, սակայն ոչ մի տեղ փարոս չէր երևում:

Ատրճանակների հետ միասին նավապետի խցիկից վերցրել էի մի կույտ շորեր, որ ներքնակի փոխարեն փռեցի հատակին ու պառկեցի վրան, բայց որոշեցի ամբողջ գիշեր չքնել ու հետևել, արդյոք նավ կհայտնվի՞ հորիզոնում:

Երկար ժամանակ պառկել էի և ուշադրությամբ նայում էի մթնոլորտի մեջ, բայց ոչինչ չկարողացա տեսնել: Թյուրքը պառկեց կողքիս և անմիջապես քնեց: Քամին բոլորովին դադարեց, նավը սահուն ճոճվում էր և թվում էր, թե մեզ ոչինչ չի սպառնում: Ժամը տասնմեկին մոտ լուսինը դուրս եկավ: Լուսնի արծաթավուն շողով լուսավորված ծովը թեթևակի ճողվում էր: Շուրջը տիրող լռությունը, խաղաղ քնած շան ֆսացը հետզհետե հանգստացրին ինձ և, չնայած արթուն մնալու հաստատ որոշմանը, ես աննկատելիորեն ննջեցի:

Սակայն ծովի այդ հանդարտությունը խաբուսիկ էր: Լուսաբացին ինձ արթնացրեց սառը քամին: Ամպերը շատ ցածր սլանում էին ջրի վրա, և ծովը նորից սկսեց ալեկոծվել:

Քամին արագորեն ուժեղանում էր: Կողմնացույցով որոշեցի ուղղությունը. քամին փչում էր հյուսիս-արևմուտքից: Նավը շրջեցի քամուն համընթաց և թեպետ չգիտեի, թե որտեղ եմ գտնվում, բայց ենթադրում էի, որ այդ ուղղությամբ շարժվելով, կարող եմք դուրս գալ Նորմանդիայի կամ Բրետանի ավերի մոտ:

Մի ժամ հետո ծովը կրկին մոլեգնում էր, ինչպես նախնիս օրը: Հիմա «Օրինոկոն» համարյա չէր բարձրանում ալիքների վրա, և ալիքները տակով էին անում ամբողջ տախտակամածը:

Քամու ճնշման տակ կոտրված առաջակայմը չարագույժ ճարճատում էր: Կայմապարաններն ու պարանասարքերը թուլացել էին, և ես վախենում էի, որ առաջին իսկ ուժեղ փոթորկի դեպքում բոլորովին ջարդուփշուր կլինի: Այդ ժամանակ ամեն ինչ վերջացած է. «Օրինկոն» կխորտակվի:

Աչքս չէի հեռացնում առաջակայմից, երբ հանկարծ առջևում տեսա դեպի հեռուն գնացող մի սևավուն գիծ: Չնայած վտանգին, նետվեցի դեպի կայմապարանները: Դա ցամաք էր: Վազեցի դեկի մոտ և նավն ուղղեցի դեպի սևավուն շերտը: Ուտքերս ծավվում էին, երջանկությունից աչքերիցս արցունքներ էին գլորվում: Փրկվա՛ծ եմ: Միթե՞ փրկված եմ:

Շատ շուտով ցամաքի շերտն սկսեց ավելի պարզորոշ երևալ: Արդյոք. «Օրինկոն» կհասնի՞ այնտեղ: Արդյոք կայմը կդիմանա՞ :

Մի ամբողջ ժամ անցկացրի սոսկալի տագնապի մեջ, որովհետև քամին գնալով սաստկանում էր, իսկ կայմը ճարճատում էր ու ճռռում: Այդ ձայներից սիրտս նվաղում էր: Կողքիս նստած Թյուրքը աչքը չէր հեռացնում ինձնից: Կարծես ուզում էր ինչ-որ բան կարդալ դեմքիս:

Ափը, դեպի ուր լողում էր նավը, ցածր էր, սակայն ծովից որոշ տարածության վրա թեթևակի բարձրանում էր և վերածվում ոչ բարձր բլուրների: Այնտեղ ես չէի տեսնում ո՛չ նավահանգիստ, ո՛չ էլ գյուղեր: Դուք, իհարկե, հասկանում եք, որ ես հույս չունեի «Օրինկոն» մտցնել նավահանգիստ, եթե նույնիսկ այն լիներ: Նման խնդիրն իմ ուժերից վեր էր և կարծում եմ, որ նույնիսկ իսկական ծովայինի ուժերից էլ վեր կլիներ այդ կիսաջարդված նավը մտցնել նավահանգիստ: Ես երագում էի ափին ավելի մոտիկ խրել ծանծաղուտի մեջ, այնուհետև փորձել լողալով փրկվել:

Սակայն նավը կարո՞ղ է արդյոք մոտենալ ափին: Արդյոք ծովում չկա՞ն ստորջրյա ժայռեր, որոնք կփակեն նավի ճանապարհը:

Ծայրահեղ տագնապի մեջ ես քանդեցի լաստը, որ սարքել էի նախընթաց օրը և տախտակները շարեցի չորս կողմս, որպեսզի դրանցից գոնե մեկն ու մեկը ձեռքիս տակը լինի, եթե նավն սկսի սուզվել: Այնուհետև հանեցի բոլոր շորերս, բացի տաբատից և սկսեցի սպասել:

Հիմա ցամաքը պարզորոշ երևում էր, ես լավ տարբերում էի ամեն ինչ, նույնիսկ ինչպես էին ալիքները զարնվում ափին ու սպիտակ շերտ թողնում իրենց հետևից: Տեղատվության ժամն էր:

Եվս մի քառորդ ժամ, ևս տասը րոպե, հինգ րոպե և բախտս վճռված է: Օ, մայրի՛կ, օ, Դելետտա՛ :

Բայց այն պահին, երբ քնքշությամբ մտածում էի նրանց մասին, նավը հանկարծ վեր թռավ, ճարճատյուն լավեց, դեկը փշուր-փշուր եղավ, զանգն սկսեց դողանջել, կայմը երերաց ու շրմփաց դեպի առաջ, իսկ ես երեսնիվայր փովեցի տախտակամածին: «Օրինկոն» խրվեց ծանծաղուտը: Հազիվ էի ոտքի կանգնել, երբ հետևեց երկրորդ հարվածը, և ես կրկին վայր ընկա: Նավը՝ ցռուկից մինչև խելը քարուքանդ էր լինում: Այնուհետև զգացի մի նոր սոսկալի հարված, նավը կանգ առավ ու շրջվեց կողքի վրա:

Ես փորձեցի վեր կենալ, բռնել որևէ բանից, բայց չհասցրեցի: Ալիքը թափվեց իր ճանապարհը փակող թշվառ նավի վրա և ինձ քշեց փոթորկվող ջրի մեջ:

Երբ դուրս լողացի այդ հորձանուտից, արդեն տասնհինգ-քսան մետր հեռու էի նավից: Կողքիս լողում էր Թյուրքը և հուսահատությամբ նայում ինձ: Ես մի քանի խրախուսական բառեր բղավեցի նրան:

Մինչև ավեր մնացել էր երկու հարյուր մետրից ոչ ավելի: Լավ եղանակին, երբ ծովը խաղաղ է, ինձ համար շատ հեշտ էր լողալով անցնել այդ տարածությունը, բայց հիմա, երբ հսկայական բարձրության ալիքները զարնվում էին ավիին, ջրից դուրս գալը համարյա անհնար էր:

Սակայն ինձ չկորցրի ու սկսեցի դանդաղ լողալ, աշխատելով ալիքի հետ միասին բարձրանալ, որ շատ դժվար էր պտտվող փրփուրի մեջ: Հագիվ էի հասցնում շունչ առնել երկու ալիքների միջև:

Ափին ոչ ոք չկար, նշանակում է, չէի կարող հույս դնել օգնության վրա: Բարեբախտաբար քամին ալիքները քշում էր դեպի ավեր: Վերջապես, ալիքի հետ միասին ներքև իջնելով, ոտքերիս տակ ամուր հող զգացի: Վրա հասավ վճռական պահը: Հաջորդ ալիքն ինձ ծովախտոտի պես շարտեց ավի: Ես աշխատեցի մոտենալով կառչել ավազից, բայց ալիքը հետ գլորելով, ինձ էլ քարշ տվեց իր հետ: Նոր ալիքը կրկին ինձ նետեց ավազի վրա, իսկ հետո բռնեց ու նորից քարշ տվեց ծով:

Ես հասկացա, որ եթե շարունակեմ այդ անհավասար պայքարը, ապա անխուսափելիորեն կլիեղովեմ: Եվ ես լողալով ետ դարձա ծովը: Ինձ կարող էր օգնել միայն մի միջոց, որի մասին մի ժամանակ իմացել էի հորիցս: Երկու ալիքների միջև ընկած կարճատև դադարի ժամանակ հանեցի դանակս ու բացեցի, այնուհետև նորից լողացի դեպի ավեր, իսկ երբ ալիքը դուրս նետեց ինձ, դանակը խրեցի ավազի մեջ: Հետ գլորվելով, ալիքը ինձ էլ քարշ տվեց, բայց ես արդեն հենման կետ ունեի և կարողացա ինձ պահել:

Հենց որ ալիքը հետ գլորվեց, ոտքի կանգնեցի ու վազեցի առաջ: Հաջորդ ալիքը հասնում էր միայն ծնկներին: Մի քանի քայլ էլ առաջ վազեցի ու ընկա ավազին:

Ես փրկված էի, սակայն ուժերս սպառվել էին և գիտակցությունս կորցրի:

Ինձ ուշքի բերեց նոր բարեկամս՝ Թյուրքը: Նա լիզում էր դեմքս, մինչև որ սթափվեցի: Նրա աչքերը փայլում էին, կարծես ասում էր ինձ. «Ուրախացիր, մենք լավ պրծանք»:

Ես նստեցի ավազին և տեսա, որ ինձ մոտ են վազում գյուղացիներն ու մաքսային հսկիչը:

XIII

«Օրինոկոն» խրվել էր ծանծաղուտը Շերբուրգից չորս կամ հինգ յոթ հեռավորության վրա, Լևի հրվանդանից դեպի արևելք:

Օգնության հասած գյուղացիներն ինձ տարան մոտակա գյուղը՝ Ֆերմանվիլ, քահանայի տունը, որտեղ և պառկեցի անկողնում: Ես այնքան ուժասպառ էի եղել, որ քսան ժամից ավելի անընդհատ քնեցի: Թվում էր, թե Թյուրքի հետ կարող ենք հարյուր տարի էլ քնել, ինչպես «Քնած գեղեցկուհին» հեքիաթում, բայց ինձ մոտ եկան ծովային կոմիսարն ու ապահովագրության գործակալները:

Հիմա արդեն ստիպված էի վեր կենալ և մանրամասն պատմել այն ամենը, ինչ տեղի էր ունեցել Հավրից իմ մեկնելու ժամանակից մինչև այն պահը, երբ «Օրինոկոն» խրվեց ծանծաղուտը: Ստիպված էի պատմել նաև այն մասին, թե ինչու էի հայտնվել սնդուկում: Ամենին չէի ուզում խոստովանել, բայց հարկավոր էր պատմել ամբողջ ճշմարտությունը որքան էլ այն անհավանական թվար և ինչ էլ որ հետո պատահեր ինձ: Իսկ պատահեց այն, որ որոշեցին ինձ ուղարկել Հավր, «Օրինոկոյի» տիրոջ մոտ: Այդ պատճառով երեք օր հետո ինձ տարան Շերբուրգ, որտեղ նստեցի «Կոլիբրի» շոգենավը նույն օրը երեկոյան ժամանեցի Հավր:

Այնտեղ բոլորն արդեն գիտեին իմ պատմությունը, այդ մասին նույնիսկ թերթերն էին գրել և քիչ էր մնացել ինձ հերոս դարձնելին, համենայն դեպս ես ընդհանուր հետաքրքրություն էի հարուցում: Երբ հայտնվեցի «Կոլիբրիի» կամրջակի վրա, ծովափին տեսա մի հսկայական բազմություն: Ինձ ու թյուրքին մատնացույց էին անում ու բղավում:

— Ահա՛ նրանք, ահա՛ նրանք:

Հավրում իմացա, որ «Օրինկոյի» անձնակազմը չէր գոհվել: Ծովում մարդկանց վերցրել էր անգլիական մի նավ, իսկ հետո Մաուսհամպտոնից նավակը նրանց հասցրել էր ֆրանսիական ափը: Պարզվեց, որ շոգենավի հետ բախվելու ժամանակ խեղճ Հերմանն ընկել էր ծովը, և հայտնի չէ՝ արդյոք լողալ չի՞ իմացել, թե՞ սպանվել կամ վիրավորվել է տապալված կայմի բեկորից, բայց այլևս ջրից դուրս չի եկել: Ահա թե ինչու չէր կարողացել ազատել ինձ սնդուկից:

Ըստ երևույթին, իմ պատմությունը կարևոր վկայություն էր նավապետի դեմ: Ապահովագրական ընկերության գործակալները հայտարարեցին, որ եթե նավապետը չլքեր նավը, կարող էր փրկվել: Եթե ինձ նման երեխան կարողացել է նավը հասցնել ափ, ապա եթե նավապետն ու անձնախումբը լինեին, կկարողանային նավը մտցնել նավահանգիստ: Այդ հարցը երկար ժամանակ քննարկվում էր: Հավրում բոլորը միայն այդ իրադարձության մասին էին խոսում, այդ պատճառով էլ հարցուփորձով անվերջ ձանձրացնում էին ինձ:

Այդ օրերին թատրոնում բեմադրում էին «Մեդուզայի խորտակումը» պիեսը, և դիրեկտորի մտքով անցավ որպես դերասան ինձ բեմ հանել այն հաշվով, որ առաջին ներկայացման դրամական մուտքը լինի իմ օգտին: Այդ ներկայացմանը ներկա գտնվելու ցանկություն հայտնողներն այնքան շատ էին, որ տոմսերը չէին բավարարում: Ինձ, իհարկե, տվել էին անխոս դեր. ես խաղում էի կրտսեր նավաստի: Երբ թյուրքի հետ միասին դուրս եկանք բեմ, այնպիսի ծափահարություններ հնչեցին, որ դերասաններն ստիպված եղան որոշ ժամանակ լռել: Բոլոր հեռադիտակներն ուղղվեցին ինձ վրա, և ես այնքան հիմար էի, որ ինձ համարեցի կարևոր անձնավորություն: Թյուրքն, իհարկե, կարող էր նույնը մտածել իր մասին:

Այն գումարը հանելուց հետո, որ դիրեկտորը վերցրեց ծախսերը ծածկելու համար, իսկ նա, հավանաբար, վերցրեց մեծ մասը, ես ստացա երկու հարյուր ֆրանկ: Պիեսը խաղացին էլի ութ անգամ, և ամեն մի ներկայացման համար դիրեկտորն ինձ տալիս էր հինգ ֆրանկ: Այդպիսով ինձ մոտ հավաքվել էր երկու հարյուր քառասուն ֆրանկ՝ մի ամբողջ կարողություն:

Ամենից առաջ ես որոշեցի այդ գումարով գնել նավարկության համար անհրաժեշտ բոլոր իրերը, որովհետև ծովի հանդեպ տաժած մոլությունը և հորեղբորս նկատմամբ ունեցած երկյուղը առաջվա նման տիրում էին ինձ: Երբ ափից հեռու, փոթորկվող ծովում կործանվող նավի վրա մնացել էի մենակ, մի խոսքով, երբ մահացու վտանգ էր սպառնում ինձ, ես նախանձում էի իրենց տներում հանգիստ ապրող մարդկանց և նրանց ճակատագիրը ծովայինների ճակատագրից ավելի երջանիկ էի համարում: Բայց երբ ամուր հողի վրա ուշքի եկա, իմ ամբողջ երկյուղը չքացավ նույնքան արագ, որքան արևի տակ գոլորշիացավ հագուստս թրջած ջուրը: Եվ հիմա, Հավրում, ես երազում էի միայն այն մասին, թե ինչպես գտնեմ մի նավ, որտեղ կհամաձայնվեն ինձ վերցնել որպես կրտսեր նավաստի: «Օրինկոյի» տերը համաձայնվեց ինձ ծառայության վերցնել իր մյուս նավի՝ «Ամազոնկայի» վրա և իմ դրամը շատ տեղին պետք եկավ, որպեսզի նավարկության համար գնեմ բոլոր անհրաժեշտ իրերը:

Երբ հանդիպեցի խեղճ Հերմանին, նա, ինչպես հիշում եք, ինձ հրավիրեց գիշերել իր մոտ: Այն ժամանակ նա վարձել էր Կազերն ծովափնյա փողոցի բակերից մեկի խորքում ընկած մի փոքրիկ,

մութ սենյակ: Ես որոշեցի գնալ այնտեղ: Տանտիրուհին համաձայնեց սենյակը վարձով տալ, բայց նախազգուշացրեց, որ ինքը հիվանդ է և չի կարող ինձ կերակրել: Դա ամեննին չհուզեց ինձ: Ես չէի անհանգստանում սնվելու համար, միայն թե մի կտոր հաց լիներ:

Տանտիրուհին շատ բարի կին էր: Թեև հազիվ էր ոտքի վրա կանգնում, բայց ես այնքան ուշադրություն ու փաղաքշանք էի տեսնում նրանից, որ կարծես ապրում էի մորս տանը:

Այդ կինը վաղուց այրիացել էր ինձանից երկու տարով մեծ մի տղա ուներ: Ութ ամիս առաջ տղան մեկնել էր Հնդկաստան և հիմա օրեցօր սպասում էին այդ նավի՝ «Նեստրիայի» վերադարձին:

Նրա վիճակը շատ բանով հիշեցնում էր մորս: Մայրիկիս նման, նա էլ աստում էր ծովային ծառայությունը: Նրա ամուսինը տանից շատ հեռու, Ման-Դումինգոյում մահացել էր դեղնատենդից, և նա սուսկալի վշտանում էր, որ որդին նույնպես ծովային էր դարձել: Խեղճ կինը հույս ուներ, որ տղայի կատարած առաջին ծանր ճանապարհորդությունը կբուժի նրան ծովի նկատմամբ ունեցած սիրուց և, վերադառնալով տուն, տղան կապրի ցամաքում:

Ինչպիսի բուռն անհամբերությամբ էր նա սպասում իր որդուն: Ամեն անգամ, երբ վերադառնում էի ծովափից, որտեղ անց էի կացնում ամբողջ օրը, կինը հարցուփորձ էր անում, թե ինչպիսի եղանակ է, քամին որ կողմից է փչում, արդյոք շա՞տ նավեր են ժամանել նավահանգիստ: Հնդկաստան կատարած ճանապարհորդությունը շատ երկար է տևում, և ճանապարհին ծովայիններին հետամտում են բազմաթիվ վտանգներ: «Նեստրիան» կարող էր վերադառնալ ամեն օր՝ այսօր, վաղը, երկու շաբաթից կամ մի ամսից, ոչ ոք չէր կարող ասել, թե երբ:

Մի շաբաթից ավելի ես ապրում էի այդ կնոջ տանը, երբ հանկարծ նրա հիվանդությունը խիստ սաստկացավ: Նրան այցելող հարևանուհիներն ինձ հայտնեցին, որ բժիշկը չի երաշխավորում նրա կյանքի համար: Եվ իրոք կինն օրեցօր թուլանում էր, շատ գունատ էր, համարյա չէր խոսում և, երբ մտնում էի նրա սենյակը, որպեսզի հաղորդեմ, թե ինչ եղանակ է ծովում, ես սարսափում էի նրա տեսքից:

Մի քանի ուժեղ փոթորիկներից հետո, որոնց ժամանակ կործանվեց նաև «Օրինոկոն», եղանակը շատ լավացել էր: Ծովը միանգամայն հանդարտ էր, ինչպես լինում է ամառվա լավ օրերին և շուտով տիրեց լիակատար հանդարտություն, որ հազվադեպ էր պատահում տարվա այդ եղանակին:

Ծովում տիրող հանդարտությունը հուսահատեցնում էր տանտիրուհուս: Ամեն անգամ, երբ գալիս էի նրա մոտ ու ասում նույն բանը. «Քամի չկա» կամ «Արևելյան ծովագեփյուռ է փչում»,— նա տխուր օրորում էր գլուխը և պատասխանում.

— Ի՛նչ դատն է իմ ճակատագիրը: Ես կմեռնեմ առանց տղայիս հրաժեշտ տալու:

Նրան խնամող հարևանուհիները կշտամբում էին այդ մռայլ մտքերի համար և աշխատելով սփոփել, դիմում էին սովորական ստին, որ միշտ ասում են վտանգավոր հիվանդներին: Բայց նա համառորեն պնդում էր.

— Այո, այդպես էլ կլինի: Ես չեմ տեսնի նրան...

Կնոջ աչքերը լցվում էին արտասուքով, և նրան նայելիս, ես էլ էի ուզում լաց լինել: Ես չգիտեի, թե նա ինչ հիվանդություն ուներ, բայց դատելով խոսակցություններից, ինձ համար պարզ էր, որ նրա վիճակն անհուսալի է, և մինչև հարևաններից չէի տեղեկանում, թե ինչպես է զգում իրեն, չէի համարձակվում տուն մտնել:

Մի անգամ առավոտյան, դա տեղի ունեցավ երեքշաբթի օրը, ես գնացել էի նավակայան նավերի ժամանումը դիտելու և վերադարձա տուն, որպեսզի նախաճաշեմ: Հարևանուհին, որի հետ սովորաբար զրուցում էի, ձեռքով նշան արեց, որ մոտենամ:

— Բժիշկը եկավ,— ասաց նա:

— Ի՞նչ ասաց:

— Բժիշկը կարծում է, որ նա չի լուսացնի այս գիշեր:

Երկար ժամանակ սիրտ չէի անում սանդուղքով վեր բարձրանալ: Բայց վերջ ի վերջո կռիվներս հանելով, որպեսզի չթխկթխկացնեմ, կամաց բարձրացա: Երբ անցնում էի նրա դռան մոտով, նա ճանաչեց իմ ոտնաձայները և թույլ ձայնով կանչեց.

— Ռոմե՛ն:

Ես ներս մտա: Հիվանդի քույրը, որ չէր հեռանում նրա կողքից, նստած էր մահճակալի մոտ և ձեռքի շարժումով ինձ ցույց տվեց աթոռը: Սակայն հիվանդը կանչեց իր մոտ: Նա լուռ էր, բայց հայացքից ես հասկացա, թե ինչի է սպասում:

— Եղանակը նույնն է:

— Քամի չկա՞:

— Ոչ:

— Ի՞նչ նավեր են եկել:

— Ձկնորսական նավակներ, Սենա գետի նավերը և մի շոգենավ Լիսաբոնից:

Չէի հասցրել արտասանել այդ բառերը, երբ դուռն արագորեն բացվեց և սենյակ մտավ նրա քրոջ ամուսինը, որն աշխատում էր նավահանգստում: Նա կարծես հուզված էր ինչ-որ բանից:

— Լիսաբոնից մի շոգենավ է եկել,— հայտարարեց նա:

— Այո, Ռոմենն արդեն հայտնեց:

Հիվանդը դա ասաց անտարբեր ձայնով, բայց երբ նրա աչքերը հանդիպեցին փեսայի հայացքին, կինը նրա դեմքից կռահեց, որ ինչ-որ նորություն ունի:

— Աստվա՛ծ իմ,— բացականչեց նա:

— Մի անհանգստացեք, ես լավ լուր եմ բերել: Լիսաբոնից ժամանած շոգենավը «Նեստրիային» հանդիպել է Սեն կղզու մոտ եղած նեղ ծովածոցում: Նավի վրա ամեն ինչ բարեհաջող է:

Անկողնում պառկած հիվանդն այնքան գունատ էր ու թույլ, որ թվում էր, թե ուր որ է կհանգչի, բայց նա անսպասելիորեն կիսով չափ բարձրացավ տեղից ու հենվեց ձեռքի վրա:

— Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ,— շնջաց նա: Հիվանդի մարած աչքերն սկսեցին վառվել, այտերը շառագունեցին:

Նա սկսեց հարցուփորձ անել, թե որքա՞ն ժամանակում «Նեստրիան» Սեն կղզուց կհասնի Հավր: Սակայն դժվար էր դա որոշել: Համընթաց քամու դեպքում՝ երկու օրից, իսկ եթե աննպաստ

եղանակ լինի՝ վեց օրից, նույնիսկ, գուցե և ութ օրից: Լիսաբոնի շոգենավն այնտեղից մինչև Հավր եկել է երեսուն ժամում, հետևապես «Նեստրիան» կարող է ժամանել նաև վաղը:

Հիվանդն ուղարկեց բժշկի հետևից:

— Ես պետք է ապրեմ մինչև տղայիս գալը, — հայտարարեց նա: — Մի՞ թե աստված թույլ կտա, որ առանց նրան համբուրելու մեռնեմ:

Վերականգնվել էին նրա ուժերը, մտքի պարզությունը, եռանդը: Երբ բժիշկը նրան տեսավ, աչքերին չհավատաց:

Նա ապրում էր աղքատիկ տնակում: Սենյակը, ուր նա պառկած էր, միաժամանակ ծառայում էր և՛ ննջարան, և՛ խոհանոց: Զարմանալի չէ, որ հիվանդության ընթացքում նա կարգի չէր բերում սենյակը և այնտեղ անկարգություն էր տիրում: Հավաքվել էին մեծ քանակությամբ գանազան իրեր՝ ամաններ, ամեն տեսակ խաշուկներով լի բաժակներ, փոշեպատ սրվակներ: Ճիշտն ասած, հիվանդը մշտական խնամող չուներ. նրա բարեկամուհիները, հարևանուհիներն ու քույրը գալիս էին միայն երկու-երեք ժամով և շտապում էին վերադառնալ տուն, որտեղ նրանց սպասում էին իրենց գործերն ու երեխաները:

Հիվանդ կինը խնդրեց մեզ սենյակը հավաքել, կարգի բերել, այնուհետև կարգադրեց բացել լուսամուտը: Երբ քույրը փորձեց հրաժարվել, վախենալով մրսեցնել նրան, կինը առարկեց.

— Ինձ հետ ոչինչ չի պատահի, իսկ ես չեմ ուզում սենյակից դեղերի հոտ գա, երբ նա վերադառնա:

Բայց ե՞րբ կվերադառնա: Եղանակը չէր փոխվում, ծովում լիակատար հանդարտություն էր տիրում, նվազագույն քամի անգամ չկար, նշանակում է, «Նեստրիան» չի կարող առագաստարձակ նավել:

Առևտրական նավահանգստում սովորություն ունեին հայտնել նավերի ժամանման մասին: Հավրում այդ ազդանշանները Խնի հրվանդանից հաղորդում էին քաղաք, որտեղ փակցնում էին հայտարարությունը: Հիվանդը խնդրեց ինձ հետևել այդ հայտարարություններին: Ես ուրախությամբ համաձայնվեցի և ժամը մեկ ծովափնյա Կազերն փողոցից վազում էի Օրլեանի փողոցը, որտեղ այն ժամանակ գտնվում էր այդ տեղեկություններն ստացող ապահովագրական գրասենյակը:

Սակայն ծովում տիրող լիակատար հանդարտության պատճառով ոչ մի նավ չէր հայտնվում հորիզոնում. բոլորն էլ կանգ էին առել Լա-Մանշի մուտքի մոտ:

Բայց հիվանդը հույսը չէր կտրում և, երբ վրա հասավ երեկոն, խնդրեց իր մահճակալը մոտեցնել լուսամուտին: Դիմացի շենքի տանիքին մի մեծ հողմացույց կար, և կինն ասաց, որ ուզում է շարունակ նայել այդ հողմացույցին. նա զգում է, որ եղանակը շուտով կփոխվի: Ուրիշ ժամանակ մենք կծիծաղեինք նրա վրա: Լիալուսնով լուսավորված անամպ երկնքում սև կետի նման աչքի էր ընկնում անշարժ հողմացույցը, որ կարծես գողակցված էր իր սայրին:

Հիվանդի քույրը, որ հերթապահում էր նրա մոտ, ինձ ուղարկեց քնելու: Գիշերը արթնացա սուսկալի աղմուկից, որ առաջ երբեք չէի լսել. թվում էր, թե ինչ-որ մի բան սուսկալի ճռում է: Անկողնուց վեր կացա և լուսամուտից դուրս նայեցի: Այդ հողմացույցն էր պտտվում իր երկաթե սոնիի վրա:

Նշանակում է, քամի է բարձրացել:

Ես իջա փողոց ու հասա մինչև ծովափ: Ծովն աղմկում էր ու ալեկոծվում: Հյուսիսային ծովաքամի էր փչում: Մաքսային հսկիչը, որի հետ զրույցի բռնվեցի, ասաց, որ քամին սաստկանում է, հավանաբար, կսկսի փչել արևմուտքից:

Ես վերադարձա տուն, որպեսզի շուտով հայտնեմ հիվանդին այդ ուրախալի լուրը: Եթե արևմտյան քամի փչի, «Նեստրիան» Հավր կհասնի ցերեկը կամ երեկոյան մակընթացության ժամանակ:

— Այ տեսնում ես,— ասաց հիվանդ կինը,— ես իրավացի էի: Չէ՞ որ ասում էի, թե քամին կփոխվի: Շնորհակալ եմ, աստված, քո բարության համար:

Քույրը հայտնեց, որ հիվանդը ամբողջ գիշեր չի քնել, այքը չի հեռացրել հողմացույցից և շարունակ կրկնել է նույն բանը. «Շո՞ւտ կսկսվի մակընթացությունը»:

Հիվանդ կինը գինի խնդրեց: Բժիշկը թույլ էր տվել նրան տալ այն ամենը, ինչ ցանկանա: Մակայն հիվանդը դժվարությամբ մի կում խմեց, որովհետև շատ թույլ էր և հազիվ էր շնչում:

— Գինին ուժ կտա ինձ, և ես կդիմանամ մինչև նրա գալը:

Հետո հայացքը կրկին ուղղեց հողմացույցին ու լռեց: Բայց ժամանակ առ ժամանակ նրա շրթունքները շնչում էին.

— Սիրելի ժան, իմ թանկագին ժան:

Ժանը նրա որդու անունն էր:

Երբ լույսը բացվեց, նա մոտ կանչեց ինձ:

— Գնա մսավաճառի մոտ,— խնդրեց նա,— գնիր երեք ֆունտ ամենալավ միսը ապուրի համար և մի գլուխ կաղամբ:

— Քեզ չի կարելի կաղամբ ուտել,— նկատեց նրա քույրը:

— Չէ՞ որ դա ժանի համար է: Նա այնպես սիրում է կաղամբով ապուրը և, երևի, շատ վաղուց չի կերել... Ահա քեզ փող: Եվ նա դժվարությամբ բարձի տակից հանեց հարյուր սու արժողությամբ մի մետաղադրամ:

Առավոտյան բժիշկը եկավ: Նա ասաց, որ երբեք այսպիսի համառ պայքար չի տեսել կյանքի համար: Հիվանդն այս գիշեր դիմացավ միայն կամքի ուժի և հույսի շնորհիվ, իսկ հիմա, հավանաբար, կապրի մինչև երեկո և տեղատվությունից առաջ չի մեռնի:

Հենց որ մոտեցավ գրասենյակը բացելու ժամանակը, ես վազեցի Օրլեանի փողոցը: Նավահանգստում հայտնվել էին մի քանի նավ, բայց «Նեստրիան» դրանց մեջ չէր: Առավոտյան ութից մինչև ցերեկվա ժամը երեքը, ես մի քսան անգամ վազեցի Օրլեանի փողոցը, մինչև, վերջապես, ժամը երեքին կարդացի հայտարարությունը՝ «Նեստրիան» Կալկաթայից:

Հարկավոր էր հիվանդին շտապ հայտնել այդ ուրախալի նորությունը, որովհետև հուսախաբությունը բոլորովին ուժասպառ կաներ նրան: Նա այնպես հույս ուներ, որ որդին կգա առավոտյան մակընթացության ժամանակ: Իմանալով, որ «Նեստրիան» մտնում է նավահանգիստ, նա կրկին կենդանություն առավ:

— Ռոմեն, ո՞ր ժամին լրիվ մակընթացություն կլինի,— հարցրեց նա:

— Երեկոյան ժամը վեցին:

— Հուսով եմ, որ կապրեմ մինչ այդ: Մի քիչ էլ գինի տուր ինձ:

Ես գնացի ծովափ: Խարսխակայանում կանգնած էին մոտավորապես քսան մեծ նավեր, որոնք սպասելով մակընթացությանը, խուսանալում էին ծովում: Ավելի փոքր նստվածք ունեցող նավերը ժամը չորսից սկսեցին մտնել նավահանգիստ: Բայց «Նեստրիան» մեծ տոննաժի նավ էր և ժամը հինգից շուտ չէր կարող նավահանգիստ մտնել:

Երբ վերադարձա տուն, հիվանդ կինը ամեն ինչ կռահեց դեմքիցս:

— «Նեստրիան» մտա՞վ նավահանգիստ:

— Մտնում է,— պատասխանեցի ես:

— Կարգի բեր ինձ,— խնդրեց նա քրոջը:

Նրան մի փոքր բարձրացրին բարձերի վրա: Միայն աչքերում դեռ փայլվում էր կենդանության շունչը, իսկ շրթունքները բոլորովին սպիտակել էին:

Քառորդ ժամ հետո ինչ-որ մեկը դղրդոցով վազելով բարձրացավ սանդուղքով: Նրա որդին վերադարձավ: Կինը դեռ կարողացավ ուժ հավաքել և կիսով չափ բարձրանալով, որդուն սեղմեց կրծքին:

Երեկոյան տասնմեկին սկսված տեղատվության հետ միասին նա վախճանվեց, ինչպես գուշակել էր բժիշկը:

Նրա մահը, մայրական բուռն սերը, հուսահատությունն ու պայքարը կյանքի համար այնպիսի ցնցող տպավորություն գործեցին վրաս, ինչպիսին չէին կարող գործել ոչ Դյելետտայի հորդորները, ոչ էլ «Օրինկոյի» կործանումը:

Իմ մայրն էլ կարող է մահանալ, երբ ես հեռու լինեմ նրանից: Ես դա հասկացա առաջին անգամ և պարզ պատկերացրի:

Ամբողջ գիշեր չքնեցի: Նման դժբախտության հնարավորության մասին մտածելիս սիրտս կծկվում էր վշտից ու սարսափից: «Ամազոնկան» նավարկության էր մեկնելու երկու շաբաթ հետո, իսկ Գոնֆլերից եկած շոգենավն ուղևորվում էր այսօր առավոտյան ժամը հինգին: Սերը դեպի արկածները և հորեղբորս հանդեպ ունեցած երկյուղը ինձ մղում էին նավարկության, իսկ մայրիկի մասին մտքերը ձգում էին դեպի Պոր-Դյու:

Վերջ ի վերջո հորեղբայրը հո չի ուտի ինձ: Չէ՞ որ ես կարողացա պայքարել քաղցի, ցրտի ու փոթորկի դեմ: Մի թե քաջություն չեմ ունենա պաշտպանել ինձ հորեղբորից: Մայրս չի ցանկանում, որ ծովային դառնամ և իրավունք ունի: Իսկ ես... իրավունք ունե՞մ արդյոք մեկնել առանց նրա համաձայնության: Հանկարծ նա չների ինձ, երբ վերադառնամ: Իսկ եթե չվերադառնամ, ո՞վ կհոգա մայրիկի մասին, երբ նա ծերանա ու չկարողանա աշխատել:

Առավոտյան ժամը չորսին ես վեր կացա, իրերս հավաքեցի և չորսն անց կեսին արդեն նստած էի Գոնֆլեր մեկնող շոգենավում: Առավոտյան ուղիղ ժամը հինգին ես հեռացա Հավրից և երեսուն ժամ հետո, այսինքն երեկոյան վեցին, մայր մտնող արեգակի ճառագայթներում տեսա Պոր-Դյույի առաջին տնակները:

Ես տուն էի գնում լանդերի միջով, այն նույն ճանապարհով, որով մի ժամանակ քայլում էինք Դյելետտայի հետ: Բայց հիմա գարուն էր և ճանապարհն անճանաչելի էր դարձել: Խոտը կանաչել էր, փշենու թփերը ծաղկել էին, ձորակներում բացվել էին մանուշակները: Շոգ օրից հետո հողից ու բույսերից հրաշալի բուրմունք էր գալիս, որ թափանցում էր մինչև թոքերի խորքը և ուրախությամբ լցնում հոգիս:

Երբեք կյանքումս այդքան ուրախ ու երջանիկ չէի զգացել ինձ: «Հիմա մայրիկն ինչպիսի՛ ջերմությամբ կհամբուրի ինձ»:

Հասա մեր ցանկապատին ու թռա գառիվայրի վրա: Ինձնից քսան քայլ հեռու Դյելետտան թռկի վրայից հավաքում էր չորացող սպիտակեղենը:

— Դյելետտա՛, — բղավեցի ես:

Իմ ձայնի վրա նա արագորեն շրջվեց, բայց չտեսավ ինձ, որովհետև կանգնած էի ցանկապատի հետևը:

Հանկարծ նկատեցի, որ նա սև զգեստով է: Դյելետտան սո՛ւզ է պահում: Ինչո՞ւ: Ո՞վ է մահացել:

— Մայրի՛կ, — սարսափած ճչացի ես:

Բայց նախքան Դյելետտան հասցրեց պատասխանել, տան շեմքին հայտնվեց մայրիկը, և ես անմիջապես հանգստացա:

Իսկ նրա հետևից քայլում էր մեծ ճերմակ մորուքով մի ձերուհի. դա պարոն Բիորելն էր: Ինչպե՞ս, հանգուցյալ պարոն Բիորելը մայրիկի կողքի՞ն է: Չեմ կարող հաղորդել, թե ինչ զգացի: Մի՞ թե սա տեսիլք է:

Ես ականա տրորեցի աչքերս, որպեսզի համոզվեմ, թե քնած չեմ, բայց իսկույն սթափվեցի:

— Ի՞նչ է պատահել, Դյելետտա, — հարցրեց նրան պարոն Բիորելը:

Նա խոսում է, նշանակում է, ուրվական չէ: Այլևս ոչ մի կասկած չունեի: Հյուսված ցանկապատը կոտրեցի և ուղղակի թփերի միջով նետվեցի դեպի տուն: Ինչպիսի՛ երջանկություն:

...Երբ անցավ ուրախության առաջին պոռթկումը, և մենք մի փոքր հանգստացանք, պատմեցի այն ամենը, ինչ պատահել էր ինձ հետ Դյելետտայից բաժանվելուց հետո: Բայց ես չէի համբերում և ուզում էի շուտով իմանալ, թե զոհված պարոն Բիորելն ինչ հրաշքով էր ողջ մնացել, ինչպես էր հայտնվել բարեկամների մոտ և աշխատեցի ավելի արագ վերջացնել պատմությունս:

Պարոն Բիորելի պատմությունը բավական հասարակ էր: Երբ նա վերադառնում էր Գրյուն կղզուց, անսպասելի փոթորիկը շրջում է նրա նավակը, բայց պարոն Բիորելին հաջողվում է հեծնել նավակի ողնափայտին: Հետո նրան վերցնում է Հավրից Սան-Ֆրանցիսկո նավարկող մի եռակայմ նավ: Նավապետը, որ նրա հետևից նավակ էր ուղարկել ծով ու փրկել կործանումից, չէր ցանկացել մտնել որևէ միջնակա նավահանգիստ, որպեսզի նրան ափ իջեցնի, և պարոն Բիորելը ուզած-չուզած ստիպված է եղել մեկնել Կալիֆոռնիա, այսինքն ճանապարհորդել կես տարի, եթե որևէ հանդիպական նավ ավելի շուտ նրան չհասցնի հայրենիք: Սակայն այդպիսի առիթ չի ներկայացել: Գորն հրվանդանից նա նամակ է ուղարկել մեզ, որն, ըստ երևույթին, այդպես էլ չի հասել Ֆրանսիա: Սան-Ֆրանցիսկո ժամանելուց հետո պարոն Բիորելը ստիպված է եղել պրերիանեի միջով կտրել-անցնել ամբողջ Ամերիկան և միայն երկու ամիս առաջ վերադարձել է Ֆրանսիա...

Այդպես էլ ես չդարձա ծովագնաց:

Հնդկաստանում ապրող քեռիս մահացել էր. ահա թե ինչու էին մեր ընտանիքում սուգ պահում: Իր մահից հետո նա այնպիսի խոշոր ժառանգություն էր թողել, որ հարստացրել էր բոլոր ազգականներին:

Պարոն Բիորելը ցանկացավ ինձ վերցնել իր մոտ, որպեսզի ավարտեմ կրթությունս, իսկ Դելետտային տվեցին գիշերօթիկ դպրոց:

Այն մասին, թե Դելետտան արդյոք լա՞վ է յուրացրել այն ամենը, ինչ սովորեցրել էին նրան, թե ինչպիսի հիանալի կին է ու հրաշալի մայր, կարող եք ինքներդ դատել. նա շուտով տուն կվերադառնա մեր երկու փոքրիկների՝ տղայիս և դստրիկիս հետ: Իմ երեխաները պարոն Բիորելին սիրում են ինչպես հարազատ պապիկի և ամեն օր գնում են Պյեր-Գանտ նրան այցելության:

Թեև ես այդպես էլ չգնացի նավարկության բայց առաջվա նման ջերմորեն սիրում եմ ծովը և այն ամենը, ինչ կապված է նրա հետ: Այն երեսուն նավերից, որ ամեն տարի ձկնորսության են մեկնում Նյուֆաունդլենդ, վեցը պատկանում են ինձ:

Մայրիկը չցանկացավ հեռանալ Պոր-Դյոյից և ապրում է մեր հին տնակում:

Ես արդեն երկու անգամ նորոգել եմ «խցիկը», որ այնտեղ ամեն ինչ մնա առաջվա պես: Մեր տանը կախված նկարում պատկերված է հենց այդ տնակը: Այն նկարել է մեր մեծ բարեկամ Լյուսին Արդելը: Ամեն տարի նա մեկ-երկու ամսով հյուր է գալիս մեզ մոտ և, որքան էլ աշխատում է, չի կարողանում մեր օկրուգում գտնել մի ոստիկան, որը համաձայնվեր ձերբակալել իրեն:

Պարոն Բիորելը դեռ շատ առույգ է, թեև արդեն իննսուներկու տարեկան է: Տարիները չեն թուլացրել նրա առողջությունը, չեն մթազնել նրա պայծառ միտքը: Նա կորացել է, բայց սիրտը առաջվա պես ջահել է ու բարի: Նրա տնկած ծառերը մեծացել են և կղզու այն մասը, որ պաշտպանված է քամիներից, ծածկված է խիտ անտառով: Արևմտյան լանջին առաջվա պես արածում են սև ոչխարները, թափառում են բրետոնական ցեղի կովերը և վխտում են ճագարները:

Ճայերն առաջվա պես պտտվում են ժայռերի վրա, իսկ երբ սկսվում են բարձրաձայն ճչալ, Շաբաթը, որ նույնպես առողջ ու պնդակազմ է, ինչպես այն ժամանակ, երբ առաջարկում էր ինձ մի գավաթ խմել իր հետ, երբեք չի մոռանում հարցնել.

— Ռոմեն, լսո՞ւմ ես՝ «տոկուի, կուակ, կուակ»: Ապա ասա, ին՞չ է նշանակում դա,— և բարձրաձայն ծիծաղում է:

Բայց եթե պարոն Բիորելը, որ վերջերս սկսել է վատ լսել, տարակուսանքով նայում է մեզ, Շաբաթը գլխից հանում է բրդյա գդակը և լրջորեն ասում.

— Ռոմեն, չի կարելի ծիծաղել մեր բարի տիրոջ վրա: Երբեք չնոռանաս, որ դու մարդ ես դարձել միայն նրա շնորհիվ:

Եվ դա զուտ ճշմարտություն է:

Հնդկաստանի քեռուս ժառանգությունը, իհարկե, շատ տեղին պետք եկավ, բայց միանգամայն ակնեքն է, որ եթե չլիներ պարոն Բիորելը, նրա դասերը, ամբողջ կյանքի օրինակը, իմ դաստիարակության ու կրթության մասին նրա հոգատարությունը, իմաստուն խորհուրդները, այժմ ես կլինեի միայն հարուստ գյուղացի և ուրիշ ոչինչ, որովհետև դրամը չի զարդարում մարդուն:

Հեկտոր Մալո

ՌՈՍԵՆ ԿԱԼԲՐԻ

Դպրոցական միջին տարիքի համար

Гектор Мало

РОМЕН КАЛЬБРИ

(На армянском языке)

Издательство «Айастан»

Ереван 1974

Խմբագիր՝ Ջ. Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Նկարիչ՝ Ն. ՑԵՅՏԼԻՆ

Գեղ. խմբագիր՝ Ջ. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Տեխ. խմբագիր՝ Լ. Դ. ՓԻՐՈՒԶՅԱՆ

Վերստուգող սրբագրիչ՝ Լ. Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հանձնված է արտադրության 17 / VII 1973 թ.,

Ստորագրված է տպագրության 15 / V 1974 թ.:

Թուղթ տպագրական № 2, 84x108 1/32, տպագ. 7,25 մամ. = 12,18 պայմ. տպ. մամ., հրատ. 10,6 մմ:

Պատվեր 7: Տպաքանակ 10000: Գինը՝ 54 կ.:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91: